



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Տիրապետական

Համար

1901/0

891.99

B - 86

~~017 - 27/126~~
0258 - 25/138

-6 NOV 2001

330.99
T-66

لیز

ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱԴՐ

Τ Ο Τ Ο Κ Ο

32148
1002

P. M. Lawrence



Թ Ա Յ Ա Խ Ա
Տարբան 8. Մ. ԹօՏԻՆԵԱՆ
Տպոգրաֆիա T. M. Պոտինեան
1901

2013 JUL 2013

48322

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Ноября 1900 г.

ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ ԻՄ ՄՈՐԸ

ՕՎԱՆԻՑ ՄՈՎՈԽԵԱՆԻՇ

Հեղինակ:

1885 թ. Թիֆլիս

Ա Ր Ա Ճ Ա Բ Ա Ն

«Նամուսը» առաջին անգամ լույս է տեսել 1885 թ.: «Մօտ 10 տարի է, որ այդ հրատարակութիւնը ապառված է։ Այժմ՝ «Նամուսը» տպագրում է երկրորդ անգամ մի խումբ բազուցի հակերի ցանկութեամբ ու ծախսով։

Զըկամենալով լարգելի հրատարակիչների համեստութեան զգացումը վիրաւորելի, ես ասպարէզ չեմ հանում նրանց անունները։ Միայն պարտք եմ համարում նրանց հրապարակորչն լավանել իմ չնորհակալութիւնը, ոչ իբրև «Նամուսի» հեղինակի, այլ իբրև հայ մաքի ու հոգու զարգացման նախանձախնդիր մէկը, որի համար թանգ է հասարակութեան կողմից զէսի զբականութիւնը այս կամ այն կերպ արտաքարտուող ամեն մի լաւ զգացում։

Եմ խորին համոզմունքով հայի բարուական ամենագլխաւոր զանձը իւր զբականութիւնն է, որին պահպանելը նրա բարձր պարտականութիւնը պիտի լինի։ Բայց կայ մի բան. զբականութեան, մանաւանդ գեղեցիկ գրականութեան օգուտը հասկանալու, նրա բարուական խոշոր նշանակութիւնը ըմբռնելու համար հարիւատը է աւելի բարձր մտաւոր զարգացում, քան այն, որ ունի ավեմ հայ հասարակութիւնը։ Այս մի ճշմարտութիւն է, որի մասին ոչ ոք չի կարող վիճել։ Եւ ճէնց այս է հայ զրոգների նիւթական այժմեան աննախանձելի զրութեան պատճառը։ Ես, իբրև մէկը հայ զբականութեան մշակութիւն, կը փափակէի, որ մի օր հայ հասարակութիւնը հառկանար, թէ չը զնանատելով իւր մալքենի գրականութիւնը, նա վիասում է ոչ թէ զրոգներին, այլ ինքն իրան, իւր բարուական վարկին օտարների առջև։ Ոչ մի հասարակութիւն չի կարող վալելի քաղաքակիրթ աղքարի համակրանքը, եթէ չը զիտէ չերժ կերպով պաշտպանել իւր բարուական հարստութիւնները, որանց մէջ, կրկնում եմ, հայի համար զբականութիւնը առաջին աւելին է բանում։ Մենք զրոգներս ախտէս թէ

ալսպէս կատարում ենք մեր պարտքը։ Կրելով հաղար ու մի նիւթական զրկանքներ, մենք ծառալում ենք կարողութեան չափ մեր կոչմանը։ Վսկական դրողը իւր վարձը ստանում է հէնց դրելու միջոցին, այն ժամանակ երբ նա արտալալում է իւր սրտի զառնութիւնը կամ ուրախութիւնը։ Երբ ստեղծագործում է, Այն օրից, երբ նրա ստեղծագործութիւնը հրապարակ է ընկնում, զառնում է հասարակութեան սեպհականութիւն։ Հետեարար, եթէ ալդ սեպհականութիւնն արժէք ունի և չի զնահատվում, հասարակութիւնը դործում է աններիլ լանցանք իւր բարովական վարկի դէմ։ Նա ինքն իւր ձեռքով ապուակ է տալիս իրան օտարների առջև։ Խոկ դրող... հաւատացէք նրա կորուստը այնշափ զզալի չէ, որչափ հասարակութեան կորուստը։

Ալս տողերը եռ չէի դրի, եթէ վերջին ժամանակ այնքան չըխօսէք ու չըզրվէք հալ հեղինակների, որոնց թւում և իմ, դրութեան մասին։ Անձամք եռ հասարակութիւնից ոչինչ չեմ պահանջում և իրաւունք էլ չեմ համարում պահանջելու։ Աս անում եմ միան ան, ինչ-որ իմ սիրտն է թելադրում։ Պարագում եմ այն դործով, ինչ-որ սուրբ է և թանդապին ինձ համար։ Աւ եթէ իմ աշխատանքը չի վարձագրվում, ով է խանգարում ինձ աւելի արդիւնաւոր դործով պարապելու...»

«Եամուսը երկրորդ անգամ լուս է տեսնում տառանց որեւէ փոփոխութեան։ Ալս վէպը առաջարկում եմ հասարակութեանը այնպէս, ինչպէս դրված է 16 տարի որանից առաջ, երբ եռ գլու նոր էի մտել դրական ասպարէզ։ Տասնուշինդ տարի պտաել է նա հասարակութեան մէջ, ենթարկվել է հաղար ու մի փորձանքների։ Կրան և հալհուել են և դոմիլ, և չափանց սարրացընը և չափաղանց բարձրացրել։

Պախարակողներն են եղել իրաւոցի թէ գոփողները — չըդիտեմ։ Գիտեմ միան, որ տասնուշինդ տարոց լսոտէ էլ, ալս վէպը նորից կարգալով և քննելով, ալս որ նրա մէջ որեւէ փոփոխութիւն անելու կարիք չեմ տեսնում։

6 նոյեմբերի. 1900 թ.

Ֆիլիպ

Շիրվանջանի

I

1859 թւականի մայիս ամսին պատահած երկրաշարժը մի մեծ թշուառութիւն էր Նամախու համար։ Ալդ բաւական ծաղկած և կանոնաւորված նահանգական քաղաքը մի ըոպէում կերպարանափոխվեց, դարձաւ աւերակ։ Ստորերկրեալ գօրեղ հարուածը մի ակնթարթում գուրս թափեց փողոցները հազարաւոր ընտանիքներ, որոնք, մինչև ալդ ըոպէ հանդիստ իրանց տներում նստած, չըգիտէին ինչ դժբախտութիւն է սպասում իրանց։ Հայ, ոռուս, թուրք, բոլորը խառնվեցին իրարու, և փողոցները ու հրապարակները մի ըոպէում սեացան մարդկանցով։ Բարձրացաւ աննկարագրելի աղմուկ, անորոշ գլրդոց։ Քառասուն հազար բնակիչների միաժամանակ բարձրացրած գոռում ու գոչումները, խառնվելով փլատակվող շինութիւնների թնդումների հետ, մարդու ականջներ էին խլացնում։

Ընդհանուր աղմուկին մասնակցում էին և տնալին կենդանիների աններդաշնակ ձախները։ Տաւարների բառանչումները, շների ոռնալը, թուչունների կշկոցները, ալս բոլորը, միանալով փոշիալի օդի մէջ, ոսկալի տպաւորութիւն էին անում ժողովրդի վրայ։

Առաջին վտանգալի ըոպէն ամենքն ստիպեց մոռանալ բացի իւր անձից ամեն ինչ, մոռանալ նոյն իսկ իւր սրտին ամենամօտիկ արիւնակիցներին։ Ալդ նահարեր ըոպէն մինչև անգամ մոռացնել տուաւ ժօրը իւր զաւակներին, այն սիրելի զաւակներին, որոնց

Համար մի փոքր առաջ, խաղաղ դրութեան մէջ, գուցէ
սլատարաստ էր զոհել իւր կեանքը: Մօտահաս վտանգի
բուռն զգացմունքների ճնշման ներքոյ սեպհական
անձի փրկութեան խնդիրը երկրաշարժի ըսպէում խա-
ւարեցրեց, անհետացրեց ամեն ինչ, որ դուրս էրնըա-
մահատական կեանքից: Կեանքը քաղցրացել էր ամեն-
քի համար:

Սական ահա անցաւ առաջին ահարկու ըուղէն:
Մարդիկ փրկված են վտանգից: Ամենքը, փլչող պատե-
րից հեռացած, խռնվում են փողոցներում: Այստեղ
առաջին անգամ ամեն ոք սկսում է մտաբերել իւր ազ-
գականներին արիւնակիցներին: Կըկին սոսկումը տիրում
է ամենքին, և ահա թշուառները գունաթափակած,
մեռելափին դէմքերով, ընդհանուր խառնաշփոթութեան
մէջ շուարված, որոնում են իրարու:

Օդը թնդում է հազարաւոր վայվույներով:
— Աղբերս վայ, աղբերս վայ, — բացագանչում է
մի կողմում մի նազելի օրիորդ, վետտելով իւր գլուխ
մազերը և մերկ կրծքին բունցքներ տալով:

Սովորական ամօթիսածութիւնը նրան չի նեկուած
այդ ըուղէում: Նա մուացել է՝ իւր ճննդավալը աւան-
դութիւնը, որն արդերում է շափահաս օրիորդին օտար
տղամարդկանց առաջ բերան բանալն անդամ:

Օրիորդը ուշադրութիւն չի դարձնում իւր շուրջը,
չի քաշվում ոչ ոքից: Նրա ուշ ու միտքը կենտրոնա-
ցած է հոգի և քարերի մի կոյտի վրայ: Այստեղ կեն-
դանի թաղված է նրա թանգագին եղբայրը, որ մի ըսպէ
առաջ նրա հետ խօսում էր, զուարձանում էր կամ
գուցէ կովում: Զեռները առաջ տարածելով, օրիորդը
աղաշում, պաղատում է անցորդներին, որ օգնեն դուրս
բերելու իւր սիրելի եղբօրը հոգի ու քարերի տակից:
Ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում նրա աղերսալ

գուոցների վրայ: Ամենքը զբաղված են իրանց մօտա-
ւորների վիճակով, երեխ, ամենքն ունեն մի մի այդպիսի
կենդանի թաղված, հետեաբար, անխելքութիւն է մէ-
կից օգնութիւն սպասելը: Տեսնելով, որ ոչ ոք չի օգնում,
օրիորդը յուսահատված և գրեթէ անզգայ, շտապում է
դէպի իւր կենդանի եղբօր տարօրինակ գերեզմանը: Նա
իւր փափուկ և քնքոյշ մատներով աշխատում է բարձ-
րացնել առաջին մեծ քարը: Քարը չի շարժվում տեղից,
շատ ծանր է: Փափուկ մատներից հեղում են թարմ
արիւնի կաթիլներ, եղունգները փշրտվում են, բայց
քարը դարձեալ չի շարժվում: Անգութ քար:

Մի սկնթարթում օրիորդը զգում է, որ կանգնած
է իւր եղբօր գերեզմանի վրայ: Զգում է, որ ինքը,
փոխանակ թեթևացնելու, աւելի ևս ծանրացնում է
այդ գերեզմանը իւր մարմնի կշռով: Ծալրալեղ սար-
սափը վերջնականապէս ուշաթափ է անում սիրող քրոջը.
Նա, մի ճիշ արձակելով, կամենում է հեռու փախչել,
բայց ձնկները չեն հնազանդվում, և գնդակահարվածի
պէս փռվում է հոգի կոյտի վրայ: Թողնենք, որ ընկնի,
երեխ, բնութեան քիմքն այսպէս էր պահանջում:

— Կնիկս, բարաներս, այլ քրիստոնեաներ, այլ ձեր
հերը լոյս դառնալ, այ, հրէս էստեղ է, — բացագանչում
է ուրիշ կողմից մի տղամարդ, ցոյց տալով մի մեծ գե-
րան, որի տակից երեսում է նրա ամուսնի գլուխը:

Դժուար է նկարագրել այդ կնոջ դէմքը: Նրա վրայ
ամեն ինչ կորցնելով իւր բնական ձեր, այլտեղակ-
վել է: Ծանրակիռ գերանը, որ հորիզոնաձև ընկած է
նրա վրայ, այնքան ճնշում է, որ քթի ծակերից թափ-
ւող արիւնը տեղ չի գտնում հոսալու: Միքի նրանից
հեռու երեսում են երկու մանկական գլուխներ և չորս
ձեռքեր, իրարու գրկած: Այդ ձեռքերից մէկում սեղմը-

ված է մի փոքրիկ խնձոր, միւսում՝ գոյնզգոյն պաճուծապատճեց:

Ողորմելի ամուսին, տարաբաղդ հայր: Նա, կարծես, խելագարիկ է, ոյժ է անում գերանի ծալը բարձրացնելու, սակայն գերանը չի հնազանդվում, յամառութեամբ ընկած է: Կինը ծանը բեռան տակ տնքում է, արձակում է հազիւ լսելի հտաշչանքներ: Ամուսինը կուրծքը դերանին դէմ տուած անդադար ոյժ է անում: Իգուր:

Այսպէս շարունակվում է, մինչև որ մի քանի հարեաններ, կանխապէս հաւաստիանալով իրանց ազգականների ապահովութեան մասին, շտապում են օգնելու ժշուառ հարեանին:

Հարիւրաւոր ալսպիսի տեսարանների բեմ էր ներկալացնում Շտմախին նոյն ժամին, երբ երկրաշարժ առված աղէտալի երեսով կործանում էր ալսօրուալ լետ ընկած «խարաբա-շահարին»:

Քաղաքի արևմտեան կողմում, մարտկանեան անուանված թողի փողոցներից մէկում, գտնվում էին երկու փոքրիկ միլարկանի հարեան աներ: Այս աները իրանց արտաքին համեստ և անշուք տեսքով իրարուց զանազանվում էին մի բանով միայն, այն՝ որ մէկը փողոցի կողմից ուներ մի փոքրիկ պատուհան, միւսը — չուներ: Երկրաշարժից ուզիղ մի ժամ առաջ այս պատուհանի առաջ նստած էր մի կին, մօտ երեսունուհինդ տարեկան: Սա գերձակ Բարխուդարի ամուսինը, Գիւնազն էր: Նա նստած էր մի ծնկան վրայ, իսկ միւս ծունկը ձգած էր դէպի սենեակի յատակը, որ ծածկված էր ասխական գորգերով: Փողոցից միայն նրա կիսադէմն էր երեսում: Միջօրէի ախորժելի արե-

դակի ճառագալթները, անցնելով երկաթի վանդակով պաշտպանվող լուսամտի տպակիներով, սփռվել էին նրա վրայ: Զընալելով Գիւնազի տարիքին, նրա ոչայնքան նիհար այտերի վրայ դեռ պահպանվում էր երիտասարդական թարմութիւնը, իսկ խոչոր, սետոյն տչքերի մէջ փայլում էր մի կրակոտ արտայալտութիւն: Մեխակագոյն, նուրբ բըթից գործված շալի տակից մողերի ծալը հասնում էին մինչև մէջքը: Նա իւր ձեռում շտապով զօյնզգոյն գուլքալ էր գործում և թուրքերէն բարբառով երգում շամախեցի կնոշ սովորական բաեաթին:

Դադ, ինձի բռնեցին,
Նամփուրի վրայ խորպիցին,
Միսս կերան, կշացան,
Ուկորներս ձգեցին:

Տանը, բացի Գիւնազից, ոչ ոք չը կար: Նրա ամուսինը, Բարխուդարը խանութումն էր, որ գտնվում էր քաղաքի թըքարնակ թաղում, իսկ մեծ որդին, միակ որու գաւակը, տասնուհինդ տարեկան Սմբատը, դեռուսումնարանից չէր վերագրածել:

Փողոցում անցորդներ չըկացին: Մանկոհտսակ տըղաների և աղջկերանց մի խումբ, պատուհանի տոկ հաւաքված, մի ինչոք մանկական խող էր խագում: Ստէպ ստէպ Գիւնազը իւր հայեացքը դարձնում էր փողոց և նալում խտղացող մանուկներին: Մանկական անմեղ ձկվոցների ձայնը, հազիւհազ թափանցելով փակված պատուհանով, հասնում էր նրա ականջներին: Այս մանուկների հետ խաղում էր և նրա միակ աղջիկը, մօտ տասը տարեկան Առւանը: Գիւնազը բոլոր ծնողական անկեղծ զգացմունքներով սիրում է իւր Սուսանին և սիրում է այնչափ, որ չի վստահանում րուպէ անդամ աչքից հեռացնել: Այս պատճառով, պա-

տուշանի մօտ նստած, նա հսկում է Սուսանին իւր մայրական զգաստ աչքերով, որ չը լինի թէ մէկը ընկերներից որևէ վնաս հասցնի իւր աղջկան:

Դուրեկան էր, գեղեցիկ էր փոքրիկ Սուսանը: Նա գեղեցիկ էր, որսվհետեւ ներկայացնում էր իւր մօր Գիւլնազի, կատարելատիպը: Փոքրիկ աղջկը ժառանգաւար ստացել էր բնութիւնից իւր մօր բոլոր Փիզիքակոն լատկութիւնները, ամենաաննշան մանրամատնութիւններով անգամ: Բարխուդարը, ամեն անգամ իւր աղջկայ երեսին նայելիս, սովորութիւն ունէր ասելու: «Փառք քո զօրութենին, Տէր Ամենակարող Աստուած, Եղքան էլ նմանութիւն, հէնց կասես, որ մէր ու աւ Ջիկ մի խնձոր լինեն, երկու տեղ բոժնած»: Պակաս չէր զարմանում և ինքը, Գիւլնազը այս նմանութեան վրայ, նա մտարերում էր իւր մանկութիւնը ամեն բոսէ, երբ նայում էր Սուսանի երեսին: Նրան թուում էր, թէ այդ փոքրիկ դէմքի վրայ, ինչպէս հայելու մէջ, տեսնում է իւր դէմքը: Նոյն փայլուն, սերակ աչքերը երկայն թերթերունքներով, նոյն շնորհալի սրածալը քիթը, նուրը, վարդագոյն շրթունքները, գեղեցիկ այտերը, ի հարկ է, մանկութեան լատուկ թարմութեամբ:

Սուսանի հետ խաղացող երեխաների թւում կար մօտ տասներեք տարեկան մի տղայ: Սա ամենամօտիկ հարեւան «կուժ ծախող» Հայրապետի որդի Սէլրանն էր: Հայրապետը իւր ընտանիքով ապրում էր այն տան մէջ, որ գտնվում էր գերձակ Բարխուդարի տանը կից և որի մասին վերը մի ակնարկութիւն արինք:

Սուսանի և Սէլրանի մէջ նկատվում էր մի տեսակ մտերմութիւն, մի մտերմութիւն, որ, երեխ, առաջացել էր երկու մանուկների լաճախ տեսնվելուց: Այս մտերմութիւնը երեւան էր գալիս նամանաւանդ այն ժա-

մանակ, երբ Սէլրանը կոմ Սուսանը կովում էին իրանց ընկերակիցների հետ: Այսպիսի դէպքերում մէկը պաշտպանում էր միւսին. օրինակ, երբ Սէլրանը կովում էր մէկի հետ, Սուսանը իսկոյն լարձակվում էր նրա հակառակորդի վրայ, իւր փոքրիկ ձեռքերով բռնում նրա կորդի վրայ, իւր փոքրիկ ձեռքերով բռնում նրա արխալուզի փեշերը քածակից և բոլոր ուժով քաշում: Այսպիսով նա նպաստում էր Սէլրանի լազմութեան: Իսկ երբ Սէլրանի հակառակորդների թիւը մէկից աւելի էր լինում, այդ ժամանակ Սուսանը անմիջապէս վագում էր Սէլրանի մօրը լայտնելու:

—Մարիամ բաջի, Մարիամ բաջի, Սէլրանին երեխերքը սպանեցին, —ասում էր նա, արտասուքը աչքերում և երկիւզից ամբողջ մարմնով դոզգողալով:

Մարիամ բաջին իսկոյն դուքս էր թռչում և կովող մտնուկներին իրարուց ըտժանում: Սոյն պաշտպանութիւնը փոխադարձաբար ցոյց էր տալիս և Սէլրանը իւր կողմից Սուսանին, երբ վերջինին պատահում էր մէկի հետ կովել: Իսկ այս փոխադարձ պաշտպանութիւնը նրանց միւս ընկերակիցների մէջ զարթեցնում էր նախանձ, որ շատ անգամ արտալայտվում էր բացարձակ թշնամութեամբ: Սուսանին և Սէլրանին ծաղրում էին, նրանց վրայ ծիծաղում էին և պատահում էր մինչեւ անգամ, որ, ամենքը միանալով, լարձակվում էին նրանց վրայ ու ծեծում:

Գիւլնազին վազուց էր լայտնի այս ամենը և ալս էր պատճառը, որ նա շուտ նայում էր դէպի փողոց: Մի առանձին ախորժելի, միենոյն ժամանակ գառն ժայիտ էր սահում Գիւլնազի երեսով ամեն անգամ, երբ նա իւր հայեացքը ձգում է Սուսանի վրայ: Նա տեսնում էր, թէ ինչպէս իւր փոքրիկ Սուսանի դէմքը բերկըութեամբ փայլում է, երբ Սէլրանը մօտենալով նրան և ձեռ ձեռի տալով քաշում է խալի

— Զեռ քաշիր, ալ ախչի, խելքդ գլխիդ հաւաքիր,
որ տեսնենք բալաներս ինչ տեղ մնացին, — բղաւեց Մա-
րիամ բաջին, իւր բոլոր ոյժով հրելով Գիւլնազի կրծքին:
Խեղճ կինը բոլորովին ուժաթափ եղաւ, բայց
ոչ երկար ժամանակ: Մայրական սէրը կրկին վերա-
դարձրեց նրան իւր բնական աշխուժութիւնը: Նա, գլո-
խակոր վազելով, հետևեց Մարիամ բաջուն, որ նոյն
վայրկեանին ինքն էլ չը գիտէր, ուր է վազում:

Այս ամենը անցնում էր երկրաշարժը պատահած
բոպէին, երբ մարդիկ զգում էին թէ դեռ երկիրը չի
դադարել օրօրվելուց: Երկու մալրերը չըգիտէին ինչ
տեղ էին իրանց զաւակները: Գիւլնազը այնքան շը-
փոթված էր, որ մոռացել էր թէ մի բոպէ տուած նրա
Սուսանը խաղում էր մանուկների հետ հէնց իրանց
տան պատուհանի տուած, ուրեմն այդ կարճ միջոցում
նրանք չէին կարող շատ հեռու փախչել: Խեղճ կանաք,
փետերով իրանց գլխի մազերը և եղունգներով ճան-
կուտելով իրանց երեսն ու կուրծքը, վազում էին ալս-
ու այն կողմը, սուք ու շիւան բարձրացրած: Յան-
կարծ նրանց առաջը կտրեց մի գունաթափ մանուկ
և արտասուքը աչքերում, խեղճված ձախնով ասաց.

— Մարիամ բաջի, ալ Սէլրանը Սուսանի հետ մնա-
ցին հողի տակ, շուտ արէք հանեցէք, խեղճերի սիրու
կըճաքի:

Մանուկը ցոյց տուաւ մի փոքր գէպի ձախ այն-
տեղից, ուր ինքը քիչ առաջ անհոգութեամբ խաղում
էր Սուսանի ու Սէլրանի հետ: Մանկան բերանից թուած
այդ չարագուշակ խօսքերը, իբրև սուր ասեղներ, ցցվե-
ցին դժբաղդ մալրերի սրտում:

— Բալաս վայ, վայ բալաս, — դուրս թուաւ միտա-
մանակ նրանց կրծքից: Սա մի վայրենի ձախն էր, մի
ձախն, որ կարող է միայն մօք կրծքից դուրս գալ:

ասպարէզը, որտեղից Սուսանը սովորութիւն ունէր շուտ
շուտ հեռանալ և քաշիր պատի տակ: Նա տեսնում էր,
թէ ինչպէս Սէլրանը, լոնքերը կիտում էր ու գէմքը
թթուացնում, երբ որ և է բանով անրաւական էր
լինում Սուսանը:

Սկսպիսի բոպէներում Գիւլնազի գլխով տեսակ տե-
սակ մտքեր էին անցնում և նրա մալրական քնքուշ
սիրտը սկսում էր բարախել իւր զաւակի ասլագալ վի-
ճակի մատին: Նա կրկին մտաքերում իւր անցեալը, սեպ-
հական մանկութիւնը և այդ մանկութիւնն հետ կապ-
ված շատ լիշտակներ: Նա կրծքի խորքից արձակում էր
խորք հառաջանքներ: Թէ ինչնւ, - այդ ինքը միայն գիտէր:

Ահա այդ հառաջանքներից մէկի դուրս թռչե-
լու վայրկեանն էր, երբ Գիւլնազը լանկարծ զգաց մի
զօրեզ շարժում: Երկար մտածել չէր կտրելի, նա իմա-
ցաւ, ինչ է նշանակում այդ շարժումը: Դուլբան ձգեց
մի կողմ և մի ակնթարթում դուրս թռաւ:

Սուաջին վայրկեան Գիւլնազը մտաքերեց իւր զա-
ւակներին, լետոյ ամուսնուն: Որդին — Սմբատը ուսում-
նաբանում է իսկ ուսումնաբաննը բաւական հեռու է,
ուրեմն նախ հարկաւոր է որսնել Սուսանին: Գիւլնազը
վազեց փողոց, որ արդէն լցվել էր հարեւաններով:

— Ախչի, Գիւլնազ, Գիւլնազ, այ բօյիդ մեռնեմ,
բալաներս, բալաներս, — ասելով հանդիպեց նրան փողոցի
դունը մի միջտհասակ կին, երկու ձեռքերով ճանկը-
տելով իւր մերկացը կուրծքը:

Սա հարեւան պուժ ծախսող Հայրապետի կինն էր,
Սէլրանի մալրը, Մարիամ բաջին: Գիւլնազի մէջ կեն-
դանութիւն չէր մնացել, նրա լեզուն կտրվել էր. նա
խօսելու ոյժ չունէր: Սուանց պատասխան տալու, թը-
ռաւ առաջ և ընկաւ Մարիամ բաջու գիրկը, ինքն էլ
չըգիտէր ինչու համար:

Բարխուդարի և Հայրապետի խանութները գտըն-
փում էին քաղաքի միևնույն թաղում միևնույն շար-
ժույն ժամանք և որ այստեղ ևս նրանք հարևաններ էին:
Նոյն ժամանք, երբ Գիւլնազը պատուհանի առաջ նստած
դուլբայ էր գործում, նրա ամուսինը, Բարխուդարը,
իւր խանութում, մինդարի վրայ ծալապատիկ նստած,
դազեահի առաջ կար էր անում: Սա մօտ լիսուն տա-
րեկան բարձրահաստկ տղամարդ էր, հաստ և բաւա-
րոնց տակ տեղաւորված էին նրա շագանակագոյն կո-
լորակ աչքերը: Բարխուդարը աւելի նիհար էր, քան
գէր, բայց նրա այտերի տակից դուրս ցցված հաստ ոս-
կորները, լայն թիկունքները և բարձր ուսերը արտա-
լայտում էին նախտնձելի տոռղութիւն և ոյժ: Նա
հագնում էր երկայն թեւաւոր կապալ, նոյն ձևի արխա-
գոյն մետաքսեալ գօտի: Խօկ գլուխը ծածկում էր
բարձրակի սև մորթուց կարած երկայն, սրագուգամ
գոյն մետաքսեալ գօտի: Խօկ գլուխը ծածկում էր
գործուց էին, որի ծալրերը թէ ներքեից և թէ վերեից քիչ
մաշվել էին, տեղ տեղ մորթու մազերը թափիկել էր ու
սպիտակ կաշին մերկացել: Բացի Բարխուդարից, խա-
ռութում գործում էին երեք աշակերտներ և մի քեար-
շեար (օգնական վարպետ): Բարխուդարը իւր փոքրա-
ւորներին և՛ սիրում էր և՛ տուռմ. նա և՛ կակդութեամբ
էր վարփում նրանց հետ և՛ խստութեամբ, նայելով
թէ ինչ հոգեկան տրամադրութեան մէջ էր գտնվում:
Եթէ դոհ էր ինում իւր աշակերտների վարք ու բար-
քեց, կատարած գործերից, կատարեալ մի հայր էր
դառնում նրանց համար: Ովկը էր նրանց, ինչպէս
իւր Սմբատին և Սուսանին, պարգևներ էր բաշխում,

Հետը տուն էր տանում ճաշելու, ընթրելու կամ թէ ի-
խմելու: Մուշտարի եկած ժամանակ աշխատում էր, որ-
քան կարելի է «շագիրդանա» *) շատ պոկել: Խոկ երբ
նա տիսուր էր լինում կամ աշակերտներից անբաւական,
այն ժամանակ կատագում էր, և ինչպէս: Նրա մշտա-
կան մոալլ դէմքը կարմրում էր, աչքերը արիւնով լրց-
վում էին. նա մոռանում էր ամեն բան: Ել մկրատներ,
դազաչափեր, մօմի կոռուճներ, մատնոցներ, մահուդի
կտորտանք չէին մնում, որ նստած տեղից չըհացնէր
քանցուոր աշակերտի գլխին: Երբեմն պատահում էր, որ
գործ էր դնում կրակով լիք արգուկը կամ տեղից վեր
էր կենում, բարձրացնում էր փոքրիկ յանցաւորին
մինչև իւր գլուխը և միանգամից վայր խփում գե-
տնին: Աշակերտը զգում էր, թէ իբր մի բարձր ծառից
է ընկնում, այնքան երկայն էր վարպետի հասակը: Այս
քաւական չէր, պատժվելուց յետով, յանցաւորը չէր կա-
րող բարձր ծայնով լաց լինել, եթէ ոչ հաւատացած
էր, որ երկրորդ անգամ կըպատժի: Նա քաշվում էր
խանութի մի անկիւնը, և սովորաբար այն անկիւնը,
ուր տծուխ էր հաւաքած և, նստելով այստեղ, լաց էր
յինում կամացուկ, մինչև որ սիրտը հանդարտվում էր:
Այնուհետեւ Բարխուդարը սկսում էր նրա սիրտն առ-
նել, խրատներ տալ, ի հարկէ, միեւնոյն ժամանակ, ար-
տաքուստ ցոլց չըտալով, թէ փոշիմանել է իւր խստու-
թեան մասին:

—Քիչ տըզտզիր, վեր կաց, էս չուխան տար տուր
տիրոջը, ամա տես հայ, առանց շագիրդանի չի պուք գաս:

Պատժված աշակերտը աչքերը սրբում էր և ցաւը
մոռանում:

*) «Ծաղկիրանան» մի պարիկ պարպէ է փողով, որ հին
արհեստաւորկերը սովորութիւնը ունէին առնել իրանց աշխա-
կերտների գտիրն իմաշտարիներից

Երկրաշարժը պատահած ըոպէին Բարխուդարլը դարձեալ բարկացած էր աշակերտներից մէկի վրայ: Նա հենց նոր էր վերջացրել կշտին դրած մոմի կռուճները, դազաչափերը, մահուդի կտորտանքը և ուզում էր տեղից բարձրանալ, երբ բոլոր մարմնով դողաց և «թըրփ» մէկ էլ նորից նստեց տեղը:

— Ուստա, գներս թոփիր, տափը տիբուն ա կեսմ, — գոռաց քեարգեար Աարգիսը և, պատասխանի շըսպասելով, ինքը մի ոստումով թռաւ փողոց:

Բարխուդարը և աշակերտները անմիջապէս հետեւցին նրան:

— Սարգիս, դուքանը ձեռաց կապիր, ես տուն եմ վազում, — ասաց և գդակը գլխից հանելով (ինքն էլ ըլդիտէց ինչու համար), վազեց դէպի տուն:

Տունը բաւական հեռու էր, որովհետեւ գտնվում էր քաղաքի միւս ծալրում: Ամբողջ ճանապարհը Բարխուդարը պիտի բարձրանար դէպի վեր, որ մի մեծ դժուարութիւն էր նրա համար այդպիսի դրութեան մէջ: Նա սկսեց իւր երկայն ոտերին ոյժ տալ: Մէքանի քայլ չանցած, նրան հանդիպեց Հայրապետը:

— Զըրընգ, զըրընգ, փշրվեցին, Բարխուդար, տունքանդվեց:

— Քեչի շան հառալընդա, զասար—փիլ *), — պատասխանեց միայն Բարխուդարը, ուշադրութիւն ըլդարձնելով Հայրապետի վրայ և մինչև անդամ չընալով նրա երեսին:

Հարկանները շարունակեցին իրանց ճանապարհը դէպի տուն: Բարխուդարը արագիլի նման էր ընթանում, մինչդու Հայրապետը հազիւ հազ կարողանուած

*) Ագն իւր կամքի հոգսումն է, իսկ սպանդագործը՝ նրա ճարպի.

էր հետեւել նրան: Կարճահասակ մարդը ճարտհասեալ սկսեց վազ տալ, որպէս զի յետ չըմնայ իւր հարկանից:

Քաղաքը չէր հանդարտվում, փողոցները գեռ լիքն էին խառնինաղանճ ամբոխով: Հայրապետը և Բարխուդարը գժուարութեամբ էին կարողանում իրանց համար ճանապարհ բանալ: Ամեն մի քայլափոխում նրանց ճանապարհ մէկը մէկը միւսից զարհուրելի տեսաշ հանդիսանում էին մէկը միւսից զարհուրելի տեսարանները: Մի կողմում երեք չորս մարդիկ փալասի մէջ փաթաթած տանում էին բազարից դէպի տուն իրանց ազգականներից մէկի գիտելիք: Փալասի ծալրերը բռնովները լաց չեն լինում, նրանց աչքերի արտասուր չըլ չորսացել է. նրանք առաջ են շարժում լուս ու մունջ, իբրև գիշերալին ուրուականները: Միւս կողմում մէջքից ծոված մի ծերունի, կանգնած իւր փլատակվոծ տան աւերակների վրայ, ողբում է իւր որդու կորուստը, ուժաթափ ձեւները խփելով ալեզարդ գլխին: Այսաեղ հաւաքված են մի խումբ մանուկները: Նրանք, իրանց մօր դիակը շրջապատած, մի այնպիսի աղաղակ են բարձրացրել, որ լսողի գլխի մազերն են ցցվում: Այնտեղ ահա, ուղիղ փողոցի մէջ տեղում, մի կին է նստած: Նա իւր գրկում բռնտծ մանկահասակ աղջկայ շարդ ու փշուր եղած գլուխը, կատաղի համբուրում է նրան: Երբեմն երբեմն բարձրացնում է իւր գլուխը և, երկու ձեւներով բռնելով անցորդների հագուստի փեշերից, բգաւում է վալենի ձախով.

— Տուէք ինձ, ինձ տուէք մինիկ աղջկանս, դուք էք նրան սպանել, անաստուածներ, դուք քօմակ չք արիք նրան հողի տակից դուրս բերելու:

Սակայն անցորդները ուշադրութիւն չեն դարձնում նրա վրայ, միայն մի վայրկեան նայում են նրա արիւնալի աչքերին, գգժվել է», բացականչում և, գլուխները շարժելով, շանունակում իրանց ճանապարհը,

Եւ այսպէս, ամեն քալավոխուս Բարիուդարը և Հալրտղետը հանդիպում էին մէկը միւսից աւելի ողբերգական, աւելի սարսափելի պատկերների և ըոլոր մարմնով դողում:

Վերջապէս, հասան այն փողոցը, ուր գտընվում էին նրանց տները: Դեռ փողոցի ծալրից Բարիուդարը տեսաւ, որ իւր տան հանդէպ խոնվում են մարդիկ:

«Տունս թափվել է, կնիկս ու բալաներս տակն են մնացել», անցաւ նրա մտքով, և նա զգաց մի սոսկում: Պակաս չըսարսեց և Հալրապետը, բայց նոյն վալրկետնին յանկարծ նրանց առաջը կտրեց մի գունաթափ պատանի:

Սա Բարիուդարի որդի Սմբատն էր:

— Սուսանին էլ դուրս բերեցին հողի տակից, Սըմբատին էլ. սաղ սալամաթ են: Միքիչ Սէլիմանի դլուիը արնվել է, ինքը լաց չի կում, ասում է, չի ցաւում, ծիծաղում է:

— Բաս մէրդ, Մարիամ բաջիդ, սաղ սալամաթ են, հարցը Հալրապետը:

— Զիմ, չիմ սաղ սալամաթ են: Մարիամ բաջին ինձ առեց, որ վազ տամ ու ձեզանից խաբար իմանամ: Նուտ հասէք, նրանք նիդարան են, դրսում հաւաք ված լաց են լինում:

Փողոցում նրանք հանդիպեցին Գիւլնազին և Մարիամ բաջուն: Մարիամ բաջին, աեսնելով իւր ամուսնուն կենդանի և անվնաս, չըկարողացաւ զապել իւր ուրախութիւնը: Նա վազեց առաջ և ուզում էր փաթաթվել Հալրապետի վզովը, բայց յանկարծ մտաբերեց, որ փողոցում է և յետ քաշվեց: Իսկ ամօթխած Գիւլնազը ուրախութեան արտաքին ոչինչ նշան չըցոյց տուաւ:

— Սաղ սալամաթ են, խօսեց, վերջապէս, Մարիամ

բաջին, — Սէլիմանս ու Սուսանս ազատվեցին, ողորմի մեր հարեանների մեռելներին, նրանք մեզ ձեռք հասցըին, հանեցինք հողի տակից:

— Փառք Աստուծու, փառք Աստուծու, — ասացին միաբերան Բարիուդարն և Հալրապետը, իրանց երեսների քրտինքը սրբելով:

— Ամտ տունս քանդվեց, Մարիամ ջան, զըրնգ-զըրնգ կուժ ու կուլաս փշրվեցին: Ուժ, հէնց կասես ըլնգ կուժ ու կուլաս փշրվում, հաւատաս, մի հատ էլ սաղ սակորներս էին փշրվում, հաւատաս, մի հատ էլ սաղ չի մնացել: Պիտի վազ տամ, տեսնեմ:

— Փիյէ է, զահլա տարիք խօ, — յանդիմանեց Բարիուդարը իւր հարեանին, — ինչ անշնորհակալ մարդ ես խուգանը իւր հարեանին, — ինչ անշնորհակալ մարդ ես իւրած, մին երեսիդ խաչահանիր, որ մենք ամեններս սաղ սալամաթ ազատվել ենք:

Սլո ասելով, Բարիուդարը միւսների հետ շտապեց ներս:

Երկու հարեաններից ոչ մէկի տունը չէր քանդվել, միայն բագի կողմից ցած պարիսալը փլատակվել էր կիսով չափ: Նոյնպէս մի քանի տեղերից ճաքճաքվել էր փողոցի պարիսալը: Այս կողմից երկու հարեանները համեմատաբար բախտաւոր էին, քան միւս հարեանները, որոնցից շատերի տները կտարեալ աւերակ էին գարձել:

Բարիուդարն և Հալրապետը, տեղեկանալով Սուսանի և Սէլիմի մասին, շտապեցին իրանց ազգականների և բարեկամների մօտ «հալ օվհալ» իմանալու:

Մի երկու ժամից յետով վերադարձան և յալտնեցին, թէ փառք Աստուծոյ ամենքը փրկված են, միայն այս ինչի գլուխոն է քիչ ջարդուել, այն ինչի կուռն է դուրս ընկնել և տլն:

— Ամտ բանից երեսում է, շտամարդէ փչացել, ասում են մօտ լիսուն հողի կաչ, — աւելացըց Բարիուդարը:

Ի՞նչ լիսուն, սաղ քաղաքն է սուզի մէջ, — մէջ
մտաւ Հայրապետը: Գնացի, Մարիամ ջան, դուքանս տե-
սալ, մոխիր, մոխիր, հենց կասես, աման շամահներս
ձեռքով փշրած իլեն: Սաղերը ջոկեցի, զրադ դրի: Դը-
րուստ երկու հարիւր կուժ է մնացել, հարիւր կուլալ,
վեց կարս, տասներկու խաշխաշի գաւաթներ, է, մին
էլ քսանութ գիլասարի աման, մնացածը «Հիւֆֆ», թող:

III

Քաղաքը բաւական հանդարտվել էր, ցերեկուալ
խլացուցիչ աղմուկի, գլրդոցի փոխարէն այս ու այն
կողմերից լսվում էին լալու հանդարդ ձայներ: Իսկ քա-
ղաքի հեռաւոր մասերից, թրքերի թաղից երբեմն-եր-
բեմն բարձրանում էին ծնծղաների և թմբուկների հըն-
շիւններ: Կանանց, տղամարդկանց և երեխանների «շահ
Նիւսէլին, վահ Նիւսէլին» բացականչող ձայները, խառն-
վելով այդ հնչիւնների հետ և տարածվելով խաւար
մթնոլորտի մէջ, մի տեսակ անբացազրելի զարհուրանք
էին ազդում:

Սա թուրք դժբաղդ ընտանիքները էին, որոնք ող-
բում էին իրանց ազգականների յանկարծակի կորուստը:
Օդը բաւական մաքրվել էր: Փլատակված շինու-
թիւններից բարձրացած փոշին նստել էր գետնին: Եր-
կինքը պարզ էր, լուսին չըկար: Դժբաղդացած քաղա-
քի ողբերգութեան վկայ ասողերը պայծառութեամբ
պսպղում էին: Բնակիչները՝ ոմանք իրանց տների բա-
կերում, ոմանք փողոցներում, բաց օդի տակ կամ վը-
րանների մէջ՝ պատրաստվում էին հանգստանալու ցե-
րեկուալ չարչարանքներից լետոյ: Ոչոք չէր հսմարձակ-
վում իւր տունը մտնել: Որովհետեւ վտանգալի էր, ա-
մենքը երկիւղ ունէին երկրաշարժը կրկնվելուց:

Բարխուդարի և Հայրապետի ընտանիքները վճռե-
ցին այս գիշեր միասին անցկացնել: Գիւլնազը, Մարիամ
բաջու օդնութեամբ, սփռելով բագում, խորտակված
պարսպից քիչ հեռու, մի քանի կապերտներ, բաւական
ընդարձակ տեղ էր պատրաստել երկու ընտանիքների
համար:

Ֆամանակ է տսել, որ Բարխուդարի և Հայրապետի
ընտանիքների մէջ կար մի անկեղծ բարեկամութիւն
նահապետական ձեռվ: Երկու հարեւան ընտանիքները
մօտ քսան տարի էր, որ իսղազ և անխախտ շարու-
նակում էին այդ բարեկամութիւնը: Քսան տարիներ
ապրելով միասին, նրանք այնչափ ընտելացել էին իրա-
բու, որչափ հազիւ կարողանան ընտելանալ երկու
ազգական ընտանիքներ: Մէկի տիրութիւնը բնականա-
բար տիրութիւն էր պատճառում միւսին, ուրախու-
թիւնը՝ ուրախութիւն:

—Մի հատ քեզպէս հարեւանը ինձ համար թանգ է,
քան տասը ազգականներ, — դէպքը պատահած ժամա-
նակ Հայրապետը չէր մոռանում կրկնել Բարխուդարին:

Եթէ պատահում էր, որ նրանցից մէկը այս կամ
այն ձախորդութեան պատճառով ընկնում էր նիւթա-
կան կամ բարոյական նեղ դրութեան մէջ, իսկոյն միւսը,
առանց հարցնելու, աշխատում էր իւր հարեւանին դուրս
բերել նեղութիւնից:

— Բարխուդար:

— Հըմ:

— Ախար երէկ էլի «Ժլատ Սարգիսը» բազարուժ
քռնեց ինձ:

— Պատճառը:

— Դուքանի քրէհ է ուղում:

— Լաւ:

Եւ Բարխուդարը միւս օրը, մի կերպ հաշիւը վեր-

չացնելով «Ժշատ Սարգսի» հետ, Հայրապետի օձիքը ազատում էր նրա ձեռից:

Այսպիսի սերտ բարեկամութեան շնորհով շատ հազիւ էր սլատահում, որ երկու ընտանիքները նեղ դրութեան մէջ մնալին:

—Ունախութիւն ունախութեանց, այսօր բաղումնենք, վազը հողումը, —կրկնում էր շուա շուա Բարխուդարը:

Միւս հարեանները, տեսնելով Բարխուդարի և Հայրապետի այս բարեկամութիւնը, զարմանում էին, մանաւանդ նրանք, որոնք աւելի մօտիկ էին ծանօթերկու հարեանների բնաւորութեանը: Այսպիսինների համար մի հանելուկ էր, արդեօք ինչն է նպաստում Հայրապետի և Բարխուդարի ալիքափ սերտ բարեկամութեանը: Նրանք երկար միջոց երարու հետ վիճաբանում էին այս մասին: Վերջ ի վերջու, իրանց կարծիքով, մի կերպ իրեւ թէ հանելուկը բացադրեցին:

Առաջ Հայրապետի ու Բարխուդարի հարեանները ալսպէս էին դատում:

—Տանձ ու խնձոր մի ծառի վրայ ովէ տեսել Սխար մինը կրակի կտոր-գալլ է, միւսը գլուխը բօշոչիար, եարաք ինչպէս են իրարու աչքը մտել:

Իսկ իտոյ, երբ, իրանց կարծիքով, գաղտնիքը իմացան, ալսպէս էին դատում.

—Մինը էշ է, միւսն փալան:

Ալսպէս թէ այնպէս, Հայրապետը և Բարխուդարը բարեկամներ էին, և այս բարեկամութիւնը իրաւունք էր տալիս նրանց ընտանիքներին միասին գիշերելու:

Բարխուդարը նստած էր փափուկ մինդարներից մէկի վրար նա, մի կուռը բարձին լենած, միւս ձեռով երկայն ու բարակ չիբուխը բռնած, մտածողութեան մէջ թաղված, ծխում էր: Թաղստանի դառն

թամբաքուի ծուխը, քուլա-քուլա գուրս սընթալով նրա հաստ բեղերի տակից, ոլոր-մոլոր պտուտներով բարձրանում էր խաղաղ օդի մէջ: Ամեն անգամ ծխի քուլաները բերանից դուրս արձակելու ժամանակ, Բարխուդարը զլուխը բարձրացնում էր վեր և, կրկին ցած ձգելով, «Ճըրթ» թքում գետնին: Հայրապետը նստած էր նրա դէմ ու դէմ: Այս մարդը նոյնպէս ինչ-որ մտածմունքների մէջ էր, ինչպէս ալդ երեսում էր նրա ճակատի կնճիռներից: Երկարն տէրողորմեայի սե ու խոշոր հատիկները, կանոնաւոր կերպով պտուտ գալով նրա ձեռում, չխկչխկում էին միատեսակ ձայնով: Կար մի տեսակ ներդաշնակութիւն ալդ չխկչխկոցների և Բարխուդարի բերանից դուրս եկող ծխի քուլաների մէջ:

Սմբատը, մի կողմը քաշված, ճրագի առաջ ինչոր գիրք էր թերթում: Նրանից մի փոքր հեռու Մարիամ բաջին և Գիւնազը, քիթ քթի տուած, ընթըքի սլատրաստութիւն էին տեսնում, երբեմն իրարու հետ քչփչալով: Սուսանը և Սէլլանը պառկած էին Բարխուդարի ձախ կողմում, ջոկ-ջոկ անկողինների մէջ:

Սէլլանի գլուխը և ձախ աչքը փաթաթված էին կարմիր թաշկինակով: Սուսանը բոլորովին անվնաս էր պլրծել:

Ատանգից փրկված մանուկները, իրարու դէմ պառկած, խօսակցում էին մի քանի ժամ առաջ իրանց գըլխով տնցած փորձանքի մասին: Նրանք խօսում էին այնպիսի սառնասրտութեամբ, որ կարող էր ամաչեցնել հասակաւորներին:

—Ես հողի տակ չըլսեցի կարմիր կովի ձախնը, —ասում էր Սէլլանը:

—Ես լսեցի. նա մին բառաջում էր, մին բառաջում էր, որ ջանս զարգանդում էր, —պատասխանեց Սուսանը:

—Ի՞նչպիսի կով էր. պօզեր ունէր:

— Աւնէր, ունէր, ամեն պօզը էն ծառի բօյի, —
Սուսանը իւր փոքրիկ ձեռով ցոյց տւաւ բագում գտնվող
կանաչարդ թթենին:

— Աչքեր էլ ունէր, — կրկին հարցրեց Սէլրանը:

— Բաս, բաս, ալ էսպէս, — Սուսանը վերմակի տակից
հանեց երկու ձեռքերը և, նրանց ծայրերը իրարու մօ-
տեցնելով, կռներով մի շրջանտկ կազմեց:

— Ես պօզերն էլ տեսալ, գլուխն էլ տեսալ, աչ-
քերն էլ տեսալ, — շարունակեց Սուսանը, — բիւթուն տե-
սայ, բիւթուն: Սէլրան, նա բերանը բաց էր արել ու ինձ
ասում էր. «Սուսան, Սուսան, ես քեզ կուլ կըտամ, իմա-
նում եսո: Սէլրան, նրա բերանից, քթի ծակերից, աչքերից
մին կրակ էր փչում, մին կրտկ էր փչում քիի, կասես,
մեր էն մեծ թունդուրը իլէր: Դու տեսել ես մեր մեծ
թունդուրը:

— Հա, տեսել եմ:

— Իմանում ես, որ հաց թխելիս նրա մէջ ալօվը
ինչպէս է «գուփ, գուփ» անում:

— Հա, տեսել եմ, իմանում եմ:

— Այ, կովի բերանի կրակն էլ հենց էնէնց «գուփ
գուփ» էր անում: Իմանում ես: Բաս, լեզուն, էլ մի
ասա, վալ վալ. հենց կասես, որ կարմիր նոր թխած
հաց լինէր:

— Սուտ ես ասում, ես չեմ հաւատում, — ընդմիջեց
նրան Սէլրանը, ուղղելով իւր գլխի թաշկինակը:

— Ես եմ սուտ տսում, եէէէս, եէէէս, — բարկա-
ցաւ Սուսանը, գլուխը բարձրացնելով և ձեռներով ճա-
կատի վրայ թափած գանգուր մազերը յետ գարսելով:
Բաս չես իմանում, որ տափի տակին կարմիր կով կալ:
Չես իմանում, որ երբ-որ մարդիկ կարմիր կովին շատ
են կթում, էլ նրա պստիկ բալի համար կաթ չեն թող-
նում, կովը հրսոտվում է մեզ վրայ: Չես իմանում, որ

պօզերով տափը ժամ է տալիս ու մեզ էլ տակովն է
անում էսօրուայ պէս: Հըմ, Հըմ, չես իմանում:

— Քեզանից էլ լաւ եմ իմանում, ինչպէս չեմ իմա-
նում, ամա դու էլի սուտ ես ասում, ինչու-որ նրան
հողի տակը իսկի չես տեսել:

— Սուտը դու ես, որ չես հաւատում: Սուտ, սուտ,
սուտ:

— Ուտես հաւի կուտ, Հը՛ը, գէհ, լաւ էր, — բար-
կացաւ Սուսանը և կարմրեց:

— Հա հա հա, — կչկչաց Սէլրանը:

— Ծիծաղիր, ծիծաղիր, անհաւատ, հարցրու հայ-
րիկից:

— Էլի բնչ կալ, ինչու համար էք կոիւ անում, —
մէջ մտաւ Բարխուդարը, վերջապէս, չիբուխը հանելով
բերանից և կշտին դնելով:

— Սէլրանը չի հաւատում, որ տափի տակին կար-
միր կով կալ:

— Սուտ է ասում Սուսանը, ես հաւատում եմ, —
արդարացաւ Սէլրանը:

— Հա, կալ բալաներս, բաս որ ըլլինէր, էս օր
տափը ժամ կըգալը, — ասաց Բարխուդարը, քաղցրու-
թեամբ շոլելով Սուսանի մազերը և համբուրելով նրա
ճակատը:

— Ով էր հրսոտացրել կարմիր կովին, որ մեզ հողի
տակ թողեց, — հարցրեց Սէլրանը:

— Զեզպէս չար ու կոռուարը երեխերքը:

— Մենք բնչ ենք արել, որ ասում ես:

— Էլ ինչ պիտի անէք. մեր խօսքը չէք լսում,
մեր ասածը չէք կատարում, չարութիւններ էք անում,
երեխաների հետ կոիւ էք անում ամեն օր, ալ ինչ էք
անում:

— Ես իսկի կոիւ չեմ անում, — հակառակեց Սուսանը:

—Ես Սուսանին էնքան եմ սիրում, էնքան եմ սիրում, որ չեմ ուզում ինձանից հեռանալ, ինչու պիտի կոիւ անենք, —աւելացրեց Սէլրանը:

—Չատ լաւ էք անում, շատ լաւ էք անում, բալաներս, ուրիշ երեխաների հետ էլ էդպէս սիրով վարվեցէք, նրանց հետ էլ կոիւ մի տնենք:

—Թրանք են մեղ հետ կոիւ անում, մենք իսկի կոիւ չենք անում, —պատախանեցին միաբերան մակուկները:

—Մեզ փախըլութիւն են անում նրանք, շարունակեց Սէլրանը, —հենց տեսնում են, որ ես ու Սուսակը մի տեղ խաղ ենք անում, թափվում են մեզ վրայ, ծիծաղում են, մեր աչքերին հող են ածում, մեզ «Հըռհըռ» են կանչում: Մենք էլ հուրսոտվում ենք նրանց վրայ ու կոիւ անում: Այ, էն օրը թափուղանց Զհանգիրը ուզում էր Սուսանի մտզերից քաշի, ամա հենց որ ես մտեցալ, մի սիլլա տուի, մի սիլլա տուի, որ մի բաշ փախաւ իրանց տուն:

—Ի՞նչ էիր խօսում, Սուսի ջան, Սէլրանի հետ հողի տակ, —հարցրեց Հալրապետը, վերշապէս, ընդհատելով իւր տէրողորմալի ըրխկըրխկոցը:

—Ի՞նչ էի խօսում, հա, չէ չէ, չեմ իմանում, միտս մի, Սէլրանը կասի:

—Խօսում չէինք, լաց էինք իլում, —մէջ մտաւ Սէլրանը:

—Նէրիք է, Սէլրան, քիչ խօսիր, ալ գեղա, գլուխդ կըցաւի, —շնչեց Մարիամ բաջին, մօտենալով իւր որդուն:

Յետոյ նա, շալը բերանին պահած, մօտեցաւ իւր ամուսնուն և ցած ձախով աւելացրեց.

—Այ մարդ, երեխիս մի թողնիր, որ հողի տակ մնալը միտը զցի, ախար կըզարդանդի ու լետոյ կըհիւանդանալը:

—Քո բանը չի, թող ինչքան ուզում է՝ խօսի, սիրութը կըպինդանալ, մին էլ, որ կըմեծանալ, կըմուտնալ, —ասաց Հայրապետը: —Սա, բալաս, ինչպէս մնացիր հողի տակ, ինչ էիք խօսում:

Սէլրանը, կարծես, հենց մի այդպիսի առիթ էր սրոնում: Նա գլուխը բարձրացրեց, ծալապատիկ նստեց անկողնի մէջ և ալսպէս սկսեց.

—Սուսանը տիկին-տիկին էր խաղում Սուսամբարի, Թագուհու, Զազարի, Սապանի, Խաթալիի, Նուրջիկ ու Յուռուսիկի հետ, ես էլ թամաշա էի անում: Մին էլ տեսնենք «գիւռ-դիւռ» երկինքը գուգոռեց, տափը լըխիսեց, գլուխս շուռ տուաւ, ոտի վրայ կանգնել չըկարողացալ: Զիմ փախան, ես ու մէկէլ Սուսանը մնացինք: Ես էլ կըփախչէի, ամա Սուսանը մնաց, եկաւ կպաւ շորերիցս, պուկ չ'եկաւ, ես էլ չըկարողացալ ոտ փոխել: Մին փախտ տեսնենք Ախչամանանց գուռը «Ժարախիկ» մեզ վրայ ընկաւ, մի քիչ գլխիս կպաւ, ամա մին ցաւացրեց, մին ցաւացրեց, որ ես հառայ տուի ու տեղբատեղ ընկաւ: Սուսանն էլ ընկաւ իմ կողքիս: Խեղճը մին լաց էր իլում, որ մազերս գիք-գիք էր կանգնում, սիրտս մըզկըտ-մըզկըտ էր անում: Մին էլ տեսնեմ «գիւռգիւռ» հողը սելի պէս թափվեց մեր գլխին, ամա Ախչամանանց գուռը ընկած էր մեզ վրայ ու չէր թողնում, որ հողը մեղ շատ զօռ տնի: Սուսանը փախութենից ինձ զուջ արաւ, ռախ մամա, վայ մամա կանչելով:

—Յետոյ, յետոյ, հա, տեղս գինջ էր, գլխիս ճղված տեղը շատ ցաւում էր, նաֆասս էլ մին քիչ փաթաթվում էր: Սուսանը ասեց. «Սէլրան, գա տափի տակի կարմիր կովն է, էլի հուրսոտվել է մեզ վրայ... Յետոյ, յետոյ, ես ասեցի. «Սուսան եկ մենք էստեղից գուրս գալուց յետոյ, էլ չարութիւն չանենք, կարմիր կովն

ըՅՀուրսոտացնենք, երեխաների հետ կռիւ չանենք, չիմին սիրենք: Սուսանը ասեց. «Հա կըսիրեմ, կըսիրեմ չիմ երեխաներին կըսիրեմ, մինիկ եղբօրս արել վկայ կըսիրեմ. թող մին ազատվենք, թող մինիկ մամիս երեսը տեսնեմ»:

— Ես որ ասեց, էլի լաց իլաւ, ես էլ լաց իլաւ, երկուսներս էլ ձեն ձենի տուփինք ու լաց իլանք: Իմ խեղճս գալիս էր Սուսանին: Յետոյ... յետոյ յետոյ ինչ իլաւ, հա չեմ ասիլ:

Սէլրանը, վերջին խօսքերը ամերով, գլուխը ցած թեքեց և սկսեց ամօթխածութեամբ աչքերի տակով նալել Սուսանին: Նրա ականջները և երեսը կարմը րեցին: Սուսանը աչքերը պլշած, ականջները խլշած, ուշագրութեամբ լսում էր նրան:

— Յետոյ ինչ իլաւ, — հարցրեց Հալրապետը, ձեռքերով շոկելով Սէլրանի գլուխսը:

— Յետոյ, ես դռնի տակից ձեռքերս մեկնեցի, զուշ արի ու պաշեցի, էլ նրանից յետոյ ինչ իլաւ, ինչ չիլաւ, միտս չի:

— Ո՞ւմին պաշեցիր:

— Սուսանին:

— Ալ դոչաղ, — բացականչեց Հալրապետը, աջ ձեռք դնելով իւր որդու ուսին և ուղիղ նալելով նրա աչքերին:

— Սուտ, սուտ, սուտ է ասում, նա ինձ չի պաշել — մէջ մտաւ Սուսանը, որի գեղեցիկ թշերը, որ առանց այն էլ կարմիր էին, Սէլրանի խօսքերից յետոյ, վարդի գոյն ստացան,

— Դու ես սուտ ասում, պաշել եմ, մտքիդ չի:

— Լաւ է, լաւ, մի հուրսոտվի, Սուսի ջան, ինչ անենք որ պաշել է, եղբայրը քրոջը կըպաշի էլի, — հանգստացրեց մանուկներին Բարխուդարը, քաղցրու-

թեամբ նալելով նրանց երեսին: Մանուկները լռեցին, Բարխուդարը չիքուխը կրկին վառեց և կրկին ընկաւ մտածողութեան մէջ,

IV

Ընթրիքը պատրաստ էր: Մարիամ բաջին և Գիւլնազին խօսքը բաց արին մէջտեղ կապտագոյն, մաքուր սփոռոցը և վրէն շարեցին տեսակ-տեսակ ուտելեղէններ: Իրարու ջրդու երկու տանտիկինները ինչոր ունեին բերին մէջտեղ գետնախնձոր, քամած մածուն, եփած հաւ, ոչխարի խորոված, խաշած ձուեր, թթուեղէն, կանաչեղէն: Իսկ Գիւլնազը իւր կողմից այս բոլորը զարդարեց խաղողի թունդ օղիով լիքը մի մեծ շիշով, որ նա բերաւ ու թրամական իւր ամուսնու ծնկան առաջ: Բոլորը պատրաստելուց յետոյ, Մարիամ բաջին և Գիւլնազը քաշվեցին մի կողմ:

Վերջապէս, ընթրիքը սկսվեց, օղու բաժակները մի քանի անգամ լցվեցին ու գատարկվեցին: Կարծես, երկու հարեանները կամենում էին ալքօհօլի զօրութեամբ ջնջել իրանց սրտերից ցերեկուալ անցքից մնացած ծանր տպաւորութիւնը:

Հալրապետի գլուխն աւելի շուտ տաքացաւ քան Բարխուդարինը: Բանն այնուեղ հասաւ, որ նա մինչեւ անգամ մոռացաւ իւր կուժ ու կուլան: Այս բաւական չէ, նա իւր ալեխառն գլխից հանելով մորթու գդակը, փորձեց Քեօուօղութի շիքեաստաններից մինը կըլկացնելու: Սակայն Բարխուդարը, այս նկատելով, լիշեցրեց նրան, թէ անյարմար է, որովհետեւ բոլոր հարեանները գրսումն են, կըլսեն և կըծիծաղին:

— Ափսոս, ափսոս, Բարխուդար, էշիս միջումս թողիր: Ալ համ, համ, փուչ է փուչ աշխարհս. Տէր-Մա-

թալն ասում է. «Ե ասէ հող եիր ու հող դառնաօ»:
Եհ, քէֆդ քեօք պահիր, ինչ կալ, փառք Աստուծոյ, մեռ-
նեմ նրա զօրութենին, նա ուզում էր մեզ խրատել ու
խրատեց, լաւ խրատեց, շատ լաւ խրատեց։ Ամա կուժ
ու կուլաս զըրընդ զըրընդ համ, փահ փահ, սիրտս էր
մըզկտում, չունքի գէ էլի ապրանք է էլի։ Ադա, էհ,
ջառ ու ջաննամը, խալխը կտորվեցին, կուժ ու կուլաս
մտադ Սէլրանիս ու Սուսանիս գլխի մի մազին։

Արտասանելով ալս ճառը, Հայրապետը օղու բա-
ժակը միանգամից գատարկեց և, իւր կարճլիկ բեղերը
սրբելով, թաշկինակը ձգեց ուսերին։

Բարխուդարը ուտում էր և թէն ըստ երեսյթին
լսում էր հարեւանի ճառաբանութիւնը, բայց ներքուստ,
կարծես, միտքը ուրիշ բանով էր զբաղված։

—Ինչքան որ, Բարխուդար ջան, Փիքը անես, հա-
րեւը կոպէկը էլի մին մանէթ է. հնդ, հնդ, ամեններս
հող ենք դառնալու։ Մարիամ ջան, Գիւլնազ խանում,
կոնծեցէք, որ սիրտներդ բացվի, մոռանաք էսօրուայ-
տեսածներդ։

Բարխուդարը լուռ ու մունջ ընթրում էր, երեմն
օղին կուժ անելով քիչ-քիչ։ Երբ Հայրապետը լոեց, նա
յանկարծ արագութեամբ սրբեց բեղերը և, մի ձեռով
բարձրացնելով օղու շիշը, միւսով բաժակը, ասաց.

—Հայրապետ, մտքովս մին բան է անցնում, մին
թաս էլ արադ ածիր, տեսնենք։

—Թող հազարն անց կենալ, ամա խէր իլի։ Ասում
ես, որ ածեմ։ Օհօ, բաշ իւստալ (գլխիս վլալ), ջանս
դուրս գալ, ինչ անեմ, ճարս կտրած, սիտի դժուար
հրամանդ կատարեմ։

Հայրապետը բաժակը պահեց ձեռքին, Բարխու-
դարը լցըեց մինչև ծալը։

—Դէհ, հիմայ կարող ես հրամայել, Բարխուդար
ջան, Տէր Աստուած, դու խէրը վերաբերես։

—Խէր չիլած, ինչ կալ, փառք Աստուծոյ։ Հայրա-
պետ, առաջ էս խասը խմենք մեր Սուսանի և Սէլրանի
կենացը։ Ողորմած Աստուածը մեր ծերութեան օրում
մեզ խնալց ու նրանց մեզ մէկ էլ նորից բաշխեց, թող
օրէս գէն էլ պահի ու պաշտպանի մեզ համար։

—Երկու ձեռներով սինդ պահի, ափարիմ, ափա-
րիմ, Բարխուդար, ճարտար լեզուիդ զուրբան, —բա-
ցականչեց Հայրապետը, միանգամից պարպելով բաժա-
ժակը։

—Հայրապետ, քանի տարի է մենք միասին հա-
րեւանութիւն ենք անում, էսքան ժամանակ, գոհո-
թիւն Աստուծոյ, մենք մի անգամ էլ իրարուց չենք
նեղացել։

—Իսկի՞, իսկի՞. ով է տեսել, որ ես քեզ կամ գու-
ինձ ասած իլես. «ալ մարդ, ոտդ էրվում է, զրազ գիր», —
ընդմիջեց Հայրապետը։

—Ինչպէս մենք, էնալէս էլ մեր օղլուշալը, ապ-
րել ենք սէր, միաբան, որ համ Աստծուն է դուր
եկել, համ էլ բետնդին խօշ, —շարունակեց Բարխուդա-
րը։ —Ղորթ է, ես եղբայր չեմ ունեցել, բայց, Աստ-
ուած վկալ է, միշտ քեզ եղբօրից աւելի եմ իմացել։
Եհ, Հայրապետ, չեմ իմանում թէ մէրս որ ինձալէս
մէկն էլ ծնէր, ես նրա հետ ինչպէս պիտի վարվէի։
Մաիկ եմ աւալիս հիմիկուայ աշխարհին, մտիկ եմ տալիս
հիմիկուայ եղբայրներին ու ողորմի եմ տալիս մօրս հո-
գուն, որ նա ինձ համար եղբայր չի ծնել։ Ով է իմա-
նում, նա էլ ինձ համար ուրիշների եղբօրց նման եղ-
բայր կըլինէր, որ հիմայ փողի համար իրարու գլուխ-
ներն են ծակում, ինչպէս հրէն Արդուշանց Եփրեմը
ու Գրիգորը։ Աստուած է վկալ, որ ամեն մի մտիկ ա-

Նելիս հիմիկուալ աշխարհին, որ միտք եմ անում, մազերս դիբ-դիբ են կանգնում, մարմինս փշաքաղում է: Հայրապետ, ցաւերս եռ են գալիս, բախչիր, Հայրապետ, մարդս կեղոտվել է, մարդս փշացել է: Ել հայա, էլ արուռ չի մնացել, նամուս ասված բանը ճրագով որ պտուս, չես կարող գտնել, չըկայ: Բառ Աստուած ինչ անի, որ, էս ամենը տեսնելով, էսօրուալ պէս ոլատիթ չըհացնի մեր մեղաւոր գլխին: Թացն էլ երփում է չորի կրակով: Էլ գողութիւն ասես, մարդասպանութիւն ասես, խարեթայութիւն, սուտ ասել, էլ մի մեղք չի մնացել, որ չ'անեն: Չմուշկ կարողը փթած կաշուց է կարում, դարզին մուշտարու չուխից աւելացած մահուդն է դազգետհի տակը կոխում կամ «մինդարալթի» անում, էլ որ մինը ասես: Հիմայ դէ, էլ ինչ երկարացնեմ, Հայրապետ, խօսքս նա է, որ էս ամենը տեսնելով, ես մեր քաջաքի խալիսից զզուել եմ և էդ պատճառով է, որ էսօրուալ օրը ես ոչ մի մարդու հետ գործ չեմ ուզում բռնել, չեմ խառնվում: Մի հատ մարդ, որ իմ աչքումս հալալ է երեսում, Հայրապետ, դա դու ես: Չ'ասես, որ երեսիդ եմ ասում: Ուբալութիւնը մինչև մեր մահի գուռը հաստատ պահի...:

— Ամէն, ամէն, — կրկնեցին միւս կողմից Մարիամ բացին և Գիւլնազը միաբերան հազիւ լսելի ձայնով: Սմբատը, Սուսանն ու Սէլրանը արդէն քնած էին: Իսկ ինչ վերաբերում է Հայրապետին—նա, օլիի ազգեցութիւնից փայլող աչքերը չուած, ուշագրութեամբ լըսում էր Բարիսուդարի ճառը: Վերջին խօսքերը լսելու ժամանակ խեղճ մարդը ալ ևս չըկարողացաւ զսպել իւր արտասուքը: Նա սկսեց փոքրիկ մանկան նման հեկեկալ:

— Հիմայ երեխալի պէս լաց ես իլում, ամա ինչոք

մտքովս անցնում է, նա էլ որ ասեմ, Հայրապետ, պիտի ծիծաղես: Անպատճառ կըծիծաղես, ինչու-որ շատ լաւ բան եմ տսելու:

— Ասա, ասա, Բարխուդար ջան: Իմ լեզուս, Տէր-Մաթալի ասուծ, Զաքարիալի լեզուի պէս պասլանձվել է, ես խօսելու հնար չունիմ:

— Միտքս էն է, Հայրապետ, որ մենք պիտի աշխատենք մեր բարեկամութիւնը պինդ պահել, որ չըլինի թէ մեր միջովը սև կատու անցկենալ: Մենք պիտի էն-պէս մօտիկ ապլենք, որ ջուրը ջրութենով մեր դամով չանցնի: Լսում ես, ջուրը ջրութենով: Հիմայ դու կըհարցնես, դա ինչպէս կըլինի: Ականջներդ լաւ բաց արա, Հայրապետ ու լաւ լսիր, տես ինչ եմ ասում: Դու քնում ես, այ մարդ:

Իրաւ, Հայրապետը, կարծես, ուզում էր քնել: Նրա կոպերը յոդնածութիւնից և օլիի զօրութիւնից ալնքան ծանրացել էին, որ նա չէր կարողանում աչքերը բաց պահել: Իսկ տանձի կոմի պէս թուլացած շինքը ոլժ չունէր, որ նրա գլուխը ուղիղ պահէր, վասնորոյ վերջինը տատանվում էր այս կողմ այն կողմ:

— Մի քիչ գլուխս թարագ չի, ամա ասա, ասա, Բարխուդար, խօսքերիցդ մինն էլ բաց չեմ թողնում:

— Թարագ պահիր, տես ինչ եմ ասում:

— Հըը'...

Հայրապետը գլուխը մի կերպ բարձրացրեց, կոպերը յոնքերի հետ ոյժով քաշեց դէպի ճակատը և նայեց Բարխուդարի երեսին: Ճրագի դեղնագոյն լուսոյ առաջ նրա կարմրած աչքերը փայլեցին:

— Նատուց է, որ տեսնում եմ իմ Սուսանիս և քո Սէլրանիդ մէջ կայ մի մօտաւորութիւն. Նրանք իրարու հետ էնպէս են վարփում, ինչպէս մի հօրից ու մի մօրից ծնվածներ: Ե՛կ, Հայրապետ ջան, մենք էլ մեր

ձեռքով էս երեխաների սէրը հաստատենք և մեր բերանով օրհնենք: Էսօրուայ օրը նշանաւոր է, Եկ Սէլրանին ու Սուսանին հէնց էս գիշեր իրարու հետ կապենք ու Աստծուն բախշենք: Ես Սուսանիս բախշեցի քո Սէլրանին: Սուսանը, փառք Աստուծոր, օրից օր չափահասանում է: Եսօր էգուց նրան, մեր քաղաքի ադաթի գեօրայ, կըգցենք տուն, որ եադ ազի երես չըտեսնի, ինչպէս-որ աղջկայ պարաքն է և ինչպէս-որ մեր պատիւն է ուզում: Ամա ես իստակ սրտից խօսք եմ տալիս, որ Սուսան Սէլրանինը կըլինի: Իմ ասածս ասած է, արածս էլ արած, խօսքից լիո չեմ կանգնիլ, եթէ Սէլրանիդ էնպէս կըմեծացնես, որ նոմեր քաղաքի «չաթու քետանների» պէս տղայ չըդուրս գալ: Լսում ես: Գէհ, ասա՛, Հալրապետ ջան, ինչ ես ասում, լաւ միտք եմ արել թէ չէ:

Բարխուղարի խօսելու ժամանակ Գիւլնագի և Մարիամ բաջու քըչփչոցը քանի գնում այնքան կենդանանում էր:

Երբ Բարխուղարը, իւր խօսքերը տւարտելով, գիւմեց Հալրապետին, Հարցնելով սրա կամքը, վերջինը մի քանի վարկեան ոչինչ չըպատասխանեց: Նա տալշածնալում էր իւր հարեւանի երեսին: Յանկարծ ըստափլեց, գդակը գլխից վերցրեց և, որքան կռնումը ոլժ կար, խփեց գետնին:

—Մարիամ ջան, Մարիամ ջան, մի մօտ եկ, էս-ամեղ վազիր, մօտս, ալ, Համ համ, էս աեղ կանգնիր:

Մարիամ բաջին զարմացած մօտեցաւ իւր ամսունուն և կանգնեց նրա մօտ, մի ձեռով շալի ծալը բերանին պահած: Հալրապետը բռնեց նրա արխալուզի փեշից, կարծես, վախենալով, մի դուցէ ձեռից փախչի:

—Մարիամ ջան, գու քո հօր աղջիկը չես իլի, մարդու գտակ չես իլի, թէ որ սուտ ասես: Զելաւ,

հալա մին երեսիդ խտչակնքիր տեսնեմ, համա, էգպէս: Գէհ, Մարիամ, ցաւդ առնեմ, հիմայ ասա, քանի-քանի անգամ եմ ես Փիքը արել հէնց Բարխուղարի ասածը: Հըմ, միտգ չի, ասա էլի, լալ իս չես. հըմ, քանի անգամ եմ քեզ ասել, որ լաւ կըլինի մեր Սէլրանին Սուսանի հետ բէշիգքեարթմա անենք: Ասա էլի...

Մարիամ բաջին դէպի Բարխուղարի կողմը գլխով նշան արաւ, թէ ճշմարիտ է ասում Հալրապետը:

—Զէէ, չէ, չիլաւ, լեզուովդ ասա: Խօսիր, խօսիր, հաջաթ չի, մի ամտչիր,—Հրամայեց Հալրապետը:

—Ղորթ է ասում, շատ է ասել,—Գնթփնթաց քթի տակ Մարիամ բաջին:

—Լսում ես, Բարխուղար: Գէհ, հափ-հափ հուռուայ, էս թասն էլ կըլիմենք Սուսանիս և Սէլրանիս բէշիգքեարթմի հոմար:

Մարիամ բաջին մօտեցաւ Գիւլնագին: Երկու տանտիկինները, օգուտ քաղելով լաջող դէպից, վերջապէս, կամեցան զոնէ առժամանակ արձակել իրանց լեզուների սանձը:

—Հըմ, ինչ կայ քըչփըչում էք, խօսեցէք, տեսնենք, գնուք ինչ էք ասում, —գիմեց նրանց Բարխուղարը:

—Աստուծ շնորհաւոր անի, բախտաւոր իլեն, մեծանան, պսակենք, ծլեն, ծաղկեն, մենք էլ խեղճենք, տեսնենք մեր էս կարօտ աչքերով ու ուրախանք, —խօսեց Մարիամ բաջին բարձր ձախնով:

—Ալ ախչի, թող մի բան բերենք, որ բերաները քաղցրացնեն, —մէջ մտաւ Գիւլնագը, մի ձեռով շալի ծալը բերանին բռնած, միւս ձեռի արմունկով բոթելով Մարիամին:

—Մարիամ բաներից բերեցէք, տեսնենք, —հրամայեց Բարխուղարը:

— Թո՞ղ ես բերեմ, — ասաց Գիւլնազը, տեղից բարձրանալով:

— Զէ, թող ես բերեմ, — հակառակեց Մարիամ բաջին, բռնելով Գիւլնազի թևից և կամենալով կրկին նստացնել իւր տեղը:

— Զէ, ես կը բերեմ:

— Զէ, չէ, մերը լաւն է, նոր եմ եփել:

— Մերը նարինչի է:

— Մերն էլ վարդի է:

Երկու տանտիկինները մի քանի վայրկեան այսպէս ոտի վրայ կանգնած հակառակվում էին, իրարու կրծքին հրելով: Ոչ մէկը թոյլ չէր տալիս միւսին տեղից շարժ վելու:

— Երիշամ, զուռնաղաւալը բարձրացրին սատանի ճակարը, ձեռ քաշեցէք, եկաւ, խաբարդար, — գոռաց Հայրապետը և գդակը արձակեց նրանց վրայ:

— Հանդարտվեցէք, լաւ է, երկուսներդ էլ բերէք, աեսնենք ինչ էք բերում:

Բարխուդարի հրամալողական ձայնը սոսիպեց Գիւլնազին և Մարիամ բաջուն իրարուց բաժանվելու:

Մի ըոսէից յետոյ սփոռոցի վրայ շարվեցին թէլի պնակների մէջ մի քանի տեսակ մուրաբաներ:

Այս ընդհանուր աղմուկի ժամանակ մանուկները քնից զարթնեցան:

— Ինձ էլ մուրաբա տուէք, — գոչեց Սուսանը, գլուխը բարձրացնելով և աչքերը բոռնցքներով տրորելով, որ քունը փախցնի:

— Ինձ էլ տուէք, — կրկնեց Սէլրանը:

— Բաս ես, ինձ չէք տալու, — աւելացրեց Սմբատը:

Բարխուդարը, բոլորին բաւականացնելուց յետոյ, ասաց:

— Սուսի, էսօրուանից քեզ ու Սէլրանին բախշում ենք կարմիր կովին:

— Օօօ, չէ չէ, չեմ ուզում, ես կարմիր կովի պօքերից վախենում եմ:

— Ես չեմ վախենում, ես նրա պօզերի վրայ կը նստեմ, — մէջ մտաւ Սէլրանը:

— Միք վախիլ, մենք ձեզ չենք տալու նրան, որ տանի: Դուք նրա բալաները կը լինէք հիմիկուանից, ամա մեզ մօտ կը մնաք: Մենք բաշխում ենք ձեզ նրան, որ էլ ես գիշերից դէն չըհուրսութվի ձեզ վրայ, ձեզ հողի տակ չըթողնի:

— Ես թասը մին էլ կոնծում եմ Սէլրանիս ու Սուսանիս կենացը, — ընդհատեց Հայրապետը: Լսիր, Բարխուդար, մի լաւ աղօթք եմ սովորել Տէր-Մաթալից, թող նա էլ ասեմ ու բանը պըծնի: Խնչպէս է... հա... Աստուած շնորհաւոր անի, բարով թագ ու պսակի արժանանան, կանաչ կարմիր կապեն. «Ե առեալ զձեռն Եւայի և տուեալ... Դէհ, Սէլրան, մօտեցիր ու հարսնացուիդ մին լաւ պաշիր, այ ինչպէս էսօր հողի տակումն ես պաշել:

— Ի՞նչ հարսնացու, — հարցը Սէլրանը երեխալական զարմացմամբ:

— Ուստանին ու քեզ նշանեցինք, դու նրա փեսացուն ես հիմաք:

Պարզամիտ մանուկները, լսելով Հայրապետի խօսքերը, կարմիրեցին ամօթից: Հայրապետի ստիլմամբ նրանք իրարու գրկեցին և համբուրեցին: Այս համբուրը եղաւ երկու մանուկների ապագայ միաւորութիւնը երաշխաւորող միակ գրաւականը:

— Դէհ, բալաներս, չոքեցէք ու աղօթք արէք ձեր արգար բերանով, որ Աստուած էսօրուալ պէս օր շանց չըտայ մեզ, — ասաց մանուկներին Մարիամ բաջին:

Մանուկները չոքեցին երեսները դէպի աղօթարան և նախ «Հալը մեր» ասացին, յետոյ, Մարիամ բաջութելադրութեամբ, երկրաշարժը չըկրկնվելու համար աղօթեցին:

Աղօթքը վերջացաւ, երկու ընտանիքները բաժանվեցին:

V

Երկրաշարժը, մի անգամ դրօշմելով իւր կնիքը Շամախու ճակատին, կարծես, երդուել էր այնուհետեւ այլևս ձեռ չըքաշել նրանից:

Տարիներ անցան, բայց քաղաքը չէր խաղաղում: Նանմանում էր ընդարձակ ծովի վրայ լողացող մի նտուի, որ խորտակված առաջասատներով և վշրտված խարիսխներով թողված ճակատազրի հաճողքին, երերփում է տմիքների մէջ: Երկիրը, կարծես, մի անգամ կորցնելով իւր ոյժը, կարողութիւն չունէր պահել քաղաքի ծանրութիւնը: Ինչպէս դաշտում մեծացած վալրենի ձի, որ իւր մէջքը չի կամենում ենթարկել թամբի ծանրութեան, Շամախու երկիրը շարժում էր իւր մէջքը, յամառութեամբ հրաժարվելով քար քարի վրայ թողնել:

— Առդոմ-Գոմորն է, — կրկնում էին ծերունիները, իրանց ալեզարդ գլուխները շարժելով:

Կառավարութիւնը, տեսնելով որ քաղաքը չի խաղաղում, ստիպված եղաւ նահանդատեղին փոխադրելու բագու: Այս եղաւ մի ուրիշ հարուած, որից յետոյ քաշքը միանգամայն զրկվեց կենդանութիւնից: Քանի դնաց, այնքան նրա գրութիւնը թշուառացաւ: Առեւտուն ընկաւ, ժողովուրդն օրըստօրէ սկսեց աղքատանալ: Շատերը ստիպվեցին թողնել իրանց պատական:

Երկերը և գաղթել ուրիշ քաղաքներ՝ օտարութեան մէջ օրական ապրուստ հալթալթելու: Մեծ մասամբ գաղթում էին հայերը, որոնք գլխաւորապէս գնում էին Դուքալ, Դերբենդ, ուր այդ ժամանակները տորոնի արդիւնաբերութիւնը նախանձելի վիճակի մէջ էր: Իսկ միւս մասը գաղթում էր Դաղստանի զանազան կողմերը, Պետրովսկ, Վլադիկավկաս, Թէլմուրխան-Շուրալ և այլն:

Այս ընդհանուր գաղթականութեան ախտը, որ, պիտի ասած, խիստ վարակիչ էր, չըհամարձակվեցաւ մօտենալ ոչ Բարխուդարին և ոչ Հալրապետին:

Առաջինն այսպէս էր դատում.

— Ես գերձակ մարդ եմ, իմ արհեստո թրքերի հետ է կապված, թրքերն էլ խօ, փառք Աստուծոյ, հալա իրանց տեղումն են: Նրանք մեզանից խելօք են, իրանց պատական օջաղը չեն քանդում մեր հայերի պէտու օլքա-օլքա ընկնում մի կտոր հացի խաթրու: Թէ որ Աստուած մարդուս ճակատին մի կտոր հաց է գրել, նա որտեղ որ կի, կուշտ կըլինի, թէ չէ, ու չէ:

Իսկ Հալրապետը այսպէս էր դատում.

— Թուրքը ինքն անօրէն է, ամա խօսքը շատ օրինաւոր, ասում է. «Քեօո իշուն համսի բիր, եա բուրզա, եա Բաղդադտա»: *) Մի քանի հարիւր կուժ ու կուլաս բարձած ինչտեղ կարող եմ գնալ, ինչ կարող եմ անել: Ելի Շամախում մի բան կալ, զորթ է, մեղք է տսելը, ամա գրուստն պիտի խօստովանեմ, որ տափը տրոք գալը զորթ է ինձ վնասեց, խէր էլ տուաւ, չունքի քաղաքում էլ սաղ կուժ ու կուլայ չի մնացել, հիմայ ամենքը մէկէլ նորից են առնում: Առեւտուրս զու է:

Եւ այսպէս, Բարխուդարն ու Հալրապետը մնում էին Շամախում:

*) Կոլրի համար միւնուն է, ալատեղ, թէ Բաղզադում:

Երկու հարեանները շարունակում էին իրանց քավայ աւելացել էր խնամութիւնը: Գիւլնազը և Մարիամ բաջին խնամինը էին և կատարում էին մի առանձին եռանդով այն բոլոր պարտականութիւնները, որ պահանջում էր քաղաքի աւանդութիւնը:

Կըտեսնէիր, որ բարեկենդան օր է, առաւօտը կանուխ, դեռ չայ ըլխմած, ահա Մարիամ բաջին, ցըրտից սրժմաթալով, ներս մտաւ, ձեռում երկու ափուն երարու վրայ դրած: Ափսէների մէջ խնամքով գարս են զութաբներ և բեշիներ *): Մարիամ բատաք-տաք ուտիւ:

Զատիկ առաւօտ է, մէկ էլ սեսնես Գիւլնազը շալի ծայրում փաթաթած տասը քսան խաշած կարմիր ձուեր — Առ, բալաս, տար էսօր կռուացրու էս ձուերը, նին և մի քանի համբոլներ դրոշմելով նրա ճակտուին:

Բախտգ փորձիր, — ասում է նա, ձուերը տալով Սէլրան թշերին:

Դեռ երկրաշարժից մի տարի չանցած Հայրապետը բարխուդարի խորհրդով Սէլրանին տուել էր Սարգիս վարպետի ուսումնարան, որ գրել ու կարդալ սովորի, ուր նոյնպէս սովորում էր Բարխուդարի որդի Սմբատը: Թող սե ու սպիտակը չոկել սովորի, մեզ նման մարդը ինչի է հարկաւոր, — ասում էր Բարխուդարը: Սէլրանը առաջին տարին մի այնպիսի ընդունակութիւն ցոյց տուաւ, որ Սարգիս վարպետի ուշադրութիւնը դրաւեց: Մի տարուայ ընթացքում նա անցաւ

*) Խմորեղին կերակուրներ, որ բարեկենդանին պատշաճում են շամախու հալերը,

այլութէնի տետրը, Սաղմոսը, բայց երբ երկրորդ տարում հասաւ Աւետարանին — սկսեց փոքր առ փոքր ծուլանալ: Նա օրից օր զգուեց Սարգիս վարպետի ուսումնարանից: Նատ աշխատեց Սարգիս վարպետը իւր ընդունակ աշակերտին ազատելու ծուլութեան ախտից, նա շատ անգամ գիմեց այս նպատակով սովորական միջոցին — ֆալախկային: Բայց ոչինչ չօգնեց: Սէլրանը քանի գնում այնքան ծուլանում էր: Նա շատ ժամանակ, տանը Մարիամ բաջուն խաբելով, թէ ուսումնարան է գնում, գրքերը թաքցնում էր բագում, հողի տակ, իսկ *ինքը վազում փողոց ընկերակիցների հետ խաղալու:

Հալրապետը սկզբում խրատում էր նրան, պարգևներ էր խոստանում, բայց վերջը, տեսնելով, որ այս չի օգնում, նոյնպէս գիմեց Սարգիս վարպետի միջոցին, այսինքն սկսեց ծեծել:

— Ես շկօլից հենց վարպետի ուզգիներից եմ փախչում, գու էլ տանն ես թակում, — ասում էր Սէլրանը, աչքերի արտասուբը արխալուզի թևերով սրբելով:

Մի օր վարժապետը Սէլրանին, մի դաս նշանակելով, ասաց.

— Տես, Սէլրան, վաղը այս դասը այնտեղից մինչեւ այստեղ լաւ անգիր կ'անես: Զուր կանես, հաա, թէ չէ ձեռիցս չես պլծնի, իմացիր, որ այնքան ոտերիդ կըծեծեմ, որ կաշին կըթափիվի, կարմիր միսը կըմընայ:

— Աչքիս վրայ վարպետ, մի ջուր անեմ, որ քէփդ դայ, — պատասխանեց Սէլրանը:

Նախընթաց օրը Սէլրանը սաստիկ ծեծ էր կերել և այս պատճառով խիստ նեղացած էր վարժապետից: Նա մտածեց այս ծեծի փոխարէն մի լաւ խաղ խաղալ վարժապետի գլխին: Օգուտ քաղելով վերջինի խօսքերից գդասդ ջուր կանես», Սէլրանը միւս

օրը գիրքը պահեց Առաքելի աղբիւրի տակ այնքան,
որ, գիրքը թրջվելով բոլորովին չջուր դառաւ։

— Առ, վարժապետ, — մեկնեց նա գիրքը Սարգիս
վարպետին։

— Այդ ինչ ես արել, — հարցրեց վերջինը զայրա-
ցած։

— Զօւր։

— Այ դու սատանի ճուտ, ինձ ձեռ ես գցել։ Պա-
հեցէք դրա ոտերը, պինդ պահեցէք, ադա, որ իսկի
տեղից ժամ չըգայ։

Այս վերջին ծեծն էր, որ Սէլրանը կերաւ Սարգիս
վարպետի կողմից։

Միւս օրն որքան նրան ստիպեցին, այլ ես չըհա-
մարձակից ուսումնարան գնալ։

Հայրապետը, տեսնելով, որ էլ ճար չըկայ, դուրս
բերաւ նրան ուսումնարանից և յանձնեց Բարխուդա-
րին, որ սա գերձակութիւն սովորեցնի նրան։ Այսու ա-
մենայնիւ, երեք տարուայ ուսումը շատ էլ անօգուտ չե-
ղաւ Սէլրանի համար, նա սովորել էր քիչ թէ շատ ու-
ղիղ կարդալ և գրել։

VI

Բարխուդարը չընդիմացաւ Գիւլնազի տոտչարկու-
թեան այն է — Սուսանին Հերիքնազ կուսի ուսում-
նարանը տալու։

— Վնաս չունի, թող Սուսանս էլ սև ու սպիտակը
ճանաչի, էս ժամանակում հարկաւոր է, ինչ պիտի ա-
նենք։ Ես ու դու որ գրել ու կարդալ իմանալինք, էս-
օրուայ պէս վազ չէի տալ տէրտէրի մօտ, թէ ինչ
է՝ իմանամ երբ են պաս բռնում։

Այս խօսքերից յետով Գիւլնազը շալը գցեց Սուսա-

նի գլխին, ինքն էլ փաթաթվեց չարշովի մէջ, բռնեց
աղջկայ ձեռքից և տարաւ կուսի մօտ։ — Առ, ուսում
տուր, ամա, դու քո Աստուածը, երեխիս քիչ թակիր։

Երեք տարի Սուսանը մնաց կուսի ուսումնարա-
նում։ Առաւտաները նա Սմբատի ուղեկցութեամբ գը-
նում էր և դարձեալ Սմբատի ուղեկցութեամբ վերա-
դառնում տուն։ Երբ նա բաւականացափ սովորեց կար-
դալը և «բարովագիր» գըելը, Բարխուդարը դուրս բե-
րաւ նրան ուսումնարանից։

Ուսուանն օր ըստ օրէ աճում էր ու մեծանում։
Տանուչորս տարեկան հասակից նրա ճկուն մարմինը
սկսեց ստանալ իւր կատարեալ և որոշ ձևերը։ Նո
դարձաւ բարձրահասակ, վայելչակազմ օրիորդ։ Նրա
դէմքի գծագրութիւնը, հետզհետէ զարգանալով, ստա-
ցաւ կանացի չափահասութեան լատուկ կատարելու-
թիւնը։ Ուսումնարանից դուրս գալուց յետով ծնող-
ները նրան արգելեցին օտար տղամարդկանց առաջ
երևալ։ Նա փակվեց տանը։ Սկզբում մի քիչ դառն
թւաց նրան ծնողների ալս կարդադրութիւնը։ Մանկա-
կոն աղատ կեանքից յետով, բանդարկվելով, սկսեց
տաղտկանալ։ Նա սովորել էր ցերեկ ժամանակ փողոց-
ներում ալս ու այն հարեանի բագում իւր ընկերների
հետ թռչկոտել, խազով ազատ, արձակ, բաց օգում։
Նրա համար անտանելի էր, նամանաւանդ արեգակ-
նային օրերը, նստել սենետկում, իւր մօր կշտին և
թռու կամ գուլըայ գործել։ Ատկալն ժամանակի ըն-
թացքը ստիպեց նրան հետզհետէ ընտելանալ տիս ձան-
ձրալի դրութեան, և նա ընտելացաւ, թէև սովո-
րութիւնը տինքան թեթեկութիւն չտուաւ նրա սրտին։

Ուղիղ ինը տարի էր անցել երկրաշարժից։

Մի ամարալին օր Սուսանը, իրանց տան սրահում
նստած, թռու էր գործում։ Դէմուդէմ նստած էր նրա

մանկութեան ընկերուհիներից մէկը: Դա հարեան կօշ-
կակար Եղիալի աղջիկն էր:

Սուսամբարը մօտ տասնութ տարեկան օրիորդ էր,
միջին հասակով, նիշար ու դեղնած գէմքով և բարակ
կազմուածքով: Նա աւելի տգեղ էր քան գեղեցիկ, բայց
և այնպէս խիստ համակրելի գէմք ունէր: Նրա մուգ
կապտագոյն աչքերը, որոնց մէջ փայում էր կանացի
նրբամտութիւն, խիստ ազգող էին:

Սուսամբարը, գլուխը քարշ գցած, շտապով գուշ-
բար! Էր գործում լուռ ու մունց: Լուռ էր նոյնպէս և
Սուսանը:

Օրն անցած էր: Արեգակը շտապում էր ծած-
կվել հորիզոնի տակ, իւր վերջին պղնձագոյն ճառա-
գալթները տարածելով աւերականման քաղաքի բար-
ձրագոյն տեղերի վրայ:

Սուսանի գէմուդէմ, խորտակված սլարսակի մօտ
գտնվող բարձրաբուս թթենու կանաչագարդ կտտարի
վրայ հաւաքուած ճնճղուկները, ճլվլալով, զուարճանում
էին արեգակի թուլ ճառագալթներով: Բազում տիրող
խորին լուսիթիւնը խանգարվում էր միայն ճընճ-
զօրեղանում էին: Ծառի տակից նայելով այդ փոքրիկ
ծեւ, թէ նրանք մի ինչոր բանի վրայ վիճաբանում են,
այնքան տաքացած ճլվլում էին: Բայց թէ ինչ բանի
մասին է նրանց վիճաբանութիւնը, ինչ մի դժուար
փիլիսոփայական խնդիր են լուծում այդ փոքրիկ թեւաւոր-
ները — այս մեր խելքին մօտ բան չէ: Ո՞վ գիտէ, շտա-
կարելի է նրանց աղմուկի պատճառը թագնվող արեգակն
է, չէ որ նրանք միւնոյն ճլվլոցները, աղմուկը սկսում
են և առաւտները, երբ արեգակը նոր նոր սկսում
է բարձրանալ հորիզոնը:

Օրիորդները լուսիթեամբ շարունակում էին գործել:
Սուսանի գէմքը տխուր էր: Նա երբէք գլուխը չէր-
բարձրացնում, միայն կճռոտած ճակատը և սեղ-
մուած զբժունքները հաստատում էին, թէ նա ինչ
որ մտածողութեան մէջ է: Սուսամբարի գէմքը ոչ
տխուր էր, ոչ էլ ուրախ: Նա շուտ շուտ գլուխը բարձ-
րացնում էր, աջ ձեռքով ճակատի վրայ թափվող խո-
սլուկ ծամերը յետ քաշում և երբեմն իւր հայեացքը
մեխում Սուսանի երեսին: Վերջինը այդ չէր նկատում:

Վերջապէս, Սուսամբարը մի կողմը շպատեց գուլ-
պան:

— Ախչի, Սուսան, սիրոս ճաքեց, գէն գցիր զահ-
րումարը, քիչ խօսենք:

Սուսանը լուռ էր:

— Ականջներումդ բամբակ կա՞:

— Հըմ:

— Զօռու:

— Զօռ ու զըսկում, ինչ ես ասում:

— Սուսան եմ, գէն գիր այդ զահրումարը, մի քիչ
հանգստանք, մատներս մաշվեցին, մի քիչ խօ-
սենք էլի:

— Զեմ իմանում, ինչ պիտի խօսենք, — ասաց Սու-
սանը հառաչելով:

— Մին այդ սատանի տոտերը կորցրու գէն, յետով
կասեմ ինչ խօսենք:

Այս ասելով, Սուսամբարը Սուսանի ձեռից խլեց
թոռի գազգեահը և մի կողմը դրաւ:

— Ուֆ, ուֆ, Տէր Աստուած, — արձակեց մի խորը
հառաչանք իւր կրծքից Սուսանը, երկայն մազերը ու-
սերի վրայ ուղղելով և գլխի ճուպան առաջ քաշելով:

— Էլ ինչ ուֆ, հոգիներս դուրս եկաւ, մի քիչ
խօսիր, որ սիրտներս բացվի:

— Խօսքս էլ է պըծել, զըոյցս էլ:
 — Ելի ով է էշիդ կաղ ասել, — հարցը Սուսամ-
 բարը:
 — Միտդ է, Սուսամբար, երկրաշարժի օրը:
 — Հա:
 — Այ գիշի օրեր համա:
 — Խէր իի:
 — Միտդ է, ինչու էս ու կուժ ծախողանց Սէր-
 բանը մնացինք հողի տակ:
 — Ինչպէս ալսօրուայ արեգակը:
 — Բախտաւոր էին այն օրերը:
 Սուսանը կըկին հառաջեց:
 — Դու էլ լաւ օրի ես երանի տալի. հողի տակ
 մնալը չեմ իմանում ինչ բախտ է:
 — Ես հողի տակ մնալուն չեմ կարօտում:
 — Բամա:
 — Այն օրերին, երբոր մենք ոտարաց, գլխաբաց
 ինչտեղ որ ուզում էինք, այնտեղ էինք վազում:
 — Երբոր էլ ուզում էր Սուսանը, կուժ ծախողանց
 Սէրբանի հետ սիլիկ-քիլիկ էր տնում, — աւելացը Սու-
 սամբարը, խորամանկութեամբ ժպտալով:
 Սուսանը ակամայ կարմրեց: Ոյս առաջին անգամը
 չէր, որ նո Սէրբանի անունը լսելիս կարմրում էր:
 — Հըմ, ինչպէս է, կարմրեցիր, բարեկամ: Զըկնի
 սրտիդ փափուկ տեղին կպար:
 — Ելի Սուսամբար... ախ, երեխայութիւնդ չես մո-
 ռանում, չէ:
 — Սուտ եմ ասում: Թէ որ սուտ է, բաս ինչու
 կարմրեցիր անունը տալիս:
 — Ո՞վ է կարմրում, ախչի, ինչ սուտ խօսողն ես, —
 հակառակվեց Սուսամբարը, աւելի կարմրելով:
 — Թշերդ աւ լալազարի պէս հուփ հըռշնել են,

էլի վզով չես առնում: Լաւ է, լաւ, խեղճ ես, մի ամա-
 շիք, էլ անունը չեմ տալ, — ասաց Սուսամբարը, հեգ-
 նթիւն ժպտալով:

— Հողս կուժ ծախողանց Սէրբանի գլխին, նա ով
 է, ինչ մարդ է, որ նրա անունը տալիս ես ամաչեմ, —
 պատասխանեց Սուսանը բարկացած և աւելի ու աւելի
 շփոթվելով:

— Օհօ, ինչ ասեցիր, որ հէր ու մէրդ լսեն, քեզ
 ինչ կանեն, գիտե՞ս: Ի՞նչպէս ես սիրու անում նշանա-
 ձիգ համար անէծք տնել:

Սուսամբարը այս ասաց գիտմամբ, որ աւելի բար-
 կացնի Սուսանին: Բայց Սուսանի բարկութիւնը անցել
 էր: Նա, իւր խօսքերը արտասանելուց յետոյ, լանկարծ-
 ընկաւ մտածմունքի մէջ. «Ղորժ, ինչպէս եմ զմիշ անում
 հօր ու մօր մի հատ աչքի լոյս ու ճար տղի համար
 այսպէս անէծք աներ», — անցաւ նրա մաքով և մի ան-
 բացատրելի զգացմունք սկսեց ճնշել նրան:

— Ե՛հ, ինչ ես ֆիքր անում, մեր օրին խօ չես
 մնացել: Մի մատ երեխայ ժամանակիդ քեզ նշանել են,
 ալսօր էգուց էլ սարքին-կարգին նշանգրէք կ'անեն ու
 զուռնազաւալով կըպսակեն: Մեզպէս խօ աչք ճանա-
 պարհին չի մնացել:

Սուսամբարը կրկին կամենում էր բարկացնել Սու-
 սանին:

— Դու լինեսքո եզրօր արելը, Սուսամբար, էլ մի
 խօսի: Ե՛հ, զալտիծ չ'արի, որ քեզանից մի բան հարցը:

— Որ եզրօրս արեւով երդում տուիր, էլ չեմ խօսի:
 Դու հէնց ես իմանում, որ ես քեզ նախանձում եմ: —
 Զէ, Սատուած մի արասցէ: Ես ինքս շատ ուրախ եմ,
 որ հարսունիքդ շուտ լինի, որ առաջիդ մին լաւ չըթ-
 մա կովեմ ու պար գտմ, այն էլ քեզ ժամ տանելիս:
 Հօր ու մօրս էլ հիմիկուանից պիտի աղաչ-պաղատ անեմ,

որ ինձ համար մի ձեռք լաւ շորեր պատրաստեն: Հիմալ պիտի ասեմ, որ մինչև հարսանիքդ ասածս գլուխ բերեն, թէ չէ՝ անողը չեն: Ուզի, մեր հէր ու մէրերն էլ ամա մարդ են հաա, մինչև հարիւր, հազար անգամ չես ասում, մինչև լեզուդ բերանումդ մազ չէ կտրվում, առնում: Մի տարի է, որ ալս շալս ճընթռ շոր է հալվում հալբէհալ եմ լինում: Ալ քոյր, ալ մէր, էլ մենք էլ ասում ենք, որ ապրում ենք, 0հանջանանց Զառնշանն էլ ապրում է: Բախտաւորի աղջիկը սանդուխը զըզբազըզ լցրել է, էլի երեկ ասում էր, որ մի որ իստիփայ չարկան են կարել տալիս: Հէնց նա է, որ ինքն էլ այնպէս փարթամացել է, որ մարդու հետ խօսելն էլ լայնաղ չի անում, կասես, որ գիւքօռնամաննան բէշբետթար (ինձանից հինգ անգամ աւելի վատ), թէ չէ, էլ աշխարհս նրա համար տեղ չէր անի: Փառք Սատուծոյ, մի քիթ ունի, ալ — մի զուռնալ, մի երես ունի — ու սաթ, մի աչքեր ունի — բեօօվ, պլոզպլոզ, հէնց իմանաս, մարդ է ուզում կուլ տալ:

— Դէնդ ու դանդասար լինես Սուսամբար աղջիկ,

— Զըխօսեմ, բաս ինչ անեմ, գու ասա, ախար սիրտս ճաքում է, տեսնելով հարուստների աղջկերանց: Ախ, Սուսան, գիտես ինչ կայ: Մեղալ Սատուծոյ, մեղալ Աստուծոյ, թէ որ ես մի օր, մին սհաթ Աստուած լինեմ է, ինչքան որ հարուստներ կան, ամենից կըխլեմ ինչ կանես:

— Կըտանեմ ծովը կըթափեմ, բաս, յետոյ թող

նրանք գնան տեսնեմ, ինչպէս կարող են իրանց աղջկերանց, հարսերին զտո ու զառքօֆի, ոսկի ու արծաթի մէջ սլահել: — Նա, բաս ալսպէս կանեմ, — շարունակեց մեղայ Սուսամբարը տաքացած: Դու ինչպէս կանես, Սուսան, որ, մեղայ Սատուծոյ, մեղայ Աստուծոյ (երեսին խաչակնքեռով), մի օր Աստուած լինես:

— Ոչինչ չեմ անիլ:

— Զէ, էլի ասա տեսնեմ, ինչ կանես:

— Զեռ քաշիր, դարդակ-դարդակ մի դուրս տալ, մեղք է:

— Զէ, մատաղդ լինեմ, Սուսան ջան, ասա:

— Եէի:

— Զըխկուալ, լեզուիցդ խօ քրէհ չեն ուզում, մի խօսք ասա պրծիր էլի:

— Հարսւասներից կառնեմ ու քեզպէսներին կը տամ, որ ուրիշներին չի նախանձեն, ալ ինչ կանեմ:

— Ախար իմացայ, որ խելօք բան չես կարող անել, ասաց Սուսամբարը, ներողամտաբար ժպտալով:

— Ինչու:

— Թէ որ ինձ տաս, ես իսկի քո ուեխիդ մտիկ էլ չեմ անիլ, ալ ինչու:

— Կըփարթամանաս:

— Բաս չէ, իսկի քեզ հետ չեմ էլ խօսի 0հանջանց Զառնշանի պէս:

— Զէ, Սուսամբար, որ ինձ տան, ես կէս էլ չեմ փարթամանալ: Փողը ինչ է, ձեռի կեղա, ալսօր կայ, եգուց չըկայ: Հայրս ասում է: մարդս պիտի իստակ անուն ունենալ:

— Հայրդ ասում է ասում, ամա չի իմանում, որ առանց փող մարդ չի կարողանում իստակ անուն էլ պիտի:

— Ինչպէս:

--Այ ինչպէս: Գու ճանաչում ես Զաւահիրի հօրը,
չմուշկ կարող Վարաքին:
— Լուլ եմ: Հայրս նրան գովում է, շատ հայալ ու
նամուսով մարդ է:
— Եկ տես, որ քո նամուսով մարդը հիմայ ինչ է
արել:

— Հըմ:
— Գողութիւն:
— Զէմ:
— Համա: Հըմ, ինչ անէր, որ գողութիւն չանէր,
առում է. անճարը կերել է բանջար, Երկու թէ երեք
տմիս էր գուշանի քրէհ չէր տալիս, ախար տասը կորիզ
չունի, տասը մանէթ արտեղից տալ մի տուն երե-
խերքի տէր մարդը: Անջախ մի կտոր ցամաք հաց է
կարողանում աշխատել, օրտկան մի ջուխտ չմուշկ
իշտելով: Գուքանի տէրը չոքում է բողազին, թէ աղ-
ջիկ ես՝ ծնիր, տղայ ես՝ ծնիր, քրէհը տուր: Դէս ու
գէն է ընկնում Վարաքը, ոչով տասը մանէթ փող չի
հաւատում նրան: Երէկ չէ, մէկէլ օրը տէրը գալիս
է ու տառում. «Թէ էգուց մինչև սհաթի տասը փողերս
չըտաս, գուքանից գուրս եմ բերելու ու ապրանքու էլ
ծախելու եմ, որ քրէհս հանեմ»: Վարաքի փոխանը
ոտներն է ընկնում, հա դէս, հա դէն, աղաչուժ-պո-
ղատում է, ասում է. երեխերքս սովածութիւնից մեռ-
նում են: Չի լինում, գուքանի տէրը ինեղճի երկու ոտը
մի չմուշկումն է գնում: Առաւոտը Վարաքը կոտը-
փած փշրփած որտով, մի կտոր ծաղկած հաց ծոցում
դրած, գնում է գուքան: Գնում է ու մտքումը աղօթք
անում: «Աստուած, դու երկնքից ինձ համար տասը
մանէթ փող զցես, որ պարտքիցս աղատվեմ»: Հէնց նոր
Վարաքը սկսած է լինում բան անելու, մի թուրք
բէկ մտնում է գուքան: Բէկը նրան մի ջուխտ սողը

չմուշկ է պատուիրում կարելու: Վարաքը չափսը վերց-
նում է, թուրքը ջբից հանում է արծաթի փողով լցրած
մի մեծ քիսա, որ չմուշկի բէհը տայ: Բէհը տալիս է
ու գուրս գնում: Բայց չեմ իմանում ինչպէս է լինում,
ինչպէս չի լինում, փողի քիսան մոռանում է ու թող-
նում գաղգեահի վրայ: Նրա գուրս գնալուց յետոյ Վա-
րաքի աչքը ընկնում է քիսի վրայ: Առած գալիք պէս,
խեղճ կօշկակարի աչքերը դրուսա չորսանում են: Առաջ
ուզում է որ բէկին կանչի ու փողը տայ իրան, բայց
մէկէլ մտածում է. «Քալքա հէնց Աստուած իմանալով է
թուրքին մոռացնել տուել, որ ես նրա փողերով ազատ-
վեմ»: Ասում է ու, մի խորը թառանչ քաշելով, քիսան
բանում է ու փողերը համարում: Գրուստ տասներկու
մանէթի աբասիներ ու երեք շահանոցներ են լինում:
Վարաքը գողգողալով քիսան կոխում է մինդարի տակը:
Մի սհաթից յետոյ, բէկը, նսՓասը կտրված, գալիս է:

— Ուստա, փողիս քիսան քեզ մօտ եմ թողել:

— Չեմ իմանում, պտուիր աես:

Պտուում են, չըկայ: Թուրքը Վարաքի եախից ձեռ
չի քաշում: «Աստուած, երկինք, հաւատս վկայ, չեմ
տեսել», — ասում է Վարաքը: Թուրքը հաւատում է նրա
երդումին ու գուրս է գնում: Բայց ոտի մինը գուքանի
ներսում, մէկէլը դրսում, աչքը ընկնում է մինդարի
տակ դրած քիսի ճոթին, որ Վարաքը մոռացած է եղել
լու ներս կոխել:

— Բաս երգում ես ուտում, անհաւատ, գա ինչ է:

Թուրքը գուրս է քաշում քիսան մինդարի տակից:
Վարաքը տեղն ու տեղը չորացած է մնում: Բէկի աչ-
քերը արիւն են կոխում, քիսի ճոթից բռնում է ու
անօրէնը փողերով կոխում Վարաքի երես-մերեսին, գըլ-
խին: Խեղճ մարդու գլուխը ճղվում է. նա ուշտիտափ
ընկնում է: Հիմայ երեկուանից դէս ողորմելին երեսի վրայ

ընկած է իւր տանը ու աղի արտասուք է թափում, թէ ավալ, բայ ես լիսուն տարի անոն աշխատեմ, նա- մուս պահեմ, որ էսօրուայ օրը խալտառակվեմ քաղա- քում։ Տեղ ու բարձում մեկնված է, ետ ապրի, ետ չապրի։

Սուսամբարն իւր պատմութիւնն աւարտեց, աշ- քերը չաեց Սուսանի վրայ ու աւելացրեց.

—Տեսնում ես աղքատութիւնը ինչ մեղքեր է գոր- ծել տալիս մարդուս։

—Ցը՛ը, ցը՛ը, ինեղճ մարդ, —ասաց Սուսանը,
իւր կըծքից անկեղծ հառաջանք արձակելով։
—Հէնց քո հալրդ թող ասի, որ փողը դարդակ
բան է։ Զէ, այ քոլը, այ մէր, փողը մեծ բան է։ Հի-
մալ Զառնշանը շատ լաւ է անում, որ մեզ մարդու-
տեղ չի դնում։ Ես աչքով աչք չունիմ նրան տես-
նելու։ Սմեն մի նրան մտիկ անելիս սրտումս նա-
խանձ է շարժվում, ես էլ սւզում եմ, որ կամ
նրա նման հարստի աղջիկ լինիմ կամ նա իմ օրն
ընկնի, աղքատանայ։ Ախար նա էլ մարդ է, ինելք ունի —
մտածում է, աչքեր ունի — տեսնում է, որ ես, նրա
հետ երեսանց խօսում եմ, ծիծալում եմ, բայց
որանց ատում եմ։ Հիմայ ասա, Սուսի, գու նրա
տեղը լինես, շես ուսչիլ — Հաւատացիլը, որ կուռչես
Տես, մի բան պսեմ։ Մենք հիմայ երկուսս էլ աղքատ
ծնողների աղջիկներ, ենք կարաղանում ենք պարզ սրտով
երարու։ Հետ խօսել։ Բայց Զառնշանի հետ չեմ կարող
պարզ լինել։ Գիտես ինչու։ Նրա համար, որ ես նրա
հետ խօսելիս, ուշք ու միաքս հէնց նրա շորերի, ոսկի-
ների վրայ է լինում, էլ սիրոս իսպաղ չի լինում, որ
կարողանամ հետը անկեղծ լինել։ Ես Զառնշանին աչ-
քով աչք չունիմ տեսնելու, բայց քնզ սիրում եմ, ինչու
որ, ուու էլ ինձ նման աղքատ մարդու աղջիկ ես։ Դրտ

համար եմ ասում, որ թէ Աստուած լինիմ, մեղալ Աս-
տուծոյ, չիմ հարուստներից կ'առնեմ իլած չիլածները
ու ծովը կըթափեմ, որ ամեն էլ մեզպէս աղքատ լի-
նին։ Թէ որ ամենն էլ աղքատ լինին՝ լաւ կըլինի, էլ
ոչ ոք ուրիշին չի նախանձիլ։ Դէ, որ նախանձ ասած
բանը չըլինի աշխարհիս երեսին, այն ժամանակ ամենքն
էլ իրարու հետ պարզ կըլինեն, իրարու կըսիրեն, ինչ-
պէս ես ու գու։ Իմ կարճ խելքովս այսքան եմ հաս-
կանում։ Դու ինչ կատես, Սուսի։

—Քո խելքը կարճ չի, Սուսամբար, գու կարգին
վարպետի հասկացողութիւն ունիս։ Դա որտեղ ես սովո-
րել։ Կոյսը իսկի մեզ այդպիսի բաներ չէր ասում։

—Հոգո կոյսի գլխին, նա ինչ է հասկանում։ Ու-
մից պիտի լսէի, ես ինքս եմ երկար ու բարակ մտածել
ամենը։

—Դէ որ ալդքան բաներ ես հասկանում, մին բան
հարցնեմ, կարող ես պատասխանել։

—Երկուսը հարցըրու, թէ որ կարողանում, կըպա-
տասխանեմ։

Մեր ծնողները ինչու մեզ գողերի պէս պահում
են տանը։

—Հէջ, էլի քո էշդ քշեցիր, փորացաւդ իմանում եմ։
—Զէ, Սուսամբար, քո արել փորացաւ չունիմ։

—Գիտես ինչ, Սուսան, մեր ծնողները շատ ան-
խելք են։

—Ինչո՞ւ։
—Որ մեզ տանը թագցնում են։ Մին հարցնող լի-
նի նրանցից, թէ ես աղջիկ, որ իմ սրտումս ծուռ բան

լինի, չեմ կարող կատարել։ Հըմ, կըմեռնեմ կըսատ-
կեմ, հազար ու մի սատանալութիւններ կըսարքեմ,
ուզածս կանեմ։

—Պարզ խօսիր, Սուսամբար, չեմ հասկանում։

— Շատ լաւ ես հասկանում: Աւզում եմ առել, թէ
մի աղջիկ, որ ուզենալ մի տղի հետ սկսիկ-բիլիկ անել,
ծնողներին այնպէս կըխորի, նրանց աչքերը այն-
պէս կըկապի և իրան բանը այնպէս կըդրստի, որ սա-
տանան էլ իր սատանայութիւնով չի իմանալ, ինչպէս
— Մեր քաղաքի աղջկերքը չեն անիլ:
— Հըմ, շատերն են անում:
— Ո՞վ:

— Ո՞վ. հէնց մինը Սշխանանց Զարաֆիլը. պոչը
կտրվածն ինչեր չի անում իրանց հարևան Բալասիի հետ:
Հըմ, բնչ է, զարմանում ես, բաս Փիքը ինչտեղ
է, էէէ, մեր քաղաքում բաներ են լինում, որ...

Սուսամբարը խորհրդաւոր կերպով գլուխը շարժեց:
— Դա բէնամուսութիւն չէ, Սուսամբար:
— Նատ էլ լաւ են անում. մեր հօր ու մօր հախն
է: ինչ բէնամուսութիւն, հէնց քեզ ու Սէլրանին վեր-
ցնենք, հազար ինձանից կեղես, ես էլի իմանում եմ,
որ դու նրա սրտի, նա էլ քո սրտի մէջն է: Հիմայ որ...
— Կտրիր, կտրիր ձայնդ, — ընդհատեց Սուսանը
բարկացած, կըկին կարմբելով:
— Ինչ ես նազ ու բազ անում, դորթ ասողի փո-
փաղը ծակէ լինում:

— Հերիք է, լաւ:

— Արխալին կաց, թէ շամբալութից եղ դուրս
դալ, ինձանից էլ խօսք դուրս կըգալ ուրիշների մօտ
քո մասին:

— Թէ ինձ սիրում ես, էլ մի խօսի:

— Աչքիս վրայ, ես էլ նեղացել եմ, օրն էլ մըթ-
նեց, գնամ տանը թառ լինիմ: Մնաս բարով, քէչ ֆի-
ւլի արա, առանց ալն էլ մաշվել ես:

— Գնաս բարով:

VII

Այդ օրից անցել էր մի շաբաթ: Ուշ երեկոյ էր
Բարխուդարը, սենեակում նստած, կար էր անում: Մուշ-
տարիներից մէկը մտադիր էր երկու օրից յետոյ ճա-
նապարհ ընկնել ուրիշ քաղաք, նրան պատուիրել
էր մի չուխայ պատրաստել այդ երկու օրուայ ընթաց-
քում: Բարխուդարը շտապում էր իւր տուած խոստումը
կատարելու, որպէս զի ամօթալի չըմնայ մուշտարու-
ուուած:

Նրա դէմուդէմ նստած էր խանութի աշակերտ-
ներից մէկը և օգնում էր նրան:

Դիւնազը և Սմբատը, սենեակի մի անկիւնը քաշ-
ված, նիրհում էին: Սուսանը կանգնած էր գրսի պա-
տշգամբի վրայ:

Ամտրային էր այդ երեկոն և հիանալի: Տասն-
օրեայ լուսինը կապտագոյն երկնքում փայլում էր իւր
հրճուալի գեղեցկութիւնով: Նրա կապտագոյն լուսոյ
շողքերը, մեզմութեամբ թափվելով ցերեկուայ անձրեսով
լուացված թթենիների վրայ, շողլողացնում էին թըր-
ջուած տերեները: Կիսաւեր քաղաքի համեստ ընա-
կիչները վաղուց արգէն փողոցներից քաշվել էին
իրանց ապաստարանները: Տիրում էր մելամաղձալին
լուութիւն, որ ոչնչով չէր խանգարվիլ, եթէ այս ու այն
կողմից չըլսվէին մի քանի շների հաջելու ձայները: Ի-
րանց յետքի թաթերի վրայ եռանկիւնտածե նստած, սը-
րածալը դունչերը վեր քաշած, նրանք անախորժ
ձալիներով ոռնուում էին լուսնի վրայ: Ի՞նչ էին պահան-
ջում այդ թշուառ չորքոտանիները պայծառ լուսնից
— դա միայն իրանց է յալտնի: Բայց նրանց անտիորժ
ձալիները խանգարում էին գեղեցիկ գիշերի հրապուրիչ
ներդաշնակութիւնը:

Սուսանն, արմուկներով լենուած պատշգամբին, թաւ-
շամորթ ծնօտը դրած ձեռքերի ափերի մէջ, անթարթ
աչքերով կանաչազարդ թթենու խոտատերև ճիւղերի մի-
ջով նայում էր լուսնին: Նրա սեագոյն, երկայն ու կա-
կուղ մազերը, սփռվելով ողորկ ուսերի վրայ, հասնում
բաւական ջերմ էր: Սուսանը կարմիր թափտայից
կարած բարակ արխալուզի մէջ ցուրտ չի զգում: Նա
նայում է լուսնին և մտածում: Ի՞նչ է մտածում: Ո՞չ
ինչ և ամեն ինչ: Եատ բաներ էին անցնում նրա մըտ-
քով, բայց ոչ մէկը նրանցից երկոր ժամանակ կանգ-
էր առնում նրա գլխում: Նրա պատանեկական վառ-
վուն երեակալութեան մէջ անցեալ կեանքից նկարվում
էին տեսակ-տեսակ պատկերներ, որ շուտապտոյտ կա-
յտդեսկոպի նման շրջաներ անելով, փոխարինում էին
լուսառ: Ազկրում նա մտաբերեց իւր մանկութեան օ-
րերը դեռ երկրաշարժից առաջ: Նա լիշում էր այն լուս-
նեակ երեկոները, երբ ինքը իւր մօր կշտին սրահում
նստած, ուշադրութեամբ լսում էր վերջինի պատմու-
թիւնը լուսնի և երկնքի մասին: Սուսանը բառ առ
բառ մտաբերում է այդ պատմութիւնը, որին ալժմ էլ
հաւատում է: Նա հաւատում է, որ երկինքը առաջ երկ-
րին շատ մօտ է եղել, այնքան մօտ, որ մտրդու ձեռ-
քը հասել է: Բայց մի անգամ մի կին երեխայի տեղը
որբել է լաւաշով ու զցել գուրու: Սստուած տեսնելով,
որ կինը իրան տրուած առաջին պարգևը, հացը, այդ-
պէս ապականում է, բարկացել է, երկինքը վերցրել է
ու հեռու քաշվել: Խսկ լուսնի մասին Սուսանը մտա-
բերում է, որ նա, ալսինքն լուսինը, Մարիամ Սստուա-
ծածնի աղջիկն է եղել առաջ: Թէ նա զարմանալի գե-
ղեցկութիւն է ունեցել, այնպիսի գեղեցկութիւն, որ
մարդիկ նրա երեսին մտիկ անել չեն կարողացել: Թէ

ով որ ուզեցել է մտիկ անել, նրա աչքերը լուսից և
գեղեցկութիւնից կուրացել են: Թէ մի օր Մարիամ Աս-
տուածածինը, լոշ թխելու համար խմոր հունցելիս նրա
քաղցած որդիքը հաւաքված են եղել իրանց մօր շուր-
ջը: Արանց մէջ եղել է և աղջիկ Լուսինը: Լուսինը զատ
անհամբեր աղջիկ է եղել: Նա գնացել է եկել ու իւր
մօր, Մարիամ Աստուածածնի գլուխը ցաւացրել, թէ
«շուտ արա, մայրիկ, շուտ արա: Լոշը թխիր. քաղցած
եմ»: Վերջապէս, Մարիամ Աստուածածինը համբերու-
թիւնից գուրս է եկել, բարկացել է և խմորաթաթախ
ձեռքով մի ապտակ է տուել Լուսի գեղեցիկ երեսին:
Խմորի կառըները կպել են Լուսի երեսին ու մինչեւ
ալժմ էլ չորացած մնում են:

— Այ, դորթ որ հրեն, քանի քանի տեղեր արատներ
են մնացել, — ասաց ինքն իրան Սուսանը, նայելով լուս-
նի երեսին:

Յետոյ իսկոյն նա մոռացաւ լուսինը, և այս ան-
գամ նրան զբաղեցրին ուրիշ լիշտակներ: Անցան և
այս լիշտակները, նրանց փոխարինեցին ուրիշները: Աս-
կայն այս բազմաթիւ խառնիխուռան լիշտութիւնների
մէջ կալ մի ուրիշ միտք, որի շուրջը պտտում են
միւսները, որը հանգիստ չի թողնում Սուսանին և որից
նրա սիրու բարախում է: Կայ մի արարածի կենդանի
պատկեր, որ չի հեռանում նրա աչքերի առջեկց: Ահա
նա, գլխաբաց ու ոտարոբիկ գէմ ու գէմ գտնվող
թթենու գագաթը բարձրացած, և ճարպիկ կա-
տուի նման բարակ ճիւղերին կպած, իւր փոքրիկ
ձեռքերով թութ է քաղում: Նա հագած է սպիտակ
շթից կարած արխալուզ, որի բարակ փեշերը երեկոյեան
զովարար հողմի թեթե շարժումից օդի մէջ փոփուում են:

Սէլրան, Սէլրան պինդ կանգնիր, որ չընկնես.—
աղաղակում է ծառի տակից Սուսանը, գլուխը վերև
բարձրացրած:

Բայց Սէլրանը չի լսում: Քաղցրահամ պտուղը գլուխւել է նրա ուշ ու միտքը, և նա շտապով հատ-հատ պոկելով այդ պտուղը, լցնում է արխալուզի գրպանները:

— Սէլրտն, Սէլրան, ինձ համար էլ թռութ ածի, մէնակ մէնակ մի ուտիլ, — կրկին աղաղակում է Սուսանը:

Սէլրանը դարձեալ ուշադրութիւն չի դարձնում. նա, կարծես բոլորովին մոռացել է իւր սիրելի Սուսիին: Ծառի տակ կանգնած Սուսանի սիրտը քիչ է մնում, ճաքի: Նա անհամբերութեամբ իւր փոքրիկ ոտերը խփում է գետնին ու գեղեցիկ ուսերը թափահարում, սուտ սուտ լաց է լինելով. — «ըմ, ըմ, ըմ, չեմ ուզում, ինձ էլ տուր, ը՛ր, ը՛ր»:

Վերջապէս, Սէլրանը լցրեց իւր երկու գրպանները և, արագութեամբ ցած իշնելով ծառից, մօտեցաւ Սուսանին, որ քաղած թռութը նրա հետ բաժանած:

Այս երկաւալութիւնով էր յափշտակված, Սուսանն երբ յանկարծ իւր աջ ուսի վրայ զգաց մի ինչոր ձեռի թեթև հարուտծ:

Նրա մտածմունքները փարատվեցին: Խորը քնից սթափածի նման արմուկները քաշեց պատշգամբի սուրահիներից, իրանն ուղղեց և նայեց յետ: Նրա դէմ ու դէմ կանգնած էր մի միջահասակ, պատանի, թուլողիմքով, ու աչք ունքով: Պատանին գլխաբաց էր. նա հագած էր ամարալին կտապտագոյն թեթև արխալուզ, որի կոճակները բաց էին կրծքի կողմից:

Սուսանը առաջին վարկեանին չըճանաչեց պատանուն և վախեցած կամենում էր ճիչ արձակել: Բայց մինչև նրա ուշքի դալը, պատանին երկիւզածութեամբ, ձալնը փորը դցած, ասաց.

— Սուս, սուս, ձայն մի հանիր, ես եմ:

— Սէլրան, դու ես, ինչ ես ուզում, ինչու ես եկել այս ուշ գիշերին:

— Սուս, սուս, բարձր մի խօսիր, քաշվենք տին կողմ, յետոյ կասեմ:

Սէլրանը; զգուշաթեամբ բոնելով Սուսանի թևից, տարաւ նրան պատշգամբի մի անկիւնը, որտեղից չէր երեւում սենեակի ներսը:

Սուսանը չըհակառակվեց: Նա գրէթէ անգիտակցար հետեւեց Սէլրանին: Կարծես, մի ինչոր ներքին անբացադրելի ոլժ ստիպում էր նրան հպատակվել պատանուն:

— Ինչ որ տաելու ես, շուտ տսա ու գնա:

— Մի քիչ համբերիք, շունչո տեղը գալ, յետոյ, ասաց Սէլրանը, խոր շունչ քաշելով:

— Մալրս դուրս կըդալ, կըտեսնի, էլ վայ իմ համին, շուտ տսա:

Սուսանը սկսեց դողալ:

— Եկել եմ քեզ տեսնելու:

— Վախենում եմ, Սէլրան, լու ժամանակ չես եկել:

— Ուրիշ ժամանակ չէի կարող: Սիրտս ուզում էր ճաքի, որ քեզ այսքան ժամանակ չէի տեսնում: Քանի անգամ ուզեցել եմ թագուն, զողի պէս, քեզ մօտ դառնալու անգամ են թագուն, զողի պէս, լու, բայց յարմար ժամանակ չեմ գտել: Ինչպէս ես, Սուսան, ասա տեսնեմ:

— Սուսանին գցել են տուն ու գոները երեսին կառել, էլ նրա երեսը չես կարող տեսնիլ, մինչև, մինչեւ...

— Մինչև մեր պատշգամբը, չէ: Ինչ են խօսում ծընդդերդ, երբ պիտի նշանգրէք տնեն:

— Դա չեմ իմանում, բայց մի բան եմ նկատում, Սէլրան, հօր ու մօրս մէջ:

— Ինչ, — հարցըց Սէլրան վախեցած:

— Կասես, նրանք իմտնում են, որ մենք տեսնեմ ենք:

— Էհ, աչքիդ է երկուում:

— Զէ, Սէլրան, մէկէլ օրը խոհանոցից տուն էի մըտէր, ես որ մտայ, սուս արաւ: Բայց մինչև ներս մըտնելս — մի քանի խօսքեր հասան ականջիս: Հայրս տառամէր. «այ կնիկ, հրէս տսում եմ, աչքերդ չորս արա, թէ չէ, — բէաբուռչութիւն կըլինի հան»:

— Ե՞՞չ, քեզ համար չի ասել, երեխ:

— Զէ, չէ, անցեալ օրը չմուշկ կարող Եղիայի աղմէն էլ մի էլհամ արաւ:

— Սուսամբարը:

— Հա, շատ ստանան է:

— Սուտ է, ես չեմ հաւատում:

— Զէ, Սէլրան, էլ մի գար ինձ մօտ:

— Զէմ կարող, սիրտս կըճաքի: Միթէ չես խրդանը, պատասխանի փոխարէն, մի խորը հավանի արձակեց կրծքից:

— Քանի որ ուսումնարանում էի, այնտեղ էի տանջուխս չէին մտնում, ամեն օր դուրս էի փախչում, որ քեզ տեսնեմ: Հիմայ էլ հօրդ դուքանումն է ոիրտս ճաքում: Նատ ժամանակ, որ միտս ես ընկնում, Ալշկը վում եմ ու մէկել տեսնես ասեղը մատս մտաւ: Հայրդ էլ, խօ, Սատուած ազատի, նրա մօտ մի սիսալ չի կարելի անել, ալնքան է թակում, որ մարդու հոգին է ուզում քթի:

— Քեզ էլ է թակում:

— Հէնց ինձ ու մէկէլ եղքօրդ: Ասում է, ես ձեզ շատ եմ թակում, որ միւսները տեսնեն և իմանան, թէ իրանց էլ սիրելուց եմ թակում: Սուսան, մէջքումս ապա տեղ չի մնացել, կապոյտ-կապոյտ զոլեր են կոխել նեղացել եմ, Սուսան, ուզում եմ, դուրս գամ հօրդ մօ-

տից, բայց վախենում եմ, որ դուրս գալով, քեզանից զըկուիմ: Ախ, երբ պիտի վերջանայ մեր բանը:

— Բարեկենդանից առաջ չի կարող գլուխ գալ:

— Ի՞նչ ես ասում: Ութ ամիս պիտի համբերեմ:

— Ճար չըկալ, հայրս փող չունի, փող է հաւաքում հարսանիքիս համար:

Սուսանը կրկին հառաչեց:

— Ի՞նչու չես ծիծաղում, Սուսան:

— Մարդու սիրտը պիտի ուրախ լինի, որ երեսն էլ ծիծաղի:

Մի քանի վալրկեան տիրեց լոռութիւն:

— Միտք է, Սուսան, մեր երեխայութիւնը, — հարցրեց յանկարծ Սէլրանը:

— Ի՞նչպէս այն լուսինը: Տես, սիրտս ինչպէս թոթուում է մորթած ծտի պէս, դա ինչքն է:

Սուսանը, այս ասելով, բռնեց Սէլրանի ձեռը և դրաւիւր ձախ կողքին: Նրա սիրտը բարախում էր: Սէլրանը, մի ձեռը դրած նրա կողքին. միւսը զգուշութեամբ բարձրացրեց և սկսեց քնքշութեամբ շոյել նրա գանգուր մազերը: Եթէ Սուսանը նոյնպէս իւր ձեռքը զնէր Սէլրանի ձախ կողքին, կարող էր զգալ, ինչպէս է բարախում վերջինի սիրտը: Անցան մի քանի վալրկեաններ, նրանք լուռ էին: Սուսանը չէր նայում Սէլրանի երեսին, բայց վերջինը նայում էր Օրիորդի ձեռքերը պատահուու ուսերի վրայ դոզդողում էին: Գուրբեկան և քաղցր էր նրա համար այս դոզը: Մի ինչ որ կախարդական հեղուկ տարտծվելով նրանց ջղերի մէջ, ախորժելի զգացմունքներ էր պատճառում: Խսկ մի գիւթիչ զօրութիւն այդ բոպէին կաշկանդել էր նրանց լեզուները: Սակայն լուռ էին լեզուները, իսկ սաստիկ բարախող սրտերը նոյն միջոցին ինչ-որ գաղտնիք էին հաղորդում իրարու:

Անցաւ մի քաղցր բոպէ, մի բոպէ, որ պարունակում էր իւր մէջ երկու պատանիների գոլութեան խորհուրդը: Յանկարծ Սուսանը ձեռքերը քաշեց Սէլրանի ուսից:

—Վայ, մազս կտրվի, ի՞նչ եմ անում,
—Ի՞նչ պատահեց, Սուսան,—հարցրեց Սէլրանը,
Դիմութիւնը:

—Գնա, հեռացիր, հերիք է:

Սուսանը կամեցաւ փախչել, բայց Սէլրանը բռնեց նրա թերից և ըլթողեց շարժվելու:
—Բայց թող, եթէ ինձ սիրում ես, մայրս դուրս կը գայ, —հակառակեց Սուսանը, աշխատելով ազատել իւր թեր Սէլրանի ձեռքից:
—Մօտեցիր, ականչիդ մի խօսք ասեմ, յետոյ փափր:

Սուսանը կամայ-ակամայ հնազանդվեց նրան: Սէլրանը, թեքելով նրա գլուխը դէպի իւր կուրծքը, մի համբոյր դրոշեց նրա թաւշամորթ այտերից մէկին:
—Եգուց գիշեր էլ այս ժամանակ դրսում սպասիր, —ասաց նա շունչը կտրում և բաց թողեց Սուսանին:

—Այդ ինչ արիր, Սէլրան, —շշնջեց Սուսանը, անփառակցաբար արխալուզի թեով սրբելով համբոյրի տեղը բայց Սէլրանն արգէն հեռացած էր:
—Այդ ի՞նչ ձայն է, լովեց յանկարծ պատշգամբի վրայ, Սուսանի ետևից մի տղամարդու սուր և զարեղ ձայն:

Զայնը պատասխան ըլստացաւ:

—Դու ես, Սուսան, ի՞նչ ես անում այստեղ, —կըրկնեց նոյն ձայնը:

Սուսանը լուռ էր:

—Ո՞վ էր այն փախչողը, էյ, էյ, էյ, ով ես, —գո-

ռաց միեւնոյն ձայնը, աւելի ու աւելի զօրեղանալով. բայց պատասխան ըլկար:

Սուսանն երկիւղից և ամօթից չըկարողացաւ ոչինչ խօսել: Նա, գունաթափված, պատի տակ մնաց արձանացած:

VIII

Հետևեալ օրը առաւօտ Մարիամ բաջին խոհանոցում հաց թխելու պատրաստութիւն էր տեսնում: Նա մէնակ էր, տանը ոչ ոք չըկար: Դեռ երեկ երեկոյ Մարիամ բաջին, յալտնելով Գիւլնազին, թէ հետևեալ օրը հաց պիտի թխի, խնդրել էր նրան, որ գայ իրան օգնելու: Օրը բաւական անցել էր, բայց Գիւլնազը, որ պիտի գար արեածագին, մինչև այդ ժամանակ չէր երեսում:

Մարիամ բաջին ալիւրը մտողեց, ջուրը տաքացրեց, աղաջուրն էլ պատրաստեց, բայց Գիւլնազը չըկար: «Եարաբ մի գնամ տեսնեմ ինչ իլաւ, որ չեկաւ—մտածում էր Մարիամ բաջին, —ամա չէ, էս գիշեր ճրագը չուրու սհաթի երեքը չորսը վառ էր, երեսի մարդը կար է արել, ինքն էլ անքուն մնացել, խեղճ է, թող քնի:

Վերջապէս, Մարիամ բաջին տաշտը զբաւ, ոչխարի մորթիներից մէկը ձգեց տակին, և երեսին խաչակընքելով, չոքեց, որ խմորը շաղախի: Բայց նա հէնց նոր էր արխալուզի թեռերը մինչև արմունկները ծալել և աջ ձեռի ցուցամատով պատրաստվում էր մի խաչ գծելու ալիւրի վրայ, երբ Գիւլնազը ներս մտաւ:

—Լոլսը քեզ տեսնողին ա քա, ի՞նչ պատահեց, որտեղ մնացիր, շատ սպասելուց աչքերս ջուր գառան խօմ, —յանդիմանեց նրան Մարիամ բաջին:

—Բաշխիր, Մարիամ բաջի, գլուխս խառնվեց, չըկարողացաւ շուտ գալ, —պատասխանեց Գիւլնազը, խորհառաչելով:

— Ի՞նչ կայ, ախչի, որ աչքունքդ զահըել ես,
հըմ, բնչու ես սպրտնել, — Հարցրեց Մարիամ բաջին,
այս անգամ երկու ձեռքով յենվելով տաշտի ծայրին:
— Ե՞ն, ոչինչ... աղաջուրը որտեղ է:
Գիւլնազը շփոթված շալը գլխից քաշեց և, մի կողմ
շպրտելով, մօտեցաւ օջախին:
— Երեսիս մտիկ արա տեսնեմ, ախու ու ուժու ա-
ռանց պատճառի չի, ես իմանում եմ:
Գիւլնազը երեսը, փոխանակ Մարիամ բաջու կողմ,
շուռ տուաւ հակառակ կողմ: Նրա ախուր դէմքը, կար-
մրած աչքերը, տամուկ թերթերունքները ցոյց էին
տալիս, թէ նա քիչ առաջ արտասվել է:
— Երանի էն կնկան, որ գաւակներ չունի, — ասաց
Գիւլնազը, կրկին հառաջելով:
— Առաջինը, լեզուդ տակահան չորանայ, որ էդ-
պիսի խօսքեր չասես, լետոյ քեղանից բան եմ հարց-
նում, պատասխանս տուր:
— Սուսանս քէֆ չունի:
— Ի՞նչ ասեցի՞ր, — Հարցրեց Մարիամ բաջին, իւր
ականջներին չըհաւատարվ:
— Երեխաս տաքացրել է, անկողնում ընկած է,
այս գիշեր չուրու լոյս դէլ է խօսել:
— Ցուրտ է կպել, գիշերը մըսել է, բաց է քնել
բնչ է, արիւն, արիւն, մէջքից, վզակոթից, կռներից
արիւն հանել տուր, լեազու թափի:
— Երանի թէ մըսած իլէր: Սի Աստուած, չեմ ի-
մտնում մէնակ իմ ճակատիս ես գրել դա, թէ ինձպէս
մի ուրիշն էլ կայ:
— Սիրտ ճաքի, սիրտս ճաքացրիր, հըըը՛: Ախչի,
թէ շուտ ասա տեսնեմ, բնչ է պատահել, վայ, — գո-
ռաց, վերջապէս, Մարիամ բաջին, համբերութիւնից
դուրս գալով:

— Աստուած գլխիս խռովել պլրծել է, ինչ պիտի
ելի: Երէկ, էս կոտրած ձեռքովս սաղ օրը էնքան
լուացք էի արել, որ իրիկնագէմին ինձանում էլ
Հարաքաթ չէր մնացել ոտքի վրայ կանգնելու: Ճրա-
գը վառեցի թէ չէ, մի զահըումար մուռափ աչ-
քներիս կոխեց: Դլուխս տըմտըմալով, էս պատին էն պա-
տին կաչելով, մի կերպ իրիկնահացը պատրաստեցի, ի-
րան ու երեխերքոնց հաց ուտեցըի: Դէ չորեքշաբթի էր,
պաս օր էր, խաշխաշով չլաւ էի եփել, ինքս էլ մի
քանի պատառ դրի բերանս, յետոյ շորերս հագիս քաշ-
վեցի մի կողմ, գլուխս դրի բարձին, որ քիչ հանգստա-
նամ: Սմբատս էլ երէկ տոսը բեռը ճախ էր կտորել,
շատ նեղացած էր, նա էլ մօտովս ընկաւ: Ճրագը վառ
էր, ինքը նստած աշակերտի հետ կար էր անում: Սու-
սանս էլ թոռի «մեխսակին» էր գործում: Ախչի, աչքերիս
աղաջուր ածէին, ոչ քնէի: Հէնց նոր խուփ էի արել,
մէկ էլ տեսնեմ ականջիս մի ձայն հասաւ, մի ձայն հա-
սաւ, որ կասես թէ մարդ են խեղդում:
— Հ՛մ, հըմ, հըմ, — արտասանեց Մարիամ բաջին,
նստած տեղը զանազան անհամբեր շարժումներ անե-
լով:
— Զարզանդած քնից վեր թռալ օձ կծածի պէս,
— շարունակեց Գիւլնազը: — Մարիամ բաջին, ոչ տեսնես,
էս քոռացած աչքերս բաց արի թէ չէ, մէկէլ տեսնեմ —
ինչ տեսնեմ:
Գիւլնազը արխալուզի թեսով սրբեց արտասուքը,
որ խեղդում էր նրան և չէր թողնում ազատ խօսելու:
— Փուչիկդ ճաքի, Գիւլնազ կնիկ, սիրտս պատառ
պատառ արիր, մի անգամ ասա, վերջացրու էլի:
— Ինքը..... էն էն էն անսատուածը, տեսնեմ
Սուսանիս թեկից բռնած, ոյժով ներս է քաշում, գոռ-
գոռալով ու ոտները գեանին խփելով:

— Այ մարդ, ինչ իլաւ դա, — հարցնում եմ ես վա-
խեցած, տեղիցս թռչելով ոտքի:

«Ո՛ո, առ աննամուս աղջկանդ: Ա՛ո, աչքդ կո-
խիրու մի քար էլ վրէն դիր, առ»:

— Այս որ ասում է, հառայ տալով, խեղճ երեխիս
ճընթու շորի պէս շպրտում է ինձ վրայ: Մարիամ բա-
ջի, նրա աչքերը կարմրել էին, ինքն էլ հրսից մի սը-
պրանել էր, ինչպէս էս ալիւրը: Էն որ Սուսանս է, էլ
նրանում ջան չըկար, կասես գերեզմանից դուրս եկած
իլէր: Ցետոյ...

— Ցետոյ, յետոյ, յետոյ, — կրկնեց անհամբերու-
թեամբ Մարիամ բաջին:

— Ցետոյ, Մարիամ բաջի, ախ, էլ ինչ յետոյ: Թըշ-
նամիդ, աչքիդ գրողը էն սհաթին Գիւնազի տեղը չը
լինէր: Էն անաստուածը, էն քարսանիրտը, էն էն մոլ-
թանին մի ձեռով բռնեց Սուսանիս մազերից ու մէկէլ
ձեռով սկսեց նրա գլխին կարկուտի պէս թափել...

— Ո՞Փ, ջան ջան բալաս, մի ասի, ոչ լսեմ, քա-
ռով ծնկներին խփելով:

— Էլ ինձանում կենդանութիւն չըմնաց, — շարու-
նեմ դաշտանի ճանկից, ամա ինչ կարող էի անել: Աչ-
քերը մարդ չէին տեսնում, նա կրծքիս մին կոփեց, մին
կոփեց, որ շունչս կտրվեց, վալը ընկալ:

— Ջան, ջան, ջան բալաս:

— Ո՞Փ, Մարիամ բաջի, Գիւնազը էն մինութին
տեղն ու տեղը հոգին վչէր հազար զաթ լաւ կրվնէր,
քան աչքերը բաց տեսնէր, ինչ որ տեսաւ: Ջալ-
լաթբաշի կոնատակին Սուսանիս երեսը հալտւիդ ոտն-
գի պէս կապուտ կապտել էր: Աչքերն էլ արիւնի չա-

նախներ էին դառել, որ հէնց էիր իմանում, որ ալդ
է, պիտի դուրս պըծնին:

— Ախար, այ քարասիրտ, ինչ է արել, — հարցնում
եմ ես, մազերս քանդելով, գօշ ճղոտելով: Տես, այս էլ
եղունգներիս տեղերը:

Այս ասելով, Գիւնազը շապկի եզրը լետ քաշեց, և նրա
սպիտակ կրծի վրայ երեացին մի քանի արիւնոտ զօլեր:

«Ի՞նչ է արել... նամուսս ցեխի մէջն է դցել,
տնունս տափն է կոխել, փափազս ոտնատակ է արել,
այ ինչ է արել: Գուրս է եկել գիշերուար կիսին Հայրա-
պետի տղի հետ սովորաթ է անում, պաչպչվում է: Այ ինչ է անում:

Լսելով իւր որդու անունը, Մարիամ բաջին մի ճիչ
արձակեց:

Գիւնազը շարունակեց.

«Սուտ բան է, աչքիդ է երեացել, այ մարդ, — ա-
սում եմ ես, գլխապատաս մէջ ընկնելով, որ երեխիս
տոնեմ նրա զարմախ-զարմախ ձեռքերից:

«Կորիր, կորիր, հեռացիր գու շ...շ...աղջիկ, բը-
ղավում է վրէս: Զես հաւատում, էլի չես հաւատում,
ես քեզ ասում էի, ասում էի, որ ականջովս է ընկել,
սաղ քազաքում խօսում են:

Այս է որ ասում է, մի ձեռով երեխիս մազերից
բռնած, միւս ձեռով կրծքիս մի պինդ կոփում: Էլ նը-
րանից գէն ինչ է իլում, ինչ չի իլում, ոչինչ չեմ իմա-
նում: Աչքերս մթնում են, ուշքս գնում է, ընկնում
եմ: Նատ եմ մնում թէ քիչ, Աստուած գիտէ, մէկէլ
տչքերս բաց եմ անում, տեսնում եմ, որ Սմբատս երե-
սիս ջուր է շաղ տալի: Սուսանս մազերը թափված,
կտապտած երեսով անձեռի պէս արասասուք է թափում
աչքներից: Ինքն էլ, չիբուխ քաշելով, գիտ կովի պէս
պտոյտ-պտոյտ է անում:

—Անունդ սե քարին գըվի, Սէլլան տղայ — աղա-
ղակեց լանկարծ Մարիամ բաջին, կրծքին խփելով:

— Լեզուդ պապանձվի, մի ասի, մի ասի, այ կը-
նիկ,— ասաց Գիւլնազը, կրկն արտասուելով:

— Զի ասեմ, բայ ինչ անեմ։ Նա, նա, էն ու երեսը բայ մեզ ուզում է խալտառակ անբ։ Բայ ուզում է էս քաղաքի մէջ, խալխի բերանում մեզ սաղկղ (ծամոն) շինբ։ Վայ քո օրին, Մարիամ կնիկ։ Սէլրան տղայ, թէ տուն կըգաս, կըտեսնես թէ քո գլխին ինչ օյին բերել կըտամ։ Քո հէրդ էս լեզին խմողը չե, նա կըթափի գլխիդ։ Ասում եմ ախար էս գիշեր հալդ հալ չէր, Սէլրան տղայ։

— Դու իլես, էն Սատուծը, Մարիամ բաջի, չը
լինի չիմանամ, որ Սէլքանին մի բան ասես; Ես հենց
գրանից եմ վախենում, տաքարիւն տղայ է, ով գիտէ,
ինչ կանի, ինչ չի անի։ Բարխուդաբը առանց էն էլ երգու-
մաճաք իլաւ, որ մարդիդ պիտի ասի։ Դու իլես-էսօրուայ
օրը, Մարիամ բաջի, էնպէս արա, որ էս բանը քնի,
թէ չէ՝ մին Շամախին կիլի, մին էլ մենք, մի մատ մեղը
կըդառնանք խայխի ու եխում։

Մարիամ բաջին արխալուղի թեերը կըկին քաշեց
էւր տեղը, մտզերը ուղղեց, բարձրացաւ տեղից, փեշե-
ըից այիւրի փոշին թափ տուաւ և տսագ.

—Վեր կաց ոտի, վեր կաց գնանք երեխիս մօտ:
—Ինչ գնաս, տաքացած ընկած է... օրը անց է
կենում, հազդ կրմնաւ:

—Զահըումար ուտեմ հացի տեղ, վեր կաց, ասում եմ:

Գիւլնազն և Մարիամ բաջին գնացին Սուսանի մօտ:
Սուսանը պառկած էր անկողնում: Եթե Մարիամ
բաջին և Գիւլնազը ներս մտան, նա մի վայրկեան գը-
լուխը հանեց վերմակի տակից, նայեց նրանց, և կրկին

վաթաթվելով, երեսը պատին շուռ տուաւ։ Սուսանի ճակատը մինչև յօնքերը փաթաթված էր թաշկինակով, կատը մինչև յօնքերը փաթաթված էր թաշկինակով, նրա թշերի վրայ երևում էին կապուտ բժեր—բարիուղ դարի տուած ասլտակների հետքերը։ Երբ նա մի վայր կեան վերմակի տակից նախց, արտասուքից ուռած աչքերը փալլեցին դառն թախծութեամբ։

Մարիամ բաջին նստեց Սուսանը բարձր
դրաւ նրա ճակատին, և իւր դէմքին փորձառու բժշկի

լրջութիւն տալով, ծանը եղասագուշ է բրեխիս ճակատը։ Եւ մի առաջնահարձու է այս բարեկարգութիւնը։

—Կրակի պէս էրկու շնչառ կատարել տուր, «Ուշացնի, Գիւլնազ, դալաք Հապանին կանչել տուր, ու արիւն բաց թողնի խզտակից»:

Յարիւ է յ լ ի ։ Յ ա թ ա մ ը ա ջ ի ն զ գ ո ւ շ ո ւ թ օ ս ա ւ ։ Յ ե տ ո յ Մ ա ր ի ա մ ը ա ջ ի ն զ գ ո ւ շ ո ւ թ օ ս ա ւ ։ Յ ո ւ ս ա ն ի ե ր ե ս ի ց վ ե ր մ ա կ լ և ս կ ս ե ց հ ա ր ց ո ւ փ ո ր ձ ա ն ե լ ։

—Մարիամ բաջին ցաւել է առաջակա տում, աչքերդ ինչու ես խփել, գլուխդ չի դըմզմում:

Սուսանը ըլպատասխանոց, ուշադիր կերմակը կրկին քաշեց երեսին և սկսեց հեղեկալ խեղդ ված ձայնով:

— Լաց մի իլի, բայսու, կը
փառք Աստուծով, ինչ անենք, հերք աղջկան կըթակի
էլի, մենք էլ քեզ պէս շատ ենք թակվել ու հիւանդացել:
Բայց այս անդամ Սուսանի արտասուբի պատճառը
իւը մարմնի ցաւը չեր, այլ նա տանջվում էր բարոյա-
պէս «Երանի թէ ես էլ ձեզ նման թակվէի, խալտա-
ռակվեցի, Աստուծո», մտածում էր նա:

Մարիամ բացին և Գիւլյազը ու Ք-ը՝
սեցին, խորհեցին, վիճաբանեցին և վերջն այն եզրակա-
ցութեան եկան, թէ անպատճառ և առանց լետաձգե-
յու հարկաւոր է դալլաք կանչել:

Բարխուդարը առաւտեան բազար գնալիս, Հայրապետին պատմեց երէկուալ անցքը: «Թէ որ տղիդ կապը չըքաշես, — աւելացրեց նա, — որ մին էլ էս ղալաթները չանի, էլ ոչ ես, ոչ դու, Հայրապետ. մեր բարեկամութիւն կըկտրվի մինչև յաւիտենական դուռը»:

Լսելով այս խօսքերը, Հայրապետը բազարի մէջ մնաց տեղն ու տեղը: Նա մի քանի վայրկեան ոչ կարողացաւ շարժուիլ, ոչ կարողացաւ խօսել, միայն դլուխը ծուց դէպի աջ ուսը, յօնքերը վեր քաշեց, աչքերը չըռեց, ծնօտը լախացրեց և ասլշած սկսեց նայել Բախուդարին, որ այդ միջոցին մի քանի քայլ առաջ էր գնացել: Տեսնելով որ իւր հարեանը կանգնեց, ինքն էլ յետ նայեց և նրա հայեացքը ընկաւ ուղիդ Հայրապետի դէմքին:

— Հըմ, ցուրտ է, բաս, սառած կըմնաս բաս չէ՞: Ականջներդ բաց արա ու լաւ լսիր, թէ որ լակոտիդ չլովը ձեռդ չառնես, մեր բանը վերջացած է:

Հայրապետը դարձեալ ոչինչ չըպատասխանեց: Նա մի քանի վայրկեան ևս զարմացած մտիկ տուաւ ու վազեց: «Գնաց, որ տընգըզի, թնդ տընգըզի, ախ, թէ իմ էլ ձեռս կընդնես, Սէլրան լակոտ, սաղ թիքադ, ականջդ կըթողնեմ», — ասաց Բարխուդարը և շարունակեց իւր ճանապարհը:

Հայրապետը, գնալիս, ճանապարհին ինքն իրան խոսում էր, զանազան լիշոցներ էր տալիս, յալտնի չէր ում, և ձեռներով ու դլսով անսովոր շարժումներ անում: Անցորդները տեսնելով, նրան, կանգնում էին ու մտիկ անում զարմացած, «գժվել է էս մարդը, ինչ է» կըկնելով:

Վերջապէս, Հայրապետը հասաւ տուն: Սէլրանը

տանը չէր: Հայրապետը մտաւ խոհանոց Մարիամ բանանելու, բայց նրան ևս այնտեղ չըգտաւ: Նա կամեցաւ անմիջապէս գնալ Բարխուդարանց տուն, բայց յետոյ փոշմանեց և, մի քանի քայլ չ'անցած, կըկին վերադարձաւ իւր սենեակը:

Քառորդ ժամից յետոյ ներս մտաւ Մարիամ բաջին: — Քեզ նման կնկա սիրտը պիտի հանեմ, շամփուին քաշեմ ու թէժ կըակի վրայ դէս խորովեմ, դէն խորովեմ, որ բալքա սիրտո հովանալ, — գոռաց Հայրապետաը, յարձակվելով իւր ամուսնու վրայ:

Մարիամ բաջին իսկոյն հասկացաւ նրա բարկութեան պատճառը:

— Ես ինչ մեղաւոր եմ, այ մարդ, որ իմ գլուխս ես ծակում:

— Բաս ես եմ ծնել էս լակոտին, հըմ, ես եմ ծնել:

— Ծնողը ինչ հող ածի գլիխին: — Ու հոզ: Մեղաւորը դու չես, բաս, ով է: Դու չես, որ նրա հետ աղաքանք պաղատանքով ես խօսում: Դու չես, որ, փայտը ձեռս վերցնելիս, գլխապատռ սէջ տեղ չես, որ ես էս, էս, զին չի խրատեմ: Հըմ, գնա, ես մտնում, որ ես էս, էս, զին չի խրատեմ: Հըմ, ըը՛ը ես դէհ հիմայ սաղ քաղաքում խայտառակ իլիր, ըը՛ը ես դու էդ, էդ, էդ, մեղայ քեզ Տէր Ամենակարնդ, հըմ, առա տեսնեմ, ինչու ես ծնել:

Հայրապետը, վերջին հարցը կըկնելով, ուսերը վերքաշեց, մօաեցաւ Մարիամ բաջուն, բոնեց նրա թիկունքից և սկսեց թափահարել, անդադար կըկնելով. ինչու ես ծնել:

— Խաթի ըալի մէջ չընկանք: Այ մարդ Փիքը արա, տես ինչեր ես դուրս տալիս, խելքդ որտեղ ես թողել:

— Խելքս փափաղիս տակն է: Մին էլ եմ հարց-

նում, ախար ինչու ծնեցիք, հըմ, ինչու, որ էսօրուայ օբը ինձ Բարխուդարի մօտ սև երես թողնիք, համ, ալ ես քո էն... Տէէր Աստուած:

Մարիամ բաջին, տեսնելով, որ իւր ամուսինը շատ է երկարացնում, երեսը զուռ տուաւ ու դուրս եկաւ: Հայրապետը մինչեւ երեկոյ այս կողմ այն կողմ շուռ տուաւ, դէս վազեց, դէն վազեց, մինչեւ որ իրեկնադէմին Սէլրանն եկաւ տուն:

Սուանց մի խօսք ասելու, առանց որ և է հարց ու փորձի, Հայրապետը մի ահագին դագանակ խլեց, որ լարձակի իւր որդու վրայ: Վերջինը հէնց սկզբից հասկացու շարժովութեան պատճառը, փախաւ դուրս, և ամբողջ օրն ու գիշեր չըվերադարձաւ տուն: Բայց և ալսպէս նա չ'ազատվեց պատժից: Հայրապետը միւս օրը երեկոյեան բռնեց Սէլրանին և ալնքան ծեծեց, որ ինքը լոգնեց:

Սուսանի հետ տեսնուելուց յետոյ Սէլրանը այլ ևս դադարել էր յաճախել Բարխուդարի խանութը: Նա վախենում էր, բայց որ ամենագլխաւորն է, ամօթից չէր համարձակում երեալ իւր ահարկու «ուստայի» աչքին: Սուաւուր նա դուրս էր գալիս տնից, վերադառնում էր երեկոյեան: Հայրապետն ամեն օր շարունակում էր գործածել խրատելու սովորական միջոցը - ծեծը: Մարիամ բաջին աշխատում էր իւրեքի բերել Սէլրանին իւր մայրական քնքոյշ խրատներով:

— Ալ գեղա, ալ գեղա, խնախը մեզ, անուններս տափը մի կոխիք, խելքի եկ, գնա բանիդ:

— Կըթակի, չեմ ուզում:

— Հուրսը քնել է, լաւ է, բախշել է, մի վախիք:

— Հըմ, մի վախիք: Սմբատն ասում է, ամեն օր

անունս լսելիս, բեղերը կըծոտում է: Զէ, չեմ ուզում, լաւ է քաղցած մեռնիմ, քան թէ նրա երեսը տեսնեմ: Ես թակից չեմ վախենում:

— Բայս ինչից ես վախենում:

— Ամաչում եմ, ամօթ է:

— Մին բան ես բռնել, որ չ'ամանչես, սև երես

գեղա:

Սէլրանի համար ամենացաւալի բանն այն էր, որ չարագուշակ երեկոյից յետոյ չէր կարողանում տեսչագուշակ նաև կարելի է նա նեղացած է ինձանից, որ ես համգիտէ, կարելի է նա նեղացած է ինձանից, որ ես համգիտէ, կարելի է այսքան չարշարանքների պատճառ դարբուրեցի և այսքան չարշարանքների պատճառը: Բայց չէ, այսձար, — ասում էր ինքն իրան Սէլրանը: «Բայց չէ, այս տեղ համբուրը չէ գլխաւոր պատճառը. ասում են, որ տեղ համբուրը վազուց է իմացել մեր տեսնվելը: Աի Սահարխուդարը վազուց է իմացել մեր տեսնվելը: Աի Սահարխուդարը, մի անգամ էլ տեսնեմ Սուսանիս երեսը, հարցտուած, մի անգամ էլ տեսնեմ Սուսանիս երեսը, հարցնեմ, իմանամ նրա միտքը, յետոյ ինչ ուզում են, թողանեն ինձ:»

Եւ այս նպատակին հասնելու համար գիշեր ու ցերեկ նա մտածում էր, տեսակ-տեսակ ծրագիրներ էր ցերեկ նա մտածում էր, տեսակ-տեսակ ծրագիրներ էր ցերեկ նա մտածում էր, մութն ընկնելուց յետոյ, նա վակազմում էր: Ամեն երեկոյ, մութն ընկնելուց յետոյ, նա վակազմում էր ու թագնվում Բարխուդարանց տան պատերի գում էր ու թագնվում Բարխուդարանց տան պատերի, տակ, որ գուցէ, Սուսանը բագը դուրս գալու ժամանակ, նրան հանդիպի: Բայց իգուը, Սուսանը չէր երեսում, նրան հանդիպի: Բայց իգուը, Սուսանը չէր հեղածես, նա չըկար աշխարհում: «Չըլինի թէ հեղածես, նա չըկար աշխարհում — մատածեց մի օր Սէլրանդես: Բայց հետեւեալ օրը նա կողմնակի կերպով հարցրեց այս մասին Սմբատից, և վերջինի խոսքերից երեաց, ըեց այս վազուց է առողջացել:

Ալսպէս Սէլրանը մի ամբողջ ամիս անցկացրեց:

Կէսօրուայ ժամի մէկն էր։ Արեգակը խաշում էր։
Այն փողոցը, ուր դանվում էին Բարխուդարի և Հայ-
րապետի տները, դատարկ էր։ Միայն երեմն այս կամ
այն տան դռներից դուրս էր գալիս շալի մէջ փաթաթ-
ված մի կին կամ օրիորդ և շտապով մտնում հարեան-
տներից մէկը, ձեռքում շալի տակ մի ափսէ պահած։
Նա ալսօրուայ եփած կերակրից իւր հարեանի համար
»զօշի փալի» (հարեանի բաժին) է տանում։

Արեգակի տաքութիւնից նոյն իսկ թափառական շները քաշվել էին փողոցի կիսախարխուլ պատերի ստուերի տակ և, լեզուները մինչև արմատը դուրս բերած, «լահ էին թակում»: Օդուտ քաղելով նրանց թուլացած դրութիւնից, շանաձանճերը վրայ թափված, անխնայ կերպով կծոտում էին նրանց: Նները անդադար թափահարում էին իրանց գնչերը, որ ճանճերին փախցնեն. «Ճը՞զ թուզում էին ճանճերը մի վայրկեան և կրկին նստում իրանց տեղը, որ նորից սկսեն ծծել խեղճ չորքոտանինելի արիւնը:

Փողոցի մելամաղձոտ լռութիւնը երբեմն երբեմն
ընդհատվում էր ամբողջ քաղաքին ծանօթ, բուխարու-
հին գդակներ գնող, արաբացի կարճահասակ, չալ միլ-
քով, սպիտակ ատամներով, հաստ ու կարմիր շրթունք-
ներով, փոքրիկ աչքերով և զարաչի Բաշիրի» հաստ ու խրո-
պոտ ձախով: «Քօհնայ վրփաղ, քօհնայ վրփաղ», - կրծ-
կըմում էր նա կանգնելով այս ու այն տան դռների
առաջ և, յօնքերը վեր քաշած, նայում դէսլի բագը: Հե-
ռութից լսելով նրա ձախնը, մարդ երեւակալում էր թէ
գտնվում է Սրաբիալի անջուր, աւագոտ և շոք գաշտե-
րում: Բագում խաղացող մանուկները, լսելով նրա տար-
օրինակ ձախնը, աղաղակում էին. «այ բաջի, այ գաղաշ,՝
դարա Բաշիրը եկել է, որ մեզ տանի գեկի մօւ»,
աղաղակում էին նրանք ու փախչում էին ներս: «Ղա-

բա բաշիրի» ձախին հետեւում էր նոյնպէս ամբողջ քա-
զաքին յալտնի «թեփ առնող» Թաղիի ձախը: Ահա հրեւ
էին, Թաղին, մի չուալ թեփ շալտիած, մէջքից երկու
գաթ ծռված, տնքտնքալով անցնում է այս փողոցից
դիպար, ուժապառ ձախով բացականչելով: «ոաթ-
գէպի միւսը, ուժապառ ձախով բացականչելով: Եւ Թաղիի ձախը, որ, կարծես,
տըղ քեափառակ օլանք: Եւ Թաղիի ձախը, որ, կարծես,
խորքից է դուրս գալիս, տարածվելով «Խարաբա շահարի»
առանց այն ևս մոայլ աւերակների վրայ, կը կնապատ-
կում էր նրանց մռայլութիւնը:

Մարիամ բաց պատկանութեանը:
Մարիամ բացին ալդ ժամանակ իրանց բագում պա-
ռի ստուերում նստած կար էր անում, տմտըմալով: Նա
նստած էր երեսը գետի բագի փլատակված պարխապը
քարձրած: Բագում ուրիշ ոչ ոք չըկար, միայն խոհանո-
ցի առաջ հաւաքվել էին հաւերը ու տքաղաղները և
կուտկում էին գետնին թափված խաշած բըլնձները
և երբեմն կչկչալով իրարու կտցահարում:

—Քիվաւ, քիվաւ, այ տառել
գու սիրտ կըճաքացնէք դուք, — բացականչում էք շուտ
շուտ Մարիամ բաջին հաւերի վրայ, իւր կշտին դրած
բարակ ճիպոտը գետնին չըփացնելով։
Մարիամ բաջու միտքը ալդ ըստէին զբաղուած էք,
ալդ պատճառով էք նա շուտ-շուտ բարկանում հաւերի
վրայ, որ խանդարում էին նրա մտածմունքները։

պաղուց քթախոտ: Մի երկու անգամ ախորժակով քա-
շեց, փռշտաց, հազար ու երեսին խաչակնքեց, ասելով,
«Տէր Աստուած, դու չարը խափանես, բարին առաջ
բերես»: Յետոյ, նա քթախոտամանը կրկին դրաւ իւր-
տեղը, կրկին երեսին խաչակնքեց, այս անգամ երեք
անգամ, և ջերմեռանդութեամբ սկսեց անխութ բա-
ցել», այսինքն սիսեռների վրայ հմալել, քմի տակ
տղամալով. «Իլի—չիլի դա, Տէր Ամենակարող Աս-
տուած, իմ Սէլրանիս բաղդը իլի, թէ որ երեխիս վեր-
ջը բարի է, էս նուխութը բաց դուրս դայ, թէ չէ շառ
է, փակ դուրս գար»:

Այս ասելով, Մարիամ բաջին աջ ձեռի ափով եօթն
անգամ տրորեց սիսեռները և մատերի ծայրերով բա-
ժանեց երեք մասերի: Նա այս կողմը դարսեց, այն կողմ
դարսեց սիսեռները, մի տեղ աւելացրեց. մի տեղ պա-
կասացրեց, յետոյ կրկին խառնեց ու մէկ էլ բաժանեց,
այս անգամ իննը տեղ: Այնուհետև նա ձեռները սիսեռ-
ներից հեռացրեց, դէմքին լըջութիւն տուաւ և, նայե-
րով նրանց, սկսեց ինքն իրան խօսել:

«Դա բաց ճանապարհն է, էս մէկն էլ Սէլրանա-
է, աես, տես ինչպէս է կանգնել Փիքրի մէջ կորած:
Հա, սա էլ Սէլրանիս տուաջ մէկը կանգնած է, ով լի-
նի, հըմ: — Հալլաթ Սուսանս է: Յետոյ, դէ սրանք էլ
Սէլրանիս ընկերներն են, ուֆ, Աստուած, ինչպէս են-
նեմ, որ բէրէգներդ ջուր իլի ու օռոջներիդ թափվի,
եարաք ինչ էք ուզում երեխից: Հա, լոււ, բաս էս
մէկը ով է, Տէր Աստուած, որ էգպէս երեխիս առաջը-
կապում է սև թելի պէս: Ուֆ, քս աչքն էլ հանեմ,
որտեղից դուրս պրծար դու: Ո՞վ պիտի իլի, Աստուած,

Մարիամ բաջին, աջ ձեռի մատները ծաելով, դրաւ

ծնօտի վրայ, իսկ ցուցամատով ծածկելով բերանը, խորը
մտածողութեան մէջ ընկաւ:

«Զէ, չէ, բաս նօխութը պակաս է, աստց նա-
խքն իրան, ձեռը ծնօտից հեռացնելով: Մի-չորս, եր-
կու-չորս, երեք-չորս, չորս-չորս: Դա էլ հինգ-չորս, դա
էլ մին թաք: Դրուստ տասը-չորսը, մին թաք: Պակաս
չի, մէկէլ բաց անեմ»:

Նա կրկին խառնեց սիսեռները և կրկին մի և նոյն
տեսակ բաժանեց:

«Փիէէ, էլի բէրէգ դուրս եկածը պըպզեց երեխիս
առաջ», ասաց Մարիամ բաջին և սկսեց երրորդ անգամ
բանալ: Յետոյ նա չորրորդ, հինգերրորդ, վեցերրորդ,
վերջապէս, մինչև տասուհինգ անգամ բաժանեց և բաց
արաւ: Վերջապէս, Մարիամ բաջին լոգնեց, ինքն իրան
բարկացաւ և սիսեռները հաւաքեց:

«Անտէր մնաս, այ նուխութ, մի խէր խաբար
չես ասում, կորիր», ասաց, արագութեամբ մի կողմ շպը-
տելով սիսեռների կապոցը, և կարը վերցըեց:

Այդ ժամանակ յանկարծ նա լսեց մի բարձրածայն
շղաղակ, որից յետոյ իսկոյն մի գլխաբաց երիտասարդ.
գդակը ձեռում բռնած, ներս թռաւ:

— Նամարդներ, ինձ մենակ էք տեսել, սպասեցէք,
ես ձեր գլխին մի օյին բերեմ, որ ճանաչէք, թէ ես ով
եմ, — գոռում էր երիտասարդը, վազելով բագի միւս կող-
մը, ուր խոհանոցն էր գտնվում:

Մարիամ բաջին հայեացը ձգելով երիտասարդի
վրայ, սարսափեց և տեղն ու տեղը անշարժ մնաց: Նըա
ձեռները թռւացան, և կարն ընկաւ գետնին:

— Սէլրան, Սէլրան, այ գեղա, էլի ումի հետ, էլի
ումի հետ, — աղաղակեց նա, ուշքի գալով և տեղից վեր
թռչելով:

Բայց Սէլրանը չէր լսում: Նա վազեց խոհանոց, մի

Երկարն կարմբագոյն փալտ վերցրեց, մի փալրկեանում չուխան հանեց, փաթաթեց ձախ թևեց և թռաւ փողոց: Մարիամ բաջին հետեւեց նրան:

Փողոցում սպասում էին երկու առողջակազմ երիշան, ձախ թևերի վրայ իրանց չուխաները փաթաթած:

Սէլրանը գլխակոր վազեց նրանց դէմ: Կոկւը սկըսուածնելով, հարուածներ էր և, աջող փալրկեաններ ըին: Մէջ ընկաւ ոտաբաց և գլխի մազերը փետելով, Մարիամ բաջին:

«Ա՛յ ձեր մէջքը տափին կպչի, ա՛յ ձեր մերերը սկում մնան, ա՛յ ձեր աչքի լոյսը ջուր դառնալ, երեսներդ թափի վի, բնչ էք անում»:

Սէլրանի հակառակորդներից մէկը, փալտի մի հարուած տալով Մարիամ բաջու ուսին, չըթողեց մէջ մըտնելու:

«Ուժ, ջիգարդ դաղվի, հառալ, ա՛յ հալ քրիստոնեաներ, երեխիս սպաննեցին, վալիս հասէք, — գոռաց Մարիամ բաջին և ուժաթափափած ընկաւ գետնին:

Այդ փալրկեանին կոռուզներին մօտեցաւ մի ուրիշ բարձրահասակ երիտասարդ: Դա նոյնպէս զբահաւորված էր փալտով: Հասաւ թէ չէ, երիտասարդը Սէլրանի հակառակորդներից մէկի թևին մի սաստիկ հարուած տուաւ:

— Ուխալ, ուխալ, բօյիդ մեռնեմ, Սմբատ, ուխալ մին էր, — բացականչեց Մարիամ բաջին:

Հակառակորդի թևը թուացաւ, ձեռից փալտն ընկաւ, նա սկսեց փախչել: Միւս ընկերը սնմիջապէս հետեւեց նրան: Սէլրանն և Սմբատը վազեցին նրանց լետեւեց, բայց հակառակորդներն անհետացան փողոցի ծալրում:

Սմբատն և Սէլրանը յաղթութեան զգացմունքով վառված յետ վերագարձան: Մարիամ բաջին չէր գաղարում աղաղակել և մազերը փետտել:

— Ներիք է, սուս արա, տեսար խօ ինչ բերինք նրանց գլխին, — ասաց Սմբատը, փալտը դնելով պատի տակ, որ չուխան հագնի: — Թափիվել են ինձ վրայ, ուզում են, որ սպանեն, բայ ես սուս անեմ:

— Ախար, այ մեռած, քեզ ինչ ունիս շառլատանների հետ, քեզ ո՞վ է ասում, որ նրանց հետ խառնվես:

— Քիչ խոսիր, մի քիչ ջուր բեր, որ գլխիս արիւնը լուանամ:

Մինչև այդ ժամանակ Մարիամ բաջին չըգիտէր թէ Սէլրանի գլուխը վիրաւորվել է փալտով: Տեսնելով նրա ճակատի վրալով ծլող արիւնը, քիչ մնաց ուշաթափիւր:

— Ես օրուայ օրը ոչ լուսանար մօրդ համար, Սէլրան տղայ, ախար նոխութը զուր չէր թարս նշան տալիս, — ասաց գոչեց նա և վազեց խոհանոց ջուր բերելու:

X

Երեկոյ էր: Մարիամ բաջին վշտացած հոգով ընթրիքի սպատըստութիւն էր տեսնում: Հալրապետը գեռ խանութից չէր եկել:

Ուլրանը, գլուխը կարմիր թաշկինակով կապած, առանց չուխայի, սպիտակ չժից կարած բարձրակ արխալուզով նստած էր փողոցում, իրանց գուների տռած: Սմբատը և մի քանի ուրիշ հարեւան երիտասարդներ շրջապատած նրան, խոսում էին ցերեկուալ անցքի մասին: Սէլրանի դէմքը տխուր էր, աչքերը գետնին լառած: Նա խոսակցութեանը չէր մասնակցում:

—Ախար, աղջա, մին ասի տեսնանք ալսքան դալ-
մաշալը հինչի էր, —հարցնում էր մի մօտ քսան ու
երկու տարեկան երիտասարդ:

Դա հագած էր կարճիկ արխալուղ, որի վրայից
կապած էր լայն արծաթեալ գօափ, սև մահուդեալ չեր-
քեսկա բուզմաներով և վազմաններով, մի փոքր սովո-
րականից լայն վարդիկ և երկայն կտուցներով մաշիկ-
ներ: Իսկ գլխին դրած էր նա կոլորակ մեխակագոյն
բուխարու դդակ: Երիտասարդի բեղերը սրած էին և
ծալրերը մկան պոչի պէս բարակոցըրած: Բայց նա, այսու
ամենայնիւ, չէր դադարում էլի մատերի ծալրերով նը-
րանց ոլորելու:

—Ես ինքս հինց էնաեղ էի էլի, աչքիս առաջին
ընկաւ կոխւը, —պատասխանեց Սէլրանի փոխարէն մի
ուրիշը:

Դա էլ մի կարճահասակ երիտասարդ էր նոյն ձեռվ
հազնված և ծործորակը մաքուր սափրած պարսկական
եղանակով:

—Դէ, ես մեռնեմ լոթիանա, մի նազլ արա տես-
նենք, դիմեց նրան մի ելրորդը, որի դդակը այնքան
ծուռ էր դրած, որ տեսնողը կըկարծէր թէ հրէս պի-
տի գլորվի գետին:

Կարճահասակ երիտասարդը հազալով, բեղերը ոլո-
րելով, սկսեց հանդիսաւոր կերպով.

—Աղջա, ես իի, Սէլրանը, Սմբատը, Թափտուղանց
Զահանգիրը, Եամչեանց Աթանէսը, Ճատոփի-Կտուրանց
Ենգիբարը, Ինքեաթանց Թաթին, Թութունանց Փա-
փանը, Բեդալեանց Մարտիրոսը, մին ալ Սատանափուն-
դանց Պետրին: Դարա մահլումը «ալթի զօզ» էինք խաղ
անում: Քցողը Սմբատն էր, Ճատոփի-Կտուրանց Ենգի-
բարը մի մանէթ դրաւ տափին, լողալոցալ ասեց Սըմ-
բատին, որ մին բաշ նրա մանէթին քցի: Աադա, Սմբա-

տի բաղդը բերաւ, դոչաղը անանց քիցեց, որ հաբի մի-
ջին դիւրիւստ չորս դիրաւ, ձեր արև, ոչ եվալ ոչ պա-
կաս: Ենգիբարի բերանը բաց մնաց, ախար մանէթ
կասան հա, քիչ փող չիմանաք, մին դանայ ջըղղալի
Նիկալայ ա: Հը՛մ. հինչ անի, հինչ չ'անի, ճարը կը-
տրված, մանէթը ետ վեր կալաւ:

—Փահ, նամարդ քեօփօղլի, —արտասանեց բեղերը
որած երիտասարդը: Ետով, ետով:

—Ետով, ալ հինչ ետով: Սմբատը ասըմտ. «ադա,
հինչ ես անում: Ենգիբարը տսըմա. հանաք էի անում,
դիժ ամ, որ ասքան փողով մին բաշ հաղ անամ: Սըմ-
բատը քի. «տեսաս տուր մանէթը ասըմամ, չես տալ,
դլուխդ ձուի պէս փշիր-փշիր կանամ»: Ճատոփի-Կտու-
րանց Ենգիբարը քի. «Ճանդ կըտրի, քո աթանցդ ա-
նանցդ»: Դէ, հինչ ասամ, ճընանչըմէք ալի Ենգիբա-
րին, ըռռեխը որ բացեց, ալ Աստուած ազատի: Ըհհ,
տղերը, Սմբատի հուրսերը հաւաքվեցին, ուշունցը ու-
շունցի ետեից: Ենգիբարը դա որ լսեց քի չէ, կատա-
դեց, կապուտ կապուտեց: Զաալըմը ուեխը բացեց, մի
խոսք դուրս բերաւ, որ Սմբատի աչքերը արիւնկոխեցին: Ասըմտ. քինա հայասըզ աննամուս քրոջդ ջուլովը հա-
ւաքի, որ գիշերները Սէլրանի հետ...

—Փահ, ադա, չըկարացաք հանց տեղբատեղ նրան
քեօնդալա քիցիթլ, —ընդհատեց պատմաբանի խօսքը
գդակը ծուռ դրած երիտասարդը, ուսերը վեր քաշտծ,
ծնօտը ծուելով, աչքերը չըռելով և ձեռները զարմա-
ցած առաջ տարածելով:

—Մի կաննի գէ ալի, ախար մի տես հինչ իլաւ,
ետով էէ, —շարունակեց պատմաբանը: —Դէ, Քեօխանց
Սմբատին աթանց խօսք ասիլ կիլի: Բիրդան նրա աչ-
քերը կարմըեցին, արիւնով լցվեցին: Հանց նոր դանակը
ուզում էր ջիրան հանի, մին ալ տեսնանք, հինչըու

նրա դուըս բերիլը, Սէլրանը մին թեափիկ Ենգիբարի
թափան թիրիքին: «Այ ես քո աթանցը, անսնցը,
աթանց անամ, անանց անամ»: Ենգիբարը թափիկ,
ձիւկնի սկս, թիր լափաշվեց տափին: Ամա ալի շիւտ
վեր կոցաւ, փափաղը վեր կալաւ ու հալդա մին բաշ
հիւնչըու տուն: Նրա քամական վազ տոււաւ Ստանատ
փռնողանց Պետրին: Մին մնութ չըքաշեց, մին ալ տես-
նանք երկուսներն ալ փետները սրած, վեալդեահ արած,
հարաս եկան փէտ-փէտի կռիւ անելու: Սմբատը մին էլ
Սէլրանը, առանց բանը երկարացնելու, մի բաշ տուն: Նա
էր, որ եկան իւրանք ալ զըրմըզի-հոլ հոլ գեագանագնե-
րի կոմին թքեցին ու աջըզ նամարդների ոեխը ետ
տուին, փախցրին հիւնչըու խանջանների կտրվելը: Ա-
մա քեօփօզլի Սատանափռնողանց Պետրին Սէլրանի
մօր ուսին մի փէտ տիրաւ, խեղճ կնիկը տունդուռուզի
վրայ նստեց:

—Փահ ես նրանց հերն անիծեմ, —գոչեց բեղերը
մկան պոչի պէս սրած երիտասարդը, —ագա նրանք մեր
մահի ջահիլների հետ փետ-փետի կոիւ անձն։ Տղերք,
նամուսը մերն ա, ալ ֆիքք անելու տեղը չի։ Տիւք մեռ-
նէք, լօթիանա, էգուց մի մահլադավասի սարքանք
քի, սաղ քաղաքը զարմանալ։

—Հարկաւոր չի, ես առանց գրան էլ փոշտանել
եմ, —ասաց ՈՒլըանը, իւր հալեացքը գետնից ընհ-
ռագնելով:

—Ես էի եմ փոշմանել, աւելիազրեց Յմբատը:

— Ձեր բանը չի, դուք իսկի միք խոսիլ, տեղներդ
դինջ նստեցէք սուս ու փուս։ Մենք բանը գլուխ կը
բերենք առանց ձեզ ել, — մէջ մտաւ կարճահասակ ե-
րիտասարդը, դիմելով Սմբատին և Սէլյանին։

— ჩაս որ աթանց ա, ես եավաշ եավաշ քինամ
քեօռամալս եղամ, — աւելացրեց գդակը ծուռ գրտծ ե-
րիտասարդը: Ե՞րբ էք կռիւր բաշտամիշ անելու:

— Հանց էգուց կէսօրից յետով, —միաբերան գոչեցին կարծահասակ և բեղերը մկան պոչի պէս սրած երխտասարդները:

Այդ միջոցին փողոցի ծալքում երևեցաւ Հայլապետը, որ, չուխայի տակ մի ինչոր բան բռնած, գալիս էր տուն։

Սէլլատը և Սմբատը անյապաղ մտան տուն։ Միւս-
ները նոյնպէս հեռացան իրանց տները, խորհելով.
ինչպէս վաղը կռիւը սկսեն և վերջացնեն, որ իրանց
մահի ջահիների նամուսը տափը չըկոխեն»։

xi

Օրը բոլորովին մթնեց։ Մարիամ բաջին խոհանոցում ճարպի մոմը վտաեց և բերաւ ներս։ Հայրապետը նստած էր պատի տակ, յինդարի վրայ, մէջքը բարձին, մի ոտք ծալած, միւսը մեկնած։ Նա մի ձեռում երկայն շիբուխն էր բռնել ու ծխում, միւսում տէրողորմեան էր չխչիկացնում։

Հայրապետը, ըստ երեսոյթին, շատ տխուր էր: Երբ
Մարիամ բացին աշտանակը դրաւ մէջտեղ, ազօտ լոյսը
լնիաւ նրա վրայ: Այդ մշտապէս ուրախ ու պայ-
ծառ գէմքը երբէք ալգչափ թթուած չէր: Մարիամ
բացին սովորական «բարի երեկոն» կրկնեց երկու անգամ
և, Հայրապետից պատասխան չստանալով, հեռացաւ
սենեակի մի անկիւնը: Սէյրանը գրսումն էր, վախե-
խում էր, թէ ամաչում նա, բայց չէր ուզում ներս
գալ: Երկու ամուսինները նստած էին լուռ ու մունչ:
Մարիամ բացին հայեցքը չէր հեռացնում Հայրապե-
տի ճակատից, իսկ վերջինը առաստաղի մի կէտից:
— Բայսի եռեկոյ, — ներս մտաւ մի բարձրահասակ

Sampson:

— Աստուծոյ բարին, Բարխուդար:

Հայրապետը և Մարիամ բաղին բարձրացան տեղերից:

- Համեցէք, համեցէք, ախէի Մարիամ, մի փափուկ մինդար բեր:

-- Նեղութիւն մի քաշիլ, նստիր, Հայրապետ, ես էս
պատի տակն էլ կրնստեմ:

— ՁԵ, բաս որ էդպէս է, անցկաց, տեղումս նստիր,
մէջքդ բարձին տուր, — ասաց Հայրապետը, խորին պատ-
կառանքով ցոյց տայով իւր տեղը:

Մարիամ բաջին սփռեց մի մինդար Հայրապետի տակ,
և երկու հարեանները նստեցին:

—Ե՞հ վառք քեզ Աստուած, —սկսեց Հայրապետը,
աջ ձեռք քսելով ճակատին:

— ի՞նչ կալ, ի՞նչ չըկալ, ի՞մրիսուդար:

Վերջինը սկստասխանելու փոխարէն Հայրապետի երեսին նաև և աչքերով մի նշան արաւ։ Հայրապետը իսկոյն հասկացաւ, ինչ է նշանակում ալդ նշանը։

—Մարիամ, վեր կաց, դուքս եկ, —դարձաւ նա իւր ամուսնուն:

Մարիամ բագին դուրս եկաւ:

— Ես չեմ սիրում, որ երբ տղամարդիկ մի շատ
հարկաւոր բանի վրայ խոսում են, կանայք լսեն, — ա-
սաց Բարիսուդարը, ծխախոտի չորացած տերեւը ձեռ-
ների ափերում արորելուի, որ չիբուխը լցնի:

Բարխուղարք խոսում էր ստու ու քիչ կոշտ: Նրա
գէմքը արտաքայտում էր տիրութիւն և բարկութիւն:

—Ես ել չեմ սիրում, Բարխուդար, կնիկարմատի
բերանում ոսպ չի թրջվում, հէնց մի քան որ լսեցին, ել
Աստուած աղատի:

Նիստելով իւր հարեւանի սառնութիւնը, Հայրապետն ինքն ևս աշխատեց, որքան կարելի է, իւր դեմքին լրջութիւն տալ, և տուալ էլ:

— Եղալէս է։ Հայրապետ, ես եկել եմ քեզ մի
քանի բաներ ասելու, թող հէնց առանց պատեպատ
ընկնելու սկսեմ, — ասաց Բարխուդարը, և չիրումի
ծայրը դրաւ բերանը, միւս ծայրը մեկնեց ճրագին,
որ ծխախոտը վառի։

— Իմ զահլէս տանում են բազի մարդիկ, որ իրանց
ուզածը ասելու տեղ, սար ու քոլ են ընկնում:

— Խոսք չըկալ, Հալբապետ, որ լաւ սիստ > ուր
բաշարժի ելեկոն:

—Պարզ, ինչպէս էս ճըրագը:

կացըթինք:

—**لِمَكَ:** *أَنْتَ تَخْرُجُ بِرَبْرَبٍ*

— Նա էլ է միտգ, թե ըստ լուսաց +
— Միտս է, ամա էնքան էլ պարզ չի, չէ, հըմ

Կաց, մի Փեքը անեմ:
—Մենք խոսեցինք մեր բարեկամութեան ու մէ

Էլ Սուսանիս ու Սէլրանի մասին։ Օքտղ է։
— Ա.Փարթիմ, Բարխուռդար, ուժ իննը տարի է ան

ցել, ավարիմ, որ էդպիսի միտք ուսնիս:

— Եսկի գըան խոսք կալ, իսձամբց շուշտ — և
նութիւնը:

—Եղ պատճառով էլ սի տախ ուշուց

էի անում, որ մի օր քեզ կանչեմ, խորհուրդ անենք,
որ էդ բանը վերջացնենք:

—Ես էլ եմ ֆիքր արել, Բարխուդար...

—Կաց, խոսքս մի կտրիլ, ասելու բաներ շատ ու-
նիմ, —ընդմիջեց Բարխուդարը իւր սովորական հրամալող
ձայնով:

—Ես մեղալ Աստուծոյ, հրամալիր, —ասաց Հայրա-
պետը, ձեռը դնելով շրթունքների վրայ ի նշան խո-
նարհ լուսթեան:

—Հայրապետ, տղադ, Էն Սէլքան լակոտը, մի բան
ըսնեց, մի զարաթ արաւ, որ հիմալ, միտս ընկնելիս
արիւնս խառնվում է, գլուխս շուռ է տալիս, աչքերս
մթնում են: Ուզում եմ, որ գանակը վերցնեմ, նրան
էլ, աղջկաս էլ էնքան կտորեմ, որ մեծ թիքաները ա-
կանջները մնան, բայց...

—Սրժեն, արժեն, իմ արելը արժեն:

—Մի ամսից աւելի է, որ էս բանը պատահել է,
ամա էլի դադար չունիմ: Նեշտ բան չիմանաս, Հայրա-
պետ, քանի որ երեխաներ էին, ես ինքս էլ սւրախ
էի, որ իրարու սիրում էին, չունքի էն ժամանակը չէին
հասկանում: Բայց հիմալ, Հայրապետ, չափահաս են,
խելք ունին, պիտի հասկանան, որ իրանց արտծը խո-
տառակութիւն է, բէնամուսութիւն է...

—Ել հայեաթումը ճոխ չըմնաց բեադզաթի մէջ-
քին փշրած չըլինիմ, որ չի փոխվում, ի՞նչ անեմ:

—Լոիր, Հայրապետ, թող խօսքս վերջացնեմ: Ի՞նչ
էի ասում, հա, էն օրուանից գես Սէլքանը դուքան չի
գալիս, երես չունի: Նատ լաւ էլ անում է, թէ չէ՝ հի-
մալ ուկորը փթում էր հողի տակ: Փողոցներում խառն-
վել է լիրք, կեղաստ ջահիլների հետ ու օրից օր փը-
շանում է: Դա հերիք չէ, ինքը ջառ ու ջհաննամը, որ
փշանում է, մեր անունն էլ է կեղտոտում. այս է իմ

ցաւը: Էս երեկոյ բազարից տուն եմ գալիս ներքեւի փո-
ղոցվ, տեսնեմ մի գաստա ջահիլներ, պատի տակ թագն-
ված, լախկոթու են տալիս: Գլուխս քարշ արած անց-
նում եմ. բայց մի քիչ հեռացած չըհեռացած, մէկ էլ
լսում եմ, ինչ եմ լսում: Էն լրեերից մինը բարձր ձայ-
նով, երեսի ինձ լսեցնելու համար, ասում է, ի՞նչ է ա-
սում, հըմ, գիտես, ասում է. «այ, Սէլքանի հետ գի-
շերները պաշազվող աղջիկը էս նամուսով դուռաւմսաղի
աղջիկն է, տեսէք, տեսէք, չի ամաչում ոչ սպիտակ մա-
զերից, ոչ էլ փափախից. Էլի երես ունի, բազար է
դուրս գալիս»: Հայրապետ, դա որ լսում եմ, խելքս քիչ
է մնում, որ գլխիցս դուրս թռչի: Աչքերս արիւն է կո-
խում, մարմինս մի սառը քրտինք է պատում, ուզում եմ,
որ յետ դառնամ ու էն լրեերի գլուխը ջարդ ու փշուր
անեմ: Բայց մէկ էլ ֆիքր եմ անում, նահլաթ եմ տալիս
չար սատանին, երեսիս խաչակնքում եմ ու մի կերպ
շարունակում ճանապարհու: Գալիս եմ մեր փողոց, էս-
տեղ էլ մի ուրիշ խարար եմ լսում: Մեր հարեան «գը-
գուլ» Մաթին ասում է. «Էսօր Սմբատն ու Սէլքանը
աղաջգավասի են արել ներքեւի մահիլ ջահիլների հետ»:
Գալիս եմ տուն, Սմբատին մի քանի սիլլաներ եմ
տալիս ու յետով հարցնում եմ կոռուի պատճառը: Սըմ-
բատը պատմում է: Բանից գուրս է գալիս, «Պ կոիւ
սկսողն էլի տղադ է իլել...

—Փահ քո տունը Աստուած չըքանդի, ասում ես
Սէլքանը, գոչեց Հայրապետը, աւելի ու աւելի զար-
րանալով:

Բայց Բարխուդարը անուշագիր թողեց նրա հարցը:
Նրա սառնութիւնը փոխվեց բարկութեան: Մի կողմ
ձգեց չիբուխը, որ մինչեւ ալդ ժամանակ անդադոր ծը-
խում էր:

—Հըմ, էս որ լսում եմ, բռնում եմ Սմբատի

Երկու ականջներից ու գետնին խփում։ Առանց դէս, առանց դէն ոտերիս տակն եմ զցում նրան, էնքան կոխոտում եմ, որ շունչը կտրվում է։ Մայրը գալիս է ու ձեռից առնում։ Հայրապետ, բաս հիմալ դու ասա, բաս այդ օրէնք է, բաս իմ նամուսս վեր կ'առնի, որ քո տղիդ խաթրու սաղ քաքտքում էդպէս խալտառակվեմ։ Հըմ, ասել կըլինի, որ Քեօխանց Բարխուգարը օրը ցերեկով բաց փողոցում իւր աղջկայ վրայ էդպիսի բաներ լսի։ Բաս որ էսպէս է, ես իսկի մարդ չեմ, ես նամուս—զրիաթ չունիմ, բաս, բաս էս, էս, էս փափախը իմս չի, հըլը...

Բարխուռքարը կատաղած վերցընեց գլխից իւր գդակը
և բոլոր ոլգով զարկեց գետնին:

Հալրապետը սպրտնեց: «Նահիլաթ քեզ չար սատա-նայ, էս մարդը գժվեց, ձեր արևել վկայ գժվեց», անցաւ նրա մտքով: Նա կամեցաւ մի բան խոսել, բայց վախեցաւ և չըհամարձակվեց առիւծի պէս կատաղած Բար-խուղարի առաջ բերանը բանալ:

— Բաս թող եսիրս (գերի) Հնդստան դուրս
դալ, թող կնիկս ու բալաներս տկլոր չոլերը ընկնեն,
ես էլի էդ բաները զաքուլ անաղ մարդ չեմ: Հայրապետ,
տղիդ կապը քաշիր, քաշիր, ասում եմ քեզ, էն լրկրտ-
վածի կապը, թէ չէ Աստծուն է յախնի թէ ինչ կա-
նեմ նրան էլ, աղջկաս էլ, քեզ էլ ու ինձ էլ: Ներիք չէ,
որ ինքը լրբացել է, հերիք չէ որ տղիս էլ հետն է
փչացրել, լօթիների մինն է շինել, իմ անունս էլ
սաղ քաղաքում կեղտոտեց: Ալս իմ մէլիթիս (դիակիս)
ասել չիլինի: Բաս էգուցուալ օրը ես էլ ինչ երեսով պի-
տի բազար դուրս գամ, ես, ես, Բարխուգարս, որ մին-
չեւ օրս խալիսի վրալ եմ ծիծաղել: Ես, որ ճշմարտու-
թեան համար, անունս իստակ պահելու համար, ա-
մենից հեռու եմ քաշվում: Ես, Ես, որ իմ նամուսիս ե-

սիր դառած մարդ եմ, իմ յօժար կամքով Սիբիր կը
գնամ, բայց ես բաները ղաբուլ չեմ անիլ: Ինչ փող,
ինչ դովլաթ, ինչ մեծ մեծ տներ, ես թքել եմ դրանց
վրայ, հալաւ քրտինքովս փող եմ աշխատում, կէս քաղ-
ցած, կէս կուշտ ապրում եմ թէ ինչ է, նամուսս մա-
քուր պահեմ, նա էլ Սէլրանի ու Սուսանի պէս լակոտ-
ները կեղտոտում են: Բաս թու էս ըեղերիս, ես իսկի
տղամարդ չեմ:

— Ի՞նչ անեմ, բաս, Բարխուդար շահ, — և
նեմ, որ չեմ կտրողանում օգնել, — խոսեց, վերջապէս,
ոճուն ձայնով:

Հայրապետը դողդովուն ձախով։ Հայր, այս զահըուն է անեկեն, ալ ինչ արա; Տար, ածոքը ածիր

—Ինչ անեեես, այ լուս
մառը հենց էս գիշեր մոխիլ արա ու տղիդ աչքերը աօլի
մառը հենց էս գիշեր մոխիլ արա ու տղիդ աչքերը աօլի

Այս ասելով Բարիսուդալը հարկանի վեցուրո հանեց մի բաց ծրար և շպրտեց հարկանի վեցուրո հանեց մի բաց ծրար և շպրտեց հարկանի առաջ, նա սար-քայ: Եթե ծրարն ընկաւ Հայրապետի առաջ, նա սար-սափած լետ քաշվեց և մի քանի վալորկեան ապշած սալյեց թղթերին, ինչու մի մարդ, որ դաշտում զբու-նալիս լանկարծ իւր ոտի տակ տեսնում է օձ: Վեր-նելիս լանկարծ իւր ոտի տակ տեսնում է օձ: Վեր-ջապէս, նա զգուշութեամբ, դողդոշուն ձեռը մեկնեց գէպի ծրարը, կարծես, վախենալով, որ նա հրէս պիտի կծի իւր ձեռը: Ցուցամատի և բուժ մատի ծալրերով քարձացը գետնից ծրարը, մօտեցը եց ճրագին և յօն-քերը գեր քաշելով սկսեց զննել, երբեմն հարցակտն հայեացքներ ձգելով Բարիսուդալի երեսին:

Կըզարմանսա, բայ շ
կած ծառի սլառւղը, կեր...

— Դա դա, Բարինուդար, դա, ախալ, և
լաթ քեզ չար ստանալ, — մըմնջաց Հայրապետը, շա-
րունակելով նայել ծըլարին:

վրայ, Մակարիկից տղադ է գրում առևտուրի մտախն, — պատասխանեց Բարիսուդարը, հեգնօրիէն ժպտալով:

Հայրապետը սպառնած շարունակում էր նամակը
ձեռում շուռ ու մուռ տալ:

— Են թուղթը, որի վրայ Աւետարանի սուրբ խոսքերն են գրվել, էսօրուայ օրը աշխարհը Էնքան փուչացել է, որ Սէլլանի նման Աթենքը էդպէս կետուաւմ են: Կարդա ու ձեռդ կրծքիդ քսիր, բախողաւոր մարդ:

— Զորանամ ես, թէ որ մի բան հասկանում եմ էս
թղթից:

Կանչիր, կանչիր էն լակոտին ու թող ինքը կարդայ:

Հայրապետը, ծրարը ձեռում սղմած, վազեց գուրս
Սէլրանին կանչելու։ Բայց գեռ նրա մի ստը սենեա-
կումն էր, երբ յանկարծ ինքը, Սէլրանը, երևեցաւ իւր
հօր դէմ ու դէմ։

— Ներս Եկ, — Հըսամալեց Հայրապետը իւր որդուն,
ինքը լեռուլետ քաշվելով:

Սէլրանը վաղեց ներս, դիմեց հօրը, խեց վերջինի
ձեռից նամակը և փախաւ գուրս։ Այս տյնքան կտրճ
միջոցում կտտարվեց, որ Հալրապետը շրկաբողացաւ որ և
է զարժում անելու։ Նա մնաց մի քանի վայրկեան տե-
ղըն ու տեղը։ Բարխուգարի բարկութիւնը կրկնապատկ-
վեց Սէլրանի տյդ անսպասելի վարմունքից։ Նա բարձ-
րացաւ տեղից։

- Տարաւ բետքզաթը, - արտասանեց Հալրապետը,
ձեռնելը տարածելով առաջ:

— Թող տանի, ջուր անի, խմի, որ սկըտը հովանակ, շատ է տաքացել:

—Ախար, մարդ Աստուծով, մի ասա տեսնեմ նա
բնչ թուղթ էլ:

— Ինչ թուղթ է՞ր: Քեզ ու քո աղիդ... Նահլովթ
քեզ չար սաթալէլ Համա:

Բարիսուգտը ատամները կրծտեց, բոռնցքները
սղմեց: Կարծես, նա պատրաստվում էր յարձակվել
իւր հարեւանի վրա! և տեղն ու տեղը ջարդ ու փշուր
անել: Հայրապետը երկիւղից թէ բարկութիւնից, սաս-
տիկ գողում էր:

տիկ դողում էր: — Բաս աղադ գիլ է զըռւմ իմ աղջկաս վրայ ու ակօշից ներս է զցում, հա, էպսէս ես խըտել նըրան, հա:

Հասկանում, ինչ է դրում:
Հասկանում, ինչ է գեր

— Արքի չեմ, ի հարկէ, չսու թէ թէ
ըստմ. գըստմ է թէ ես քեզ սիրում եմ, տառւմ է թէ
ես առանց քեզ ապրել չեմ կարող, չունքի, ասում է,
շատ եմ սիրում, ասում է: Ես գիշեր, ասում է, տառը
սհաթին գուրս եկ, ես կըդամ ձեր սրահը, ու էնտեղ կը
տեսնինք, ասում է: Ոի ինչ է գըստմ, հասկացա՞ր թէ չէ

— Աաւ է գրում, զօշաղ ալո՞ւ, Համբերիր,
Էն: Տեսնում էք ինչ դալաթներ է անում: Համբերիր,
Բարխուղար, Համբերիր ու կըտեսնես թէ ես նրան
ինչպէս շանսատակ կանեմ: Մեղաւորը դու ես, Բարխու-
ղար, թէ որ դու բիշտի չըտալիր, ես նրան ուսումնարան
տվազը չեի: Զէ, բաս կըտալի. որ էսօրուայ օրին հասց-
նէր մեզ:

— Ես եմ մեղաւորը : Կազու է ու աւ ոսւս, սուս, Հալքապետ, ինչ որ է, էլ օրէս դէն երկար խոսելն աւելորդ է : Լաւ լսիր, ես եկել եմ քեզ սելու, որ էսօրուանից դէն քեզ հետ բան չունիմ, պըս-ծաւ, գնաց: Դու ես իմանում, ինչոր ուզում ես, արա: Մին էլ, որ թէ տղիդ տեսնեմ իմ հանդավարում, առանց դէս, առանց դէն, խանչալս փորն եմ կոխելու ու խառնի խառնի անելու: Ել ոչ ես, ոչ դու: Տէրը քեզ հետ Աւարտելով իւր խօսքերը, Բարխուդարը քայլելը

ուղղեց գէպի գռները։ Հայրապետը, որ երբէք չէր ըս-
պասում թէ բանը այդպիսով կըվերջանալ, մնաց տեղն
ու տեղը անշարժ։ Նա անմիտ գէմքով, ձեռներն առաջ
տարածած, մէջքից քիչ ծռված, նայում էր Բարխու-
ղարի հեռացող քալլերին։ Նա կամեցաւ այդ վայրկեան-
նին մի բան խոսել կամ գոռալ, խնդրել, աղաչել Բար-
խուղարին, առաջը կապել, որպէս զի չըթողնի դուրս
դնալու, բայց չըկարողացաւ։ Հայրապետը ինչպէս կար,
նոյնպէս և մնաց, մինչեւ որ Բարխուղարը մի օտը գուրս
դրաւ։ Այստեղ միամիտ մարդը ուշքի եկաւ, ձգեց գլխից
գգակը մի կողմ, վազեց գէպի գռները և երկու ձեռ-
ներով գրկեց Բարխուղարի մէջքից։

— *Fawq* [θawq], *θib* *ξib*...

— Բարխուդար, Բարխուդար, քեզ հետ կերած աղու հացը տչքերս կըքոռացնեն, եթէ Աէլրանի նման լակոտի խաթրու ես քեզանից խոռվեմ: Կանգնիր, կանգնիր, Բարխուդար:

Բարխուդարը կանգնեց, երեսը շուռ տուաւ դէպի-
իւը հարեւանը, նայեց վերջինի աղերսող դէմքին, նայեց,
իսկոյն գլուխը թեքեց կրծքին և երկու ձեռներով սեղ-
մեց նրան:

ԶԵ որ Բարխուդարը խոսք է տուել, երգում է կերել՝ այդ մարդու հետ մինչև իւր կեանքի վերջը բարեկամութիւն պահել։ Հիմայ ինչ է անում, ինչ է անում, ոտք դուքս է գնում նրա տանից, որ էլ մինչև յաւիտեան ներս ըզդնի։ Միթէ այդ թքածը լիզել չէ։ Բայց ով է մեղաւոր, Բարխուդարը։ Ինչո՞վ Բաս նրա նամնուոր, տափը կոխի, ցեխի մէջ շարտի, ոտնակոխ անի։ ԶԵ, այս անկարելի բան է, անկարելի բան է, որ «ԱԷլրանի» պէս մի լակոտ» նրա փափախը աղքի մէջ գլորի և այնուհետեւ էլի նա ոտ կոխի այն տունը, ուր ապրում է ալդ լակոտը։ Ո՛չ, Բարխուդարը աւելի հեշտ կըհամաձայնվի

կոտորել Սէլըանին էլ, իւր աղջկան էլ, իրան էլ սա-
տանաների փալ կանի, բայց դաբուլ չի անիլ, որ իւր
ականջները այսօրուակ խոսքերի պէս խոսքեր լսեն:

Մինչ այդ ամենն անցում էր ՀՀ քով, Հայրապետը ապշած մտիկ էր տալիս նրան, չընալով, խոսք անդամ արտասանել:

— Ասել եմ, պիտի կատարեմ, թէ չէ սասաւ և
ըլխեղդի, մնաս բարով, Հայրապետ, — ասաց յանկարծ Բար-
իուղագործ և շտապով դուրս եկաւ:
Տաս է առաջինը, — յավեց դըսից, և երկու

Դա Սէլլանն էր:

— Ասէք, այ մարդ, լսիր, սի քառեւ և
լետով ուը-ոը ուզում ես գնաւ:

Սէլրանի կողմից այդ անսպասված այն ազգեցութիւնն ունեցաւ Հայրապետի վրայ, որ խեղճ մարդու լեզուն այս անգամ բոլորովին «իշտացաւ», ինչպէս ինքը լետոյ պատմում էր Մարիամ բաջուն: Նա չուխալի թևերն ուսերին գցեց, ձեռները պահեց բերանի գէմ, իրանը ծռեց և ասաց. այ քեօփ...փը...փը... Բայց չըկարողանալով արտասանել ուզած բառը, կըկին չուխալի թևերը ցած դցեց և մի կողմ նախելով, ուր ոչ ոք չըկար, աւելացրեց. ատեսնում էք էս լակոտին, նահանջմթ չար սատանին հան: Մինչդեռ Հայրապետը զանագան անհամեր շարժուածքներ էր անում, Սէլրանը, Բարխուղարին ներս հրելով, կանգնել էր զըսն առաջ կարծես, դիտմամբ, որպէսզի վերջինը «ըփախչի»:

— Հըէս ասում եմ, այսալիք, շուշը
էլ, քո բարեկամութիւնն էլ, մենք քեզ կարօտ չենք:
Բայց Սուսանը իմս է, դու Սուսանին ինձանից չես կա-
րող խլես, դու նրան ինձ ես բաշխել, դու երգվել ես,

և թքածդ լզող մարդ չես: Լուսմ ես, Սուսանը իմս է,
իմս...

Սէլրանն այդ խոսքերը արտասանում էր բարձր
ձայնով, գրէթէ գոռալով:

—Կարիք ձայնդ... լակոտ, թէ չէ գլխիդ ողողը շնե-
րի փայ կանեմ, —խոսեց, վերջապէս, Բարխուդարը, ա-
տամները կրծտելով և բռունցքները ամուր սեղմելով:

—Ադա, տդա, լեզուդ կուլ տուր, Տէր մեղայ քեզ
Սստուած, —մէջ մտաւ Հայրապետը, մօտենալով իւր
որդուն:

—Քո բանը չի, —կտրեց իւր հօր խոսքը Սէլրանը,
Մէկ էլ եմ ասում, Բարխուդար, աղջիկդ, Սուսանն իմս
է, դուք կարող էք կովել, թշնամանալ, բայց Սուսանն
իմս է: Հայ, Սուսանն իմս է, ով որ նրան իմ ձեռից ու-
ղենայ խել, ես նրան իմանում էք ինչ կանեմ, իմա-
կըճընեմ: Տեսնում էք...

Մէջքի կողմից, չուխայի տակից Սէլրանը դուրս
հանեց մի մերկացած դաշոյն, որ խոկոյն պսպղաց ճը-
ռադի լուսից:

Հայրապետը թուլացաւ, Բարխուդարը մնաց նոյն
դրութեան մէջ, ինչու առաջ:

—Ուրախացիր Հայրապետ, փառաւորվիր, որ դրա
ուկս աղայ ունեն, —առաց նա, դդակը գլխին դնելով, որ

Սէլրանը մնաց անշարժ: Նա չէր սպասում թէ իւր
սպառնալիքը այդպիսի անյաջող ազգեցութիւն կունենալ
Բարխուդարի վրայ: Նա կարծում էր թէ վերջինը տես-
նելով իւր յուսահատութիւնը, կըվախենայ և կըզջալ:

—Սոլասիր, մի գնար, ես ինչ եմ արել, ումի՞ տը-
ղից եմ վատ: Հըմ, ինձ ես շառլատան ասում: Ես ինչ
մեղաւոր եմ, ինչ մի մեծ յանցանք եմ գործել, որ մի

քանի անգամ եկել եմ Սուսանին տեսնելու: Սիրտս ու-
զում էր, դա ինչ մեղք է, որ դրա պատճառով ալդքան
ինձ չարչարում էք: Հայրս ծեծել է ինձ ու վողոցները
գցել, դու էլ, այդ հասակի մարդ, չես ամաչում, եկել
ես ասում, «մեր, բարեկամութիւնը էսօրուանից կորվում
է»: Ինչ ուղում ես արա, բայց Սուսանին իմ ձեռիցս մի
խլեր, թէ չէ՝ Աստուած է իմանում, որ այս խանչուլը
նրա էլ, իմ էլ սիրտը կըմտնի:

—Քաշիր, ասում եմ քեզ, այ տաւար, լակոտիդ
կապը: Նահլաթ, նահլաթ, աչքերս արիւն է կոխում,
հէնց կըկոփեմ, որ հոգին քթի ծակերից դուրս կըգայ:

—Ադա, կտրիք ձայնդ, դուրս եկ, կորիք քեօփօ... —
գոռաց, վերջապէս, Հայրապետը, յարձակվելով իւր որդու
վրայ և բռնելով նրա կոկորդից:

—Հեռացիր, —հրեց ձախ ձեռով իւր հօր կրծքին
Սէլրանը: Ոչ քեզանից եմ վախենում, ոչ էլ նրանից:
Ինչ էք ուղում ասել:

Հայրապետը կրկին մօտեցաւ նրան և, այս անգամ
բռնելով երկու ձեռքերով նրա փեշերից, ասաց.

—Համեցէք, համեցէք աղբէր, դուրս կորիք էլի,
չեմ ուղում, դու իմ որդիս, դու իմ սոնկս չես, աղբէր,
կորիք էլի, փիէէ...

—Թոնդ, ես խօ կոիւ չեմ անում, թող մէկ սրտիս
ուզածն ասեմ...

Հայրապետը նրա բերանը սեղմեց մի ձեռով, իսկ
միւսով սկսեց նրա գլխին բռունցքներ տալ:

Ներս վազեց Մարիամ բաջին ճչալով և գլխակոր
ընկաւ իւր ամուսնու ու որդու մէջ: Սէլրանը մի հար-
ուած տուաւ իւր հօր կրծքին, ազատվեց նրա ձեռից
և դուրս փախաւ, գոռալով:

—Կտոր կտոր կանեմ ես այն մարդուն, որ կըհա-
մարձակվի Սուսանիս խլել իմ ձեռից:

— Պարծեցիր, պարծեցիր, Հայրապետ, լաւ տղայ
ունես: Մնաս բարով, — ասաց Բարխուդարը և գդակը
ծածկելով դուրս եկաւ:

— Քանդվեց տունս, — բացականչեց Հայրապետը և
թուլացած ընկաւ մինդարի վրայ:

XII

Բարխուդարի և Հայրապետի բարեկամութեան թե-
լը կտրվեց: Երկու ընտանիքները, որ այդքան սիրում
էին, որ այդքան ընտելացել էին իրարու, երկար տարի-
ներ միասին ապրելով, այժմ անջատվեցին:

Գիւլնազը, ցերեկները Սուսանի մօտ միայնակ նըս-
տած, մտաբերում էր այդ հին բարեկամութիւնը, մտա-
բերում էր և շատ անդամ լաց լինում: Բայց նա զեռ
լոյս ունէր, որ դարձեալ կարող է վերտականդնել այդ
բարեկամութիւնը: Նա կարծում էր, թէ Բարխուդարը
այդ արել է պատահած անցքերից լուզված լինելով, որ-
րանց թարմ տպաւորութեան ներքոյ, առանց մտածե-
լու: Սակայն անցան շաբաթներ, անցաւ մի ամիս, վեր-
ջապէս, երկու, երեք ամիս, և Գիւլնազը տեսաւ, որ իւր
ամուսինը չի կոտրվում: Վերջապէս, մի օր նա վճռեց
համարձակորէն խոսել նրա հետ, մտաբերելով նրան
իւր երդումը և Սուսանի ու Սէլրանի մասին տուած
հաստատ խոսքը: Այս խոսակցութեան հետեւանքն այն
եղաւ, որ միւս օրը Բարխուդարը վարձեց մի որմնադիր
և պատուիրեց՝ իւր տունը Հայրապետի տնից սրահի
կողմից բաժանող պարսպի փլատակված մասը նորոգել:
Ելդ մի թշուառ օր էր, նամանաւանդ Մարիամ բաջու
և Գիւլնազի համար, որոնք իրանց ամուսիներից գաղտ-
նի միանալով, երկար ու բարակ շախ ու վախ» քաշեցին,
արտասպեցին և հեռացան իրարուց:

Այս հանգամանքը, այսինքն պարսպի վերանորո-
գումը, կրկնապատկեց Սէլրանի լուսահատութիւնը:
Նա, որ նոյնպէս Բարխուդարի կողմից սպասում էր
կամաւոր հաշտութեան, այժմ տեսնելով, որ ամեն ինչ
վերջացած է, մնած շուարած:

— Ուրեմն Սուսանին ուժով ինձանից խլեցին: Ես
այլ ևս նրա երեսը չեմ տեսնիլ: Բայց ի՞նչ է մտածում
ի՞նքը Սուսանը իմ մասին: Պէտք է նրա հետ խոսել:
Ի՞նչու կարող եմ տեսնել նրան, ցերեկները դուրս չե-
գալիս, գիշերներն էլ նոյնպէս փակված է: Միթէ լու-
սիտեան զրկվեցի Սուսանիս երեսից, միթէ այլ ևս չեմ
տեսնելու նրա հրեշտակի պէս գեղեցիկ գէծքը, չեմ լլ-
սելու նրա քաղցր ձախնը: Ինչպէս, ով է ասում: Զէ,
ես հէնց այս շաբաթ, հէնց այս քանի օրերս պիտի
տեսնեմ նրան, պիտի իմանամ նա էլ ինձակէս
տանջվում է թէ չէ: Ախ, եթէ Սուսանն ինձ սիրում է,
ես գիտեմ ինչ կանեմ: — Ի՞նչ կանեմ. Եթէ Բարխու-
դարը չըկոտրվի, ես Սուսանին կրփախցնեմ, բայց կը
փախցնեմ: Բայց չէ, առաջ հարկաւոր է աշխատել, որ
բանը խաղաղութիւնով վերջանայ:

Այս մտածմունքներով էր զբաղված Սէլրանի գը-
լուխը նոյն օրերը, երբ որմնագրի ձեռի տակ չարագու-
շակ պարփակն արագ-արագ բարձրանում էր: Սէլրանը
հանգստութիւն չունէր, գիշեր ու ցերեկ մտածում էր Սու-
սանի մասին, մտաբերում էր այն երեկոն, երբ վերջին ան-
գամ խոսելով Սուսանի հետ, համբուրեց նրան: Զարաքաղդ-
համբուր: Միթէ դու եղար միակ պատճառը այդքան
գիրաղութիւնների: Միթէ ինքը, Սէլրանը չէ միակ
մեղադուրը: Ի՞նչ էր ուզում նա Բարխուդարից, հըմ, որ
սա այն երեկոյից լետոյ հրաւիրէր իւր մօտ, համբու-
րէր ճակատից և ասէր. «Պոչաղ տղայ, լաւ ես անում,
շատ լաւ ես անում, որ իմ աղջկան գիշերները համ-

բուրում ես»։ Ի՞նչպէս չէ, «իշտահդ սափ արա, Սէլրան»։ Այս Սէլրանը շատ վուազեց, չըհամբերեց. ախ անզդուշութիւն։ Ի՞նչպէս նա չըկարողացաւ առաջուց մտածել այդ ամենը. աչքերն արիւն էր կոխել ախար։ Դա բաւական չէր, նա Բարխուդարի հետ էլ կոշտ վարդեց այն գիշեր։ Ով գիտէ, կարելի է, եթէ նա մէջ տեղ ընկած չըլինէր, Բարխուդարը կըփոշիմանէր և էլլ կըշարունակէր իւր բարեկամութիւնը։

Այսպիսի մտածմունքներով պաշարված, մի երեկոյ Սէլրանը իրանց բագում գլուխը կրծքին թեքած շրջում էր յետ ու առաջ։ Նա մտածում էր, որ մի հնար գտնի այդ երեկոյ Սուսանի հետ տեսնվելու։ Երկար, երկար նա պտտեց այս ու այն կողմ, վերջապէս, կանգ առաւ պատի տակ։ Նրա աչքին ընկաւ մի շարժական սանդուխք, որ ձգուած էր պատի տակին։ Սէլրանի գլխում մի միտք ծագեց։ Մի քանի ըստէ անշարժ կանգնեց, ինքն իրան կրկնելով. «անեմ թէ չէ, անեմ թէ չէ»։ Ի՞նչ որ լինելու է, թող լինի, —ասաց, վերջապէս, վճռական եղանակով, մօտեցաւ սանդուխքին, բարձրացըց երկու ձեռներով և զգուշութեամբ պարսպի դէմ կանգնացըց։ Կատուի արագութեամբ նա բարձրացաւ պարսպի գլուխը և սկսեց նայել դէպի Բարխուդարանց տունը։ Դըռները բաց էին, ճրագը վառ էր։ Բարխուդարը մէջքը պատին տուած, նստած չիթուխ էր ծխում։ Գիւլնազը նոյնպէս նրա գէմուդէմ նստած կար էր անում։ Սըմբատը և Սուսանը չէին երեւում։ —Երեխ, նրանք քնածեն, —մտածեց Սէլրանը միեւնոյն ժամանակ Սուսանին որոնելով։ Յանկարծ սենեակի դուների սեամի վրայ նշմարվեց մի կանացի կերպարանք։ Սէլրանի սիրտը թըռթուց։ Նա իսկոյն ճանաչեց Սուսանին։

—Ի՞նչպէս է գեղնել, լրարել, երևի իսեղճը, հիւանդէ։ Գուրս է գալիս, ձեռում ափսէներ կան, գնում է

խոհանոց։ Ի՞նչ անեմ, թուշեմ, առաջը կտրեմ։ Բայց չէ, կըվախի։ Ի՞նչ անեմ, էհ, ինչ որ լինելու է, թող լինի, էլ ուրիշ յարմար ժամանակ գուցէ չունենամ։

Մի ակնթարթում Սէլրանը պարսպի գլխից թուաւ Բարխուդարանց բագը։ Պարխսպը բաւական բարձր էր։ Սէլրանի ընկնելու աղմուկը հասաւ Սուսանի ականջներին, և վերջինը, վախեցած, գլուխը բարձրացըց։ Տեսնելով, որ մի մարդկալին կերպարանք մօտենում է իրան, Սուսանը կամեցաւ ներս փախչել, բայց Սէլրանը նրա առաջը կտրեց։

—Սուսան, Սուսան, աղաջում եմ, սպանիր ինձ, գլուխս կտրիր, դէն գցեր, բայց երկու ըստէ ինձ լսիր։

—Էլի դու ես, Սէլրան, ի՞նչ ես ուզում, հեռացիր։

—Չեմ կարող, ես կըգժիկեմ, չոլերը կընկնեմ, սիրտ տուր ինձ։

—Գնա, եթէ ինձ սիրում ես, էլի դուրս կըգան, —պատասխանեց Սուսանը, երկիւղից դողալով։

Սէլրանը բռնեց նրա ձախ ձեռը։

—Ինձ փախցնում ես, Սուսան։

—Սուսանը լեզու չունի, Սուսանը աչքեր չունի, Սուսանը այս աշխարհում չի, Սուսանը մեռել է, դէ, ձեռ քաշիր, —պատասխանեց օրիորդը թոյլ և դողդոջուն ձայնով։

Սէլրանը չըհաւատաց իւր ականջներին։ Միթէ, միթէ, նա այս խոսքերը լսում է մի կենդանի արարածի բերանից, միթէ դա Սուսանն է կանգնած իւր առջեւ։ Նրան թւում էր, թէ այդ լուսահատական ձայնը խաւարի միջից է արձակում է մի ուրուտական։ Բայց ահա Սուսանը, ահա նրա ձեռը, որ սեղմած պահում է իւր ափերի մէջ Սէլրանը։ Սուսանը աշխատում է դուրս իւլել իւր ձեռը, Սէլրանը բաց չէ թողնում։ Նա աւելի ու աւելի սեղմում է և փոքր առ փոքր մօտեցնում իւր շըթունքներին։

—Գիտեմ, որ քեզ շատ են չարչարել, Սուսան,
ներիր ինձ, մեղաւորը ես եմ: Մեղաւորը ես եմ և եկել
եմ քեզ ազատելու:

—Ազատելու. Հըլ, Սուսանին Աստուած միայն կա-
րող է ազատել այս աշխարհից:

—Զէ, ես քեզ կազատեմ, կը փախցնեմ: Ես քեզ եմ
սիրում, դու էլ ինձ: Այսպէս չէ: Գնանք ուրիշ քաղաք,
Սուսան, գնանք, փախցնեք:

—Փախցել, բաց թող, Սէլրան, դու գիշել ես:

—Զէ, ինչքս զլսումս է, ես հասկանում եմ, թէ
ինչ եմ տսում: Դու ինձ խոսք տուր, ես հէնց այս շա:
բաթ կը փախցնեմ քեզ: Ես շատ ընկերներ ունիմ, նը-
րանք ինձ կ'օգնեն:

—Տեսնում ես, որ Սուսանը մեռած է, որտեղ ոլի-
տի տանես նրան: Տես ինչ օրն եմ ընկել:

Նրանք կտնդնած էին խոհանոցի դռների տուաջ
ծարպի մոմը, որ վառվում էր ներսում, թոլլ կեր-
պով լուսաւորեց Սուսանի գէմքը, երբ վերջինը երեսը
շուռ տուաւ գէսի խոհանոց, որպէս զի ցոյց տալ Սէլ-
րանին իւր դէմքը: Սուսանը նիհարած էր, դեղնոծ էր:
Նրա առաջուան բոցավառ ալտերը հալվել էին, կտշէն
թուլացել էր ու տեղտեղ ծալծլվել: Նրա շրթունքները
կապտել էին և սեղմքել, իսկ խոշոր աչքերի մէջ փայ-
լում էր խորին հոգեկան տանջանք: Երբ Սէլրանը
նրա երեսին նայեց՝ մարմնովն անցաւ մի սառառու:
«Տէր Աստուած, Տէր Աստուած, Սուսանը ձեռիցս դուրս
է գալիս», անցաւ նրա մտքով, բայց նա աշխատեց
զապել իւր երկիւլը:

—Գնա, գնա, Սէլրան, թող ինձ, որ իմ ցաւերովս
լուղին ու մեռնեմ:

—Գնալով, ի հարկէ, կը գնամ, որ դու ինձ չես սի-

րում, էլ ինչու կը մնամ, —պատասխանեց Սէլրանը դառ-
նացած:

Այստեղ տիրեց մի քանի վալրկեան մի խորհրդաւոր
լուռթիւն:

—Սուսան, հէնց միայն մի խոսք, մի խոսք ասա,
ասա, որ դու ինձ չես սիրում, էլ այնուհետեւ ես գիտեմ:

—Ազատում եմ, գնա, Սէլրան, հայրս դուրս կը գալ:
Սուսանը անդադար նայում էր սենեակի գոներին:

—Գնա, մոռացիր ինձ, Սէլրան:

—Ի՞նչ, մոռանամ: Հըմ, հասկացայ, բաս օրս լաւ
տեղ մթնացրի: Բաս Սէլրանը քո տէքից այնքան ընկել
է, որ դու փախցնում ես էլի: Լաւ, Սուսան, ես կը գը-
նամ, բայց ինչ որ ինձ պատահի, մեղքը քո վզին:

Այս ասելով, Սէլրանը գէմքը շուռ տուաւ, որ հե-
ռանալի: Սուսանը բռնեց նրա թեմից. նա խկոյն կանգ-
առաւ: Կարծես, Սէլրանը հէնց սպասում էր, որ Սու-
սանը չի թողլ տայ իրան հեռանալու:

—Լոիր, Սէլրան: Տեսնում եմ, որ դու նեղանում
ես ինձանից: Բաս որ ալդպէս է, թող կարճառօտ պատ-
մեծ քեզ միտքս, դու կը հասկանաս ինչու համար եմ
ասում, որ դու ինձ մոռանաս: Գնանք խոհանոց, ալ-
տեղ անյարմար է:

Սուսանը բռնեց Սէլրանի ձեռից և քաշեց ներս:
Նա ափսէները գետնին դրաւ, մազերը ուղղեց և, իւր
նիհարացած ձեռը դնելով Սէլրանի ուսին, սկսեց.

—Սէլրան, ես քեզ սիրում եմ, ուզում ես հաւա-
տա, չես ուզում մի հաւատա, բայց ես քեզ սիրում
եմ: Մտիկ արա ինձ, դա քո սէրն է, որ ինձ այս օրն
է գցել: Բայց ես պարտաւոր եմ, որ քեզանից բա-
ժանվեմ:

—Սիրում եմ, բայց պարտաւոր եմ բաժանվել, —
կրկնեց Սէլրանը վիրաւորված:

—Համբերիր, լսիր մինչև վերջը: Գիտես, որ հայրս,
եթէ նրան սպանես, կախ տաս, քեզ աղջիկ տուող չի:
Այդ գու պիտի լաւ հասկանաս, եթէ նրան ճանաչում
ես: Գալով փախչելուն, դա մեր կողմից լիմարութիւն
կըլինի, որ ոչ գու ես կարող անել, ոչ էլ ես կանեմ:
Մեր փախուստը անպատիւ կանի մեր ծնողների անունը,
որ առանց այն էլ իմ պատճառով անպատված է: Ես
չեմ ուզում, որ ինձ համար ծնողներս ամօթից սեե-
րես մնան ուրիշների առաջ: Ես գիտեմ, որ հայրս հէնց
մեր փախչելու օրն իրան կախ կըտայ: Նա արդպիսի
մարդ է, ես ճանաչում նրան: Քեօխանց Բարիսուդարը նա-
մուսի գերի է: Թող ես չարչարվեմ, տանջվեմ, սառը
գերեզմանը մտնեմ, այդ ինձ համար աւելի լաւ է, քան թէ
հօրս խալտառակութիւնը: Դշմարիտ է, նա ինձ թակում
է, աչքով աչք չունի ինձ տեսնելու, բայց ես նրան
սիրում եմ, որովհետեւ հայրս է: Գիտես, Սէլրան, ինչ
ասել է ծնողներ: Ան մտածիր. նրանք ինձ լոյս աշ-
խարհ են գցել, մեծացրել են, լաւ թէ վատ կըթել են,
այս հասակին են հասցրել, վերջապէս, նրս նք ինձ սի-
րում են: Զես հաւատում, որ սիրում են: Զէ, սիրում
են և շատ են սիրում: Սէլրան, մտիկ արա հօրս երե-
սին, տես այս կարճ ժամանակի մէջ նա ինչպէս է
փոխվել, ծերացել, լղարել, փորը մէջքին է կպել, թշերը
ներս են ընկել, աչքերը խորը փոսերի մէջ կորել, մէջ-
քը երկու ղաթ ծովել: Գա իմ սղատճառով է: Այն օ-
րից, երբ ձեզ հետ կտրել է բարեկամութիւնը, ոչ մի
անգամ կուշտ փորով հաց չի կերել, ոչ մի անգամ
մօրս հետ կարգին չի խոսել: Օրը ախ ու վախով է անց-
կացնում, հանգստութիւն չունի, մարդու երես չի ու-
զում տեսնել, կարծում է, որ ով որ պատահի, պիտի
իրա երեսին խոսի: Գիշերները մի տեղ նստել չի կարո-
ղանում, չիբուխը բերանին դրած, ծիսում է ծխում

մինչև կէս գիշեր, առանց խոսելու: Դէ, հիմայ դու ինքդ
ասա, Սէլրան, բաս դա մեղք չէ մեր կողմից:
— Իսկ մայրս, ախ Աստուած, ինչ է մնացել նրա-
նում: Խեղճ կնիկը հօրս երեսին մտիկ անելով, մի կտոր
մոմի պէս հալվում է: Առաջուալ այն գեօգալ կնիկը կուչ
է եկել, պառաւել է, հէնց իմանաս, որ այս երեք ա-
միսը նրա համար երեսուն տարիներ են դարձել: Մայ-
րը քեզ սիրում է, Սէլրան, շատ է սիրում: Խեղճ կը-
նիկ, նա շատ չարչարվեց, որ հօրս կակղացնի, բայց
չիլաւ, չըկարողացաւ հօրս ծռել: Ո՞վ կարող է ծռել
Քեօխանց Բարիսուդարին, երբ բանը նրա նամուսին է
վերաբերում: Հիմայ, տեսնելով որ էլ ճար չըկայ, խեղճ
կնիկը լռել է, ցաւերը թագցրել կըծքի տակ. այդ ցա-
ւերը այսօր մըղ-մըղ ուտում են նրան: Տեսնում ես,
Սէլրան, տեսնում ես այս ամենը. հիմայ ինքդ դատիր,
ես ինչ անեմ: Մտիկ եմ տալիս նրանց երեսին՝ ջե-
գարս է կտրատվում, սիրտս է մղկտում, ախար չէ որ
նրանց ցաւերի պատճառը ես եմ: Զէ, Սէլրան, ինչ ու-
զում ես արա, բայց ես չեմ կարող նրանց այս հալում
թողնել ու քեզ հետ գալ ինչ է, որ ես պիտի ուրախ
ապրեմ: Թող ես չարչարվեմ, մեռնեմ, միայն թէ ծնող-
ներիս չապանեմ:

Սուսանն ամբողջ ժամանակ խոսում էր թոլլ, հան-
գարտ, բայց գողգոջուն ձայնով: Նրա շարժուածքի, ար-
տասանութեան մէջ երեսում էր ներքին դառն հո-
գեկան տառապանք: Երբ նա կանգ առաւ, Սէլրանը
իւր ձեռը հեռացրեց նրանից, թեքեց գլուխը կըրծ-
քին եւ, վշտալի ու լուսահատական եղանակով արտա-
սանեց.

—Կորաւ Սէլրանը, վշտալ, էլ ինչ օրուալ է համար
ապրում, որ Սուսանը նրան չի սիրում:
— Սուսանը Սէլրանին չէ սիրում: Մտիկ տու՞ր, Սէլ-

բան, Սուսանի երեսին, մտիկ տուր ու յետոյ ասա: Տես, Սուսանը ինչ օրն է ընկել և մտածիր, ում պատճառով:

— Դու քո հօր նամուսը ինձանից շատ ես սիրում: Ես ալդպէս չէի խմանում, ես կարծում էի, որ քո աչքում այս աշխարհում Սէլրանից թանգ բան չըկայ, բայց, ինչպէս տեսնում եմ խարուած եմ եղել:

— Ես քեզ ամենը տսացի, Սէլրան, դու ինձ չես հաւատում: Անաս չունի, իմ մահը քեզ մի օր կը հաւատացնի:

— Ինչու ես մեռնում, ապրիր, փառք Աստուծոյ, ինչ կայ լսել եմ, որ քեզ համար նոր նշանած են ճարել և շուտով պիտի պսակեն, — ասաց Սէլրանը դառն հեգնութեամբ:

— Ճշմարիտ է, բայց ոչ թէ մենք ենք ճարել, ինքն է ճարվել: Ես չեմ էլ ճանաչում նա ով է, ինչ մարդ է բայց ես գլուխս քաշ արած պիտի նրան գնամ, պիտի ծնողներիս կամքին հնազանդվեմ:

— Պիտի գնամ, պիտի հնազանդվեմ, — կարողացաւ միայն կրկնել Սէլրանը:

— Հա, Սէլրան, ես պիտի անպատճառ պսակվեմ: Դու գիտես որ մեր անզգուշութիւնը սադ քազաքում խալտառակել է իմ անունը:

— Պրանով ինչ ես ուզում ասել:

— Այս, որ ես մէկի վրայ պիտի պսակվեմ, ծընողներիս և իմ անունից լռանամ այն կեղտը, որ իզուր տեղից կացրել են ինձ չար լեզուները:

— Եւ ուրիշի վրայ պիտի պսակվես:

— Եթէ քեզ վրայ պսակվեմ, մարդիկ կասեն. «կոտրված ամանը կոտրողին տուին, որ ինքը կոծկի»: Հասկանում ես թէ չէ: Ես կըսլսակվեմ ուրիշի վրայ և երբ կըհաստատի թէ ես «կոտրած աման» չեմ, այնուհեան

կանցնեն մի քանի ամիսներ, ամենաշատը մի տարի, դու ինձ կըգտնես հողի տակ:

— Սիրտս, սիրտս հենց վկայում էր, որ դու ինձ չես սիրում, — կրկնեց Սէլրանը դառնագին, երկու ձեռքերով իւր գլխին խփելով:

— Համբերիր, կըտեսնես:

— Համբերեմ, որ սեսնեմ ինչպէս իմ սիրածին ուրիշը տանում է. չէ, Սուսան, ալդ տանջանքը ես տանել չեմ կարող:

— Պէտք է, Սէլրան, էլ ուրիշ ասելիք չունիմ: Միքան եմ խնդրում քեզանից, Սէլրան, եթէ ինձ սիրում ես, այսուհետեւ էլ ինձ վրայ նամակներ չըգրես: Այն օրուայ քո նամակը իմ ձեռք չէր ընկել: Դու երես պիտի գնամ այս գցել հենց այն ժամանակ, երբ հայրս պատուհանից էիր ներս գցել հենց այն ժամանակ, երբ հայրս պատուհանի առաջ կանգնած էր: Ես նա վերցրեց նամակդ և տուաւ եզրօրս կարդալու: Ես նրա մէջ գրված տողերի չափ հարուածներ սաացոյ: Նրա մէջ գրված տողերի չափ հարուածներ սաացոյ: Ես այսուհետեւ չըսիսալվես: Ես տանց նամակի էլ Պէտք էլ այսուհետեւ չըսիսալվես: Եկ մօտեցիր, վերջին անգամ գլուխ քո գրութիւնը: Եկ, մօտեցիր, վերջին անգամ մնաս բարով անենք:

Սուսանը ուժով թեքեց Սէլրանի գլուխը գէպի իւր կուրծքը և մի տաք համբուլը դրոշմեց նրա ճակատին: Արտսասուքի երկու խոշոր կաթիլներ, գլորվելով նրա վաղաթառամ երեսով, ընկան Սէլրանի ալտերի վրայ:

— Քարագլիտ աղջիկ, քանդեցիր տունս, մնաս բարով, ինչ որ ինձ պատահի, ալտուհետեւ մեղքը քո վըրով, ինչ որ ինձ պատահի, ալտուհետեւ մեղքը քո վըրով, ինչ որ ինձ պատահի, ալտուհետեւ մեղքը քո վըրով:

Մի նեղանար, համբերիր և կըտեսնես, գնաս բարով, — պատասխանեց Սուսանը խեղգված ձախոնոցին, — ասաց Սէլրանը, երեսը շուռ տուաւ և խոհանոցից դուրս եկաւ:

XIII

Վիրաւորված սրտով, փշրված յոյսերով Սէլրանը բաժանվելով Սուսանից, տուն չըվերադառաւ: Նա դրժուարութիւնով բարձրացաւ սլարսպի վրայ, ցած իջաւ սանդուխքով դէպի իրանց բագը, սանդուխքը կրկին դրաւ իւր առաջուալ տեղը, դուրս եկաւ փողոց:

Դիշերից բաւական անցել էր, փողոցներում ոչ ոք չէր երևում: Սէլրանն իւր քալերն ուղղեց դէպի ներքին փողոցը: Նա գնում էր գլխակոր, թոլլ և անհաստատ քալերով, անդիտակցաբար, առանց ինքն իրանհարցնելու, թէ ուր է գնում և ինչո՞ւ է գնում:

Ուրեմն այդպէս, Սուսանին նրա ձեռից խլում են և տալիս են Քօչարեանց Ռուստամին, այնասև երես», աւրէժտու», «սատանալի կերպարանք ունեցող» Ռուստամին: Իսկ Սուսանը: Նա էլ յօժար է գնալու, նա վախենում է Սէլրան հետ փախչելուց: Դադարի բան է, նա սուտ է ասում, թէ իւր ծնողների նամուսն է պահում: Ո՛չ, նա չի սիրում Սէլրանին, չի սիրում. եթէ սիրէր, ուրախութեամբ ձեռը կըտար նրան և կ'ասէր. ա՛ռ, տար ինձ, Սէլրան, ուր որ ուզում ես, ես քոնն եմ, ես ոչ ոքից չեմ վախենում»: Քիչ են սլատահել այդպիսի բաներ, քիչ է սլատահել, որ տղան աղջկան փախցնի նրա ծնողներից: Քարասիրտ աղջիկ, դու հոգի չունիս, սիրտ չունիս, չես իմանում թէ Սէլրանը ինչքան է չարչարվում քեզ համար: Զէ, եթէ դու իմանալիք, այդպիսի պատասխան չէիր տալ: Դու կընկնէիր Սէլրանի գիրկը, լաց կըլինէր, արտասուքով կ'ողոզէիր նրա ձեռքերը, կ'աղաքէիր, կըպազատէիր, որ քեզ աղատի նա, աղատի քո հօր ճանկերից, որ գուք միասին ապրէք: Ախ, Սուսան, Սուսան, այս ինչ օրի հասցրիր Սէլրանին. բաս դու մոռացար այն գիշերուալ խօսքերդ.

«Ոէլրան, ես քեզ սիրում եմ և յաւիտեան չեմ մոռանալ»: Որտեղ մնաց քո ալդ սէրը, հիմալ ինչո՞ւ Սէլրանի վիզը կտրեցիր և գիշերուալ կէսին գցեցիր փողոցները: —Ո՞ւր եմ գնում և ինչո՞ւ, խելքս, կարծես, տեղը չի, —արտասանեց լանկարծ Սէլրանը, ընդհատելով իւր մտածմունքները:

Նա փողոցի մէջ տեղում կանգ առաւ և նայեց իւր չորս կողմը: Ոչ ոք և ոչինչ չըկար, բացի գիշերային խաւարից: Մի քանի վայրկեան նա մնաց կանգնած, յետով դարձեալ շարունակեց իւր ճանապարհը: Ի՞նչեր է մտածում նա, հըմ, միթէ Սուսանը կարող է մոռանալ Սէլրանին, միթէ չի սիրում: Ճաս ինչո՞ւ է այս օրը ընկել, այդպէս լզարել, մաշվել: Ո՞րտեղ է այն առաջուալ Սուսանը: Նա չըկալ, նրա միայն կմախքն է մնացել: Ախ, Տէր Սստուած, ինչպէս է փոխվել խեղճ աղջիկը այս երեք ամսուալ մէջ: Աչքերը փոսերի մէջ են թաղվել ու պլոզվել, այն առաջուալ կարմիր թշերը նարնջի պէս գեղնել են, այն առողջ մարմինը հալվել է, փորը մէջքին է կպել, վիզը բարակել է: Զէ, չէ, Սէլրանը չարաչար սիսալվում է, Սուսանը նրան սիրում է և սէրն է, որ խեղճ աղջկան այդքան փոխել է: Բայց ինչպէս սէր է դա, որ չի կարողանում լաղջել ուրիշ մնացեալ զգացմունքներին, — ծնողական սիրուն. ինչո՞ւ Սուսանը այնքան կամքի ուժ չունի, որ ոտնակոխ անելով հասարակական կարծիքը, արհամարելով աւանդական նախապաշարմունքները, ընկնի իւր սիրեկանի գիրկը և վայելի այն երջանիկ օրերը, որ շաքիչ մահկանացուներին է վիճակված այս անցաւոր աշխարհում: Փախչել, փախցնել, հըմ բնչ եմ ասում, ինչ եմ դուրս տալիս, փախցնել: Մի հարցնող լինի ուր, կարող եմ ես նրան փախցնել և ինչպէս: Ոչ փող ունիմ, ոչ էլ մի արհեստ գիտեմ, որ կարողանամ պահել թէ

նրան և թէ ինձ: Ի՞նչ անխելքութիւն ինչու ես արհեստ չըսովորեցի, որ այսօրուայ օրը ինձ հարկաւոր է գալիս: Ե՛հ, դրա մասին այժմ ուշ է մտածել: Այո, ուշ է, ուր գնայ այժմ Սէլրանը Տէր Աստուած, ինչ անի, ումը գանդատվի: Միթէ գնայ հօր առաջ չոքի, մեղայ գալ, աղաչի, պաղատի, որ նա մի կերպ Բարխուդարի հետ հաշտվի: Հը՛ը, ինչ կըլսի Հայրապետը իւր որդու խոսքը: Ասենք թէ նրան խղճալով լսեց էլ, միթէ խեղճ մարդը կարող է այսուհետեւ մի բան անել: Առանց ինձ էլ, նա երեք ամիս է, որ ամեն կերպ աշխատում էր հաշտվելու: Բայց ի՞նչ արաւ: Բարխուդարը, օօօ, Բարխուդարը առկւծ է, նրան մօտենալ չի կարելի, թէկուզ աշխարհը տակնուվը լինի—նա իւր թքածը լիզող մարդ չի: Քանի պարխսպը ըլկար, Սէլրանը լոյս ունէր, իսկ այժմ շինվեց այն և մինչև յաւիտեան կը մնայ նրա ու Բարխուդարի մէջ, ինչպէս մի անդադեմի խոչընդուռ բարեկամութեան: «Ի՞նչ, ի՞նչ ասացի, Բարխուդարը իւր ասածը մարդ է, թքածը լիզողը չի, հաստատ կամք ունի»: Զէ, բայ ութ ինը տարի սրանից առաջ նրա տուած խոսքը: Այդ է միթէ նրա հաստակամութիւնը, այդպէս է կատարում նա իւր տուած խոստումը: Պարծենկոտ մարդ, ինչու մոռացար քո խոսքը, այդ միթէ անտաղնուութիւն չէ»:

Սէլրանը կրկին կանդ առաւ և մի քանի վայրկեան նայեց իւր չորս կողմը: Յետոյ դարձեալ շարունակեց իւր ճանապարհը և կրկին սկսեց մտածել ու ինքնիրան խոսել. «Տէր Աստուած, Տէր Աստուած, ի՞նչեր եմ դուքս տալիս, ով է Բարխուդարը, ի՞նչ եմ պահանջում ես նրանից: Զէ որ նա հայր է, այն էլ հին, վաթսունտարեկան մարդ. միթէ ես լինէի նրա տեղը, ուրիշ կերպ կըվարվէի: Զեմ կարծում: Նա ասում է «նամուսսի վերցնիլ, որ աղջիկս օտար տղի հետ գիշերները սով-

բաթ անի, մարդիկ թքով կըհանեն աչքս»: ծշմարիտ է, բոլորովին ճշմարիտ է, որ «մարդիկ թքով նրա աչքը կըհանեն»: Մարդիկ, մարդիկ, գուք, օօօ, գուք պատրաստ էք ամեն մի վայրկեան, ամեն մի քայլափոխում մրոտել, ցեխ քսել ուրիշների երեսին և այդ ձեզ բաւականութիւն է պատճառում: Ուրիշների կեղտոտութիւնը ձեզ ուրախութիւն է պատճառում, որովհետեւ քաջութիւն է տալիս ձեզ ներողամտութեամբ վերաբերվելու ձեր սեպհական կեղտոտութիւններին: Բարխուդարը մինչև հիմալ իրան ձեր կեղտից ազատ պահելու համար ձեզանից հեռու է ապրել, չի խառնվել ձեզ հետ, և դուք, այդ տեսնելով, ի հարկէ, նրա հպարտութիւնը տանել չէիք կարող: Դուք գիշեր ու ցերեկ մտածում էիք թէ ինչպէս անէք, որ մի արտա գտնէք նրա կեանքում, որպէս զի նրան ձեզ հետ հաւասարացնէք: Աշխատեցիք և ձեզ լաջողվեց էլ գտնելու: Դուք մի չնչին լուն մի մեծ ուղղ շինեցիք: Բայց Տէր Աստուած, նվազիք.....

Սէլրանը այսուեղ յանկարծ երկու ձեռներով մի հարուած տուաւ գլխին և մնաց մեխված փողոցի մէջ մտեղում: Կար մի կէտ, մի նշանաւոր խնդիր, որի մասին նա մինչև այդ ժամանակ չէր մտածել և չէր էլ լիշում մինչև անգամ: Բայց ահա նոյն վայրկեանին, երբ նա անիծում էր մարդկանց, նոյն վայրկեանին այդ խնդիրը ծագեց նրա գլխում: Սէլրանը սկսեց ոյժ տալ իւր լիշողութեան մի ինչոր բան մտաբերելու: Մի քայլութեան մի ըսպէ մնաց այդ գրութեան մէջ: Ստէպ-ստէպ նա այնքան բարձրացնում էր և, ձեռները օդի մէջ տարածելով, կրկնում: «ով, ով լինի, ով լինի»: Յանկարծ նա ձեռները կրկին խփեց գլխին և, սկսեց ինքն իրան խոսել այնքան բարձր ձայնով, որ եթէ մէկը քսան քայլ

նրանից հեռու լինէր կանդնած, հեշտութեամբ կարող էր լսել և հասկանալ նրա խոսածը:

«Վայ իմ գլխիս, ինչու եմ ապրում, էլ ինչ երեսով եմ ուրիշներին մեղադրում, քանի որ ես անպիտան եմ և միակ մեղադրը, ասում էր նա, իւր գլխի մազերը փետելով և շրթունքները կրծոտելով: Լեզու, քեզ ստեղծողին ինչ ասեմ, պիտի չորանալիր, տակհան լինէրի ինչպէս մի փայտի կտոր, որ այն օրը ջահիլների մէջ չըխոսէիր. Սէլրան, Աստուած քո բողագդ կապէր, որ այն սևացած օրը, սրանից երեք ամիս առաջ, ընկերներիդ հետ քէֆ անելիս, լեզին չըլակէիր: Ի՞նչ արի ես, ինչ արի, իմ ձեռքովը տունս քանդեցի: Կէր, կէր, Սէլրան, հախտէ... բայց Տէր Աստուած, ախար չէ որ ես ուրիշ կերպ եմ ասել, չէ որ ես միայն ասացի. «Չուտով ես էլ եմ պսակվելու Քեօխանց Բարխուդարի աղջկալ հետո: Եհ, հերիք էր, հերիք էր, չար լեզուների համար հէնց այսանն էլ բաւական էր, ճոժը տուի նրանց ձեռը, և ահա նրանք մի մեծ կծիկ են փաթաթել: Ի՞նչ անեմ հիմալ, ինչ կարող եմ անել: Ոչինչ, ուշ է, անցեալը չի կարելի յետ բերել...»

Սէլրանն իւր շուտարված հայեացքը խաւարի մէջ ձգեց իւր չորս կողմ: Նա բաւական հեռացել էր իրանց թաղից և ալժմ գտնվում էր ներքին փողոցներից մէկի ծալրում, ուր քաղաքի հին եկեղեցին էր գտնվում: Այստեղ ոչ ոք չըկար. նա մօտեցաւ պատին մի բաւական մեծ քար շուռ տուաւ և նստեց նրա վրայ:

Պարզ երկնքում աստղերը փալում էին: Սէլրանը բարձրացրեց իւր գլուխը և սկսեց նայել երկնքին: Ինչեր էին անցնում այս ըստէին նրա գլխով:, Բուռն ըգգացմունքների ճնշման ներքոյ նրա միտքը երերփում էր, ինչպէս մի փոքրիկ մակոլիկ լայնատարած ծովի ալիքների մէջ: Ծնողներից անարգված, սիրելից մերժված

պատանին այնքան վշտացած էր կեանքից, որ նա իւր գոյութեան համար չէր տեսնում մի լենարան: Մի ահագին ծանրութիւն ճնշում էր նրա սիրտը, և նա ոյժ էր անում ազատվելու այդ ծանրութիւնից, բայց ի զուր: Որպէս զի գէթ մի քանի ըսպէ փարատի իւր գառն մըտածմունքները, Սէլրանը սկսեց երգել մի ինչոր ժողովրդական երգ: Նա սկսեց ուրախ երգ, բայց մի քանի բառեր չ'արտասանած, եղանակը փոխվեց և թոյլ ու հազիւ լսելի ձայնով սկսեց տմտմալ խիստ տխուր եղանակ: Թէ ինչո՞ւ և ինչպէս Սէլրանը ուրախ եղանակը ալդպէ շուտ փոխեց տխուր եղանակի, այդ ինքն էլ չըդիտէր: Բայց նա այդ ևս երկար չ'երգեց: Մի քանի ըսպէ տմտմալուց յետոյ, նա ճակատը սեղմեց երկու ձեռքերով և իւր հայեացքը բևեռեց գետնին:

—Զէ, չէ, ով է ասում, որ ես կորած, փչացած եմ, արտասանեց Սէլրանը, լանկտրծ ձեռքերը ճակատից հեռացնելով: Սուտ է, ես դեռ կենդանի եմ, ով է ասում թէ Սուտանը ձեռից գուրս եկաւ, այդ էլ սուտ է: Կըտանջվեմ, կըչարչարփեմ, ոտաբաց, գլխաբաց չոլերը կընկնեմ, բայց չեմ թողնիլ, որ իմ սիրտկանին իմ ձեռից լսեն, և նա էլ ով, հըմ. Քեօչարանց Ռուստամը: Հողը գլխիդ, Սէլրան, բաս դու մարդ չես, բաս քո նամուսը շները կերել են...

Նա կըկին գլուխը բարձրացրեց, նայեց այս կողմ այն կողմ և կըկին ձեռը դրաւ ճակատին:

—Գլուխս, կարծես, տաք ջրի մէջ խաշփում է, ճակատիս թելերը տրաքփում են: Ինչպէս եմ դողում, այդ բնչիցն է, Տէր Աստուած: Ցուրտ էլ չի, որ ասեմ թէ մըսում եմ: Ճակատս, ճակատս ալրվում է: Իսկ սիրտս, օօօ, նա մորթված ծալի պէս թըթուում է, կարծես, ոյժ է անում, որ գուրս գալ կըծքիս տակից:

Նա ձեռը դրաւ ձախ կողքին:

Զարմանալի բան, հէնց մի և նոյն երեկոյ, երբ Սէլրանը Սուսանի հետ ուրախ-ուրախ խոսում էր, էլի թրթռում էր նրա սիրտը: Ինչու, այն ժամանակ խօալս ցաւերը չունէր: Բայց ոչ, այն ժամանակուայ թըրթռոցն ուրիշ էր և ալսպէս չէր թրթռում, չէր նեղացնում, տանջում նրա հոգին, ինչպէս ալժմ: Ո՛չ, այն ժամանակ նրա համար քաղցը, դուրեկան էր այս թըրթռոցը, իսկ հիմայ... օօօ... կարծես թէ մի և նոյն սիրտը չէ:

Սէլրանը նայեց երկնքին: Երկինքն էլ, աստղերն էլ, ամենն էլ փոխվել են նրա աչքում: Ախ, ինչպէս այն երեկոյ ուրախ ուրախ ծիծաղում էին նրա երեսին ալս աստղերը, իսկ հիմայ ո՞րքան թթուած գէմքով են նալում նրա վրայ: Միթէ նրանք էլ ծաղրում են Սէլրանին:

Խաւարի միջից մի թուլ ձայն հասաւ Սէլրանի ականջներին, և նրա մտածմունքները փարատեց: Փողոցի միւս անկիւնից էր լսվում այն ձայնը: Այդ թառի մեղմ հնչիւններ, էին որոնք պարսկական երգչի հանդարա կըլկոյների հետ խաւար մթնոլորտի մէջ՝ տարածվելով, հասնում էին Սէլրանին: Որտեղ է այդ ուրախութիւնը, ինչպիսի բան է: Որտեղ որ է, թառը մօտ տեղումն են ածում, բայց ձայնը, կարծես, խեղդված է և գետնի տակից է գուրս գալիս:

Սէլրանը բարձրացաւ տեղից և դիմեց գէպի այն կողմ, որտեղից գալիս էր երաժշտութեան ձայնը: Այսու այն կողմ նախելով, նա հասաւ փողոցի հանդիպակաց անկիւնը: Այսուեղ նրա հայեացը ընկաւ գէմուգէմ չինութեան ներքին լարկում զանուող մի ցած նկուղի վրայ: Սէլրանը նկատեց, որ նկուղի փոքրիկ ոլատուհանից դուրս են թափվում աղօտ լուսոյ ճառագաթներու Աս գինետուն էր, անշուշտ երաժշտութեան ձայնը

ալստեղից էր գուրս գալիս: Իրաւ որ, նա որքան մօտենում էր գինետան, այնքան երաժշտութեան ձայնը զօրեղանում էր: Վերջապէս, Սէլրանը բոլորովին մօտեցաւ և կուացած սկսեց զգուշութեամբ պատուհանից դէպի ներս նայել: Այս միջոցին երաժշտութիւնը դադարեց: Բարձրացաւ գոռում գոչում, աղաղակ:

— Աղա հուռուայ:

— Աղա հուռուայ, հափ-հափ...

— Կոճերի կենացը:

— Կոնծեցէք:

— Թամբազ, մի ստաքան ալ ան Մագրասի գինուց ածի: Հափ-հափ հուռ...

— Խամուշ, խոսքը թամադինն է:

Մի քանի վայրկեան աղմուկը դադարեց: Սէլրանը պատուհանից նկատեց, որ ներսում, սեղանի շուրջը նստած երիտասարդներից մէկը բարձրացաւ ոտքի, վրայ մի բաժակ գինի ձեռում պահած:

— Թամադան է, տեսնենք ի՞նչ է խոսելու, — մտածեց Սէլրանը և ականջը սեղմեց պատուհանի ճեղքին:

— Տղերք, ես մեռնամ լօթիանա, էս թասն էլ խմանք էն մեր ջահիլի կենացը, որն որ ինքի իստեղ չի, ամա սիրտը էստեղ է, հափ-հափ:

— Սուս, աղա թամադա, ամօթ չիլի հարցունիլը՝ նա հինչ ջահիլ ա:

— Կուժ ծախողի տղան:

— Սէլրանը:

— Հա:

— Ես անանց նամեարդ, թէնամուս ջահիլի կենացը չամ իմիլ, որ սապունած քեանդռ քիցես բողազիս:

— Պատճառը:

— Պատճառը, որ նա մեր դեաստի անըմը թիւթուն է արար:

— Հինչալոս եանի:

— Հարսնացուին ձեռքից առնըման, հալասըզի պէս աչքերը բաց, սուս է անըմ:

— Ես էլ կասեմ ինչ է ասըմ, կոնծիր, այ քօշքողազ աա, հըմ, կըթողնենք իսկի մեր դեաստի ջահիլի ձեռքից աղջիկ առնան, Սէլրանի կենացը, հափ-հափ հուռուար:

— Ադա հուռուալ, — կըկնեցին բոլոր հանդիսականները, բարձրացնելով մի խառն աղմուկ:

Երաժշտութիւնը կըկին սկսվեց:

Սէլրանը հեռացաւ սլատուհանից, դիմեց գինետան դռներին և սկսեց ծեծել դռները:

Մի ըսպէից լետոյ դռները բացվեցին և նա անմիջապէս ներս մտաւ:



XIV

Մինչեռ Սէլրանը իւր մտածմուքների մէջ թաղված գիշերուայ կէսին թափառում էր փողոցներում, Սուսանը ևս մտածում էր: Բաժանվելով Սէլրանից, Սուսանը մօտեցաւ օջաղին, ուր կաթսալի մէջ եռում էր ջուրը, որով նա պիտի ափսէները լուանար: Նա կաթսան վերցրեց, դրաւ գետնին և, նրա մօտ սփոռելով մի ոչխարի մորթի, նստեց և սկսեց իւր դորձը:

Նա չի հաւատում, որ ես նրան սիրում եմ, — մըտածում էր Սուսանը, ափսէները մի առ մի թողնելով ջրի մէջ, որ թրջվեն: Չի հաւատում, որ այսպէս հալվելուս, մաշվելուս, ալսքան տանջանքիս պատճառը ինքն է և միայն ինքը:

Սուսանը մի խորը հառաջանք արձակեց կըծքից. Չիշելով թէ ինչպէս Սէլրանը նեղացած, դառնացած բաժանվեց իրանից: Ո՞վ գիտէ, նա դուրս եկաւ, ուր դնաց.

ով է իմանում, իւր անբախտ գլուխը որտեղ կըտանի: Այս Աստուած, ախ Աստուած, քո ձեռով կտպել ես, քո ձեռով էլ բաժանում ես մեզ, ասաց բարձր ձայնով Սուսանը, նայելով խոհանոցի սեացած առաստաղին: Ինչու, ինչ մեղք են արել, որ Աստուած այդքան բարկացել է իրանց վրայ և այսպէս պատժում է: «Եհ, մեռնեմ քո սուրբ զօրութենին, ինչ անեմ, թող քո կամքը լինի, դու ուզում ես մեզ չարչարել և չարչարում ես: Ինքդ մեզ ստեղծել, այս աշխարհն ես գցել, մեր կըծքի տակ սիրտ ես դրել, որ այդ սիրտը ալսօր մեզ մըզ-մըզ ուտի, այ ինչպէս ալն որդն է ուտում փտած, սեացած կոճին ներսից:

Սուսանը աջ ձեռը բարձրացրեց դէպի խոհանոցի առաստաղը, որտեղից լսվում էր որդի կըչկըչալու ձայնը:

— Ուֆ, ուֆ, սիրտ մաշվի, դու էլ մի կողմից ես մաշում ինձ, ձայնդ կտրիր: Կըակ է եղել մինչեւ օրս ինձ համար այս մի կտոր միսը: Այն օրից, երբ ես ինքս ինձ ճանաչել եմ, չի սլատահել, որ մի անդամ ուրախ լինէի: Տիսուր էի այն օրերն էլ, երբ Սէլրանը ձեռից չէր դուրս եկել, տիսուր էի այն գիշերն էլ, երբ մեր պատշգամբի վրայ խոսում էինք: Ես հէնց առաջուց իմանում էի, որ այսպէս պիտի վերջանալ մեր բանը. իմ սիրտը հէնց առում էր:

Օջաղի մէջ ալրվում էին չորացած փայտի կտորտանքը, իրանց պղնձագոյն և մուալ լուսով օգնելով ճրագի աղօտ լուսաւորութեան: Սուսանը նստած էր ուղիղ օջաղի դիմացը: Կըակի լուսաւորութիւնից նրա մաշված դէմքը ստացել էր աւելի վշտակի, աւելի մելամաղձոտ տեսք: Նրա ցամաքած շրթունքների վրայ խաղում էր մի դառնակիտ, մի ժամանակ ու ուղարկում էր ջախջախված սրտի սուր կոկծանքը:

—Մեղալ քեզ, մեղալ քեզ, Տէր Աստուած, —ասաց
Սուսանը երեսին խաչակնքելով: Մտքովս տեսակ-տեսակ
վատ բաներ են անցնում: Թող ես քեզ խոստովանեմ:
Միտսէ, երբ ես կոյսի ուսումնարանումն էի, կոյսը մեղ
պատմում էր, թէ դու, Աստուած, ինչպէս ես սուեղձել
մեր աշխարհը: Կոյսը ասում էր, թէ մինչեւ մարդուն
ստեղծելը, դու առաջ ամեն բան քո ձեռքով պատրաս-
տել ես նրա համար: Յետոյ, երբ որ Սգամին և Եւային
ստեղծել ես, նրանց ասել ես. «առէք, ձեզ եմ բաշխում
այս ամեն կենդանիները, դունիան ձեզ է պատկանում,
դուք նրանց թագաւորն ու տէրն էք, նրանք ձեզ պիտի
հնագանդվեն»: Մի խոսքով, Դու Աստուած, ամեն բան
աշխարհում տուել ես մարդուն, ամեն իրաւունք էլ հետք:
Քայց, մեղալ քեզ Աստուած, մեղալ քեզ Աստուած
(Սուսանը երեսին խաչակնքեց), ինչու մի բան նրանից
խնայել ես: Ինչու դու չես ասել մարդուն. «առ,
քո սիրտն էլ քեզ եմ բաշխում, թէ նրա իրաւունքն էլ
քեզ եմ տալիս»: Մեղալ քեզ Աստուած, իմ կարճ խելքս
ասում է, որ եթէ դու ասած լինէիր. «մարդ, դու քո
սրտի թագաւորն ես», հենց այդ միայն մարդուն հե-
րիք էր: Մարդը այսօրուայ պէս այսքան չէր չարչար-
վիլ, այսքան մեղքեր չէր դործիլ, և դու էլ մեղաւորի
համար դժոխք չէիր շնիլ, որովհետեւ մեղաւորներ չէին
լինիլ: Սիսար չէ որ ինչ որ անում է, մարդու սիրտն
է անում: Ասում են թէ այսպիսի մարդիկ կան, խելօք
մարդիկ, որ ամեն բան իրանց խելքով են անում, ոչ
թէ սրտով: Ես չեմ հաւատում, եթէ որ կան ալդ-
պիսի մարդիկ, երանի, հազար երանի նրանց: Իմ խելքն
ինձ ասում է «Սուսան, օրէս գէն Սէլրանին ըլսլիտի
սիրես, ինչու որ քո հօր նոմուսը այսպէս է պահան-
ջում, դու պիտի քո սիրեկանից ջոկվես»: Ո՞վ գիտէ,
շատ կարելի է, Սէլրսնի խելքն էլ այսպէս է ասում:

Բայց ինչ, ուր է, կարողանում ենք մեր սրտերին լազ-
թել: Զէ, չէ, իսկի չենք էլ կարող: Ո՞վ է կարող: Ո՞չ
մի մարդ:

Ինքն իւր հարցին պատասխանելուց յետոյ, Սու-
սանը մի ձեռում ափսէն, միւս ձեռում սրբիչն առած,
ձգեց իւր հայեացքը օջազի կրակի վրայ, որ չըրչըթա-
լով շարունակում էր ալրվելու: Մօտ մի բոպէ նա այդ
դրութեան մէջ անժարթ աչքերով նայում էր կրակին:
Յետոյ, նա կրծքի վրայ թափված կակուղ մազերը յետ
ձգելով, շարունակեց սրբել ափսէները:

—Զէ, չէ, ինչքան որ միտք եմ անում, էլի իմ
ասածն է դուրս գալիս: Վերցնենք հէնց հօրս, նա խօ
վիմար չի, նա խօ իւր ասածի վրայ հաստատ մնացող
մարդ է, բայց տեսնում եմ, նո էլ որ այսքան անում
է, էլի խելքով չի անում, սրտով է անում: Ասում է
թէ «նամուսիս համար եմ կտրել իմ բարեկամութիւնը
Հայրապետանց հետ»: Մի հարցնող լինի, ինչ ասել է
նամուս: Իմ կարճ խելքով ես, հասկանում եմ, որ նա-
մուսը մարդուս սիրտն է: Զէլէ: Հայրս ասում է
«իմ սիրտս մզկտում է, երբ որ լսում եմ թէ քաղա-
քում ինձ վրայ վատ բաներ են խոսում»: Սիրտս, սիրտս,
սիրտս, ամենքն էլ իրանց սրտի վրայ են գցում իրանց
ցաւերի պատճառը: Հայրս ասում է: «ես իմանում եմ
որ, ինչ որ աղջկաս վրայ խոսում են, սուտ է, բայց էլի
ամօթից կարմրում եմ, երբ որ լսում եմ»: Ինչու է
կարմրում, թէ որ, ինքը չի հաւատում: —Որովհետեւ
սրտին գուր չի գալիս: Տեսնում էք, հայրս էլ, նրա
պէս մարդն էլ չի կարողանում իրա սիրտին տիրանալ
և ալսօր ինքն էլ է տանջվում ու մեզ էլ է տանջում:
Զէ, ա՞ն բան մարդու սրտիցն է կախված: Մեղալ
քեզ Աստուած, մեղալ քեզ Աստուած, մեզ շատ իրա-
ւունքներ ես տուել, բայց մեր սրտի իրաւունքը ձե-

ռումդ ես պահում: Թո՞ղ քո կամքը լինի: Ես իմանում եմ, որ ինչքան էլ ուզենամ Սէլրանին մոռանալ, չեմ կարող: Մի անգամ, որ մտել է սիրաս, մէկ էլ դուրս կըդալ այնտեղից հոգուս հետ:

Սուսանը կուռը բարձրացրեց և արխալուղի թևով սրբեց աչքերի մէջ լցված արասուքը:

—Ինչ ուզում ես արա, Աստուած, քո կամքը սուրբ է, բայց մի բան եմ խնդրում, խնախիր ինձ և իմ ծընողներիս և այս խնդիրս կատարիր: Դու ինձ այնքան ոլժ տուր, որ կարողանամ ապրել մինչև այն ժամանակ, որ ինձ պասակեն Ռուստամի կամ մի ուրիշի հետ, յետոյ մի քանի ամիս էլ ապրեմ, որ իմ ծնողներիս և իմ անունից ջնջեմ իզուր տեղը կալած կեղուր: Այնուհետեւ ես ինքս յօժար կամքովս իմ հոգին քեզ կըտամ, ինչու որ ես առանց Սէլրանի ապրողը չեմ: Սէլրանի համար էլ խնդրում եմ, Աստուած, որ նրա սրտից ինձ հանես և խեղճ տղին չըփչացնես:

Սուսանը բարձրացաւ տեղից, տփսէները մաքրեց, չորացրեց և հաւաքելով միատեղ, դուրս եկաւ խոհանոցից: Դեռ սենեակի դռներին չըհասած, նրա ականջին հասաւ ծնողների խոսակցութեան ձախը:

Երկար ժամանակ էր, որ Բարխուգարը չէր խոսում Գիւլնազի հետ: Սուսանը շատ զարմացաւ, լսելով նրա խոսակցութիւնը և խիստ հետաքրքրվեց իմանալու, թէ ինչու վրայ են խոռում, չըկամենալով միենոյն ժամանակ խանգարել իւր ծնողներին:

Նա տփսէները դրաւ մի կողմ, իսկ ինքը թագնելով բաց գոներից մէկի յետեամ, սկսեց ուշագրութեամբ լսել:

—Տասն անգամ ասել եմ, հիմայ վերջին անգամն եմ ասում, այ կնիկ, որ ես արածս քեզանից լաւ եմ հասկանում, —խոռում էր Բարխուգարը ծանր և ամեն մի

բառը առանձին շեշտելով: Իմ խելքը քամին չի տարել, որ աչքերս բաց-բաց ինքս ինձ աւելի խայտառակեմ: Ի՞նչ կասեն լսողներն ու տեսնողները, քեզ եմ հարցնում, եթէ աղջկաս Հայրապետի տղի վրայ պասկեմ: Ախար չեն ասիլ, որ հէնց զորթ էս մարդու աղջիկը մի կտոր կեղտոտ շոր էր, տուին կեղտոտողին, որ ինքը լուանայ: Կասեն ու մի քիչ էլ կ'աւելացնեն: Դու ճանաչում ես խօ մեր քաղաքացիներին, գիտես, որ նրանք ինչքան են սիրում ոտների տակ կոխուտել էն մարդուն որ մի անգամ սլկվել ու ցեխի մէջ ընկել: Խելքի եկ, թող մեր երեսի աբուռը մի կերպ պահենք:

Վերջին խոսքերն արտասանելու ժամանակ Բարխուգարը ձայնը քաշացրեց, չընալելով որ սենեակում բացի Գիւլնազից ոչ ոք չըկար, որովհետեւ Սմբատը խանութի աշակերտի հետ միւս սենեակում քնած էին:

Լսելով իւր հօր վերջին խոսքերը, Աստանի ամբողջ մարմնով մի դող անցաւ:

—Մեռիր, տափը մտիր, Սուսան, էլ ինչ երեսով ես ապրում, տես որքան ընկել ես հօրդ աչքում: Տէր Աստուած, Տէր Աստուած, միայն քեզ է յալտնի իմ անմեղութիւնը, և դու հախը նահախին չես տալ:

—Վիզս կը կտրեմ, գլուխս շների առաջ կըգցեմ, թէ որ աղջիկս էս ճրագի լոյսի պէս իստակ չըլինի: Հաւատացրիր, Բարխուգար, որ Սուսանս անմեղ է հրեշտակի պէս, —պատասխանեց Գիւլնազը նոյնպէս հազիւ լսելի ձայնով:

—Հաւատառում եմ, բայց եկ, դու քաղաքին էլ հաւատացրու: Երկու ձեռներ ունիմ, երկուսի բերանը կը կապեմ, բաս մնացածինը:

—Բաս ինչպէս կապենք, Բարխուգար, չար լեզուները, որ մեր երեխին տանջանքներից ազատենք:

—Ես մի անգամ ասել եմ, բանը վերջացած է:

123

— Որ պիտի Քեօչարեանց Ոռուստամին տանք:
— Թէ նա էլ չկաւ, մի ուրիշին:

—Բարխուդար, պարզն եմ ասում, Սուսանս Սէյլանին է սիրում, նա ուրիշ հետ ապրել չի կարող:

— Աղա, ջառ ու ջահաննամը որ սիրում է, ես էլ իմ
պատիւս եմ սիրում։ Թող աասը Աէլքան-Առևաններ փը-
չանան, միայն թէ անունս կեզաից սըրպիկ։

Տիբեց լոռտժիւն:

Սուսանը դրան ճեղքից ներս նտյեց։ Գիւլնազը արտասկզբան էր։ Վերջին երեք ամիսները նա մի անգամ էլ չէր արտասվել, չընալով այն դառն վշտերին, որոնցով լցված էր նրա սիրաը։ Աղի արցունքները բուռն գօրութեամբ մի անգամից դուրս թափվելով նրա խորը թաղված աչքերից, կարկտի սլէս դլորվում էին նիհար ու մաշված երեսով։

Բարխուդարը չէր արտասվում: Բեղերը ոլորելով և
երբեմն կծոտելով, նա մոլոր հայեացքով սենեակի կո-
ճերին էր նալում:

— Մալրս լաց է լինում, հայրս ոչ, — մտածեց Սուսանը: Բայց ինչպէս հայրս սպրտնել է, ինչպէս նրա պուօշները կապոյտ կապտել են: Օօօ, քեզ պէս մարդին արտասպել չըգիտէ, քո բնաւորութիւնից հեռու է սրաի վշտերը արտասուքով արտայալաելը: Դու քո արցունքները բաց ես թողնում ներս, սրտիդ մէջ, որ աւելի բորբոքեն ցաւերդի: Օօօ, ես իմանում, եմ դու մօրիցս շատ ես տանջվում, այդ երևում է քո վառված աչքերից: Խեղճ մարդ, ինչո՞ւ ես քո օրը սեացնում: Տէր Աստուած, մի հնար ցոյց տուր, որ ես իմ ծնողներիս ազատեմ այս տանջանքից: Եկ, ներս վազեմ, ընկնեմ հօրս առաջ, արտասպեմ, ներողութիւն խնդրեմ, ամեն բան նորից պատմեմ, ասեմ... ասեմ. սխալվել եմ, հայր, քաշիր: Բայց օօօ, ինչպէս ասեմ, ինչպէս երեսս կը

պատի նրա առաջ այսպէս խոսելու և ինչ մեղք ունիմ:—
Զէ, աւելի լաւն է, ես հենց վաղը առաւտը մօրս
հետ առանձին կըխոսեմ: Ես մօրս կըհաւատացնեմ, որ
Սէլրանին չեմ սիրում, թէ ուզում եմ ուրիշին գնալ:
Այդ ամենից լաւն է, խեղճ կնիկը կըհանգստանայ, ել
չի չարչարվիր:

— Ասիր, ինչ եմ ասում, - ընդհատոց լուրջ՝
Բարխուդաբը, — լաց լինելով բան չես կարող առաջացնել,
լաւն է մեր գլխի հոգսը խելքով քաշենք։ Բանը վաղ
թէ ուշ պիտի վերջացնենք։ Շըսկանիկ է, ինչ զարհումար
է, որ ասում ես շաբաթը հինգ դաթ գլխիդ է գալիս
Պուստամի կողմից, էգուց կամ միւս օրը թէ որ մէկ
էլ եկաւ, ասա՞ որ ես դաբուլ եմ Սուսանին տալու։

— Ուստամբն: Օւ ու առաջ են, թող

— Հա, հենց Խուստամինս: Թէ որ ուզում ենք Ել
հենց էս քանի օրերը նշանը բերեն, վերջացնենք: Ել
երկարացնելու տեղը չի, դու էլ խելքդ գլուխդ հաւա-
քիր, Փիքը արա, տես հարսանիքի համար ինչ որ հար-
կաւոր է, առնեմ բազարից: Լսեցիք: Դա վերջին
խոսքս է:

— Նըսպանիկը երկու շաբաթ է ուղարկում գիւղազը, աչքերը որբելով:

—Պատճառը՝

— Հալբաթ Ոռուստամի սօր ակացիւ շենքը
— Հըմ:
— Բան: Տեսնում ես մեր բանը որտեղումն է: Դէ՞ն,
ես էլ հէնց էգ է պատճառով եմ ասում, որ Սէլբանին
տուր, Սէլբանին տուր էլի...

Բարխուտգալը լոեց, գլուխը լոսկոց և մի քանի վալրկեան գլուխը պահեց ձեռքերի տփերի մէջ և կրկին ըարձացըեց:

—Դու էգուց Շըպպանիկին կանչել տուր, ես նրա
հետ կըխոսեմ:
—Բարխուդար, դու լաւ բան չես անում:
—Թէ՞ որ գլխիդ դադրը իմանում ես, սուս արա,
թէ չէ...
—Փառք քեզ, Աստուած,—հառաչեց Գիւլնազը:
—Դու ինձ կոտրել չես կարող, բանը վճռված վեր-
ջացած է: Լաւ իմացիր, հրէս, ասում եմ. գիւլլախորով
կանեմ ամենին:
—Բարխուդար...
—Կտրիր ձայնդ, հայասըզ, արիւնս գլխովս է տա-
լիս:
Գիւլնազը թաշկինակը դէպի աչքերը տարաւել ըս-
կան հեկեկալ:
Սուսանը ներս մտաւ:

XV

Առաւօտ էր: Արեգակը նոր-նոր դուրս գալով շըր-
էր, շառադունելով հորիզոնը: Նրա ծիրանագոյն լոյսն
ընկնելով քաղաքի հակառակ կողմում գտնող աւելի բարձր
սարերի վրայ, հանգարտութեամբ ցած է իջնում գագաթ-
ներից, հետպհետէ փոխելով իւր գոյնը և աւելի ու աւելի
պարզելով: Ահա վերջապէս նա հասաւ սարելի ստորատը,
որի մակերևութը հաւասար է հայոց և ոռուսաց նո-
րաշէն եկեղեցիների գմբէթներին: Ահա գմբէթների սո-
են նոյն իսկ արեգակի ճառագալթների տակ փալլում

Քաղաքի բնակիչները քնից զարթել են և շտա-
պում են իրանց գործին: Փողոցները փոքր առ փոքր
կենդանութիւն են ստանում: Գիւլացիները բեռնած-

էշերը իրանց առաջ գցած, քշում են փողոցից փողոց:
Դրանք մրգավաճառներ են, որոնք անդադար գոչում են
բարձրաձայն ռայ գողալ (հոն) առնող, մանը երկու շա-
հի, այ խիար (վարունք) առնող, հարիւրը մի աբասին և
ալին և ալին: Գիւլացիների ձայնին հետեւում է քա-
զաքացի մրգավաճառի ձայնը, որը ահա սև թու-
զով լցված մի ահագին տաշտ գլխին անցնում է,
ստէպ-ստէպ կրկնելով. «սաբահիիի», այ խարա ինջիր»:
Երբեմն-երբեմն բացվում են այս ու այն տան դռները
և մի կիս կամ մի օրիորդ շալով փաթաթած գլուխը
դուրս է ցցում: Նախ և առաջ նա նայում է աջուծախ
և տեսնելով որ օտար մարդ չըկայ փողոցում, մի պը-
զնձեալ սկուտեղ ձեռում ամբողջ մարմնով դուրս է գա-
լիս փու ։ Նալի տակից նա ձեռով է նշան անում մըր-
գավաճ: Մրգավաճառը մօտենում է, մի քանի ըր-
պէ շարունակլում է սակարկութիւնը. վերջապէս, գնողը
մի քանի սև փողեր ձգելով մրգավաճառի տուաջ, միրգ
է կըռել տակիս, սկուտեղը լցնում և շտապով ներս
սլքվում: Ահա արհամարական ժպիտը երեսին, բեղերը
անդադար ոլորելով, աշուծախ մտիկ անելով, ուղիղ փո-
ղոցի մէջ տեղով գնում է իւր խանութը նոր հարստա-
ցած մանրավաճառ. Խաչովը: Նա բուխարու գդակի տեղ
ծածկած ունի Փուրաշկայ, իսկ չմուշկների փոխարէն՝
եւրոպական կօշիկներ հագած: Կօշիկները ճըռճոռում են,
և Խաչովը, կարծես, հէնց գիտմամբ է սալայատա-
կի աւելի հարթ և մեծ քարերի վրայով գնում, որ այն-
տեղ աւելի բարձր ձայն հանեն իւր կօշիկները: Ամեն
անգամ ոտը փոխելիս զըրնգ-զըրնգում են նրա ձեռի
բանալիները, չըխկ-չըխկ կպչում է ժամացոյցի քողը
արծաթի քամարին և դրանց ձայները խառնվելով կօ-
շիկների ճըռճոռոցների հետ, կատարեալ մի կոնցերտ են
կազմում: Իսկ ինքը, Խաչովը այս կոնցերտով լավիշտակ-

ված, աչքերը վառված, ընթանում է առաջ ծանր և հպարտ քայլերով։ Խաչովի յետեւից, կեղտուտ թաշկինակի մէջ փաթաթած հաց ու պանիրը կռնատակին դրած և մի կապ կիսակար չումուշկներ ուսովը ձգած, գալիս է կօշկակար Թամրազը։ Ահա Թամրազը հաւասարվեց մանրավաճախին, քիչ հեռացաւ յետ ու յետ, մի վայրկեան կանգնեց, երեսը գարձրեց նրան, ձեռները կրծքին դարսեց և «բարի լոյս ազին» ասելով, գլուխ տուաւ։ «Աստուծոյ բարին, ուստայ», — պատասխանեց մանրավաճառ Խաչովը, առանց նտիելու «ուստայի» երեսին և առանց ընդհատելու իւր կոնցերտը։

Ամենքը իրանց գործին էին շտապում։ Իսկ մեր Հայրապետը, ըընալելով՝ որ առաւօտները սովորաբար ամենից վաղ էր գնում խանութը, դեռ փողոցում չէր երեւում։ Նա դեռ տանն էր։

Թևաւոր չուխան ուսերին ձգած, սրածալը գդակը գլխին, նա անցուդուրձ էր անում սենակում, անդադար ներս ծծելով չիբուխից դառն ծխախոտի թունաւոր ծուխը և կրկին ահազին քուլաներով դուրս թողնելով սենեակի խոնաւ օդի մէջ։

Նրա գունասպառ գէմքը, կնճռված ճակատը, ծըռմոված շրթունքները, դողդոջուն ձեռները, անհաստակ անկանոն քայլուածքը, ալս բոլորը, բոլոր հաստատում են, որ նա գտնվում է հոգեկան սաստիկ խռովութեան մէջ։ Փամանակ-ժամանակ, երբ նա չիբուխը հանում է բերանից և ծուխը բաց թողնում, նրա ծըռմոված շրթունքներով սահում է մի դառն կոկծալի ժայիտ։ Սլապիսի վայրկեաններում ծերունու անորոշ հայեացքը, կարծես, անդիտակցաբար ընկնում է Մարիամ բաջու վրայ, որը նսաած է սենեակի մի անկիւնում։

Մարիամ բաջին չէր նայում իւր ամուսնուն։ Առ-

վորականից դուրս նրա գլուխը բաց էր և կարճիկ մազերը անկանոն կերպով սփուզած էին ուսերի վրայ։ Գլուխը կարմիր թաշկինակով փաթաթած, նրա դէմուղէմ անկողնի մէջ պառկած էր Սէլրանը։ Սէլրանի փակ աչքերից, սեղմված և հանդարտ շրթունքներից երևում էր, որ նա քնած էր։ Մարիամ բաջին անդադար հառաչելով, ալս ու ուժի քաշելով, շուտ-շուտ իւր ձեռը դնում էր նրա ճակատին և կրկին յետ քաշելով, կրկնում-առաջացած է։ Թաշկինակի տակից Սէլրանի ճակատի վրայ փալլում էին արիւնի կարմիր կաթիլներ, որ չորացել էին ու կպել կաշուին։ Նրա երեսը ուսած էր և տեղ-տեղ կապտած։

Երբ վերջին անդամ Մարիամ բաջին գլուխը դարձեց դէպի իւր որդու երեսը և համոզվեց, որ նա քնած է, զգուշութեամբ բարձրացաւ տեղից։

— Դուրս եկ, երեսդ լուալ, գլուխդ կարգի բեր, հիմայ կըգան, կըհաւաքին կեղծաւորները ու էլի կըսկսեն սուտ-սուտ ալս ու վախ քաշել, — խոսեց Հայրապետը ցած ձախով, երեխ, նոյնպէս ըըկամենալով խանգարել Սէլրանի քունը։

— Զահաննամ, որ կըգան դարդս խօ նրանք չեն, — պատասխանեց Մարիամ բաջին, մի խորը հառաչանք արձակելով կրծքից և ուղղելով գլխի մազերը։ Ախար, այ մարդ, էլի դու կարգին չես ասում, թէ ինչպէս է պատահել էս անցքը երեխիս։

— Խոցուված սրախ մատ մի կոփիլ, Աստուած սիրես, — պատասխանեց Հայրապետը, երեսը շուռ տալով իւր ամուսնուց։

— Երագան Աստուած, դու նրանց հախին գաս, դու նրանց ծնողներին էլ էս օրին հասցնես։

— Իսկի խալիսի համար անէծք մի անիլ, ոչ նրանք են մեղաւոր, ոչ էլ ծնողները։

— Բաս ով է երեխիս չախլախ արել ու էս օրը գցել:
 — Ինքը, հախն է, Թո՛ղ չարչարվի, տնքտնքալ,
 խելքը գլուխը կըգայ: Հը՛մ, ինչ սոնկ է, «խելքը գլուխը
 կըգայ», Եթէ որ էշի պոչը տափին հասնի, դա էլ
 կըխելօքանայ: Սէլրան, ուրիշ անէծք չունեմ, տայ Աս-
 տուած, որ դու էլ ինձ պէս հայր լինես ու քեզպէս
 տղի ձեռին տանջվես: Էս ինչ օր է, ինչ ապրել է, Տէր
 Աստուած, մի անգամ առ հոգիներս ու ազատիր էլի:

— Հերիք է, այ մարդ, քիչ սիրտդ մըդ-մըդ մա-
 շեր: Էլի օրհնեալ լինի Աստուած, որ երեխիս կենդա-
 նի են բերել, որ սպանած լինէին ինչ պիտի անէինք:

— Երանի չէր, որ սպանէին ու քութհահ տային,
 մենք էլ ազատված կըլինէինք:

— Ուֆ, քեզի տեսնեմ, որ լեզուդ կպչի:

— Զէ, բաս մնալու է, էսօր կենդանի են բերել,
 վաղը կամ միւս օրն էլ Աստուծոյ կարող զօրութիւնով
 կամ գլուխը կըբերեն, կամ փորը ծխով լցված:

Մարիամ բաջին, որպէսզի չըլսի իւր ամուսնու
 կոկծալի խոսքերը, հեռացաւ սենեակի միւս անկիւնը
 ու արտեղ սկսեց իւր հագուստը կարդի բերել:

— Հրէս ասում եմ, Աստուծով մի օր կըլինի ու
 դու էլ կըտեսնես, — շարունակեց Հայրապետը, կարծես,
 դիտմամբ, որ աւելի ու աւելի վշտացնի Մարիամ
 բաջու սիրտը: Այն օրից, երբ որ ընկերացել է լրբերի,
 գողերի, հարբեցողների, թուղթ խաղացողների, պասպե-
 րոս քաշողների հետ, էլ ես նրանից ձեռ եմ քաշել, ասել
 եմ, «Հէջ, դահի բուննան օղուլ չըխմաղ»: * Իմացար: Հիմա
 նրա աւետարանը կարդացված է, թող կտորվի ու շների կե-
 րակուը դառնայ էլի, փիէ: Զէ, չեմ ուզում, չեմ, չեմ
 ուզում ջանըմ, գեօգում էնէնց տղին, որ դիշերուալ

*) Զէ, էլ սա որդի չի դուրս դայ:

կէսին տնից փախչում է ու մտնում գինետուն մօր կաթը
 կտրածների հետ լակում, կովում ու շան պէս էնքան
 թակվում, ջարդ ու փշուր լինում, որ փալասով են
 տուն բերում: Տար, տար քեզ լինի, խէրը տեսնես, ես
 նրանից ձեռ եմ քաշել, եալաս թափ եմ տալիս:

Իսկոյն Հայրապետը այս ասելով երկու ձեռներով
 բռնեց իւր արխալուզի օձիքից և թափահարեց:

— Հրէս ասում եմ, հէնց օր աչքերը բացեց, ուշ-
 քի եկաւ, ասա նրան որ էլ աչքիս չերեալ: Թող դուրս
 դալ, կորչի որտեղ որ ուզում է, ես նրա հետ էլ բան
 չունիմ: Հասկանում ես: Ես նրա հալրը չեմ, իմացար,
 ես, կուժ ծախող Հայրապետս, էլ օրէս դէն նրա հալրը
 չեմ, պրծաւ գնաց: Հրէս ես էլ կըդնամ կունդուստօր,
 սեկլատարին կասեմ, որ նրա անունը գաւթարեց հա-
 նի դուրս: Ցետոյ կըդամ նաշառնիկի մօտ ու ամեն
 բան նրան մին-մին նազլ կասեմ, էսպէս, էնպէս, Սէր-
 բանը տղաս չէ, վասսալամ, չիւդ թամամ...

— Պրծաւ գնաց, իմ բանս էլ դըստվեց, եարիս էլ
 մահլամ դըիր: Քիչ ենք խալտառակվել, դու էլ գնա-
 կունդուստօրի-մունդուստօրի, սըկլատարի-մըկլատարի
 դաւթարը գցիր անուններս: Հայրապետ, շուն է, գէլ
 է, լիրը է, փչացած է, ինչ-որ է—էլի տղադ է, էլի
 հալրն ես, դու պիտի մի կերպ էս չար ճանապարհից
 հեռացնես նրան:

— Զեմ ուզում, ջանըմ, չեմ ուզում էլի, որ նա
 տղաս լինի: Տար վզովդ գցիր, ես բան չունիմ, ես ձեռ-
 ներս լուանում եմ, թող գնայ չոլերն ընկնի: Նա չէր
 պատճառը, որ Բարխուդարը քսան-երեսուն տարուալ
 բարեկամութիւնը մի օրում քիրթ կտրեց ինձ հետ: Նա
 չէր պատճառը, որ խեղճ մարդու աղջկայ անունը սաղ
 քաղաքում ընկաւ, ինքն էլ խալտառակ իլահ: Զէ, չէ, չէ,
 չեմ ուզում, նա իմ տղաս չի էլի, փիիէէլ, նահլաթ քեզ...

— Քո խեղճ Բարխուդարին տեսնեմ, որ խեղճ օձ կծի, — ընդհատեց Հալրապետի խօսքը Մարիամ բաջին, — Բարխուդարին տեսնեմ, որ ոիրտը տասը դանակ միասին խըրվեն, Աստուծուց մահ խնդրի, մահը ձիաւոր իլի, ինքը փիադա, վազ տայ, վազ տայ, չըհասնի: Նա, նա, էնք քեօփակ Բարխուդարն է երեխիս էս օրին հասցրել:

Մարիամ բաջին այս թունաւոր անէծքը արտասանեց աչքերը դէալի երկինք բարձրացրած և ձեռներով անդադար կրծքին խփելով: Հալրապետը, դէմուդէմ կանգնած, բարկացած նայում էր նրա երեսին, մի ձեռով շիբուխը քիչ բերանից հեռու բռնած, իսկ միւսով սաէպ-ստէպ գդակը գլխին սեղմելով:

— Երբ Մարիամ բաջին իւր անէծքն աւարտեց, Հալրապետը կամեցաւ մի ինչոր բան խօսել, բայց բարկութիւնից էր, թէ ինչից, չըկարողացաւ ոչինչ ասել: Նա չիբուխը խրեց գոտում, ձեռները քաշ ձգեց և գըլուխը աջ ու ձախ շարժելով, շարունակեց մտիկ անել իւր ամուսնու բերանին:

Այս պատկերը տեսեց կէս ըոպէի չափ, յետոյ Մարիամ բաջին կուացաւ, վերցրեց գետնից շալը և գլխին փաթաթելով, ասաց.

— Տափին գիպչեն բախտաւորները: Ուրիշները առաւտուայ ժամաժամքի ազօթք են անում, ես անէծքեմ թափում բերանիցու:

— Ինչու որ օձ ես, օձի արգանդէն գուրս եկած, — ասաց Հալրապետը, կրկին չիբուխը գոտուց գուրս հանելով:

— Դու էլ ցաւիս վրայ ցաւ մի դնիլ, Աստուած սիրես:

— Չայնդ կտրիր, թուրքի ազջիկ: Լեզուդ կծած պտիր, թէ չէ ամենի աջըզը քեզանից գուրս կըբերեմ, — բարկացաւ կրկին Հալրապետը, այս անդամ մօտենա-

լով Մարիամ բաջուն և շիբուխը բարձրացնելով՝ նրա գլխին:

— Հանիր, հանիր, ինչ ուզում ես արա, էլ օրէս դէն ինձ համար սե ու սպիտակ մի է: Զէ, սիրտս էրվի, խորովի, մի անէծք էլ չ'անեմ սաբարի համար, համ:

— Սարաբը դու ինքդ ես:

— Սաբաբը քեօփակ Բարխուդարն է: Թող, թող ազջկանը տանի տայ հալասըզ Սանամի լակոտ Ուուոտամին: Խնչու չի տալ, հարուստ, սովորաբար... հըմ, հըմ... եարագան Աստուած, դու հախը նահախին տուողը չես: Շատ չի քաշիլ, ես կըտեսնեմ Բարխուդարին փոշանած, գլխին, գլխին, թակելիս:

— Շատ ես լեզուիդ զոռ տալիս, հա, փիէէ, — գոչեց Հալրապետը, դարձեալ կանգնելով իւր ամուսնու դէմուդէմ:

Մարիամ բաջին երեսը շուռ տուաւ նրանից:

— Զէ, տեսնում եմ, որ գարիդ շատ է ընկել, բաս, որ էգպէս է, առ, աղբէր, դա—քեզ, նա—ինձ, հա, ջանըմ, — գտ քեզ, նա—ինձ:

Այս ասելով Հալրապետը վերցրեց իւր գլխից գըդակը և Մարիամ բաջու գլխից—շալը: Գդակը դրաւուժով Մարիամ բաջու գլխին, իսկ շալը ձգեց իւր գլխին:

— Հիմալ, համեցէք, ես մեղալ Աստուծոյ, դու մարդութիւն արա օրէս, ես կնկութիւն կանեմ:

— Եարաբ, Աստուած, էս մարդուն մի ծտի խելք էիր տուել, նա էլ ինչու խլեցիր սրանից, — ասաց Մարիամ բաջին, գդակը գլխից մի կողմը շպրտելով և իւր շալը Հալրապետի գլխից քաշելով:

Գդակն ընկաւ անկողնի վրայ: Սէլբանը զարթեց:

Նա վերմակը յետ քաշեց և գլուխը բարձրացրեց: Հալրապետը մօտենաւ, որ գդակը վերցնի անկողնի վը-

ըալից: Մի վայրկեան հօր և որդու հայեացքները հանդիպեցան իրարու: Հայրապետն արտգութեամբ երեսը շուռ տուաւ, որ որդու երեսը չըտեսնի: Սէլրանի դէմքը արտայատում էր հոգեկան մի անքացագրելի տանջանք: Արդեօք, ո՞րն էր այս վայրկեանին վշտացեալ պատահու մէջ զօրեղ—խղճի խալթոցը ծերունի ծնողներին պատճառած ցաւերի մասին, թէ սեալհական տանջանքը:

—Զուր, —արտասանեց Սէլրանը թոլլ ձայնով:

Մարիամ բաջին շտապեց բաւականացնել նրան: Սէլրանը նկատեց թէ ինչպէս հայրը իրանից երեսը շուռ տուաւ զգուանքով, նրա երեսը շառագունվեց:

—Առ, խմիր, —ասաց Մարիամ բաջին, ջրով լի բաժակը մօտեցնելով որդու բերանին:

—Ո՞րտեղդ է ցաւում, —հարցրեց, երբ Սէլրանը բաժակը ագահութեամբ դադարկելով լետ դարձրեց:

—Գլուխս, —արտասանեց Սէլրանը և կրկին վերմակը գլխին քաշելով սլառկեց:

—Մի քիչ նստիր, խօսիր, որ քէֆդ բացվի, բալաս, հերիք է քնածդ, — շարունակեց Մարիամ բաջին, խնտմքով ծածկելով իւր որդու ոտները վերմակի ծալրով:

—Նստել չեմ կարող, գլուխս ցաւում է:

—Երեսդ դէս պարանիր ու խօսիր:

—Չեմ ուզում, չեմ ուզում, թող, — գոչեց Սէլրանը, գլուխսն աւելի խօրը թաղելով վերմակի տակ:

—Չեմ ուզում, հըմ, երես ունիս, որ ուզես, ամօթից պիտի խեղդվես, ոչ թէ խօսես, — մէջ մտաւ Հայրապետը, որ այս ժամանակ երեսը միւս կողմ դարձրած չիբուխ էր լցնում: — Ադա, ամաչում ես իսկիի, — շարունակեց նա, մօտենալով Սէլրանի անկողնին, — ամաչում ես, թէ երեսիդ մեռունը լափ թափվել է ու սըլկված կաշին է մնացել, հըմ...

—Ողորմի քո հօրը, ալ մարդ, ողորմի օխտը սլոր-

տիդ, սուս արա, սուս արա, թող տեսնենք գլուխներիս ինչ օյին է գալիս, — աղերսեց Մարիամ բաջին:

— Այ քեօփօօղլի աղջիկ, չես թողնելու, փիէ, փիէ, ինչ ես գլխիս չաքուչ դառել, խեղդվեցի խօմ, — գոռաց Հայրապետը Մարիամ բաջու վրայ: — Ասա, ասա, անառակ տղայ, ասա, տեսնեմ, դա ինչ օյիններ է, որ դու մեր գլխին ես բերում, հըմ:

Սէլրանը լուռ էր:

— Զես խօսում, լեզու չունես, լալացել ես, հըմ, լալացիր, ալ սանի դօղանն բոլնի սնսուն, բէլա բոլնի սնսուն Սէլրան, օղլան^{*»}):

— Սնսնւն, սնսնւն, հայ, սնսնւն, — երեք անդամ կրկնեց Մարիամ բաջին վշտացած ձայնով:

Վերմակը շարժվեց և, Սէլրանը գլուխը դուրս հանեց: Նա քիչ բարձրացաւ և ձախ կողմով լենվելով անկողնին, մի քանի վայրկեան նալեց հօր երեսին և կըրկին ծածկվեց ու ընկաւ:

Ի՞նչ ես ուզում, բալաս, — հարցրեց Մարիամ բաջին:

— Հըմ, ուզում էիր, որ մի բան հաշես. հաչիր, անառակ:

— Եթէ ես լաւ որդի չեմ, դու էլ ինձ համար մի օրինաւոր հայր չես, — փնթփնթաց Սէլրանը, գլուխն աւելի խօր թաղելով վերմակի տակ:

Հայրապետը լսեց այս խօսքերը:

— Լսեցիր, ալ կնիկ, տես, տես, բէդզադը ջուրիաթէլ ունի....

Նա չըկարողացաւ խօսքն աւարտել, չուխան ուսերից մի կողմ ձգեց, չիբուխն աջ ձեռում սեղմեց և ա-

*») Քեզ ծնողի վիզը կոտրվի ալո՛, վիզը կոտրվի.

տամները կը ճտելով, սկսեց բոլոր ոյժով ստները դետ-
նին խփել:

— Հալրապետ, Հալրապետ, խելքու գլխիդ հաւաքիր,
— մէջ մտաւ Մարիամ բաջին:

— Կտրիր ձախու դու, հըմ, հարամզադա, համար-
ձակվում ես հօրդ գլխին չաքուչ բանեցնել: Դուրս,
դուրս, տում եմ, հէնց էս սհաթիս դուրս, օձի զաւակ:

Հալրապետը լարձակիեց Սէլրանի անկողնի վրայ,
վերմակը խլեց և մի կողմ շպրտեց:

Մարիամ բաջին ընկաւ ամուսնու ստների տուած:

— Աման դըր, աման, ալ մարդ, տունս մի քան-
դիլ, խեղճ եմ...

— Շորերս, շորերս, ես չեմ ուզում էլ այսուհետեւ
ձեր որդին լինել, դուրս եմ գալի հէնց այս ըստիկս:

Սյա ասելով, Սէլրանն արագութեամբ ստի կանգնեց
անկողնի վրայ:

Բայց թողնելով ամուսնու ստները, Մարիամ բաջին
տյս անգամ չոքեց որդու առաջ, մազերը փետելով:

— Սէլրան, Սէլրան, խնայիր ստի վրայ չորացած
մօրդ բամբակ մազերին, խնայիր, — դոչեց խեղճ կինը
աչքերից աղի արտասուր թափելով և մազերը տարա-
ծելով որդու ստերի առաջ:

Հալրապետը մնաց անշարժ: Նրա ալեխառն գլուխը
և ձեռները բարկութիւնից դողում էին: Կարծես
մօր աղերսանքն ազդեցին Սէլրանի վրայ: Թշուառ
պատանին, տեսնելով նրան այս դրամտիքական գրու-
թեան մէջ, նոյնպէս մնաց անշարժ: Նրա ձեռները
թուլացան և քարշ ընկան կողքերին, իսկ գլուխը թեք-
վեց կրծքին:

— Բայց թող, բաց թող, գնայ, տեսնեմ, որտեղ է
գնալու, թնչ կարող է անել առանց ծնողների, — խօսեց
Հալրապետը, այս անգամ քիչ մեղմացած:

— Զէ, չեմ թողնիլ, միսը եղունկից բաժանել,
հալրը որդուց ջոկել: Զէ, չէ, առաջ վիզս կտրեցէք, լե-
տոյ ջոկեցէք:

— Մատաղ լինես, Սէլրան տղայ, քո ծերացած
մօրդ, թէ չէ Սստծուն է լայտնի, որ մեծ թիքադ ա-
կանջդ կըմնար ձեռումս:

— Թող մնայ, այսուհետեւ Սէլրանի համար ողջ
մին է ինչ էլ որ լինի: Ես էլ մօրս եմ խնայում, բայց
իմացիր, որ էլ օրէս դէն ես այստեղ մնալ չեմ կարող:
Կըթողնեմ ալս տունը հէնց այն ըստիկին, երբ ոտներս
կարող կըլինին տեղից շարժվիլ:

Սյա ասելով Սէլրանն այլևս չըկարողացաւ ոտքի
վրայ կանգնել: Բոլորովին ուժաթափվեց և ընկաւ
տնկողնի վրայ:

— Տանջիր Սստուած, տանջիր, պապակիր ինձ, ինչ-
քան ուզում ես, — բացականչեց Մարիամ բաջին, վեր-
մակը քաշելով Սէլրանի վրայ:

Սյդ վայրկեանին դրսից լսվեցին ստների ձախեր: Մա-
րիամ բաջին շտապեց կարգի բերել իւր ցիրուցան եղած
մազերը և հագուստն ուղղել:

Հալրապետը դռներից դուրս նալեց և խկոյն դէ-
պի ներս շուռ գալով, ասաց. «Մատանաների նախիրն
եկաւ, վեր կաց ոտքի»:

Ներս թափեցին մի խումբ կանտաք խալտաճամուկ
չարշովների մէջ փաթաթված, տնքտընքալով, ծանը
հառաջանքներ արձակելով, ախ ու վախ քաշելով:

Հալրապետը չուխան հագաւ և դուրս գնաց:
Մարիամ բաջին առաջ շարժվեց, որ հիւրերին ըն-
դունի:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Քաղաքի հայոց թաղի միջին բաժնում, Բարխուդարի և Հալբապետի տներից բաւական հեռու, մի ընդարձակ և ուղղագիծ փողոցի ծալքում գտնվում էր միարկանի մի տուն։ Այդ տունը նոր էր և, ինչպէս երեսում էր պատերի ճերմակ և տաշած քարերի գեռ մաքուր գոյնից, կաւուցված էր երկրաշարժից յետոյ։

Այդ Քեօչարանց Ոռւստամի տունն էր։

Դինետնում Սէլրանի կռվելու երեկոյից ուղիղ երեք օր անցած, կէսօրուայ գէմ, լիշեալ տան ներսում նըստած էր Ոռւստամի մայրը — Սանամ խանումբը։ Տունը բաղկացած էր ընդամենը երկու կէս եւրոպական ու կէս ասիական եղանակով կահաւորված սենսակներից։ Սանամը մօտարապէս լիսունու հինգ տարեկան միջտհասակ մի գէր, առողջ և կարմրագէմ կին էր, թէև տարեքը արդէն կնքել էին նրա երեսին պառաւութեան անկասելի կնճիւները։ Նա հագնված էր ոչ այնքան զքեղ և ոչ ել շատ աղքատ, բայց բաւտկան մաքուր, այնպէս, ինչպէս սովորաբար հագնվում են Շամախում միջին կարողութեան տէր կանալք տանը։ Սև ստինից կարած լայն շապկի ընկեր, կապտագոյն մետաքսեալ շապիկի լայն թեւերով, բաղդադի գոյնզգոյն շալից կարած արխալուղ — ահա նրա հագուստը։ Արխալուղի թեւերը հասնում էին միայն մինչև արմունկները, իսկ այս տեղից սկսվում էին զառբօֆից տերեւաձև ծալքերով ուրիշ թեւեր։ Սանամը մէջքին կապած էր նոյն-

պէս մետաքսից գործված գօտի, որի մութ-կապոյտ գոլնը նշան էր նրա այրիութեան: Խսկ նրա գլխի պաճուճանքը բաղկանում էր տեղական բարակ նրբագործ, մետաքսեալ նախշուն թաշկինակից, մանիշակագոյն թոռից և մի սեւագոյն բրդէ շալից: Այս բոլոր պաճուճանքի տակից գլխին անմիջապէս կապած էր ճութզին, որի տակից երեսում էին հինայով ներկած մազերը:

Սանամ խանումը միայնակ էր: Նրա միակ որդին, Ռուստամը գտնվում էր օտարութեան մէջ: Երկրաշարժից յետոյ, երբ առետուըն ընկաւ Շամախում, Ռուստամը հաւաքել էր իւր ապրանքները և գաղթել Թէյ-մուր-խան-Շուրայ, ուր արդէն երեք տարի էր, որ ապրում էր: Որովհետեւ Սանամը բացի Ռուստամից ուրիշ զաւակ չունէր, այս պատճառով նրան մի առանձին դառնութիւն էր պատճառում միակ որդու բացակայութիւնը: Մի ծանր, մի ողբալի օր էր Սանամի համար այն օրը, երբ Ռուստամն ուղերզից դէպի օտարութիւն: Խեղճ մայրը բոլոր իւր հնարները գործ դըրաւ, բոլոր իւր պերճախօսութիւնն սպառեց, որպէս զի որդուն համոզի չըթողնելու հայրենի քաղաքը: Ոչինչ չօգնեց:

— Շամախում առետուքը հաց չի տալիս, հիմայ էլ հարկաւոր է, որ բախտս ջոկ քաղաքներում փորձեմ ուրիշների պէս,— ասում էր Ռուստամը:

— Ինչո՞ւ ես ուրիշներին մտիկ անում, բալաս, նըրանք քեօմակ ունին, արխա ունին, քեզ պէս իսօմ մէն մէնակ չեն: Դու որ գնում ես, բաս ինձ ումի ումուդին ես թողնում:

— Կըգնամ Շուրայ, գործերս քիչ ժամանակում կարգի կըքերեմ ու յետոյ կըգամ, քեզ էլ ինձ մօտ կը տանեմ:

— Ալդ էր պակաս, ծերութեանս օրերում օլքա-օլքա-

ընկնեմ, որ այս փտած չորացած ոսկորներս դարիբ երկներում ցիր ու ցան լինեն: Լաւն է այստեղ պապերիս օջախի մօտ, քաղցած, ծարաւ մեռնեմ, քան զարիբութենում ոսկի արծաթի մէջ ապրեմ: «Ի՞նչ եմ անում՝ ոսկի տաշտը, որ միջին պիտի արիւն թքեմ»:

— Զեմ իմանում, է, քեզ համար ինչ քաղցը բան կայ «Խարաբաշահարի մէջ»: Տեսնում ես, որ քար քարի վրայ չի թողնում Աստուած: Գիշեր ու ցերեկ սիրտներս եղի պէս հալվում է, թէ հէնց այս է—պիտի տակն ու վրայ լինի: Լաւ չէ, որ մի անգամ այս անիծված քաղաքից դուրս գնանք ու պրծնենք:

— Մի ասի, որդի: Մարդուս հալրենական հողը քաղցը է, ու վ քաղցը: Այն մարդը, որ սովորել է նրան, էլ չի կարող ուրիշ հողում ապրել:

— Մենք այնպէս կարող ենք, որ քէֆդ գալ:

— Զէ, չէ, տեսնում ես, բալաս, ծիծեռնակներին: — Հը՛ը:

— Աստուածութիւնը էնէնց է ստեղծել էն պստիկ արարածներին, որ նրանք էլ իրանց օջախը սիրում են:

— Սիրում են, բայց տեսնում ես, որ նրանք էլ հիմայ թողել են իրանց բունը ու թռել ուրիշ քաղաք ներ:

— Կըգան, էլի կըգան, իրանց կարճ խելքով հասկանում են իրանց պապական օջաղի դադը: Նրանք, որ սպանես էլ, ուրիշ տեղ չեն գնալ, էլի իրանց հիները կըգան: Հիմայ, բալաս, ծիծեռնակը թռչուն լինելով, որ էդքան սիրում է իր բունը, բաս մարդը:

— Տասն անգամ ասել եմ, էլի ասում եմ, որ պապական հող, հալրենական օջախ, չըգիտեմ էլ ինչ զիրթ ու զիբէլ, դրանք քատարկ բաներ են: Մարդու պապն էլ, հալրն էլ, օջախն էլ այնտեղ է, ինչ տեղ որ աշխատանք կար, փող կայ: Հասկացար, թէ չէ: «Ի՞նչտեղ

Հաց, այնտեղ կաց»։ Շամախում հաց չըկալ, չըկաց ու չըկայ։ Այսուեղ փողը ձիաւոր է դառել, մարդը փիագա, հա վազ տուր, հա, հա յազ տուր, որ չես կարող հասնիլ։ Էլ մի երկարացնի, ասածս արած է, կարճ կապիր։

Այս խօսքերից յետոյ Սանամ խանումը այլ ևս չըկարողացաւ հակառակել Որուստամին, ճանաչելով որդու բնաւորութիւնը։ Մի օր նա գառն արտասուքներով ճանապարհ դրաւ միակ զաւակին դէպի օտարութիւն։

Ինչպէս վերն ասացինք, արդէն երեք տարի էր, որ Որուստամը Շամախուց հեռացել էր, և այս երեք տարուայ ընթացքում Սանամը մի անդամ ևս չէր տեսել նրա երեսը։ Ծանր և վշտալի էր նրա համար մենակութիւնը։ Նա նամակ նամակի յետևից էր ուղարկում, աղաչում էր, խնդրում էր, որ գոնէ մի անդամ կարճ միջոցով, որդին գայ մօր հետ տեսակցելու։ Որուստամը միշտ պատասխանում էր, թէ այս ամիս կըդայ, միւս ամիս կըդայ, այս գործը վերջացնի—իսկոյն կ'ուղերդի, միւսը վերջացնի—կըդայ։ Եւ այսպէս նա ամբողջ երեք տարի էր, որ ձգձգում էր, բայց չէր գալիս։

Սակայն վերջին ժամանակները Սանամը շատ ուրախ էր։ Որուստամից երկու ամիս առաջ մի ուրախովի նամակ էր ստացել։ Այս նամակով որդին յալոնում էր մօրը, թէ հերեք է ինչքան ինքն ազատ մնաց, հիմայ տանտէրվել է հարկաւոր, չունքի փառք Աստուծոյ, գործերը լաւ են գնում և այլն։ Յետոյ նա խընդրում էր իւր մօրը, որ անշուշտ մի լաւ աղջիկ ճարի Շամախում և ճարելուց յետոյ, շուտով գրի իրան, որ գայ պատկվելու։

Որուստամը հարսնացուի ընտրութեան բոլոր իրաւունքները տալիս էր մօրը։

Սանամը խօմ հէնց մի ալսպիսի պատուէրի էր ըսպասում։ Նա նամակը ստացած օրը, իսկոյն, առանց ուշացնելու, «զարանգիզի» (Հարսնախօսն), Շըպպանիկին կանչեց և պատուիրեց, որ մի «լաւ, գեօզալ, խելօք, բան անող, կարդացած, հայալու» աղջիկ ճարի Ռուստամի համար։ Երկար մտածեց, նա երկար խորհրդակցեց Շըպպանիկի հետ։ Քաղաքի բոլոր աղջկերանց անունները տոււաւ նա մի առ մի, բոլորին քննեց, քըննադատեց, հետազոտեց։ Մէկը գեղեցիկ էր, բայց շնորհ չունէր, միւսը խելօք էր, բան անող, կարդացած, բայց տգեղ էր, երրորդը ամեն կողմից լաւ էր, յարմար էր—գեռ պստիկ էր, չորրորդի քիթն էր ծուռ, հինգերորդի մազերն էին կարճ, ծնօտը «լախ» և այն և այն։ Մի խօսքով, քաղաքում էլ աղջիկ չըմնաց, որ Սանամը շետնտղէր։ Մի ամբողջ ամիս այս հարցով նա տանջեց իւր գլուխը, մինչեւ որ, վերջապէս, երկալ աշխատութիւնից յետոյ, վիճակն ընկած Բարխուդարի աղջիկ Սուսանի վրայ։

—Ի՞նչ աղջիկ է, ի՞նչ աղջիկ է, ի՞նչ բոյ ունի, ի՞նչ աչքեր ունի, —ասում էր Սանամը մի օր Շըպպանիկին Սուսանի մասին։ Բարխուդարի մէրը, Գիւլնազն էլ, մարալի պէս գեզալ է։ Աղջիկն էլ մօրն է եկել, ամախելօքութենով, ես իմանում եմ, մօրից տասնապատիկ խելօք է, չունքի, գէ, կոլոի ուսումնաբանում է կարդացել։ Զատկին ես ժամումը բանեցի, որ մին քիչ խօսացնեմ, խեղճն ամաշելուց կարմրեց, հռչնեց, լեզուն կտրվեց, չըկարողացաւ խօսել։ «Աֆարիմ աղջիկ», ասացի մտքում։ Շըպպանիկ, զահժի արա բանը գլուխ բեր, յետոյ ես եմ իմտնում, թէ քո խաջալութենից ինչպէս գուրս կըդայ։

Շըպպանիկը խօմ ալսպիսի բաներ ճրագով էր, փնտրում։ Ալդ օրից սկսած նա այլ ևս հանգստութիւն

չէր տալիս Բարխուդարի ընտանիքին։ Շաբաթն երեք անգամ, չորս անգամ, «վախտ, բէվախտ», նա վազում էր Գիւլնազի գլխին խնամախօսութեան, բայց բանը գլուխ չէր գալիս։ Սակայն վերջին երկու շաբաթները Շըպանիկն այլ ևս չէր երեւում Բարխուդարանց կողմերում։ Սանամի բարեկամները խմանալով, որ նա մըտադիր է իւր որդու համար Քեօխանց Բարխուդարի աղջիկ Սուսանին ուզելու, մի օր հաւաքվեցին դալմաղալով նրա գլխին։

—Ախչի Սանամ, դա ինչ ենք լսում, դու որտեղ, Գիւլնազի հալասը, կապը կտրած, չոլերն ընկած աղջիկը ո՞րտեղ։ Ա՛յ կնիկ, չես լսել, նա ինչ սոնկ է, ինչ բաներ է արել կուժ ծախող Հալրապետի տղի հետ։

—Ի՞նչ է արել, — զարմացած հարցրեց Սանամը, որ առաջին անգամն էր լսում այս լուրը։

—Վայ, վայ, էլ ինչ պիտի անի, մազս կտրվի, էլ բան է մնացել, որ չ'անի, — պատասխանեց Սանամի տալը, «քեանդուկ» Մանանը, որ ինքն իրան Շամախու ծանրաբարոյ ալսինքն «քեալթա» կանանցից մէկն էր համարում։ Բան է մնացել որ չանի, էլ զիշերները չոլերում սիլիկ-բիլիկ անել, պաչոլչիկ, դուջուջվել։

—Յետո՞յ, յետո՞յ։

—Յետո՞յ, էլ ինչ լետոյ, իմանում ես էլի, ջահիլ տղայ, ջահիլ աղջիկ, այ հայ, հաայ։

Եւ «քեանդուկ» Մանանը խորհրդաւոր կերպով շարժեց իւր գլուխն աջ ու ձախ։

—Վայ, տունս չըքանդվի, լաւ էր առել Սստուած խելքս։

—Բայս, բայս սաղ քաղաքում մի մատը մեղը կը շինէին քեզ էլ, տղիդ էլ, կըլպղտէին հա կըլպղտէին Մի խտուկ անսւն ունիս, ուզում ես, որ կեղտստեխ խելքի եկ, խելքի...»

Այդ օրուանից դէն Սանամը Նըպուտնիկին հրաման տուաւ այլ ևս չըգնալ Գիւլնազի մօտ և մինչև անգամ ոչ ոքին էլ չըլայտնել, թէ Քեօչարանց Սանամը կամեցել է Քեօխանց Գիւլնազի աղջկան իւր տղի համար ուզել։ Այնուհետեւ նա, զարձեալ նոյն Շըպանիկի օգնութեամբ, սկսեց որոնել մի ուրիշ հարսնացու։ Երկու շաբաթ էր, որ նրանք մտածում էին այդ մասին, բայց մի ուրիշ բարձար աղջիկ չէին գտնում։

Ահա հէնց այդ մտքով էր զբաղված Սանամի ուզեղը և այժմ։ Նա մէջքը պատին տուտծ նստած էր պարսկական գորգերով զարդարած թափտի վրայ երեսը դէպի բագը և հմայում էր խաղաթղթերով։ Ուզել մի ժամ էր, որ նա հմայութեամբ էր պարապած և այդ մի ժամուալ ընթացքում առնուազն տասն անգամ թըլթերը գարսած և հաւաքած կըլինէր, բայց ոչ մի անգամ կամտկոր թղթերը չը ցոյց տուին Սանամի ուզածի պէս։ Աերջապէս, նրա ձեռներն յոգնեցին թղթերը շատ դէսուդէն բաժանելուց, և նա բարկացած հէնց նոր կամենում էր հաւաքել և մի կողմ տնել թղթերը, երբ գըրսից մի կանացի ձայն լսեց։ Մէկը թրքելէն լեզուով երգում էր և ծափահարում։ Սանամն առանց տեղից շարժուելու նաևց դէպի գուրս, և նրա գէմքը մի առանձին զարմանք չարտայալտեց, երբ տեսաւ երգեցող ծափահարողին։

—Այ բալամ, այ ջանըմ, դիւ, դիդիւ, դահըի գտդահ, դիւ, դիդիւ, չըլթ-չըլթ, այ սաղօլ, այ սաղօլ, ներս մտածի բարձրահասակ, նիհար կին, պարելով և ձեռները գլխիվերև աղեղնաձև պահած՝ երկայն ու բարակ մատերով «ըըթթմա» տալով։

Դա «զարանգիզի» Շըպանիկն էր։

— Դիլիլի, դիւ, դիւ, դիւ, պարով իսանըմիս, պարով նրա տուն ու տեղին, — սկսեց Շըպանիկը մա-

քուր տեղական բառբառով, առանց որ և է խառնուրդի։
—Պարով, մին ալ պարով։ —շարունակեց նա, —հա-
զար պարով, ա բալամ, հինչ ես անըմ, հինչ ես շինիմ,
հինչեա պեանի ես։ Քէֆըդ, հալդ, ովհալդ։ Հըմ, դա-
մաղդ չաղ ա։ Ասա, դէ ալի, ախըր քանի վախտ ա քու-
լիւս երեսդ չամ տեսնըմ։

Սանամը ոչինչ չըպատասխանեց, միայն մի քա-
նի վայրկեան նալեց Շըպանիկի երեսին, խաղաթղթերը
դրեց մինդարի տակ և զորերի ծալրերը քաշեց ներքեւ,
որ ծածկի աջ ոտի հաստ և մսալի սրունդը։

—Հըմ, խօսիր դէ ալի, —դարձեալ սկսեց Շըպան-
իկը, շալը գլխից վերցնելով և մի կողմ շպրտելով։

Նա կանգնեց ուղիղ Սանամի դէմուդէմ և ձեռները
դրաւ կողքերին, այնպէս որ նրա մարմինը ստացաւ Փ
գլխատուի ձեւ։

—Զես խօսելու, հինչ կայ, եարաբ, աչքունդ փալիզ-
վան պէս կախ ես քիցեալ, ալի էշիդ հով ա կաղ ասալ։

—Թողնում ես, որ խօսեմ, կրակ բռնածի պէս ներտ
ես մտել թէ չէ, էլ լեզուդ բունը չի մտնում։ Կարկու-
տի պէս հէնց թափում ես հա, —պատասխանեց, վերջա-
պէս, Սանամը, տեղից բարձրանալով։ —Ախար մարդ եօ,
մարդու աղջիկ ես, եկել ես, քաղաքավարի նստիր ու-
յետոյ լեզուիդ զօռ տուր էլի։

—Չամ լալանալու, լալաբանդ իլիլու քի։ Աստօն-
մարդիս լիզուա տուալ, որ խօսի ալի։ Զօփուռանց նու-
նիդը չամ քի, որ նստամ — քիթիվ անամ։

—Ներիք է, նստիր ու պատմիր, տեսնեմ ինչ խա-
բար ես բերել աղջիկ ես, թէ տղայ։

—Նալա մին լեալ գակուսկա շինի, քի մին քէֆու
պեացվի, փորս վեց վեց ա անըմ։

Շըպանիկն իւր փորին խփեց երկու ձեռներով՝
ցոլց տալու համար, թէ լիրաւի փորը դատարկ է։

—Ուֆ, փորդ որդնը դնի, այ Շըպանիկ, ոչ կշա-
նաս։

—Վալլահ, լիւցիւնիւմամ, լիւցիւնիւն, ալի հանց
զուռզուռում է։ «տուր, տուր, տուր»։ Փոր չի քի,
բաշի բալա եա գլխիս ալի։ Անտէր մնալ նա, հալլա։

Սանամը գնաց միւս սենեակը Շըպանիկի համար
«զակուսկա» պատրաստելու։

Շըպանիկն երգելով և «չըթմա» խփելով հետեւց
նրան։

Հարկաւոր է մի քանի խօսքով ընժերցողին ծա-
նօթացնել այդ Շըպանիկ անուանված էակին։

II

Մօտ քառասուն տարեկան մի կին էր Շըպանիկը
թուխ դէմքով, մեծ բերանով, լայն ծնոտով, ուղղագիծ
քթով և խորամանկ աչքերով, որ խօսելու ժամանակ
անդադար խըփիվում էին ու բացվում։ Շաբաթը մի անգամ
նա ձեռներն ու գլուխը հինալով ներկում էր։

Շամախու կանանց սովորութեան հակառակ, նա միշտ,
ամառ թէ ձմեռ, շրջում էր առանց չարշավի, մի հա-
սարակ կիսամաշ բրդէ շալով, որի տակից անկանոն կեր-
պով միշտ սփոված էին ուսերի վրայ նրա ոչ այնքան
երկայն մազերը։ Իւր արտաքին տեսքով նա մի փոքր նմա-
նվում էր թափառական գնչուհու, ուստի նրա անունը քա-
զաքում կնքել էին «զարաչի Շըպանիկ»։ Սակայն պի-
տի աւելացրած, որ նա «զարաչի» մականունը ստացել
էր ոչ այնքան իւր արտաքին տեսքի, որքան բնաւո-
րութեան համար։

Շըպանիկն իւր ամուսնու և երկու զաւակների
հետ տալրում էր քաղաքի յետ ընկած փողոցներից մէ-
կում, մի հասարակ տան մէջ, որ բաղկացած էր ընդ-

տմենը մի չախլախ սենեակից, փոքրիկ խոհանոցից և հաւաթառից։ Նրա ամուսինը — նիհար, կարճահասակ, նեղ ճակատով, ուռած ու կապտած թշերով կարմրած և պլըզված աչքերով — զուռնաչի Տատունը, ի սկզբանէ անտի հենց դատապարտված էր մշտական հարբեցողութեան։ Նա հարբում էր առաւօտները, հարբում կէսօրներին, հարբում էր գիշերները, մի խօսքով, պախտ բէվախտանրա համար միւնունն էր, միայն թէ վող ունենար։ Որտեղ որ կորցնէիր Տատունին — կարող էիր ալս կամ այն գինետանը գտնել։ Քսան տարեկան հաստկից սկսած նա գինետանն էր անցկացրել իւր կետնքը և այստեղ էր գլխաւորապէս զուռնաչութիւն անում։ Շատ քիչ էր պատահում, որ նրան հարսանիքատուն կամ մի ուրիշ զուարճատեղ տանէին, որովհետեւ նրա ձեռները կարողութիւն չունէին զուռնան բերանում ուղիղ պահելու։ Եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ նա միշտ հարբած էր լինում, այլ առհասարակ, պիտի ասած, որ արթուն ժամանակն էլ Տատունը իսկի մի կարգին ածող չէր։ Սակայն ինքն Տատունն էլ այդ մասին շատ չէր հոգում, երբէք չէր տշխատում, որ մէկը իրան հրաւիրի հարսանիք։ Նրա համար միւնունն էր որտեղ որ փէք զուռնան, միայն թէ փէք և մէկ էլ որ մի քանի շահի-բիստի ստանար արազի ու գինու համար։ Այս պատճառով նա միշտ զուռնան գրպանում պատրաստ հետը ունէր, որ հարկաւոր եղած ժամանակ էլ նեղութիւն չը քաշի տուն վազելու։

— Տատուն ապեր, մին փիշի, — բռնում էին նրան պողոցի ջահիները։

— Բաշ իւստա, — պատասխանում էր նա և երկայն ու իւղաթաթախ արխալուզի գրպանից դուրս հանում դուդուկը։

Նա փաւաւոր կերպով ծալապատիկ նստում էր փո-

զոցի մէջտեղում, չմուշկները հանում, առջեր դնում Յետու գլխի ահագին փափախն ուղղում էր, ծռում էր այս կողմ ալն կողմ, որ, էհ, բան է, զուռնան փչելու ժամանակ, չընկնի ու չըխանգարի։ Այնուհետև ծվանը դնում էր գուդուկի ծալրին, պինդ պնդացնում ու ըսկում։ Բայց վայ այն սկսելուն, որ նա էր սկսում։ Մինչեւ զուռնայի դրստելը, մինչեւ բերանը դնելը, մինչեւ մատերով հարկաւոր տեղերի գտնելը, իսկդ ջահիների սրաները հալվում էին։

Վերջապէս, Տատունը մի կերպ բոլորը պատրաստեց, և ահա նրա յօնքերը վեր քաշվեցին, ճակատը ծալերով ծածկվեցին, աչքերը չոփեցին ու կարմրեցին, թշերն ուռան, կապտեցին, հը՛ք, սկսվեց մշտական «Սարի» եղանակը։ Բայց, աւաղ, մէկ էլ տեսար, որ նրա վզակոթին «զըսիկ» մի բռունցք հառաւ, և զուռնան փափաղի հետ միասին թռաւ փողոցի մէջ տեղը։

— Ալ, օլմիշ, անամօթ, անմեռուն, ալի հինչ ես մահրաքաղ սարքալ, վեր կաց, տուն կորի, — բղաւում է Երապանիկը և, իւր ամուսնու կոնից բռնելով, շպրում մի կողմ, ինչպէս մի կտոր կեղտուա շոր։

— Ալի, ալի, ալի, ակնիկ, եանի, եանի... Տէր մեղալ, հախ միան, Տէր...եանի հինչ ամ անըմ, ալ օձի ճուտ, չես թողնելու որ քեասիրութիւնս անեմ, — երկիւղածութեամբ փնթինթում է Տատունը փափախը թափ տալով։

Բայց Երապանիկը չի թողնում նրան երկար խօսելու։ Նա մի ձեռով բռնում է ամուսնու չուխայի փէշերից, իսկ միւս ձեռում զուռնան բռնած, նրա գլխին տալով, քաշում է ուղիղ մինչեւ տուն։

Այստեղ սկսվում է մի ուրիշ տեսարան։

Երապանիկը սեղմում է Տատունին սենետիկ մի անկիւնում և, փափաղը ճխտելով բերանին, կարկտի պէս

Հժափում է նրա գլխին հարուած հարուածի ետևից: Փոքրիկ մարդն ուզում է գոռալ, օգնութեան կանչել, բայց չէ կարողանում, որովհետեւ նրա բերանը փափախով սեղմված է: Նա ոյժ է տնում ազատվելու կնոջ ճանկերից, դարձեալ չէ կարողանում: Ի՞նչ անի, ի՞նչ չոնի ճարահատեալ մի կերպ ձեռքն է առնում Շըպանիկի մազերը: Ամբողջ մարմնով նա կախ է ընկնում նրանց վրայ և խեղդված ձախով, շնչառառ ասում է. «աթանց, աթանց, հա, լօօօլի, սիրտս էրվեց»:

— Բըախ տուր, — գոռում է Շըպանիկը, գլուխը թափահարելով և ոտերով աքացի տալով նատունի փորին:

Դու բըախ տուր, ես ալ բըախ տամ, — պատասխանում է Տատունը, տւելի պինդ քաշելով կնոջ մազերը:

Եւ այսպէս շարունակում է մինչեւ որ երկուսն էլ յոգնում են և իրարու ազատում: Երբ Շըպանիկին հարցնում էին, թէ ինչու է նա այդչափ անբարեխը ճաքար վարփում իւր ամուսնու հետ, որին պիտի իսկապէս ուրիշ կանանց պէս հպատակիվ — նա պատասխանում էր.

— Հինչ անամ, ա քիւր, ա մէր, գիշերը ցիրեկ լակըմ ա, աշխատածը գինի-արադի ա տամ, տուն մին կոպէկ չի պերըմ: Ես ալ բախտավար ախր կնիկ ամ, տուն ու տեղ ունամ, իմ աշխատածս ալ քամին ա տանըմ, հերիք չի անըմ:

Նշանաւոր գեր էր կատարում Շըպանիկը: Հայերի մէջ նա յայտնի էր ամենքին, ծերունիներից սկսած մինչեւ ամենափոքը մանուկները: Առանց հարցնելու, համարձակօրէն նա մտնում էր ամեն մի տուն, ամեն մի ընտանիք և, պիտի ասած, ոչ ոք, ծանօթ թէ անձանօթ, նրան չէր արգելում:

Շըպանիկը, ինչպէս քաղաքի մէջ ամենալայտնի պարանգիղի (միջնորդ), ամենքին հարկաւոր էր, և ամեն-

քը որ և է բանով կարևորութիւն ունեին դէպի նա: Մէկը տղալ ունի նշանելու, միւսը հասած աղջիկ ունի, փեսացու է որոնում, երրորդը հարսանիք ունի, կանալք պիտի հրաւիրի, չորրորդը կնունք ու հինգերորդը մեռելատէր է. թէ ուրախութեան թէ ախրութեան դէպքում Շըպանիկը հարկաւոր մարդ է: Ինքը Շըպանիկը ամենից աւելի էր զգում իւր արժանաւորութիւնը և միշտ աշխատում էր, որ ուրիշներին ևս հասկացնէ ալդ արժանաւորութիւնը: Նա ամենքի հետ անխտիր վարփում էր աներկիւդ, ոչ ոքից չէր վախենում, չէր ամաչում, ոչ ոքի առաջ չէր լրում: Իսկ եթէ պատահում էր որ վախենում էր, ամաչում էր կամ լրում էր, խորամանկութեամբ էր անում ալդ անշուշտ, ոչ առանց նպատակի:

Բայց շատերն էին վախենում Շըպանիկից, մանաւանդ այնպիսիները, որոնք տանը չափահաս օրիորդներ ունեին: Այդպիսիների աչքում Շըպանիկը, կարծես, մի տեսակ չաստուածուհի լինէր, որի գերենական ոյժը կարող էր իւր կամքի համեմատ ստորացնել կամ բարձրացնել քաղաքի աչքում իրանց աղջկերանց անունը: Եթէ Շըպանիկն ուղղում էր մի աղջկայ վարկը վալը գցել քաղաքում, նրա համար շատ գժուար չէր ալդ անելու, թէկուզ աղջիկը լինէր անմեղ, անարատ:

Ես նրան մին մատ արախութունան ամ ճընանջըմ, կապը կտրածն ա, որ թալը չըկալ: Սախկըզի պէս ա կրիչըմ մեծերի երեսին: Իրեսի մեռունը գեղաները լըպստալ անս:

Ահա ինչ խօսքերով էր Շըպանիկը մըոտում խեղճ օրիորդին: Դէհ, օրիորդի քարը ծովի յատակը գլորիկեց, էլ ոչ մի տղալ չի վստահանալ նրան մօտենալու, և օրիորդի ստիպված է երկար տարիներ ապրել իւր ծընողները մօտ կուսական կեանքով: Արա հակառակ, ե-

թէ Շըպանիկն ուզում էր մէկի վարկը բարձրացնել—
թէկուզ աղջիկը լինէր հաշմանդամ, տղեղ—նա ալնքան-
կըգովէր նրա գեղեցկութիւնը, «շիրուշնորքը», «բոլուբու-
սաթը», մինչև որ զօրով կըբանար նրա համար բախ-
տի դուռը: Մի խօսքով, Շըպանիկի լեզուն մեծ նշա-
նակութիւն ունէր քաղաքի աղջկերանց համար: Ա.հա-
ինչ պատճառով էին նրան այդքան պատվում ընտա-
նիքներում: Ա.հա ինչու, երբ նա մէկի դուներից ներս-
էր մտնում, տան տիկինը նախ և առաջ անհրաժեշտ
էր համարում նախազգուշացնել իւր աղջկերանց, որ
դրանք համեստ և զգոյշ վարվեն Շըպանիկի ներկայու-
թեամբ:

Ա.հա այդ կինն էր, որ եկաւ Սանամի մօտ: Սա-
նամը ձեռաց նրա համար պատրաստեց ձուաձեղ և ինքն-
էլ նստեց նրա հետ միասին ուտելու:

— Տղադ հինչ ա գիրիմ, — հարցնում էր Շըպան-
իկը, ձուաձեղի պատառներն ագահութեամբ կլանելով:

— Սադ սալամաթ է, ջանիդ դուա կանի:

— Հետ ա գեալու, նրան պսականք, ա ես նրա շիմ-
շադ բոլին մեռնամ:

— Պիտի գրող լինի, որ գալ, չ:

— Հինչի չես գիրիմ:

— Ի՞նչ երեսով գրեմ, սադ քաղաքը չորացել է, մի-
աղջիկ չի ճարվում երեխիս համար:

Սանամը հետաքրքրութեամբ նայեց Շըպանիկի ե-
րեսին, մի բաւականացուցիչ հտմբաւի սպասելով նրանից:

— Չի չորացալ, — պատասխանեց Շըպանիկը, յօն-
քերը գեր քաշելով և կրկին ցած զցելով:

Ե՛հ, — արտասանեց Սանամը, հառաչելով:

Շըպանիկը մի քանի պատառներ ևս կլանելով,
անձեռնոցիկով սըբեց բերանը ու յետ քաշվեց:

— Նորհ հակալութիւն:

— Անուշներ:

— Դէհ, շիւտ արա, սիւֆրան հաւաքիր, կողքիս-
նստիր, պան ունամ քեզ հետ,—ասաց Շըպանիկը հը-
րամալական եղանակով:

Սանամը իսկոյն հաւտքեց սեղանը, տարաւ միւս
սենեակ և կրկին վերադարձաւ ու նստեց Շըպանիկի
կողքին:

III

— Սա տեսնեմ ինչ բան է, խէր լինի,—ասաց
Սանամը, հետաքրքրութեամբ նայելով Շըպանիկի
երեսին:

Շըպանիկը մագերը երեսից հեռացրեց, գլուխը
քիչ ծուեց դէպի մէջքը և, ուղիղ Սանամի երեսին ժըս-
տալով, ասաց:

— Աղջիկը ճարվալ ա:

— Ղորթ ես ասում, Շըպանիկ, ով է, ում աղ-
ջիկն է, — հարցրեց Սանամը, ուրախութենից ուսերը վեր
քաշելով և իւր հաստ իրանը ծուելով դէպի Շըպանիկը:

— Դունիա գողալին, խաների-բագերի թոռնը, սադ
քաղաքի աչքը, ջին-ջափահիր, մարալի պէս գոկչակ,
խանըմ խաթուն, օվդար...

— Ո՞վ է, ով է:

— Մի խեղճ, անըմով, պատիւով հօրսւմօր աղջիկ:
Մին թառլան զուշ, մին գեօգալ, քիիի...ալ հինչ ասամ:

— Սիրտգ ճաքի, տրաքի, ալ Շըպանիկ: Ո՞վ է,
ումի աղջիկն է, անուն չունի:

— Բիւլբիւլ, բիւլբիւլ, բիւլբիւլ...

— Ո՞ւֆ, կրակ բռնես, կրակ բռնես, հերիք է, —
վերջապէս համբերութիւնից դուրս գալով, բզմւեց Սա-
նամը, աչ ձեռով խիելով Շըպանիկի ուսին:

— Ասամ, հարցրեց Շըպանիկը, խորամանկօրէն նայելով Սանամի երեսին:

— Ասա՞ ասա՞:

— Հինչ կըտաս:

— Ինչոք խոստացել եմ:

— Ալի նա՞:

— Ո՞վ:

— Նայալու, աբըռուլու, Գիւլնազի աղջիկ...

— Սուսանը, — ընդհատեց Սանամը:

— Հա, հանց Սուսանը:

— Նանաքներդ մի կողմը դիր, ողորմի հօրդ, Եհ, հանաքի ժամանակ չէ, Շըպանիկ, ասա, տեսնեմ, ով է գոված աղջիկդ:

— Նանաք չամ անըմ, մինիկ տղիդ արելը վկալ:

— Խելքդ տեղը չի, Շըպանիկ:

— Քալաֆիդ ճոնդը կորցուրալ ես, պան ամ ասըմ, դու հանց էշդ ես քշը: Իմ խելքս դլխըմս ա: Զիմ մացալ, չիմին հարց ու փորձ արի, սուտ, սուտ, լափ սուտ:

— Սուտս ո՞րն է, սաղ քաղաքն է խօսում:

— Բարըբադ իլի մեր քաղաքը, հինչպէս քի հանց քարըբադ ա իլիմ: Հախ միախ Տէրը քանդի դիւշմանի տունը, որ խեղճ աղջկան անըմը նահախտան կոտրալ ա:

— Ո՞վ է դուշմանը:

— Կուժ ծախողի տղան, ան մին վիժա բոյի տէր մեռածը: Սէլրանը, Սէլրանը, Սէլրանը: Ան դալուն տափին կպած Սէլրանն ա նահախ տեղան չով արալ սաղ քաղաքում, քի «Բարխուդարի աղջիկը իմ հարսնացուս ա, տթանց ա, անանց ա, ֆլտն ա, բէշմաքան ա»:

— Նահախս ո՞րն է, զորդ է: Սուսանը Սէլրանի հարսնացուն է: Ասում են մի մատ երեխերք են եղել, որ ծնողները նշանել են:

— Թէ, հէնց պանն ալ տա եա ալի: Հէնց Սէլրանի

ցաւը տա եա, քիի առաջ բէշիդքեարթմանա ան արալ, հիմի չան տատամ, պրծաւ քինաց:

— Պատճառն ինչ է, որ հիմայ չեն տալիս:

— Հինչ պիտի իլի: Սաբաբը նա եա, քի Հալրապետի տղան, ան մեռած Սէլրանը, հիմիկվանան, որ մին վիժա բոյ ունի, անքան շառլատանացալ ա, քի, որ — մեռալ ամ Արարիչ Ասսու բոյին — եա ինքի մինին կըսպանի, Սիբիր կեքինա, եա ալ իւրան կըսպանան: Բարխուդարը, Գիւլնազը դիժ ան, քի նրա պէս հէլվարին աղջիկ տամն: Օխտը քաչալ աղջիկս իլի, մինի մազը նրան չամ տալ ես, դու հինչ ես խօսըմ, չամ մանըմ իսկի:

— Զեմ իմանում, էլի խելքս բան չի կտրում:

— Հինչ խելքի պան ա, շատ պարզ, շատ աշկարանաղլ ա: Մուկուլ օրը քիշերվան կէսին մտալ ա շիրաչիխանա, անքան կոնծալ ա, որ ճանբալակուկուշ ա դառալ: Ետով ընկերների հետնան կոիւ ա արալ, գլոխ — մլոխը չախչախ ան արալ, հիմի տունումը ընկած աընքտընքըմ ա:

— Խեղճ տղալ, խեղճ հէր ու մէր:

— Խեղճ օձ կծի խեղճ տղին:

— Այ ախչի, այ ախչի, ինչպէս ես զմիշ անում, որ հօր ու մօր մինիկ տղի համար անէծք ես անում:

— Հմ, գիւլլախորով իլի նա, որ խեղճ աղջկան անըմը սաղ քաղաքի բերանն ա քիցալ: Նա եալ հինչ աղջկան, հինչ աղջկան, որ ասօրվան լիւսի պէս լիւս, երկնքի հարաշտակի պէս սուրբ ա:

— Ախար Հալրապետի տղան ինչ միտք ունի, որ նահախ տեղից Բարխուդարի աղջկան խալտառակ է անում: Զէ, Շըպանիկ, մէջ տեղ էլի մին փուտ կալ:

— Աղջիկն իսկի փուտ չունի: Ասըմ ես, Սէլրանը հինչ միտք ունի. միտքը նա եա իւրալ, քի որ անմեղ

աղջան անըմը չով անի քաղաքում, հինչ ա, քի մին դար-
նա տղակ ջուրիաթ չ'անի նրան ուզիլ, որ վերջը իւրան
վիզին մնալ: Իմացաթ: Առա էէ, հիմի անկոջիկ քամակը
թէ տեսնես, Սուսանին ալ կըտեսնես, առա էէ, առ էլ... .

Վերջին խօսքերն արտասանելու ժամանակ Նըպ-
պանիկը երկու ձեռների մատերը չոեց և ճանգ արաւ
գէպի դուրս, Սէլրանին վերաբերելով:

—Հիմայ թնչ անենք, Նըպպանիկ, ախար սուտ թէ
զորթ, էս ձայնը դուրս է եկել էն մարդու աղջկայ վրայ:
Ես էլ, դրուստն ասեմ, իսկի ինքս չեմ էլ հաւատում,
որ էն հօր ու մօր աղջիկը վատ-վատ բաներ անի, ին-
չու որ ախար նրան զնդանի մէջ են ալահում: Տանից
չեն դուրս բերում, որ Աստուծոյ լոյսն էլ է տեսնի,
ախար ինչպէս կարող էր Սէլրանի երեսը տեսներ Դու-
րուսան ասեմ, Նըպպանիկ, զորթ է ես նրանից ձեռ. եմ
վերցրել, բայց սիրու իսկի չի կտրվում: Գիշեր ու ցե-
րեկ նրա պատկերը հէնց աչքիս առաջ կանգնած է: Ա-
խար էն բոլ ու բուսաթը, էն զիր ու շնորքը, էն գե-
ղեցիութիւնը ո՞ր աղջիկն ունի:

—Խոկի հով, իսկի հով, մին դանա եա, թայը չը
կայ: Ես ալ հէնց անդիւր ամ ասըմ քի ցեքա սկաց
չը թողնանք ալի: Ախար ասի տեսնամ, անանց աղջիկ
հինչ տեղան ես կարող քիթանալ, հով ունի: —Իսկի
հով, իսկի հով: Սաղ քաղաքի աղջիկերանց ճընանըմամ,
մին.մին գընդըղալամ, ուզիւմ ես չիմին մին.մին մատերովա
համբըրամ: Առա, դա քեզ Նավալիկ թոռը —թամբալ,
ալբէժառ. դա քեզ Եղիանց Խանըմի աղջիկը —մէջքան
զաթված, կարճ, որ հէնց իմանաս հաջիւջ —մաջիւջնե-
րան իլի: Հաջիւջ —մաջիւջը նա եա, որ աշխարքի վեր-
չըմը սկիտի կեայ: Հա, դա քեզ Ագրիփաչանց Մամառի
աղջիկ Սապանը — հինչ ա, իսկի երեսին թիքիլի ալ չիւ
Ալ հոր մինը ասամ, առա, դա քեզ...

Նըպպանիկն երկար ժամանակ մի առ մի թւեց Շա-
մախու շափահաս աղջկերանց անունները առանձին ա-
ռանձին: Բանից դուրս եկաւ որ միակ բացառութիւնը
կազմում էր Սուսանը:

—Ալի, ալի Սուսանը, ալի Գիւլնազի աղջիկը: Քա-
ղաքը չորացալ ա, նրանց սվայ ուրիշը չըկալ ու չըկալ:
Ա' կնիկ, ցեքա պաց մի թողնիլ, —կնքեց Նըպպանիկը իւր
ատենաբանութիւնը, մի սպառնողական հալեացք ձգելով
Սանամի երեսին:

Ալդ հալեացքը նշանակում էր, թէ եթէ վերջինը
հրաժարվի Սուսանին իւր որդու համար ուզելուց, լե-
տոլ շատ ու շատ կ'ափսոսի:

Սանամը գլուխը թեքեց կրծքին և ընկաւ մտո-
ծողութեան մէջ: Նըպպանիկը լոեց և սկսեց աչքերի
տակով խորամանկութեամբ նայել նրա երեսին, կարծես,
կամենալով թափանցել նրա միտքը: Մի քանի ըոսէ շա-
րունակվեց ալդ լուսութիւնը: Վերջապէս, Սանամը գլուխը
բարձրացրեց, ծոեց գէպի աջ ուսը, ձեռները իրարու-
վրայ դարսեց և դրաւ կրծքին:

—Զէ, Նըպպանիկ, ինչքան ֆիքը եմ անում, էլի
տեսնում եմ, որ բանը գլուխ եկող չի, —ասաց նա խոր-
հրդաւոր կերպով:

—Ապեաթը, —հարցըց Նըպպանիկն իւր գէմքի վրայ
խաղացնելով մի կեղծ զարմացական ժայխտ:

—Ես ինքս, ինչպէս ասացի, չեմ հաւատում, որ
Գիւլնազի աղջիկն էս բաներն արած լինի Սէլրանի հետ:
Բայց...

—Հը՛ը:

—Դժուար է աղջկայ կոտորված անունը սաղաց-
նել: Հախ-նահախ՝ Սուսանը ընկել է քաղաքի աչքում,
ես թէ որ ուզեմ նրան, խալխը աչքս թքով կըհանի:
Դու գիտես, որ ազդականներ կան, բարեկամներ կան:

ԶԵ, Շըպանիկ, չեմ կարող ես էս վարսս նրանց ձեռից ազատել, -վերջացրեց Սանամը, աջ ձեռով առաջ քաշելով գիսակներից մինը և ցոյց տալով Շըպանիկին:

—Ես ալ կասամ — հինչ ես ասիլիւ: Աէլիդդ կըտրվի, ազդականներ, բարեկամներ, Փլան բէշմաքան: Քեան դիւկ-Մանանը չի բարեկամիդ մինը: Հըմ, ես նրա բարեկամ աչքը հանամ, հալլա: Մի ինջիմիշ իլիլ ինձանալ, Սանամ խանըմ, որ բարեկամիդ աթանց ուշունց ամ տամ, չունքի ես իմանըմ ամ — հով ա բարեկամդ, հով ա չարակամդ: Քեանդիւկ-Մանան, Թուխիկ-Մուխիկ, Փըլան-Փստան, դրանք չիմ, ա կնիկ, դիւշմաններդ ան, դիւշմաններդ: Տակադ բիշտի ան տամ, հայ մի ուզիլ Գիւնազի աղջկան, հայ բիաբուռ կիշես, աթանց, հայ անանց: Ականջներդ լաւ բացի, լաւ լիսի, նրանք չիմ քու փիսիդ ան ուզում, իրանց գլոխն ան քորըմ: Թուխիկը քեզ բիթիմ ա, որ չուզես Սուսանին, ամա ինքը տականջահթա անըմ, քի իւրան տղի հետի ուզիւ: Հըմ, հինչ կայ, զարմանում ես: Բաս, բաս, աթանց ան քու բարեկամներդ:

—Բաս ինչպէս կըկապեմ նրանց բերանը:

—Դա Շըպանիկի վրալ քիցիր, չիմ վիզիս դիր, չիմ: Տես ես հինչպէս կըկապեմ եա Քեանդիւկ-Մանանի, եա Թուխիկ-Մուխիկի, սաղ քաղաքի բերանը: Զիմի, չիմի ուելսը կրցեխամ, դու բանիդ կաց: Ինձ ճընանըմ ես քի, փառք Ասսու, Շամախին մին դազան ա, ես ալ շիրեփը, խառնի հա խառնի:

—Շըպանիկ, ես շատ եմ վախում, որ մեր իստակ անունը...

—Հիւնչըու ասօր Շըպանիկի ցեքով փիս բան չի եկալ, ումուդ ամ, որ օրաս դանն ալ չի կեալ: Սաշ ամ աղարթմիչ արալ աթանց բաներըմ, դիւ ինձ մին ցեքով ես փոնալ հինչ ա: Ալ չաթուն մի երկարաց-

նիլ, ես հինչ քի ասըմամ, ինձի լիսի, ետով թող մեղ-քը իմ վիզիս մնայ:

—Շըպանիկ, բաս Թուստամը:

—Հըմ:

—Կրտկի կտոր է, որ իմանալ, օօօ, թիքա-թիքա կ'անի մեզ:

—Ալ ես նրա կրտկի կտոր բոյին մեռնամ, հալլատ Ախչի, ախչի, նա հինչ ա մանըմ օխտը սարի ետըմը, քի իստեղ Սէլրանի պէս հէյվարաները հինչ ան խօսըմ իւրան հարսնացուի վրալ: Մին ալ, քի ախըր հանց ա-սըմանք, քի սաղ քաղաքն ա իմանըմ, սաղ քաղաքն ա իմանըմ: Հով ա ասըմ: Ես ասքան զուռ ամ կեամ, իս-կի մին տեղ չի լիսեցի Սուսանի անըմը: Մինիկ քեան-դիւկ-Մանանը, Թուխիկ-Մուխիկներըն ան խօսըմ, մին աէ մին քանի աղզիգեառները, ալ հով ա խօսըմ:

—Ես ինչ գիտեմ, ոչինչ չեմ հասկանում, ես թա-վաքալի կնիկ եմ: Շըպանիկ, գու քո Աստուածդ, իմա-ցիր, որ հոգի ունիս ահեղ դատասաանի առաջ տալու:

—Թող Շըպանիկի հոգին քառասուն հզար ստա-նաների փայ իլի, ագեամ նա քեզ մուխաննաթութիւն ա ուզում անի:

—Թող լինի:

—Հառուր հզար սաանի գլուխը կըճըճեխամ, չամ թողնիլ, քի ձեր մատին փուշ մանի: Դէհ, վերկաց մին քիչ մըրաբա քեր, որ բերանս քաղցրացունամ, ետով քինամ, բանը վերջացունամ:

—Ինչ ես վոազում, մի քիչ համբերի, որ Փիքը անեմ:

—Ալ Փիքը անիլի տեղը չի, քանի տաք-տաք ա, բանը վերջացրու քինա: Ես արագ, ասօր հարխուդա-րանց տունումն ամ իլալ, զսրթը ասամ, իսկի ինքը, Բարխուդարը, ուզի չէր իլիմ, որ տղիդ աղջիկ տալ:

Աղաջանք, պաղատանք արի, ախըրը մին թահար խափեցի:

—Ի՞նչ, աղաջել-պաղատելս ո՞րն է: Ասում է «փուստանիկին դրին խալիի վրայ, թուլ իլաւ»: Հիմա ես Բարխուդարի աղջիկն ուզեցի, մնաց նրա նազ անելը, այ երի հա:

—Երի հա չի, Սանտմ խանմ, մի նեղանալ, դէ Բարխուդարն ալ մարդ ա, ախըրը չի ասիլիւ, քի «ՀՇը, առա, վիզովդ ամ քիցիմ աղջկանս, տար»: Մին քիչ նազը-բազկանի ալի, բաս հինչ: Ամա դիւ արխալին իլիր. ես բանը քութահ ամ արալ: Դիւ հանց ասօր նշանի մատանիքը հազիր արա, մին ալ տղիդ գիր գրի, որ շուտով կեալ, ալ չը ետանայ: Գիրիր էէ, որ չը ետանայ, ասիր, «իրեսդ թոջած ա, եկ իստեղ վեր արա»: Ամա լաւ կանս, Սանտմ խանըմ, որ նա հինչ ա, ան զահրմարի անըմը, որ թելով քինեամ ա: Նա ալի, որ աս տարի ան շինալ:

Տեպէշ:

—Հա, հա, ան սատանի քեարխանան, որ ասըմ ան մին սահաթըմ համ խաբար ա տանըմ, համ թերըմ: Դէ լաւ, հինչպէս ուզում ես, անանց արա: Ամա հանց ասօր վերչացրու բանը հա: Դէհ, ախըրը ասացի, վեր կաց մըրաբա բեր, որ բոզազս քաղցրացունամ:

Ուժի:

Սանտմը բարձրացաւ տեղից, դնաց միւս սենեակ: Մի բանի բոպէից յետոյ նա վերադարձաւ բաժակակալը ձեռին, որի վրայ փոքրիկ տփսէներով գրած էին երկու տեսակ մուրաբաներ և մի բաժակ օղի:

—Աստոծ շաննօօր անի, գիւշմանի աշըրը քոռանալ, —բացականչեց Եղալանիկը, գատարկելով օղիի բաժակը և իրարու յետեից մի քանի գդալ մուրաբայ կուտալով:

—Ես ինչ գիտեմ, տայ Աստուած, որ վերջներս լինի, —արտասանեց Սանտմը, հառաչելով:

—Դէհ, հալալիգա, մնաս բարով: Ես վազ տամ Դիւլնազի գլխին, որ նըա հետնան ալ բանը քիւթահ անամ: Դիւ, հինչպէս ասեցի, Սանտմ խանըմ, մին կտոր գիր գիրիր, ան ստանի թելով խրկիր տղիդ, որ ալբա ու լղի ընկնի: Մնաս բարով:

Եղալանիկը շալը ձգեց գլխին և գուրս եկաւ:

Սանտմը մուրաբաները տարաւ միւս սենեակը, յետոյ եկաւ թախտի վրայ նստեց և մտածողութեան մէջ ընկաւ:

IV

Ալդ օրից ուղիղ հինգ շաբաթ էր անցել: Աշնանացին մի ուշ երեկոյ էր: Հոկտեմբերի յորդառատ անձրեներից կիսախարխուլ Նամախու լայն, բայց կեղտոտ փողոցներում գոյացել էին անտանելի ցեխ և բազմաթիւ մանը ճահիճներ: Եղանակը բաւական ցուրտ էր: Թանձըր մառախուղը, հասնելով մինչև երկրի մակերեսոյթը, քաղաքը պատել էր անթափանցելի խաւարով: Ամեն ինչ խաղաղ էր, բնակիչները վաղուց արդէն քնած էին: Փողոցներում աիրում էր մոայլ լոռութիւն, որ երբեմն ընդհատվում էր գիշերալին պահապանների քնաթաթախ ձայներով: Ալդ ժամանակ քաղաքի կենտրոնում գտնվող գինեաներից մէկում հաւաքված էր երիտասարդների մի խումբ: Սրանք, թւով մինչև ութ հոգի, մի կիսամաշ և կեղտոտ սեղանի շուրջը նստած «քէփէին անում», այսինքն արագ ու գինի էին խմում և խորոված ուտում: Տիրում էր մի այնպիսի խառնաշվոյթ և խացուցիչ աղմուկ, որ, կարծես, այսեղ մի ահագին ամբոխ կար: Մէկը, բուխարու գդակը բերանին պահած, 11

երգում էր ինչոր պարսկական երգ: Միւսը երկու ձեռներով խփում էր սեղանին և բերանով շւացնում, իբրև թէ երգեցողի հետ ներդաշնակութիւն պահելով: Երբորդը՝ կարմրած գէմքով, վառված աչքերով, գինով լի բաժակը ձեռին, ոտքի կանգնած, գոռում էր, ինչքան ձայնում ուժ կար, ինչոր «կենաց» առաջարկելով: Մի ուրիշը տաքացած վիճաբանում էր իւր մօտը նստած ընկերոջ հետ այնպիսի ձայնով, որ, կարծես, Խօսակիցը կէս վերսթ հեռու լինէր նստած:

Այս բոլոր խառնաշփոթ, անճոռնի և ալլանդակ ձայները միանալով ծխախոտի և խորովածի թանձը ծըխով և ըմպելիքների շոգով տոգորված խոնաւ մինուլորտի մէջ, անախորժ ազգեցութիւն էին անում մարդու վրայ: Իսկ միջահասակ, հաստափոր, աչքերը փիհ կոխած գինեվաճառը մի առանձին զօրութիւն էր տալիս այդ աղմուկին: Կեղտոտ գոդնոցը փորսվը կապած, նա գինետան մի անկունում խորովածի շամփուրները պտտեցնում էր ճզվըսդ կրակի վրայ և հաստ ու խոպտ ձայնով անդադար գուռում. Շփահ փահ, հինչ քեաբաբ, քէֆ արեցէք, մեռեալ ամ ես ձեզ պէս ջահիլների գամաղին, հափ-հափ, աղա, հուռուն: Եւ գինեվաճառի զօրեղ ձայնը սրբնթաց անցնելով գինետան կամարածեառաստղի տակով ճնշում էր միւս ձայները:

Այս ընդհանուր խառնաշփութեանը չէր մասնակցում միայն մի երիտասարդ: Նա արմունկները սեղանի մի անկիւնին լենած, գլուխը ձեռների ափերի մէջ դրած, անշարժ նստած էր: Գինետունը լուսաւորվում էր առաստաղից քարշ արած մի կանթեղով, որ ծածկված էր հարիւրաւոր շորացած ճանճերով: Կանթեղի դեղնագոյն լուսը, հազիւ հազ թափանցելով թանձը մթնոլորտը, երիտասարդի կռների արանքով ընկել էր նրա նիհար և դեղնած գէմքի վրայ: Նա աչքերը սեղա-

նին յառած՝ ինչոր մտածողութեան մէջ էր: Ընկերների աղմուկը, կարծես, նրա ականջներին չէր հասնում:

— Աղա, Ենգիբար, մի ստաքան գինի պարանիր ան նամարդի գլխին, հինչ ա մռափըմ, աս գիշեր՝ մերքէֆը նա հարամ տրաւ քիի, — գոռաց բեղերը ուրած մի երիտասարդ, դառնալով գէպի մի ուրիշը:

— Բացվիր, աղա, Սէլրան, բացվիր բահարվան վարդի պէս, իսկի Փիքիր մի անիլ, հարաս նրանք կըդան, մի քիչ կոնծիր, որ սիրտդ պնդանայ, — ասելով դարձաւ Ենգիբարը տխուր երիտասարդին և, բռնելով նրա գլխի մազերից, գլուխը վեր բարձրացրեց:

— Մի ստաքան գինի, մեծը, մեծը ածեցէք, տուեք Սէլրանին, ես, ինչպէս թամտա, հրամայում եմ, — շարունակեց սլած բեղերով երիտասարդը, ինքն ևս իւր բաժակը նորից լեցնելով:

Մի քանի վայրկեանում Սէլրանի առջև շարվեցին գինով լի մի քանի բաժակներ: Սէլրանը մտիկ տուաւ նրանց և գլուխը շուռ տուաւ:

— Խմիր, ասում եմ, թէ չէ գլխիդ ածել կըտամ, — հրամայեց թամտան:

— Չեմ ուզում, — մրմնջաց Սէլրանը, բաժակները իրանից հեռու դնելով:

— Ինչու:

— Սիրտս խառնում է, — պատասխանեց նա թոյլ ձայնով:

— Դարտկիր, ասում եմ, թէ չէ ձեռքիցս չես պըրծնիլ, հըմ:

Սէլրանը մի բաժակ գատարկեց:

— Աթանց, քամիր, ստաքանդ ալ թարս պարանիր, այ ջան: Դա իմ կենացս, գէ մինն էլ վեր կաւ, ասում եմ քեզ, կուժը գլխիդ եկաւ հատ:

Սէլրանը երկրորդ բաժակը դատարկեց:

—Հա, աթանց, այ զօչչաղ Աէլրան, տղամարդ ես,
տղամարդ, հափ հափ հուռառար

Սէլանը, բաժակները զգուանքով մի կողմ դնելով,
դարձեալ գլուխը թեքեց կըծքին:

Նրա կարմրած աչքերի արագութեամբ խաղացող
բիբերից, ծռմռվող շրթունքներից, կակազող լեզուից երե-
ւում էր, որ գլուխը խիստ տաքացած է: Պակաս չէին
հարբած և միւսները: Բայց դրանք դեռ մեծ հաճու-
թեամբ շարունակում էին բաժակները դատարկել, այն
ինչ Սէլրանը վերջին բաժակները խմեց այնպիսի տը-
հաճութեամբ, նա իւր դէմքն ալնպէս թթուացրեց, որ,
կարծես, քինաքինայ էր խմում:

Աղմուկը քանի գնում ալնքան զօրեղանում էր: Ա-
մենաշնչին պատճառներից սկսվում էին տաք վիճաբա-
նութիւններ: Թամագան անդադար կենացներ էր առա-
ջարկում և, միւսնոյն ժամանակ, աշխատում էր հանդըս-
տացնել վիճաբանողներին: Բայց ոչ ոք ուշագրութիւն
չէր դարձնում նրա վրայ, ամեն մէկը իւր ձախն էր
լսում և իւր համար խօսում:

Գինեաան դռները յանկարծ բացվեցին, և ներս մը-
տաւ մի բարձրահասակ երիտասարդ, որ բռնած էր աջ
ձեռում մի երկայն փայտ: Նա գլխին դրած էր ձմե-
րուկաձև, կարմրագոյն մորթեալ գդակ, որի ծայրերը
հասնում էին նրա փոքրիկ և խորամտնկ աչքերին:

—Նուտ արեցէք, ադա, —ներս մտաւ թէ չէ, դո-
չեց երիտասարը շնչասպառ ձախնով:

—Դուրս եկան, —հաբցըին գրեթէ միաբերան բո-
լոր հանդիսականները:

—Հա հա, փետներդ վեր առէք, —պատասխանեց
երիտասարդը, ձեռի փայտը անհամբերութեամբ դար-
ձելով գինետան լատակին:

Սի բոալէ տիրեց լոռութիւն: Ամենքը տարակուսու-
թեամբ նայում էին իրալու երեսին:

Սէլրանն արագութեամբ վեր թուաւ տեղից և, շուռ-
ու մուռ գալով, սրան ու նրան դիպէկով, դիմեց դէպի
դռները: Լրաբեր երիտասարդը վազեց դռների առաջ,
ձեռները աջ ու ձախ տարածեց և, կուրծքը դուրս ցցե-
լով, կտրեց նրա ճանապարհը:

—Կանգնի՞ր:

—Հեռու, —բացականչեց Սէլրանը, երկու ձեռներով
հրելով երիտասարդի կըծքին:

—Մի թալասմիշ իլիւ:

—Բաց թո՞ղ:

—Համբերիր, միասին գուրս կըգանք, —հակա-
ռակեց լրաբերը, իւր ուժեղ ձեռներով տեղն ու տեղը
պահելով գինու զօրութիւնից թուլացած Սէլրանին:

Սէլրանը շուռ եկաւ և մի հայեացք ձգեց իւր ըն-
կերտկիցների վրայ: Ոչ ոք չէր շարժվում իւր տեղից:
Լրաբերը կրկին փայտով զարկեց լատակին և գոռաց.

—Նիւտ արեցէք դէ ալի, թէ չէ տուն կըհասնան,
ետով ու բանը բանից անց կըկենայ:

Անցան մի քանի լուռ փալրկեաններ ևս: Վերջա-
պէս, թամագի դեր կատարող երիտասարդը բարձրացաւ
տեղից, վազեց գինետան դէպի մի անկիւնը, վերցրեց մի
երկայն փայտ և փափաղը սեղմեց գլխին: Յետոյ նա կանգ-
նեց գինետան մէջ տեղում և հանդիսաւոր եղանակով
արտասանեց հետեւեալ խօսքերը:

—Տղերք, դուք —ձեր նամուսը, զօչչաղ սկահեցէք
ձեզ, սրտներդ գալիք նման: Աալ էն նամարդի գլխին,
որը երեսը շուռ կըտալ նրանցից, հարաս ասում եմ,
փախչողի թափան —թիրիքը կըթափամ... տեսնում էք,
դըանով համ:

Ալս ասելով, նա չուխտի փեշը իւտ ծալեց, մէջքը

չուռտուաւ երիտասարդներին և ցոլց տուաւ գօտիից
քարշ արած խանչալը:

— Դէհ, վերցրէք փէտներդ, հայդա, — աւարտեց նս
իւր խօսքը և գոռալով գուրս վազեց:

Բարձրացաւ մի խառնաշխոթ աղմուկ: Ամենքը մի
մի փայտ խլեցին: Մի քանի ըոսէում խումբը, շուռ ու-
մուռ գալով, իրարու դիպէելով, գուրս թափուեց: Գի-
նետունը դատարկվեց:

Սէլրանն ամենից առաջ էր դուրս եկել:

V

Մառախուղը տւելի թանձրացել էր: Փողոցների ան-
կեւներում ցցված լաստերների լոյսը, հազիւ հազ թա-
փանցելով գիշերային խաւարը, սփռվել էր ցեխոտ ճա-
հիճների վրայ և վալլեցնում էր նրանց կեղտոտ մա-
կերեսոյթը:

Քաղաքի կենտրոնում գտնվող «Հին ժամ» անուան-
ված եկեղեցուց քիչ հեռու, փողոցի ծայրում երևեցաւ
մի զօրեղ լոյս, լսվեցին զուռնալի և նազարալի (թըմ-
բուկ) խլացուցիչ ձախներ: Այս լոյսի և երաժշտութեան
հետ միասին գիմում էր առաջ կանանց, տղամարդկանց
և մանուկների մի բաւական մեծ խումբ: Ժամանակ-ժա-
մանակ զուռնալի ձախնը խլանում էր բարձրաձալն կրկըն-
վող ուրախ բացականչումներով, շոցներով և ծափահա-
րութիւնով: Խումբը ընթանում էր առաջ ծանը և հան-
դիսաւոր քալլերով:

Սիս — Սուսանի հարսանիքի հանդէսն էր: Նորա-
հարսը ստից ցգլուխ վաթաթված էր մետաքսեալ խալ-
տաճամուկ չարշավի մէջ: Նրա երեսն ամբողջապէս ծածկ-
ված էր թանձր քօղով, ասիական սովորութեան համե-
մատ: Մօտ քսան ուհինգ տարեկան մի միջահասակ ե-
րիտասարդ գալիս էր նրա ձախ կողմով: Նա հազնված

էր ոչ եւրոպական և ոչ ասիական եղանակով կամ պարզ
ասած, նրա իրանն ասիացի էր, իսկ ոտերն ու գլուխը-
եւրոպացի: Մոխրագոյն աթլասեալ նորակար արխալուղ,
ոսկեալ բարակ գօտի, նուրբ սևագոյն մահուդից կարած
վենցերկա, մեծ ֆուրաշկա, նեղ անդրավարտիկ և
ճռճռող կօշիկներ — ահա նրա հագուստը: Նրա լախ
թիկունքից, բարձր և բաւական դուրս ցցված կրծ-
քից, հաստոսկոր երեսից, սուր այտերից, ամուր բազուկ-
ներից երեսում էր Փիզիքական ոյժ և առողջու-
թիւն: Իսկ արեգակի տաքութիւնից նրա ալրված
թուխ գէմքը, հաստ և քիչ տափակ քիմքը, խորը
խորշերի մէջ թագնված մեխակագոյն բոլորակ աչքերը
և խոշոր սև յօնքերը մի քիչ անախորժ և օտար-
ոտի տպաւորութիւն էին անում մարդու վրայ: Երիտա-
սարդի երեսը մտքուր սափրած էր, նորաբոյս, բարակ,
սևագոյն բեղերը ինամքով սրած: Առհասարակ տխուր,
ինքնասիրութեան զգացմունքներին ենթարկված մար-
դուր բաւական տգեղ մի կերպարանք էր:

Սա Սանամի որդի Ռուստամն էր, Սուսանի նշա-
նածը:

Երկար չենք պատմիլ, թէ ինչպէս գլուխ եկաւ
Սուսանի և Ռուստամի նշանվելը և, վերջապէս, հարսա-
նիքը: Միայն ալսքանը հարկաւոր է ասել, որ այս բա-
նում գլխաւոր դեր կատարողը դարձեալ «գարանգիզի»
Շըպալանիկն էր:

Կիսով չափ համոզելով Սանամին, որ սա իւր ո՞ր-
դու համար Սուսանին ուզի, Շըպալանիկը հէնց նոյն օրից
սկսեց գործ դնել բոլոր իւր հնարները, որպէս զի բանն
անյապազ վերջացնէ: Նախ և առաջ նա գնաց Սանա-
մի ազգականների և բարեկամների, «Թուխիկ-Մուխիկի»
մօա, որ ամենքի առաջ Սուսանին արդարացնի: Թէն
Բարխուդարը նրան չէր խնդրել, որ ալդքան աշխատի

իւր աղջկայ մասին և միայն կիսաբերան մի թեթև ակ-
նարկութիւն էր արել, սակայն այսքանն էլ հերիք էր
Նըպալանիկին։ Նա շատ էր լսել, ինքն էլ անձամբ փոքր
ինչ ծանօթ էր Բարխուդարի բնաւորութեանը և գիտէր
թէ ինչ նշանակութիւն ունի մի թեթև ակնարկու-
թիւն Բարխուդարի սկզբ «շամբալութ մարդու» կողմից։
Այս պատճառով Նըպալանիկը հանգստութիւն չունէր,
ամբողջ երեք շաբաթ ալստեղ ու այնտեղ, որա ու նրա
մօտ վագեց, գործ գրաւ բոլոր իւր խորամանկութիւնը,
սպառեց բոլոր հնարադիտութիւնը, լեզուի քոլոր ոյժը
մինչև որ բանը լաջողեցըց։

Բայց այստեղ սկիտի աւելացրած, որ մի քանի կողմ-
նակի հանգամանքներ ևս քիչ չընպատեցին Նըպալա-
նիկին։ Բանն այն է, որ այդ ժամանակները Նամախի
եկել էր մի օտարաքաղաքացի երիտասարդ վաճառական։
Յալտնի չէր ինչպէս, Նըպալանիկի գլուխը մտել էր, որ
իրը այդ երիտասարդը եկել է «Նամախու գեօղալներան
մինին ղափմիշ» անելու, այսինքն սլակվելու նպատակով
և պտրում է մի գեղեցիկ ու խելօք տղջիկ։ Այս պատ-
ճառով Նըպալանիկը մի օր ձեռները հինայով ներկեց, մա-
զերը կարգին սանրեց, երեսը Դաղանի սապոնսկ լուացաւ,
սնդուկից դուրս հանեց նոր շալը, ձգեց գլխին ու, հայ-
դա, երիտասարդի մօտ։

Նա ծանօթացաւ վերջինի հետ, մի քանի բաժակ չայ
խմեց նրա մօտ, զննեց, քննեց, հարց ու փորձ արաւ
նրան թէ ով է, ինչ տեղացի է, ինչ գործի է, որքան
կարողութիւն ունի և ալլն։ Բանից երևեցաւ, որ երի-
տասարդը գանձակեցի է, պարապում է մետաքսի առե-
տուրով և բաւական կարողութիւն ունի։ Թէ նա Նա-
մախի է եկել առեւրական գործերով և ոչ թէ պստկ-
վելու, թէ ինքն արդէն պստկած է և երբէք մը
տագրութիւն չէ ունեցել երկրորդ կին ունենալու,

«չունքի առաջին կնիկը կռեվ կանի, համ էլ, դէհ, հայ
քրիստոնիակի օրէնքով մի մարդ երկու կնիկ չի կարող
պահիլ» և այլ և ալլն։

Տեղականալով այս բոլոր մանրամասնութիւներին,
Նըպալանիկը քիթը քարշ արած, «քեօռու փէշման» դուրս
եկաւ երիտասարդի մօտից, բայց առ ժամանակ վճռեց
ոչ մի մարդու չըլալտնել, թէ ինքը սխալված է եղել։
Նա նպատակ ունէր։ Անմիջապէս Նըպալանիկը վազեց
Սանամի գլխին և սուտ-սուտ, շունչը փորը գցելով, հա-
զորդեց նրան։ —Ա. կնիկ, հանց աս սահաթին ան գեն-
ջեցի մօտան ամ գամ։ Փող, գեօվլաթ, սելի պէս։
Ինքն ալ մի գեօգալ ա, մին գեօգալ ա, մին բոլ բու-
սաթ ունի, քիթի, որ գիւ ալ, պառաւ տեղովդ, տեսնես
—քէֆդ կըգալ, կըսիրահարվես։ Ինձի թափշուր արաւ,
որ մին լաւ աղջիկ ճարամ նրա հետի։ Յիթսուն
դանա ջըրնգալի նիկօլայներ խոստացաւ ինձ։ Ես
նրա մօտ Գիւլնազի աղջկան թարիֆ արի, խեղճ գեղի
բերանը բաց մնաց, ասեց. «Հանց նա ինքն ա իմ ուզած
աղջիկը»։ Հիմի, ա կնիկ, ալ ինձ խոստացնել չի լիլ, ասիր,
տեսնամ, ագեամ ուզում ես տղիդ հետի Սուսանին — ու-
զիր, ագամ չես ուզում — ալ ան մարդի աղջկան բան-
գուվանի մի քիցիլ, թող քինամ ան տղի հետի քիւթահ
անամ բանը քինա։

Սանամը Նըպալանիկի խօսքերին հաւատաց և մի
օր ժամանակ խնդրեց, որ մտածի։ Միւս օրը Նըպալա-
նիկը կրկին ներկալացաւ նրան, և այս ամգամ Սանամը
վճռողաբար ասաց, որ ցանկանում է Սուսանին ուզել։
Նըպալանիկը ոտք ու ձեռք ընկաւ, երկու օրում նշան-
դրէքը գլուխ բերաւ։ Սանամը հեռագել տուաւ, Ռուս-
տամը երկու շաբաթից լետոյ հասաւ Նամախի, և ահա
արդէն նրա հարսանիքն այդ գիշեր կատարվում էր։

Սուսանի միւս կողմով գալիս էր կնքահարը - Ռուս-

տամի վաճառական ընկերներից մէկը: Իսկ Ոուստամի կողքով գալիս էր Սմբատը, իբրև հարսեղբայր: Սրանց յետեից գալիս էին հանդիսականները, որոնց մէջ ամենից առաջ երեսում էին Գիւլնազը և Սունանի ընկերուհի Սուսամբարը:

Սուսամբարը Սուսանի համար ուղեցուցի գեր էր կատարում, որովհետև վերջինի երեսը ծածկած էր թանձր քողով. նա ոչինչ չէր տեսնում կամ հազիւ կարողանում էր նշանաբեր: «Աղջի, գլուխդ այս կողմ սլահիր, ախչի, կոներդ ծոփր, մէջքդ դրստիր, ախչի, չարշովդ հաւաքիր», — քչիչում էր անդադար Սուսամբարը: Սուսանը հլու հնագանդութեամբ կատարում էր նրա բոլոր պատուէրները:

Սուսամբարը նորապսակի պարտականութիւնները անդիր գիտէր, որովհետև գեռ մի ամիս չըկար, որ ինքն անցել էր այդ քուրայով: Թէ ով էր Սուսամբարի նշանածը և ինչպէս էր պատահէլ, որ նա պսակվել էր — այս մասին մանրամասն տեղեկութիւններ լայտնի չէին: Միայն մի առաւօտ Սուսանը լսեց իւր մօրից, որ վերջապէս Սուսամբարին նշանել են և երկու օրից յետոյ պատկերու են մի օտարաքաղաքացի մարդու վրայ: Անչափ ուրախացաւ Սուսանը իւր ընկերուհու այդ անսպասելի բաղդաւորութեան վրայ, բայց նոյնը չէր կարելի ասել Սուսամբարի վերաբերութեամբ: Երբ Սուսանը շտապեց շնորհաւորելու Սուսամբարին — վերջինը, կըծքից մի խորը հառաջանք արձակելով, պատասխանեց. — «Բնչ պսակվել է, չըգիտեմ, ծնողներս կոնիցս բռնել են ու տնտէր շորի պէս շպրտում են մի անծանօթ ու անյալա տղի շնորհին»: Այսպէս թէ այնպէս, Սուսամբարը նորահարս էր:

Հանդէսը ծռվեց գէպի այն փողոցը, ուր գտնվում էր Ոուստամի տունը: Խացուցիչ գուռնան անընդհատ

փչում էր: «Նաղարաչին» երկու բարակ, տաշած, սրածալը փալտերով անդադար խփում էր կոնատակին բըռ: Նած նաղարաչի չորացած կաշիին, թնդացնելով մառախուղը: Յանկարծ հանդիսականների յետեից լսվեց մի ինչոր գոռոց և միւնոյն վալրկեանին ուումբի չափ մի քար թռաւ հանդիսի մէջ տեղը: Քարը դիսլաւ ջահ պահողի թեկին, որի ձեռից ջահն իսկուն ընկաւ և հանդաւ:

Այդ անսպասելի գէպը խառնաշփոթութիւն գցեց հանդիսականների մէջ: Սկսվեց իրարանցում: Կանայք բարձրացըն ճիչ ու գոռոց, տղամարդիկ շուարվեցին և չգիտէին ինչ անեն: Անթափանցելի խաւարի մէջ իրարու չըտեսնելով, ոչ ոք չէր հասկանում ինչ է կատարվում: Ամեն մէկը վախենալով մի որ է յանկարծահաս վտանգից, պաշտպանողական դիրք էր բռնել: Այս ընդհանուր խառնաշփոթութեան մէջ մանաւանդ շփոթվել էին նորապսակները, մէկ էլ Սմբատը, Սուսամբարը և Գիւլնազը:

Ազմուկը շարունակվում էր, լսվում էին սպառնալից խօսքեր, անվանել լիշոցներ, և ոչ ոք չըգիտէր ով է հայհողը և ում գէմ: Միայն այս անհասկանալի խառնաշփոթութեան մէջ որոշվում էր մի երիտասարդի ձախն, որ կակազող լեզուով անկատ լիշոցներ էր տալիս:

— Ջահը վառեցէք, — բացականչեց լանկարծ Ոուստամը իւր սուր, զօրեղ և անլողողդ ձախնով:

Ջահ պահողը մի կողմում ընկած, տնքտնքում էր: Հանդիսականներից մէկը իսկոյն մի լուցկի վառեց: Սև նաւթի մէջ թաթախված ցնցոտիները մի վալրկեանում բոցափառվելով, լուսաւորեցին խառնաշփոթութեան ասպարէզը պղնձագոյն և ծխախառն լուսով: Գիւլնազը, Սուսամբարը և Սմբատը չէին հեռացել նորապսակներից: Առաջին երկուսը Սուսանին կպած, կարծես, պատ-

բաստվել էին իրանց մարմնով պաշտպանել նրան, եթէ
մի վտանդ հասնելու լինէր:

—Ինչո՞ւ էք փախչում, էյ, էյ, կանգնեցէք, այ
նամարդներ, էյ փախկուներ, — գոռում էր մի մարդ
հանդիսականների լեռեռում դէպի փողոցի միւս կողմը,
որտեղից լսում էր մի խումբ փախչող մարդկանց ու-
նաձալնը:

Յետոյ գոռացողը երեսը շուռ տուաւ դէպի հան-
դիսականները և սկսեց գարձեալ լիշոցներ տալ: Այս ան-
դամ նրա լիշոցները որոշվում էին: Նա հայհոյում էր
նորապսակներին, մանաւանդ Ոուստամին, որին ուղ-
դում էր տասնեակ անվալել ու կեղտոտ խօսքեր:
Հայհոյողը մի երիտասարդ էր: Զահի լուսոյ ճառագայթ-
ները լուսաւորեցին նրան: Նրա գէմքը գունաթափ էր:
ինչպէս մեռելալին կերպարանք: Հագուստը ոտից
ցգլուխ շաղախփած էր ցեխով, մազերը ցիր ու ցան ե-
ղած, աչքերը վառված: Աջ ձեռին պահած էր մի եր-
կալն փալու, իսկ ձախ թեկի վրայ փաթաթած էր չեր-
քեզկան: Նա կամենում էր առաջ շամփել, բայց չէր
կարողանում, ոտերը չէին հնազանդվում նրա կամքին:
Նա սաստիկ հարբած էր, այնպէս որ կանգնած տեղը
ամբողջ մարմնով տատանվում էր, ինչպէս մի լարա-
խաղ պարանի վրար:

— Ոչինչ չըկայ, զուռնան փչեցէք, առաջ գնանք,
— խօսեց բարձր ձախով Սմբատը և ինքը շտապով վա-
զեց դէպի լիշոցներ տուող երիտասարդը: Նա խլեց վեր-
ջինի ձեռից փալուը բռնեց նրա թեկի և հեռացրեց
հանդիսականներից:

— Այդ ի՞նչ պատահեց, ո՞վ էր այն տղան, ի՞նչ էր
ուզում, հարցնում էր անգադար Ոուստամը շրջապա-
տողներին: Սակայն ոչ ոք նրան մի որոշ պատասխան
չէր տալիս:

— Է՞հ, դատարկ բան է, գիշերուայ շառլատաններից
մէկն էր,— պատասխանեցին նրան:

— Բայց ո՞վ էր, կարելի է ես ճանաչում եմ, անունը:

— Թուրք էր,— պատասխանեցին նրան, աշխատելով
անլայտութեան մէջ պահել երիտասարդի անունը:

— Այս, Տէր Աստուած, այդ ինչ կրակ էր, ես ճա-
նաչեցի. նա ինքն էր,— քչփչաց Սուսամբարը Սուսանի
ականջին:

— Ո՞վ էր, — հարցրեց նորահարսը հազիւ լսելի ձայ-
նով:

— Սէլրանը:

— Սէլրան,— կրկնեց Սուսանը թուլ ձախով և ուշա-
թափկեց:

— Սուսան, Սուսան, ուշքի եկ, բացականչեց Գիւլ-
նազը, գրկելով իւր աղջկան: — Ա՛յ ջամահաթ, բալս
վախեցաւ, բալս ձեռքից դուրս եկաւ, օգնեցէք:

Այդ նոր, անսպասելի դիպուածը հանդիսականներին
բոլորովին շփոթացրեց ալս անգամ: Զուռնալի ձախու-
կրկին ընդհատվեց, և ամենքը մօտեցան՝ նորապսակնե-
րին օգնելու:

— Զուր, ջուր բերէք՝ երեսին սրսկելու, — գոռում
էր Ոուստամը մի ձեռով իւր ամուսնուն գրկած, միւս
ձեռը դէպի հանդիսականները մեկնելով:

Այն գինեառւնը, ուր մի փոքր առաջ Սէլրանն իւր
ընկերակիցների հետ հարբել էր, դեռ ևս փակ չէր:
Սմբատը, հեռուից նկատելով ճրագի լուսը, վազեց ան-
միջապէս ալնաեղ, որ ջուր բերի:

Սուսանի երեսից քողը քաշեցին: Զահի լոյսը լու-
սաւորեց նրա գունաթափված գէմքը, որի վրայ կեն-
դանութեան նշուլ չէր մնացել: Անցան առաջին վայր-
կեանները, և Սուսանը յանկարծ աչքերը բաց արտւ: Նրա
գողդոջուն շրթունքներից դուրս թուաւ մի խօսք և

այնուհետև կրկին նա ուշաթափվեց։ Հանդիսականներից ոչ ոք չըլսեց այդ խօսքը, թէպէտև որոշ կերպով հասաւ այն Գիւլնազի և Սուսամբարի ականջներին։ Այդ — Սէլրտնի անունն էր։ Ուստամբը ևս լսեց այն, լսեց և Գիւլնազի ու Սուսամբարի վրայ տարտկուսական մի խօրը հայեցք ձգեց։ Այս հայեցքով նա, կարծես, զարմացած հարցնում էր, արդեօք, ինչ է նշանակում այդ անունը Սուսանի շրթունքներում։ Գիւլնազի և Սուսամբարի վրայ այդ խօրհրդաւոր հայեցքը մի սառսուռազդեց, և նրանք միաժամանակ գլուխները կրծքերին թեքեցին, իրանց դէմքերը Ուստամի սրատես աչքերից թաքցնելու համար։

VI

Մինչդեռ խուարի մէջ տեղի ունէր այդ տեսարանը, գինետնում, ուր վազեց Սմբատը ջուր խնդրելու, կատարվում էր մի ուրիշը իւր արշաւանքի անաշող հետեանքից յուսահատված, Սէլրանը կրկին վերադարձաւ այնտեղ։ Գիշերուայ կիսին նա ուրիշ ապաստանարան չըգտնելով, ժախանձաքով խնդրեց, աղաչեց գինեվաճառին, որ սա թոյլ տալ իրան՝ գինետանը գիշերելու։

Թուլացած մարմնով, վշտացած հողով և փշրված սրտով, Սէլրանը քաշվել էր մի անկիւն և այնտեղ, մի կտոր կեղտոտ շօրի պէս շնթռված, մտածում էր։ Ի՞նչ էր մտածում նա։ — Ոչինչ։ Լճակելիքների շոգու մէջ խաշված ուղեղն ինչ կարող էր գործել այդ ժամանակ մի պատանու գլխում։ Այն տեսարանը, որ մի քանի ըստէ առաջ կատարվեց փողոցում և որտեղ ինքը կատարում էր ամենագլխաւոր դերը, այժմ նրան երազ էր թւում։ Նա չէր կարողանում պարզ հասկանալ կամ երևակալել, ինչ էր պատահել և ինչու համար ինքը

կրկին գինետանն է գտնվում այժմ։ Ընկերների խաբեթայութիւնը և անազնւութեամբ դաւաճանելով փախչելը, այն անվայել և փողոցային կեղտոտ լիշոցները, որ ինքն ուղղեց նորապատկներին, Ուստամի յաղթութիւնը, Սուսանի գլուխը խոնարհած իւր ճակատագրին հազարդվելը — այս բոլորը, իրարու խառնվելով, մի անհնազանդվելը — այս բոլորը, իրարու խառնվելով, մի անհազանցելի քառու էին գոյացնում անսրգված և ստորացած պատանու գլխում։ Նա ճնշված, յաղթված, ոչընշացած ալդ մտքերի ծանրութեան տակ, թաւալվել էր և ոյժ չունէր իւր տեղից շարժվելու, ինչպէս իւր շուրջը ընկած դատարկ գինետկերից մէկը։

Այդ դրութեան մէջ էր Սէլրանը, երբ գինետան գոները բացիցին, ներս թռաւ Սմբատը։ Սէլրանը, մի նսր ձայն լսելով, դժուարութեամբ բարձրացրեց աչքերի ծանրացած կոպերը, որ տեսնի ներս մտնողը ով է։

Սմբատը թախանձանքով խնդրեց գինեվաճառին մի փոքր ջուր։ Գինեվաճառը շտապեց կատարելու նրա խնդիրը։ Երբ Սէլրանի հայեցքն ընկաւ Սմբատի երեխին, կարծես, ելեքտրական թելի ծայր կպաւ նրա մարմնին։ Մի վայրկեանում նա ոյժի գալով, բարձրացաւ տեղից։ Սմբատն ևս իւր կողմից նկատեց նրան։ Մի ցաւ տեղից։ Սմբատն ևս իւր կողմից նկատեց նրան։ Եքանի վայրկեան երկու նախկին ընկերները իրարու երեսին մտիկ արին, ամեն մէկը, կարծես, սպասելով ինչ պիտի ասէ միւսը։

— Եէլ... շշուռն... զ... — սկսեց Սէլրանը, բայց չը կարողանալով արտասս նել ուզած խօսքերը, գլուխը կրծքին թեքեց և բերանից գուրս թափեց գինու փըրփուրը։

Սմբատի դէմքով սահեց մի ժպիտ, որ արտայատում էր կէս զզուանք և կէս խղճահարութիւն դէպի իւր ընկած ընկերը։

— Ադէա գըգըլուխդ կըփշեմ, — դարձեալ թոթու-

վեց հարբած Սէլրանը և, աջ ձեռի բռունցքը սեղմելով, կամեցաւ առաջ շաժվել, բայց չըկարողացաւ:

Սմբատն այս շարժումից հասկացաւ նրա միտքը: Սակայն ինքը տեղից անգամ չըշարժվեց: Սէլրանը: Կրկին մի քանի վայրկեան թոթովից, և այս անգամ նրան յաջողվեց արտասանել մի ինչոր անվայել խօսք: Սմբատը պարզ լսեց նրա բերանից թռած այդ անվայել և կեղտոտ խօսքը, որ սաստիկ վիրաւորական էր նրա համար: Մի վայրկեանում նրա ականջները կարմրեցին, սլորշները սպրոնելով սկսեցին ցնցողաբար դողալ: Նա մի կողմ դնելով գինեվաճառից ստացած ջրով լի կուլան, սեղմեց իւր բռունցքները և, կարծես, սկատրաստվում էր յարձակվել Սէլրանի վրայ: Գինեվաճառը զարմացաւ: Նա մի քանի վայրկեան, բերանը բացած և կարմրած աչքերը չոած, նայում էր մերժ Սէլրանի մերժ: Սմբատի դէմքին, իբրև թէ ձգտելով երկու պատանիների այդ տարօրինակ գաղտնիքը թափանցելու, որ ամենենին նրա խելքին մօտ բան չէր: Սէլրանը մի ձեռը սեղանին լենած, միւսը ամուր սեղմած (ի հարկէ, այնչափ ամուր, որչափ ոլժ էր մնացել նրա կոնում), իսկ աչքերը Սմբատի կծքին յաւած, անդադար տատանվում էր, երբեմն արտասանելով ինչոր անհասկանալի խօսքեր:

— Ամաչիր, ամաչիր, Սէլրան, տես ինչ օրն ես ընկել քո լիմարութենով! — խօսեց, վերջապէս, Սմբատը և նոյն վայրկեանին մտաբերելով իւր քրոջ գրութիւնը, վերցրեց ջրի կուլան, երեսը շուռ տուաւ, որ դուրս գնալ:

Սէլրանը մի քանի քալլ հետեւց նրան և կրկին կանգ առնելով գոռաց բարձր ձախով, որքան ոլժ ունէր.

— Կտնգնիր... ես չեմ ուղում...

Սմբատը կանգնեց և յետ նալեց:

— Հա, չեմ ուղում կեղտոտ շորը, չեմ ուղում լըպստած պատառը, տարէք ու շների առաջը գցէք, — արտասանեց Սէլրանը այս անգամ բաւական պարզ:

— Երդգում եմ, Սէլրան, այս գիշերուայ սուրբ պըսակով, որ ոտերիս տակ քեզ շանսատակ կանեմ, եթէ ալդ աղտոտ լեզուդ փորդ չես քաշի, — պատասխանեց Սմբատը, տտամները կրծտելով և նորաբոյս բեղերը կրծտելով, որ զսպի իւր կատաղութիւնը:

— Սուրբ... սուրբ, հմ, չէ կեղտոտ, ինչպէս, այտենս, ըմպօղը...

Սէլրանը բերանը բաց արաւ և դուրս թափեց մի բուռը թթուած գինի խորովածի անմարս կտորների հետ:

Այս անգամ Սմբատի համբերութիւնը սպառվեց: Նա ջրի կուլան կրկին սեղանի վրայ դրաւ, յարձակվեց Սէլրանի վրայ, բռնեց նրա կոկորդից և սկսեց խեղդել:

Գինեվաճառը զգաւելով մէջ ընկաւ, որ նրանց բաժանի: Սէլրանը Սմբատի ճանկերում նմանում էր քաղցած կատուի թաթերում ընկած մի չնչին մկան: Նա շնչասպառ, մէջքից ծովեց և թուլացած երկու ձեռներով քարշ ընկաւ Սմբատի մազերից:

— Յետ լզիր թքածդ, ասա — մեղայ Աստուծու, թէ չէ, Քրիստոսը վկայ, հոգիդ այս բոպէին սատանաներին կըշալրտեմ, — գոռում էր Սմբատը, մատներով Սէլրանի վիզը շղթայած և անդադար թափահարելով նրա գլուխը:

Սէլրանում խօսելու ոլժ չէր մնացել: Նրա լեզուն գուրս էր ընկել, կարմրած աչքերը չովկել էին, կարծես, քիչ էր մնում, որ դուրս պըծնէին:

— Այ աղբէր, դա ինչ կրակ էր, որի մէշը գըցեցիք ինձ: Զեռ քաշիր, Աստուծած սիրես, ինչ ես սպանում խեղճ տղին, — բացականչում էր գինեվաճառը, աշխատելով Սմբատի ձեռները հեռացնել Սէլրանի կոկորդից:

— Բաց եմ թողնում, գնա, ազատում եմ, առանց

ալդ ևու փչացել ես, թող զուր ձեռներս չըկեղտուտեմ, — ասաց Սմբատը և, բայց թողնելով Սէլրանին, երկու ձեռներով հրեց նրա կրծքին:

Սէլրանը յետ ու յետ գնալով թաւալվեց պատիտակ, ինչպէս ուժեղ ձեռից արձակված մի բրդեալ գընդակ: Նա կրկին՝ կամեցաւ բարձրանալ, բայց այս անգամ Սմբատն ուշադրութիւն չըդարձրաւ նրա վրայ և, ջրի կուլան վեցնելով, շատալով դուրս գնաց:

VII

Մինչև Սմբատի հասնելը Սուստանին արդէն ուշքի էին բերել: Զուռնանը կրկին սկսեց փչել, և հանդէսը առաջուայ կարգով շարժվեց առաջ: Քառորդ ժամից յետով հասան Ոուստամի տուն և ծանր քայլերօվ մտան բագր: Այսուղ նորապսակների դէմ դուրս թափվեց կանանց և տղամարդկանց մի ուրիշ խումբ, որի գլխին կանգնած էր Սանամը մետաքսեալ հազստում դուզված ու զարդարված:

Սանամի դէմքի վրայ խաղում էր մի զուարթ ժըպիտ: Նրա՝ երիտասարդական կենդանութիւնից վազուց զրկված՝ աչքերը փայլում էին ներքին բաւտկանութեամբ: Յիբաւի, Սանամի ուրախութեան թնչ չափ պիտի լինէր, քանի որ այդ գիշեր նրա իղձը կատարվում էր արդէն և, վերջապէս, նրա միակ ու սիրելի որդին պսակվում էր: Նրա մայրական զգայուն սիրտը զարկում էր միայն և միայն իւր որդու բախտաւորութենով: Եթէ կար մի ուրիշ անձնաւորութիւն, որ թէև ուրիշ զգացմունքներից դրդված, բայց նոյնչափ ալդ գիշեր ուրախ էր, որչափ Սանամը — ալդ Նըպանիկն էր: Այս անգամ նա ձեռները մինչեւ բազուկները և գլխի կարճիկ մազերը ներկել էր հինայով մի առանձին:

թեամբ: Երբ հարսանիքի հանդէսը ներս մտաւ, Նըպանիկը իսկոյն դուրս ընկաւ նորապսակների գէմ և, երկայն բազուկները վեր քաշելով, սկսեց պարել զուսնալի եղանակով:

— Աստոծ շաննօօր անի, այ օղուլ, Նըպանիկը չինար բոլիգ մատազ, — բացականչեց նա, ընկնելով Ոուստամի վզովը և մի քանի անգամ համբուրելով նրա ճակատն ու թշերը:

Ցետով, բաժանվելով Ոուստամից, շարունակեց պարելը:

— Ղայթաղի ածեցէք, ադա, — հրամայեց նա զուսնաչիներին և, կոնատակից հանձելով մի փոքրիկ բաժակակալ, պահեց իւր գլխից վեր, պարը շարունակելով:

Սանամը ծոցից քսակը հանեց և մի բուռն արծաթագրամ թափեց բաժակակալի մէջ: Չորս կողմերից հանդիսականները հետևեցին նրան, և մի քանի ըստիւմ Նըպանիկի բաժակակալը ծանրաթեռնվեց պղնձէ, արծաթէ և թղթէ գրամներով: Երաժիշտաների վառված աչքերը ագահութեամբ ճանապարհ դրին ալդ փողերը մինչև Նըպանիկի գրպանը, որտեղից վերջինի աջ ձեռը հեռանալով, մի վիրաւորական նշան արաւ զուռնաչիներին: Վերջապէս, Նըպանիկը ասպարիզից դուրս եկաւ, իւր հնձով բաւականացած, և նրա տեղը մէջ մտաւ պառաւ Սանամը: Երաժիշտաները իրարու աչքով արին և աւելի սաստկացրին գուռնաների ծփզոցը: Սանամը իւր հաստիկ մարմինը լիլիսացնելով և մինթանալի փեշերը ֆոռացնելով, սկսեց պար գալ: Ոուստամը մի հնգայոց թղթագրամի ծայրը թքով թրչեց և խփեց իւր մօր ճակատին: Սուստանն իւր լզարած, դողդոշուն ձեռով հանեց մի կասլոյտ թղթագրամ, ամօթիածութեամբ գրաւ իւր սկեսրոջ ափի մէջ: Հանդիսականները ոգեսրվեցին, և ամեն մէկը շատալեց իւր լուման ասպարէղ հանել:

Աանամը հաւաքված փողերը լանձնեց զուռնաչիներին և դուրս եկաւ ասպարեզից։ Այնուհետև հանգիստականներից մէկը մի ուրիշ բաժակակալ պահեց նորապստիների գլխին, և ներկայ եղողները մի առ մի հերթով ձգեցին նորապստիների համար իրանց նուերները։ Որը ձգեց թուղթ փող, որը սոկի, որը մի որ և է սոկեղէն կամ արծաթեղէն, որը մի որևէ հագստացու և ալլն։ Վերջապէս, զուռնան դադարեց և հանգիստականները ներս մտան ընթրելու։

Սուսանին տարան կանանց բաժինը, որ Սանամի հարեւնի տանն էր, իսկ Ուուստամը մնաց տղամարդկանց բաժնում։

Իբրև նորահարս, Սուսանը, քաղաքի աւանդութեան համաձայն, պարտաւոր էր ամբողջ ընթրիքի ժամանակ ստի վրայ կանգնած մնալ։ Բայց այս անգամ այդ աւանդութեան դէմ մեղանչեցին։ Հանգիստականներից մի քանիսը, որոնք ներկայ էին այս գիշերուայ անսպասելի անցքին և Սուսանի ուշագնացութեան ականատես, համոզեցին վերջինին և նստացրին սենեակի ծալրում, յատուկ իւր համար պատրաստած փափուկ մետաքսեայ մինդարի վրայ։ Գիւլնազն և Սուսամբարը նստեցին նրա կողքին, մէկը աջ, միւսը — ձախ։ Ընթրիքի ժամանակ Սուստմբարը անդադար քչփչում էր Սուսանի հետ թագուն, այնպէս որ ոչ ոք նրանց չսել չէր կարող։ մանաւանդ որ բոլորը զբաղւած էին աւելի ուտելով, քան նորահարսով։

— Խիղճս գալիս է նրա ծնողներն, հիմայ ես գիտեմ ինչ օրումն են նրանք, — ասում էր Սուսամբարը։

— Զեմ իմանում, թէ այսքան մեղքերիս համար ինչ պատասխան պիտի տամ ահեղ դատաստանի առաջ, — քչփչաց Սուսանը։

— Դու ինչ մեղաւոր ես։

— Զէ, Սուսամբար, մեղաւորն ես եմ, հօրս տանջողն էլ ես եմ։ Եհ, երկնալին թագաւոր, փառք Քո զօրութենին, փառք, ինչ պիտի անեմ։

— Ինքդ քեզ մի փչացնիր, տես ախար հէնց առանց ալդ էլ վրէդ մի ոսկոր է մնացել ու մի կաշի։

— Երանի կըլինէր, որ այն էլ շուտով հոզի տակ փտէր, ես էլ կըհանգստանալի, կըհանգստանալին ուրիշներն էլ։ Մտիկ արա նրա երեսին և տես թէ նա ինչ օրն է ընկել։ Տես, խեղմ կնիկը կոները ծոցում ծալած մօսու այնպէս է նստել, որ, կարծես, իմ թաղման հանգէսն է կատարվում ալստեղ։ Ուրիշները ուտում են, խմում են, ուրախանում, բայց նա, կասես, միւս աշխարհ է թուել։ Ախ ծնողներ, ծնողներ, սպանեցի, սպանեցի ես ձեզ իմ լիմարութենով։ Ախար, ինչ մեղք ունիք դուք։

Այս խօսքերն արտասանելու ժամանակ Սուսանի աչքերից դուրս թափկեցին ատասուքի մի քանի կաթիւներ և ոզողեցին նրա մաշված ու վազվաթառում երեսը։ Նա արտասուքը խեղդեց, նրա կուրծքը ծանր շընչառութիւնից սկսեց բարձրանալ ու ցածանալ այնպէս, որ, կարծես, թշուտառ նրահարսը մահւան մահինում լինէր պառկած։ Հանդիսականներն այդ չընկատեցին, բայց Սուսամբարից։ Զէր նկատում նոյնուի և Գիւլնազը, որ աչքերը սեղանի մէջտեղին յառած, արձանացած, նստած էր։ Նրա աչքերը կորցը էին իրանց նախկին կրակոտ փայլը, և կենդանութեան մի թոլլ նրան էր մնացել նրանց մէջ։ Նրա պշկած երեսը տեղ տեղ ծածկվել էր կնճիռներով, և մի խորը զիծ նրա ոսկորացած ճակատի մէջ տեղով ուղղագիծ անցնելով, բաժանում էր կուչկուչված յօնքերը իրարուց։

— Սուսամբար, — շնչաց կըկին Սուսանը,

—Հըմ, խօսիր, հոգիս, ինչ ես ուզում, —հարցը եց
Սուսամբարը, թեքվելով դէպի նրա ականջը:

—Մի բան որ հարցնեմ, ճշմարիտը կըպատասխա-
նես:

—Սուսամբարը երբ է քեզ սուտ ասել, որ հիմայ
ասի, - պատասխանեց Սուսամբարը խորը լանգիմանական
եղանակով:

—Դորդ է, որ ասում են թէ Աստուած ինքնաս-
պանի հոգին տուանց դատաստանի է լանձնում ստա-
նաներին:

—Ոլդպիսի բաների վրայ խօսելու ժամանակ չէ,
հարսանիքդ է: Մեղք է, Սուսան, մի խօսիր:

—Չէ, Սուսամբար, թէ ինձ սիրում ես —պատաս-
խանիր:

—Դատարկ դատարկ քիչ խօսիր, քեզանից կըխը-
ռովեմ:

—Աստծուդ սիրես, դու —քո միակ եղբօրդ արելը:

—Ուզի, խօսք չըկալ, որ ալդպէս է:

—Ի՞նչպէս, ինքնասսպանները դժոխքն են ընկնում:

—Հա:

—Թէ որ մեղք էլ չունենան, արդար լինեն:

—Էլ արդարս որն է:

—Ախար իրան է սպանում, խօմ ուրիշին ձեռ չի
տուիս:

—Բաս ինքը մարդ չէ:

—Բաս ինչու տուանց դատաստանի:

—Ներիք է:

—Ասա՛, եթէ ինձ սիրում ես:

—Ինքնասսպանի համար դատաստան չըկալ: Մենք
Սրբիչ Աստուծոյ պատկերով ենք սաեղծված: Մարդա-
սպանը Աստուծոյ պատկերն է սպանում ու նրա դատաստա-

նով գժոխք գնում: Բայց երբոր մարդ ինքն իրան
է սպանում, նա գիտես ինչ է ասում Աստծուն:

—Ի՞նչ

—Տես, ասում է, ով Աստուած, քեզանից այնքան
ամաչում եմ, որ քո պատկերովդ ինքս էլ չեմ ուզում
ապրել:

—Մեղալ, մեղալ, Քեզ, Տէր Աստուած, Դու չարը
խափանես, —շնչեց Սուսանը հառաչելով և երեք ան-
գամ երեսին խաչակնքելով:

—Ինչու համար էիր հացնում:

—Հենց ալնպէս:

—Տեսնում ես, որ մեր տէրտէրներն էլ ինքնաս-
պանին օրէնքով չեն թաղում: Հիմա դու ասա: որ մի
մեռել առանց «համբիսկի» թաղփի, էլ նա ինչ երեսով
պիտի ահեղ դատաստանի առաջ կանգնի:

—Փառք քեզ Աստուած, դու բարին առաջես, —
ասաց կրկին Սուսանը և լետոյ ընկաւ մտատանջու-
թեան մէջ:

Մինչեռ կանանց բաժանման մէջ նորահարսը
կը ընկերուհոյ հետ զբաղւած էր այս մռալլ խօսակ-
ցութենով, տղամարդկանց բաժնում նորափեսալին մի
ուրիշ միտք էր տանջում:

Ինչու համար էին այն մարդիկ լարձակվում նո-
րապակների վրայ: Ով էր այն տղան, որ լիշոցներ էր
տալիս: Սէլրան... Սէլրան, ալդ ինչ անուն է, որ Սու-
սանի բերանից լսեց Ոուստամը: Երևի, Սուսանի բարե-
կամներից մէկն էր, որ հարսանիքատանը հարբել էր,
Սուսանի ծնողների հետ կռուել ու եկել, որ ճանապար-
հին ոխը նորապսակներից հանի: Չէ, ալդպէս չէ, ալ-
տեղ մի բան կալ որ ոչ, ոք, ոչ ոք չի ուզում պարզպատմել
Թուստամին: «Թուրք էր, շառլատանների մէկն էր»,
ասում են, փիէ, նա հալերէն էր խօսում, ինչպէս թէ

թուրք էր: ԶԵ, անպատճառ մի թագուն բան կայր Ռուստամի սիրտն էլ վկայում է ալդ: ԶԵ, Ռուստամը տնտեսաճառ պիտի իմանալ, թէ չէ — սիրտը կըտրաքի:

Այդպէս էր մտածում նորափեսան, սեղանի շուրջը պտոյտ գտավ և հանդիսականներին զանազան ծառալութիւններ անելով: Նա իւր՝ կասկածանքով լի՛ հայեացքը ձգում էր հերթով հանդիսականներից ամեն մէկի երեսին և խորը նայում, կարծես, կամենալով կարդալ նրանց գէմքերի վրայ բոլոր գաղտնիքը: Բայց հանդիսականների գէմքերն ոչինչ չէին արտայալում, բացի հոգեկան ուրախ տրամադրութիւնից գինու ու արաղի ագդեցութեան տակ: Ռուստամը մանաւանդ ստէպ-ստէպ նայում էր Սմբատին, որը գլուխը կրծքին թեքած, ընթրիքին չէր մասնակցում: Երբ Ռուստամը նայում էր, Սմբատը, կարծես, բնազդաբար խոյս էր տալիս նորափեսալի զննող հայեացքներից: Ռուստամի սուր աչքերը ալդ նկատում էին, նկատում և կրկնապատկում նրա կասկածը: «Նմ ինչու հաց չի ուտում, հը՞մ, ինչի՞ վրայ է մտածում: Նա երեսիս էլ չի ուզում մտիկ անելու տես, տես, ինչպէս է աչքերի տակով մտիկ անում: Մտիկ արա, մտիկ արա, պստիկ-պստիկ պստառներ է դնում բերանը և ծամում, որ իբրև թէ ուտում է: ԶԵ, մի բան կայ, մեր տղայ, որ հացը բողազովդ ներս չի գնում: Հը՞մ, ինչ բան է, բաս ես չըկարողանամ իմանալ: — ԶԵ, ես պիտի իմանամ, թէ չէ — սիրտս կըտրաքի»:

Մինչդեռ այս կասկածաւոր մտածմունքները չարչարում էին Ռուստամին, խնջուքը հետզհետէ կենդանանում էր: Սկսվեցին կենացներ: Թամադան մի կարճահասակ, սիհար, կարմրագէմ, հաստ և շէկ բեղերով, քառասուն ու եօթը տարեկան մի մարդ էր: Դա մի հին գըտգիր էր, որ եքիար տարիներ արքունական ստորին հիմնարկութիւններում քաշքավելով, վերջն իւր-

համար մի գումար էր կտզմել: որի տոկոսիքով մի կերպ ապրում էր: Ինչպէս Շըպանիկն էր Շամախում յալտնի և նշանաւոր որպէս «զարանգիզի», տրդպէս և այսին չինովնիկն էր յալտնի իբրև թամադա: Ո՞ր հանգիսում, ո՞ր հարսանիքում, վերջապէս, ինչ ուրախութեանտեղերում որ լինէր, նա միշտ թամադա էր ընտրվում, և ալս պատճառով քաղաքում նրան կրչում էին ոչ իւրանունով, ալլ — «թամադա — Կըճին»: «Թամադա — Կըճին» նախ և առաջ հրամայեց խմել նորապսակների կենացը: — Թագօր-թագուհին կենացը, հուռայ, — գոռաց նա, բաժակը բարձրացնելով:

— Հափ հափ, հուռայ, — կըճինեցին հանդիսականները, բաժակները պարպելով:

Յետոյ «թամադա — Կըճին» հրամայեց կըճին լեցնել բաժակները:

— «Կնքօօր-Սօլդուշի» կենացը, — դարձեալ գոռաց նա:

— Հուռայ:

— Մին ալ լիցրեցէք թասներդ:

Հանդիսականները լեցըին իրանց բաժակները:

— Ղոսպօդա, — սկսեց թամադան, — մեան օլիւմ (ես մեռնիմ), մի է կստըրըննի կոնծեցէք օբչի կանապանի կենացը:

— Եկստըրըննի, Եկստըրըննի, հափ-հափ ադա հուռայ, — բացականչեցին միաբերան բոլոր հանդիսականները և կըճին դատարկեցին իրանց բաժակները:

Այնուհետև թամադա — Կըճին մէկ էլ լեցրեց բաժակը, վեր առաւ իւր աջ ձեռով, բարձրացաւ ոտքի, ձախ ձեռը դրաւ կողքին և կարճիկ իրանը դուրս ցըցեց: Հանդիսականները հետևեցին նրա օրինակին:

— Ղոսպօդա, զա, — սկսեց թամադան մի առանձին շեշտագրութեամբ:

— Զա, — կըճինեցին բոլոր հանդիսականները:

— Զդարօվիե, — շարունակեց թամադան:
 — Զդարօվիե, կրկնեցին բոլորը:
 — Նաշեղօ:
 — Նաշեղօ:
 Սմբատա:
 — Սմբատա:
 — Բարխուդարիչա:
 — Բարխուդարիչա:
 — Վիպիօմ:
 — Պիպիօմ:
 — Հափ-հափ հուռուալ, — աւարտեց թամադա կընին:
 — Հուռուալ, — կրկնեցին հանդիսականները:

Եւ այսպէս, հանդէսը կենդանացաւ, երաժիշտաները ոգևորվեցին: Թառի լարերը պարսիկ նուագողի թանձը հինայով ներկած բարակ մատների տուկ լեզու ստացած, մի առանձին ոգևորութեամբ էին արտալայտում արեւելեան Մուսալի խոր հառաջանքները: Շիրազի երգեցողի լայն կոկորդից գուրեկան ներդաշնակութեամբ գուրս էին հեղփում անմահ Հաֆըսի սիրահարական խօսքերը այնպէս, ինչպէս մաքուր ջուրը կլկլալով դուրս է հոսում զովարար աղբիւրից: Փոքրիկ զանդակներով զարդարված դահիրան անդադար պտայտ էր գալիս երգեցողի ձեռում: Եւ դահիրալի խուլ ձախը թառի ոգևորիչ հնչիւնների հետ ախորժալի ներդաշնակութիւն էր կազմում:

Աերչապէս, ընթրիքն աւարտվեց, և հարբած հանդիսականները շուռ ու մուռ գալով վերկացան և ըսկեցին հերթով պարել: Զըլարողները և պարով ընհետաքրքրվողները քաշվեցին դահիճի ալս ու ալն անկիւնը և խումբ-խումբ հաւաքված սկսեցին խօսել ու զուարճանալ: Ամենքն ուրախ էին, ամենքի դէմքերի

վրալ փայլում էր բերկրութիւն, բացի երկուսից — Սըմբատից և Ոուստամից:

Առաջինը մէն-մէնակ հեռացած դահիճի մի անկիւնը ծխածոտ էր քաշում: Ոուստամը գիծ ոչխարի պէս անհանդստութեամբ պտտում էր դահիճի չորս անկիւները: Կասկածը, ալս վտանգաւոր զգացմունքը, հետզհետէ նրա մէջ զօրեղանում էր անսպասելի կերպով, չընալելով, որ ընդամենը մի քանի ժամ էր, որ նրա մէջ ծագել էր այն: Ոուստամը կասկածում էր ամենքին և ամենքանի վրայ, կասկածում էր Սմբատին, կասկածում էր հանդիսականների ամեն մի առանձնախօսութեան, կտսկածում էր մինչև անգամ երաժշտութեան ալս ու այն եղանակի վրայ: Երբ նա տեսնում էր, որ հիւրերից երկուսը աւտանձնացած խօսում են, իսկովն մտածում էր: «Օնպատճառ ինձ վրալ են խօսում, ախ, եթէ իմանամ, ինչ են խօսում»: Եւ նա զգուշութեամբ մօտենում էր խօսողներին և, երեսը նրանցից դարձնելով, թագուն ականջ էր գնում: Բայց երբ լսում էր, որ խօսակցութիւնը բոլորովին մի ուրիշ առարկալի մասին է, նոյն զգուշութեամբ հեռանում էր, ինքն իրան տեղով: «Դիտեմ ինձ վրայ էին խօսում, բայց, երևի, ինձ տեսան, խօսքները փոխեցին»:

Ոհա ալս կասկածանքով տանջվելով, Ոուստամը անդադար պտտում էր դահիճում, ինչպէս մի վիրաւորված եղջերու անտառումը, երբ նրա ականջին հասաւ մի խօսք, և նա մնաց մեխված տեղն ու տեղը: Ալս անգամ խօսողները երկու երիտասարդներ էին, որ գինու ազգեցութիւնից հազիւ կարողանում էին ոտքի վրայ կանգնել: Ոուստամը կանգնած էր նրանց լեռնում, այնպէս որ չէր նկատվում:

Քեզ ասում եմ ինչըիւ բողազը, հարաս ինչըիւ

իստեղ, — ասում էր խօսողներից մէկը, ձեռով ցոյց տար-
լով իւր կոկորդը:

— Ա՛ քիշի, չէ ա, ցըը՝ ցըը':

— Դու մեռնես, զորթ եմ ասում:

— Բաս նրան թողած, ի՞նչի դրան եկաւ:

— Փահ, արախա կտրվես, բաս հէրը:

— Ըստի չէ՞ր:

— Զէ՞:

— Խեղճ աղջիկ, հիմիկ ով է իմանում, սիրտը բըլթ-
բըլթըմ է:

— Հըմ, իսկի խօսք կալ, չըտեսար բաս ինչպէս
սիրտը գնաց:

— Տեսալ, ինչպէս չէ, նրան էլ տեսար:

— Տղին: Ամա նամարդ ընկերները լաւ փախան հաւ-

— ես էլի չեմ հաւատում, քի աղջիկը...

— Բաս դու իսկի ջահիլութուն չես արել: Աղան,
ջահիլ աղջիկ, ջահիլ տղալ, հըմ, — ասաց երիտասարդը,
գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով:

— Աստուած մի արասցէ, որ Ոռւստամը իմա-
նալ հա՞:

Երամիշտները կրկին պարելու եղանակ հնչեցին, և
խօսողները շատակեցին գէպի պարի հանդէսը:

Ոռւստումի դէմքը թղթի գոյն ստացաւ, աչքերը
վառվեցին, շրթունքները կապտեցին, ծնկները թուլա-
ցան, և քիչ մնաց նա թաւալվէր դահլիճի լատակի վրայ:

— Ի՞նչ եմ անում, տղամարդ չեմ, ի՞նչ է, — ասաց
նա ինքն իրան, աշխատելով անտարբեր ձեւանալ:

Նա բեղերը և շրթունքները կրծոտելով, մի քա-
նի վալրկեան մնաց անշարժ:

— Զէ, էլի համբերութիւն է հարկաւոր, կարելի է
սուտ է, — ասաց նա կրկին ինքն իրան, — կարելի է այս
մարդիկ նրանց թշնամիներն են: Համբերութիւն, եօթա-

նասուն և երկու ժամ համբերութիւն: Տէր Աստուած,
Դու կարգութիւն տուր:

Այս ասելով Ոռւստամը զսպեց իրան և շտապեց դէ-
պի հանդիսականները:

VIII

Հարսանիքի չորրորդ օրն էր և առաւօտ: Գիւլ-
նազն և Բարխուդարն վազուց արդէն զարթել էին քը-
նից: Իսկ Սմբատը միւս սենեակում դեռ ևս քնած էր:
Սովորականից դուրս այսօր նրան երկար միջոց չէին
զարթեցնում քնից, թէև խանութ գնալու ժամանակն
արդէն անցել էր:

Բարխուդարն իւր մշտական ընկեր չիբուխը բերանը
դրած, շարունակ ծխում էր, սենեակում յետ ու առաջ
քալլելով: Գիւլնազը, պատուհանի գէմ նստած, նայում
էր գէպի փողոց: Երկու ամուսինների գէմքերն ևս ար-
տայալուում էին ինչ-որ ներքին, խորին, անբացագրելի
անհանգստութիւն: Բարխուդարն ամեն անգամ ծխի
քուլանները բերանից բաց թողնելուց յետոյ, դուրս էր
թողնում կրծքից մի խուլ հառաջանք, որից յետոյ նա
մի քանի վալրեան կանդնում էր և իւր անորոշ հայեաց-
քը ձգում գէպի սենեակի առաստաղը: Գիւլնազը ստէպ-
ստէս երեսը բոլորովին կպցնում էր լուսամտի եր-
կաթէ վանդակի փեղկերին, կարծես, աշխատելով որքան
կարելի է հեռու ու հեռու նայել: Երբեմն Բարխու-
դարը մօտենում էր լուսամուտին և նոյնպէս անհամ-
բերութեամբ գէպի փողոց նայում:

— Զի երկում, — հարցնում էր նա Գիւլնազին ան-
գագար հազիւ լսելի ձայնով:

— Համբերիր, համբերիր, ալ մարդ, ի՞նչ է սիրտ
բերանդ ընկել... ուժ, — խօսեց, վերջապէս, Գիւլնազը:

Շատ զարմանալի մարդ ես, ինքդ ասում ես «չեմ հաւատնամ», էլի հենց չես դինջանում: Եկաւ չեկաւ մէկ չէ, էլ ինչ ես ոտքի ձեռքի ընկել, եարաբ:

—Քեզ ու ինձ համար մէկ է, բայս խալխը, բայս ինչով կըկապես խալխի բերանը:

—Տունը քանդի էս ադաթը դնողի, տունը քանդի հալլա: Տանջվիր, չարչարվիր, աչքդ ջուր արա, թէ ինչ է մի պոչը կտրված Շըպանիկ պիտի գայ ու քեզ աչքալուսի բերի: Բաս մեր աչքերը, բաս մեր սիրտը, մենք չենք ճանաչում մեր երեխին: Ո՞ւմ տանն է մեծացել նա, խալխի, թէ մեր աչքի առաջ: Զէ, պիտի Շըպանիկը մէջ տեղ լինի, չէ, նրա մատը հենց իառն պիտի լինի: Վայ մեզ, վայ մեզ: Հերիք է մի հուշտ, մի սխալ, հերիք է մի օր բանը ուշանայ, մէկ էլ տեսար տղան կատաղեց: Մէկ էլ տեսար տղի հօր ու մօր, բարեկամն երի, ազգականների լեզուն փորներն ընկաւ, սառան, քարացան, կապտեցին ու հառայ զալմադալ գցեցին. «Ճեր տուած աղջիկը էդպէս է, հա էնպէս»: Տէր, Տէր Արարիչ Աստուած, Տէր, մեղալ Քո զօրութենին, Դու դատիր, երկնալին ահեղ թագաւոր: Դատիր, տես, մեր բաղդը, երեխիս բաղդը ում ձեռքումն է:

—Հերիք է, հերիք է, ինձ համբերութենից մի հանիր: Մտիկ արա դուրս, տես գալիս է, թէ չէ:

Դիւլնազն երեսը կըկին կպցըեց պատուհանի վանդակին:

—Ոտդ կոտրվի, վիզդ կոտրվի, Շըպանիկ կնիկ, թէ եկ էլի:

—Ոիրաս ասում է, որ էլի մի բան կայ, այ կնիկ, թէպէտ էս լոյս ցերեկուայ պէս պարդ իմանում եմ ու հաւատում, որ իսկի բան չըկայ:

—Համբերիր. անհամբերութիւնից միտքդ էլ սիրդ էլ մոլորվում են: Իզուր տեղից վատ-վատ բաներ ֆիքը

մի անիլ, այ մարդ, հոգի ունես տալու ահեղ դատաստանի առաջ:

—Նըմ, հոգի ունիմ: Հոգիս, Գիւլնազ, սատանաների բաժին կըլինի, թէ որ... թէ որ երկու սհաթ էլ Շըպանիկն ուշանալ:

—Երեսիդ խաչակնքիր, մեղալ եկ Աստուծուն, չարը մտքից հանիր: ՈւՓ, աչքդ դուրս գայ, Շըպանիկ:

—Մտիկ տուր, մտիկ տուր, Գիւլնազ:

Բարխուդարի խօսակցութիւնը և զարժուածքը վերին աստիճանի տիսուր և յուսահատական էին:

—Ոխ, գալիս է, —բացականչեց յանկարծ Գիւլնազը, պատուհանից վեր թռչելով:

—Թող գայ: Զար, թէ բարի, խալտառակութիւն, թէ պատիւ:

—Գիւլնազը շտապով դուրս դնաց:

—Դիլ գիւղիլ, այ ջան, այ շօբօշ, լովեց դրսից Շըպանիկի սուր ձալնը:

Բարխուդարը մի հառաջանք արձակեց կրծքից:

—Ներս վազ տու, ա կնիկ, աչքդ լիւսի, խալաթս, ա կնիկ, ա մարդ, Շըպանիկի գլխին մին թազա շալ, եա չարշով, եա թոռ, եա աբրուշումի քեալալաղի:

Արդպէս բացականչելով և պարելով ներս վաղեց Շըպանիկը:

Բարխուդարի թթուած դէմքի վրայ մի քանի վայը կեան փայլեց ուրախութեան մի ժպիտ ալնպէս, ինչպէս երեմն ձմերալին մոալլ երկնքում արեգակն է ամպերի տակից փայլում:

—Խահլաթը գլխիդ է, —բացականչեց Գիւլնազը, մի նոր և նուրբ բրդեալ շալ ձգելով Շըպանիկի գլխին:

—Արեկի լուսի պէս պարզ: Ասսու հարաշտարակի պէս ոուրբ: առաջ, գա Սանամն ա խրկալ ձեզ աչքալիւսի:

Շըպանիկը գըպանից հանեց և Գիւլնազին տուաւ

մի մեծ կտրմբափալլ նուռ, որ զարդարուած էր ոսկեալ թերթիկներով և վրան մի քանի մեխակներ ցցած։ Բացի դրանից նա թագուն Գիւլնազի ձեռը դրեց և՝ մի ինչոր շորի կտոր, որի վրա Գիւլնազը, մի խորհրդաւոր հայեացք ձգելով, իսկոյն թագցրեց փեշի տակ։
—Աս շալը կնկանդ խահլազը, բաս քունը, ամարդ, —դարձաւ Շըպալանիկը Բարխուդարին, համարձակօրէն երկու ձեռներով բռնելով նրա օձիքից։

Բարխուդարը ձեռը կոխեց իւր գըպանը, հանեց մի հինգ մանէթանոց թղթագրամ և խփեց Շըպալանիկի ճակատին, մի խորը հառաջանք արձակելով կրծքից։ Այդ վայրկեանին, կարծես, վշտացեալ հօր կրծքից վայր ընկաւ մի ահագին ժալու, և նրա նիշար ու գալկացած ծերունական դէմքը փալեց քաղցը ժպիտով։

—Տեսնում ես, Բարխուդար, Ես քեզ ասում էի, որ իմ երեխան հրեշտակի պէս անմեղ է, —ասաց Գիւլնազը, ուրախութիւնից դողալով։

—Բարխուդարը քեզանից լաւ էր իմանում, որ անմեղ է, թող մարդկանց լեզուները չորանան։ Օրէս գէն էլ ես պարզերես եմ աշխարհում, —բացականչեց Բարխուդարը և սկսեց ծխախոտի չոր տերեները ափերի մէջ տրոցել, որ չիբուխը նորից լեցնի։

—Կուժ ծախողանց Սէլըանի բիբիկը ջուր իլի, թող հիմի դիւշմանները ճաքեն, արաքեն մէջներան, —բղաւեց Շըպալանիկը, կրծքին երկու ձեռքերով խըփելով։

—Դէհ, Շըպալանիկ, գնանք, —հրաւիրեց Գիւլնազը։
—Քինանք, քինանք, հանց աս մընութիս քինանք, խնամիանք քեզ ան սպասըմ։

Գիւլնազն անցաւ միւս // սենեակ, հագուստը փոխեց և Շըպալանիկի հեա շտապով գնաց Սանամանց տուն։ Բարխուդարը մնաց միալնակ։ Նա մօտեցաւ միւս

սենեակի դռներին, բաց արաւ, նայեց ներս և կրկին փակեց։ Յետոյ նա յետ դարձաւ, արխալուղի թևի միջից դուրս հանեց մի բաւական երկայն պարան, որը շատ սապոնված լինելուց փայլում էր։ Յետոյ գըդակը դլմից վերցրեց, դրաւ մի կողմ և պարանը ձգեց յատակի վրա իւր ոտների տակ։ Նայելով աջ ու ձախ, Բարխուդարը չոքեց պարանի առաջ, երեսը դէսլի արեւելք, ձեռները խաչածե դարսեց կրծքին և, գլուխը քիչ թեքելով գէպի աջ ուսը, աչքերը յտուեց սենեակի առաստաղին։ Նա ազօթում էր։ —«Տէր, ամենակարող Աստուած, Տէր, ամենակարող Աստուած, շնորհակալ եմ, որ Դու Քո կարող զօրութիւնով ազատեցիր ինձ էս չար մտքից։ Փառք Քեզ, մեծ է Քո զօրութիւնը։ Դու չըթողիր, որ իմ մեղաւոր հոգին սատանաների բաժի լինի։ Բաշխիր, Տէր Աստուած, բաշխիր, չար սադայելը ինձ մոլորեցրել էր, աչքերս սեացրել էր, ես Քեզ մոռացել էի։ Երեխաս անմեղ էր, անմեղ էր, ես էլ հաւատում էի մտքումս, բայց էլի չարը ինձ մի քանի սհաթ համբերութիւնից հանեց, մոլորեցրեց։ Ումուղ եմ, ողորմած Աստուած, որ հիմայ կը բաշխես, մեղայ եմ գալիս, առաջիդ չոքած աղօթք եմ անում, ոտներդ լիզում եմ»։

Բարխուդարը գլուխը թեքեց կրծքին և արխալուղի թևով սրբեց աչքի տրտասուքը։ Այսուհետեւ նա կըրկին գլուխը բարձրացրեց և մի ըսպէ ևս փնթփինթաց քթի տակ և, գդակը ծածկելով, բարձրացաւ տեղից։ Նրա դէմքն այժմ խաղաղ և հանգիստ էր։

XI

Նորտապսակների տանը հիւրերն արգէն հուաքվել էին։ Դրանք Ուուստամի ամենամօտիկ բարեկամներն և ազգականներն էին, որոնք Սանամի հրաւերով եկել էին

այսօր հարսանիքն աւարտելու կամ, ինչպէս իրանք էին ասում, «քեալավաչախարան» կատարելու։ Զընայելով որ առաւտեան դեռ տասնումէկ մամն էր, սեղանն արդէն պատրաստ էր, և հիւրերը շարվել էին նըրա շուրջը։ Ոուստամն այժմ ևս ոտքի վրայ ծառալում էր հիւրերին։ Խակ Սուսանը միւս սենեակումն էր, ուրժողոված էին կանալք։

Գիւլնազը Երպալանիկի հետ մտաւ կանանց բաժանմունքը։ Սուսանն երեսն հաստ քօղով ծածկած նըստած էր սենեակի մի ծալրում, հանդիսականներից բաւական հեռու։ Նրա մօտ նստած էր Սուսամբարը։ Երբ Գիւլնազը ներս մատաւ, Սուսամբարը քչփչաց Սուսանի ականջին, և վերջինն իւր հագուստն ուղղելով, հանդիսաւոր կերպով ոտքի կանգնեց։ Ուրախ ժայիտն երեսին, Գիւլնազը մօաեցաւ նրան և մի ջերմ համբոյր դրոշմեց իւր սիրելի աղջկայ ճակատին։

— Նաննօօր իլի, շաննօօր իլի, ուրախութենով ապրեն, աճեն, բազմանան, — բացականչեցին հանդիսականները գրէթէ միաբերան։

— Շօրօշ, այ շօրօշ, դիւլանն զեօզիքեօօ օլսուն, *)
— մէջ մտաւ Երպալանիկը, որն իւր գերը երբէք չէր մոռանում։

Գիւլնազը մի թղթադրամ խփեց Երպալանիկի ճակատին, հանդիսականները հետեւցին նրա օրինակին։

Ներս մտաւ Ոուստամը։ Գիւլնազը դիմաւորվեց և նրա ճակատը նոյնպէս համբուրեց։ Ոուստամն ամաչելով և կարմրելով թեքեց իւր գլուխը և յարդանքով համբուրեց Գիւլնազի աջ ձեռը։ Դա մի հանդիսաւոր ըոսպէ էր, որ անցաւ խորհրդաւոր լուռթեամը։ Երպալանիկն

էր, որ իւր սովորական երգով ընդհատեց այդ լոռթիւնը։

Սկսեցին ճաշել։ Ոուստամն անցաւ տղամարդկանց բաժանմունք։ Այժմ նա ուրախ էր, նրա երեսին այլ ևս չէր նշանագիտ մռալութիւնը, ինչպէս հարսանիքի գիշերը, երբ նա թունաւորված սրտով շուռտու- շուռտութու էր անում դահլիճում։ — «Ախ, չար լեզուներ, չար մարդիկ, ինչ բաներ էիք հնարում մի անմեղ արարածի անունը կեղտուաելու համար», — կըկնում էր նա ինքն իրան։

Երպալանիկի ուրախութիւնն անսահման էր։ Նա իրան համարում էր օրուայ հերոսուհի, որովհետեւ խիղճը հանգիստ էր։ Անդադար մօտենում էր Սանամին և ուրախ ուրախ քչփչում։ Ինչ էին խօսում նրանք — այդ միայն իրանք գիտէին։ Սակայն Սանամի յարաբերութեան մէջ նշանագում էր խորին շնորհակալութիւն դէպի Երպալանիկը։ Հանգիստ էր նոյնպէս և Գիւլնազը։ Վերջին ժամանակ նրա տխրութեան սաւանով քօղարկված երեսին այսօր խաղում էր մի քաղցր ժայիտ։ Նա մի առանձին քնքութեամբ էր նայում թէ Սուսանին և թէ հանդիսականներին։

Բայց ամենից ուրախ, գոնէ ըստ երեսոյթին, էր Սուսամբարը։ Այ անընդհատ ծիծաղում էր, երբեմն ծափահարում, զանտգան սրախօսութիւններ անում և հանգիստներից սրան ու նրան ծաղրում։ Խակ մանաւանդ նա ակնարկում էր Երպալանիկին, որ չէր կարողանում, ինչպէս ինքն էր ասում, «լպստածի օֆտից գալ»։

— Երպալանիկը որ կայ, մի մեռել լուանող ժամհարէ, — ասում էր Սուսամբարը, — ինչ մեռել որ ասէք, լողացնում է։ Մեռելն արքայութիւն կըգնայ, թէ դըմսիք, այդ նրա գործը չէ, միայն թէ մեռելահախը ըստանայ։ Չէ, Երպալանիկ։

*) Թշնամու աչքը կուրանաւ։

— Հուացած մեռալներս չիմ արքայութիւն ան քինամ, — սլատասխանեց Նըպանիկը:

— Ինչպէս չէ, հըմ, հիմայ ալնքան աներեսն ես, որ կասես թէ Սուսամբարին էլ արքայութիւն ես ուղարկել:

— Հանց մէջումն ես նստած քի, ա բախտավար: Հիշ ա իլալ, մարդդ էլ փող, էլ դովլաթ, էլ տուն, էլ տեղ, շիր ուշնորք, ինչն ա պակաս եարաբ:

— Մարդս հարմատ է, բայց մի կտոր բան կայ, որ չի կարողանում տունել: Դրան ինչ կասես:

— Եարաբ նա հինչ բան ա:

— Ալ, ալստեղ որ կայ:

Սուսամբարն ալդ ասելով, աջ ձեռը դրաւ իւր ձախ կրծքին:

— Սիրտըդ:

— Հա, մի կտոր միս, որ մարդս չի կարողանում առնել ինձանից:

— Հալբաթ շատ թանգ ես ծախում:

— Էժան, բայց մարդս շատ ժլատ մարդ է: Նա օրական տասն անգամ բարկանալուց և ամեն առաւոտ քացախած երեսը վրէս ծուելուց աւելի ոչինչ չի տալիս: Շատ էժան չէ, Նըպանիկ: Քո իմանալով, քանիսին ուղարկած կըլինես ալդ արքայութիւնը:

Սուսամբարի ալդ խօսքը հանդիսականների մէջ ձգեց մի փոքրիկ ազմուկ: Այս ու այն կողմից սկսեցին ծաղրել, ծիծաղել, բարկանալ և յանդիմանել Սուսամբարին:

— Նորնոր հաւեր են դուրս ելել, երկաթի ձուեր են ածում, — ասաց մէկը:

— Ով է տեսել ինչըիւ օրս, որ կընիկը մարդին աւրիշների մօտ բամբասի, — աւելացրեց մի ուրիշը:

— Ախտը դէ կարդացած ա, բաս շնորքը չի նշանց

տայ, վիշտ, երեսիդ մեռունը թափվի, հալլա, — մէջ մտաւ երրորդը, քիթ ու պոռունգը մի կողմ չուռ տալով:

Դա Սանամի տալոջ աղջիկն էր, մի բաւական չափահաս կին:

— Ես դրուստն եմ ասում, — շարունակեց Սուսամբարը: Դուք ձեր ցաւերը ինչքան ուզում էք թագցրէք ձեր կծքի տակ, որ այնտեղ սիրտներդ մըզմըզ ուտի հա ուտի ու վչացնի ձեզ: Դու էլ խնամի, — դարձաւ նա Սանամի տալոջ աղջկան, — դու էլ Նըպանիկի լուացած մեռելներից ես, ասա տեսնենք, օրական քանիք անդամ է Աղրահիլը մէջքիդ վրայ ճաշ ուտում: Մի վախիր, ես շատ լաւ եմ իմանում, գլխիդ մազերի չափ մարմնիդ վրայ ճիպոտի կապոյտ զօլեր կան: Բայց դու հէնց էլի դրան ու նրան տաս—չէ: Ումը որ հաւատացնես, ինձ խօմ չես կարող:

— Ես իմ մարդիս ապրանքն ամ, զուլին ամ, նա իմ գլխիս տէրն ա, հինչ որ ուզում է, անըմ ա, քեզ հինչ զօռ ա հասնըմ: Թէ որ նա ինձ թագըմ ալ ա, սիրիլան ա թագըմ:

— Խօսք չը կայ, սիրելուցն է թակում, բաս: Հըմ, թքեմ այն սէրի վրայ, որ ճպոտի կծու լեզուովն է խօսում: տար, տար ալդ սէրը քեզ լինի ոտով ու գլխով, ինամի ջան: Կնոջ ապուստը, օրը ինչ է, որ իւր մարդու աչքում մին ձիու պատիւ էլ չունի: Մարդդ ձիուն օրական այնքան թումալում է, ինչըէշ անում, ճակատից ու աչքերից պաչում, ինչքան որ ճիպոտն է քո մէջդ պաչում: Թագցրու, թագցրու ինչքան ուզում ես, էլի ճոթը դրսումն է:

— Հըմ, խրատողիդ երեսին կաչես հալլա, ախըր դափալթար կոյսից ինչ է իր սովորելու: Առա էէ:

Այս ասելով Սանամի տալոջ աղջիկը բարկացած աջ ձեռի հինգ մատները չոեց և Սուսամբարին ճանգ ա

բաւ: Յայտնի չէր ինչպէս կըվերջանար այս վիճաբանութիւնը, գուցէ կոփւ դառնար, եթէ Շըսպանիկը չը ընդհատէր:

—Լաւ ա, ա կնանիք, լիւզիւներդ փորներդ քաշեցէք, ձեզի չան կանչալ, քի մարդի ուրախութիւնը հարամ անէք, —ասաց Շըսպանիկը և, դահիրան վերցնելով, սկսեց ածել ու երգել: Սուսամբարն այժմ թեքվեց դէպի Սուսանի ականջը և սկսեց քջիչալ.

—Հիմայ դրանք կասեն, թէ գու էլ բաղդաւոր կնիկ ես: Զեն իմանսւմ, որ սիրտդ ու հօգիդ նրա մօտն է, մարմինդ էլ տաւել են Ոուստամին, որ չարչարվես ու տանջվես:

—Խոցստված սրտիս աղ մի շաղ տուր, Սուսամբար:

—Սիրտս կոկծալուց եմ ասսւմ, մի վախիր: Եհ, հինչ պիտի արած, ճարդ կտրված պիտի վիզդ ծռես ու տանես ինչ-որ ճակատիդ գրած է, խօ Սոտուծոյ հետ չես կարող կոփւ անել:

—Ուզում ես դրուսն տսեմ, Սուսամբար:

—Աստ:

—Ես էլ առաջուայ պէս չեմ տանջվում:

—Բաս, ճարդ ինչ, կըսովորես էլի:

—Չեմ սովորիլ, բայց որ ասում եմ չեմ տանջվում, ինձ համար չեմ ասում, իմ բանը պրծտծ է:

—Բաս ում համար ես ուրախ:

—Հոգսս ծնողներիս դրութիւնն էր, հէնց որ նըրանց ազատեցի, էլ, կարծես, ես ցաւ չունիմ: Տեսնսւմ ես, մայրս այսօր ինչպէս ուրախ է, տես, հէնց նրա ուրախ լինելն է ինձ հանգստացնում: Խեղճ կնիկ, մի տարի էր, որ հալված ու պշկած երեսդ ծիծաղ չէր տեսնում:

Այս խօսքերն արտասանելու միջոցին Սուսանի աչքերից կըկին գուրս. թափվեցին արտասուքի մի քանի

կաթիլներ և թրջեցին նրա ալտերը: Նա հանեց իւր արխալուղի գրպանից մետաքսեալ թաշկինակը և սրբեց երեսն ու աչքերը: Թէպէտ նա արտասվում էր, բայց չէր հեկեկում, և նրա մաշված կուրծքը չէր բարձրանում ու ցածանում, ինչպէս հարսանիքի երեկոյ:

—Ներիք է, Սուսան, արտասուքիդ կաթիլները ասեղների պէս ճակոտում են կոտրված սիրտս Օրէս դէն լացդ անօգուտ է, հիմայ զօրով քեզ համար պիտի ուրախութիւն ստեղծես:

—Սուսամբար, մի բան խնդրեմ:

—Հրամալիր:

—Նաբաթը մի քանի անգամ կըգնաս մեր տուն, որ մօրս ժամանակը ուրախ անց կենայ:

—Աչքիս վրայ:

—Հօրս մասին էլ տեղեկութիւններ կըբերես ինձ:

—Լաւ:

—Մի բան էլ եմ ուզում տսել, քաշվում եմ:

—Ինձ հետ էլ ես նազ ու բազ տնում, Սուսան:

—Լաւ, կասեմ: Հարսանիքի դիշեր, որ ես ուշաթափվեցի, Սմբատը վազ է տալիս մի մօտիկ գինետուն ինձ համար ջուր բերելու: Այնտեղ նա պատահում է Սէլրանին, կովում են, Սմբատը թակում է Սէլրանին: Այս բանն երեկ ինքը, Սմբատը, պատմեց ինձ: Սուսամբար, եթէ ինձ սիրում ես, հէնց այսօր գնա նրանց տուն ու Սէլրանի մասին ինձ համար տեղեկութիւն բեր: Սէլրանին թագուն տես, ինձանից բարեկիր և աստ, որ ես էլի տաաջուայ Սուսանն եմ: Աշխատիր սիրտ տալ, կարելի է մոռանալ ինձ և մի կերպ ճանապարհի գալ, թէպէտ խելքս չի կտրում, որ նա փոխվի: Ասա, թող ինձ ների, որ ես այսքան չարչարեցի իրան: իմացար: Այս իմ վերջին խնդիրն է, Սուսամբար:

Սուսանը թէկ շնչելով, բայց իւր խօսքերը ար-

տասանում էր ծանր և անլողդողդ եղանակով, ամեն մի բառ առանձին շեշտելով և երբեմն խոր հառաջելով։ Եւ թէպէտ արտաքուստ խաղաղ էր, սակայն նրա աչքերի մէջ երեսում էր խորին լուսահատութիւն։ Նա, թաշկինակը տարաւ դէպի աչքերը ևսրբեց տամուկ թերթերունքները։ Հանգիսականները չէին նկատում, թէ Սուսանի երեսքօղի տակ ինչ է կատարվում։ Նրանք զբաղուած էին ճաշով։

—Պէհ, Սուսամբար, էլ ուրիշ խօսք չունիմ, —շարունակեց Սուսանը, —ինչոր խնդրեցի —կըկտարես, աղաչում եմ։ Հիմայ մի քիչ կերակուր տուր, որ մօրս մօտ ուտեմ։

Սուսամբարը վեր կացաւ տեղից և ոտնաւորին հըրամայեց մի ափոէ փլաւ բերելու։ Սուսանը քօղի տակ սկսեց ճաշել։

Վերջապէս, ճաշն աւարտվեց։ Հանգիսականները վերջին անգամ շնորհաւորեցին նորապսակներին և հարիւր տեսակ աղօթքներով մաղթեցին նրանց բազգաւորութիւն ու ցրվեցին իրանց տները։

Մեղրամիսն անցաւ, Ոուստամը ճանապարհ ընկաւ թէլմուր-խան-Շուրալ իւր առետրական դործերով։

X

Զմեռն էր, հիսիսային զօրեղ քամին կատաղութետմբ ձիւնի խոշոր ու չորթ քուլանները սրահից հաւաքելով, զարնում էր Հայրապետանց տան դռներին ու պատուհաններին։ Երեկոյ էր։ Մարիամ բաջին մինչեւ մէջքը քրսինի տակ խրված, առջուը մի սկստեղ դրած, բրինձ էր մաքրում։ Նա ընթիրքի համար պիտի փլաւ

պատրաստէր, որ դեռ առաւօտեան բազար գնալիս պատուիրել էր Հայրապետը։ Զընայելով, որ օրը բաւական մթնել էր, բայց Մարիամ բաջին ճրագը վառել չէր։ Նա ուզում էր բրինձը ընտրի, վերջացնի ու յետոյ տեղից վեր կենայ։ Սենեակում բացի նրանից ոչ ոք ըը կար։ Դրան ճեղքեցից ձիւնի կարկտանման հատիկները, ներս սրբնթալով, կուտվում էին կիսամաշ կարպետներով և փսխթներով ծածկված յաժակի վրայ։ Երբեմն երբեմն քամին ալնպէս սաստկանում էր, որ վզզալով, կարծես, ուզում էր սենեակի դռները դուրս հանել կըրունգից։

Վերջին ամիսները Մարիամ բաջին բաւական փոխվել էր։ Ծերութիւնը ալդ կարճ ժամանակում նրան միանգամայն լաղթել էր։ Նրա նիհար բազուկները հալվել էին ու կպել կողքերին, երեսի գունասպառ կաշին զըժգժվել էր ու հաւաքվել աչքերի տակ, պնչերի շուրջը և ծնօտի վրայ։

Մի տարուց աւել էր, որ Մարիամ բաջին դադարել էր գլուխը հինայով ներկելուց։ Ալդ պատճառով նրա գլխի մազերը ալժմ երկու գոյն ունէին — արմատից սկսած մի մատնաչափ՝ ճերմակ, իսկ ալս աեղից մինչև ծալը, կարմիր։ Ալդ մի առանձին մռայլութիւն էր տալիս նրա դէմքին։ Նա մտածում էր իւր միակ զաւակի մասին, մտածում էր, և նրա սիրտը կսկծում, որովհետեւ երկար մտածողութիւնից յետոյ ոչ մի ուրախալի եզրակացութեան չէր հասնում։

—Եսօր գրուստ վեց շաբաթ է, որ նա գլուխ է վեր առել ու գնացել զարիբութիւն, — ասում էր ինքն իրան Մարիամ բաջին հառաջելով։ — Ո՞րտեղ է գնացել, — ոչ ես գիտեմ, ոչ Հայրապետը, ոչ էլ մի ուրիշը։ Վէրըան, Սէլրան, թարթափիլ անեն բազգաւոր մէրերը, նրանք էլ տղայ ունեն զարիբ տեղերում, ես էլ ասում

եմ, որ ունիմ: Եէ, կեանքս մաշվել է, մի մազ դառել,
էսօր էգուց մին հուշտի է բանդ, որ նա էլ կտրվի:
Երկնալին թագաւոր, արևս մայր է մտնում, էլի Դու
ինձ չես խնալում: Ինչ անեմ, էլի փառք Քո գօրութե-
նին, էլի թող Քո կամքը լինի:

Մարիամ բաջին մի հայեցք ձգեց սենեակի ա-
ռաստաղին և երեսին խաչակնքեց: Յեաոյ նա մի քիչ
իրանից հեռացրեց բընձի սկուտեղը, ձեռները ծալեց,
դրաւ քրսինի ծայրում և գլուխը դրաւ կոների վրայ:
Անցաւ մի րոպէ, նա գլուխը բարձրացրեց, սկուտեղը
առաջ քաշեց և դարձեալ սկսեց ինքն իրան խօսել:

—Տերեւը ծառից, մազը մարդու գլխից առանց քո
հրամանի չի ընկնում, Տէր Աստուած: Ինչ լինում է,
քո կամքովն է լինում, օրհնեալ լինիս դու և օրհնեալ
լինի քո կամքը: Ամենքին էլ բաղդաւոր շինեցիր, ա-
մենքի բանն էլ դրստեցիր, ինչու, եարաբ, ես ինչ մե-
ղաւոր էի, որ դու ինձ էս օրին հասցըիր: Ինչու հա-
մար՝ եարաբ Աստուած իմ տղին հեռացըիր ինձանից,
դշեցիր չոլերը, քամբաղդացըիր: Ախար որտեղ է նա,
ինչ գործի է: Ինքն ասաց, թէ մի աղի հետ ընկերա-
ցել է ու նրա հետ գնում է Ղուբալ, որ լազգու շա-
լել առնի ու բերի էսաեղ ծախելու: Ի՞նչով է առնելու:
Հալրապետը փող չի տուել նրան, ինքն էլ խօմ տափ
դարդտկ էր, մին սև զրուշ էլ մօտը չունէր: Ինչքան
Փիքը եմ անում—մի բան չեմ հասկանում: Ինքն ա-
սսում էր, որ Ղուբալ է գնում, հիմալ մէկն ասում է
Դերբենդումն է, միւսը թէ Շուրումն է, մի ուրիշը թէ
Պետրովսկումն է, էլ չը գիտեմ ինչ: Եարաբ, ումից կա-
րող եմ մի դրուստ խաբար իմանալ, ով կասի ինձ:
Հալրապետին խօսեցնել չի լինում, Սէլրանի անունը տա-
լիս նրա ջիները հաւաքվում եմ: Էհ, եարադան Աս-
տուած, էլի դու, էլի քո փեշիցն եմ բռնում, դու հա-

խը նտհախին չես տալ: Իմ երեխաս մեղաւոր չէր, նը-
րանք վիչացրին, խելքից հանեցին: Սաբաբի տունը քանդ-
վի իրան գլխին, հա, քանդվի սաբաբի տուն ու տեղը:

Եւ Մարիամ բաջին վերջին խօսքերն արտասանելու
ժամանակ գլուխը կըկին բարձրացրեց, նայեց առաստա-
ղին և աջ ձեռով մի քանի անգամ կրծքին զարկեց: Ալդ
քովէին նրա աչքերը, դէմքն և առհասարակ բոլոր
շարժուածքը լցված էին խորին սրտմտութեամբ: Քանի
որ Սէլրանը Շամախումն էր, քանի որ նա Մարիամ բա-
ջու աչքի առաջն էր—Մարիամ բաջին սակաւ անգամ էր
գժբաղդութեան լանցանքը ուրիշների վրայ ձգում: Նա
մեղադրում էր իւր որդուն, նրան էր համարում բոլոր
անցքերի գլխաւոր պատճառը: Խոկ եթէ պատահում էր,
որ Մարիամ բաջին մի ուրիշին մեղադրէր, ալդ լինում
էր այն ժամանակ, երբ Սէլրանին հանդիպած էր լինում
մի նոր գժբաղդութիւն, ինչպէս այն առաւօտ, երբ
Սէլրանը գիշերով գինետանը թակվել էր: Բայց ալժմ,
երբ Սէլրանն օտարութեան մէջ էր, ալժմ Մարիամ բա-
ջին իւր որդուն անմեղ էր համարում և գրէթէ ան-
պայման անմեղ, Ալժմ նա հաւատացած էր, որ Սէլ-
րանը անբաղդացել է ոչ իւր «գժութիւնների» այլ
ուրիշների պատճառով:

—Ուֆ, Բարխուդար,—շարունակեց Մարիամ բա-
ջին, կրծքին խփելով,—Բարխուդար, էս իրեկվայ ժա-
մաժամքին գոշ եմ թակում ու Աստուած կանչում, որ
նա քո հախին գալ: Հա, Բարխուդար, կնիկդ օրս ընկ-
նի: Հա, տափը փուշ դառնալ, դու ստաբաց լինիս, ինչ-
տեղ ոտ կոխես, քեզ ծակծակի: Հա, կսկծալի հառայդ,
գտդ ու բիդագդ, աման ալլահդ երկինք բարձրանալ,
գտդ Աստծու ականջին չը հասնի: Դու, դու, քեաֆ-
բայց Աստծու ականջին չը հասնի: Դու, դու, քեաֆ-
թառ, էս օրին հասցըիր բալիս: Հըմ, հիմալ ինչ ցաւ
է կպել քեզ, Խոկի ինչ ցաւ: Հիմալ բաղդաւոր աներ

ես դառել, փեռայ ունես, կնիկդ պապար-պապար է անում առաջիդ, աղջիկդ զառ ու զառօֆի, ոսկի ու արծաթի մէջ է ապրում: Աղջկադ մի ձեռը եղում, միւսը՝ մեղրումն է մնացել, էսօր էգուց էլ մինը կըցդնի, էլ բաներդ լափ կդրստվի:

Աւարտելով այս մենախօսութիւնը, Մարիամ բացին կրկին լոեց և խորասուզվեց մտածողութեան մէջ: Այդ ժամանակ քամին աւելի սաստկացաւ, սլատուհանի ապակիները սկսեցին շարժվել իրանց տեղերում: Դուների մի թալը բացվեց և կրկին սաստկութեամբ խփվեց, ներս թողնելով ձիւնի ալիքները:

—Ուփ, տշխարհը քարուքանդ իլաւ: Երկնքի փարգան ճզվել է, Աստծու բարկութիւնը դլիներիս է թափվում: Ի՞նչ տեղ մնաց էս մարդն եարաբ: Կիրակի գիշեր է, երեի, ժամ է՞ զնացել աղօթք անելու: Եարաբ, ում համար ես աղօթք անում: Անխղճմտանք մարդ, սիրտդ խաշխաշ հարելու քարի պէս պնդացել է ու սև սևացել, չի ցաւում մինիկ երեխիդ համար:

Մարիամ բացին մի քանի վայրկեան ևս լոեց:

—Երեկ երեկոյեան Սուսամբարը էստեղ էր: Լաւ կնիկ է, խեղճը ինքն էլ լաց իլաւ: Նա ինձ սիրու էր տալիս: Բայց ինչքան հարցըի, նա էլ մի դրուստ խաբար չըկարողացաւ ասել Սէլրանիս մասին: Ի՞նչ կրպատահի, եարաբ, թէ որ զորդ Սէլրանն Շուրալումն է: Հակառակի պէս, էն գիւլլախորով Ռուստամն էլ է Շուրալում: Եարաբ, Սէլրանս ինչ կասի նրան, էն մեռածն էլ, թիկնամէջը տափին կպածն էլ ինչ կանի: Սէլրանս տաքարիւն տղալ, Ռուստամն էլ հուրսաթափ Աղրահիլի ճուտ է, ով է իմանում, զարիք քաղաքում երեխիս գլխին ինչ օյին կըբերի:

Մարիամ բացին բրինձը վերջացրեց, սկսութեղը մի փոքր իրանից հեռացրեց և քրսինի երեսը ձեռով մաք-

րեց բրինձի հատիկներից: Յետով նա մի ձեռը սենեակի յատակին, միւսը քրսինի ծալրին յենելով, ուզում էր բարձրանալ, երբ դուռը խնկարծ բացվեց և զգուշութամբ ներս մտաւ ձիւնով սպիտակացած չարշափի մէջ փաթաթված: մի բարձրահասակ կին:

—Ողորմի Աստուած:

Մարիամ բացին զարմացած յետ նայեց և կրկին նստեց տեղը: Ներս մտնողը Գիւլնազն էր: Մի քանի վայրկեան երկու բարեկամները նայեցին իրարու, թէ մութը թոյլ չէր տալիս պարզ որոշելու իրարու դէմքը: Մարիամ բացին ճանաչեց Գիւլնազին:

—Ողորմի Աստուած, կրկնեց Գիւլնազը չարշովը դլիմից հանեց և ձիւնը թափ տուաւ:

Մարիամ բացին մի զարմացական հայեացքով նայեց նրան տաից ցգլուխ և կոպիտ ձայնով պատասխանեց:

—Ոչ —ողորմի ծնողացդ:

Այս ասելով նա բրնձի սկուտեղը տուաջ քաշեց և ինքն իրան տմտմաց. «Եարաբ, ո՞ր քամին է աներեսին էս կողմ քշել»:

Մի զարմանար, Մարիամ բացի, քոյրդ եկել է քեզանից հալովհալ իմանալու, — շաբաւնակեց Գիւլնազը, ուշադրութիւն չըդարձնելով Մարիամ բաշու կոպիտ պատասխանի վրալ:

Նա չարշովը մի կողմ ձգեց և, առանց հրաւերի իւր հարեւանի կողմից, նստեց քրսինի ծալրին:

—Տափին տիպչեն ետրաբ քոյր ունեցողները, ես քոյր չունեմ, — ասաց Մարիամ բացին, երեսը Գիւլնազից շուռ տալով և մազերն ուղղելով:

—Մի հուրսուտվիլ, վեր կաց, ճըագը վասիր, ո՞ր երեսդ տեսնեմ, քանի ժամանակ է կարօտել եմ:

—Դուրս եկ, բանիդ գնա, ես բալզուշ եմ, սիրում եմ մէն — մէնակ խաւար տեղում նստել: Խաւարած ո՞ը-

տիս, սեացած օրիս ճրագի լուսից ինչ ճար: Թող ճը-
րագը ջուխտ-ջուխտ վառի նա, որի սիրտն էլ ճրագի պէտ-
վառ է, իմը շուու է խաւարվել:

—Մարիամ բաջի, դու լինիս—մինիկ Սէլրանիդ ա-
րեւը, կծված մի խօսիք: Լսիր, մակի տուր ինձ, տես իմ
սիրտը ուրախ է, յետոյ ինձ նախատիր:

—Եարաբ մղդ է պակաս, թէ մաղդ: Ինչ կտյ, եկել
ես գլխիս, չեմ իմանում, մի տարուց յետոյ թնչալէս ի-
լաւ, որ միտդ ընկանք:

—Ոչ աղս է պակաս, ոչ մաղս, ինձ պակաս է քո-
բարեկամութիւնը, —պատասխանեց Գիւնազը, աւելի ու
աւելի մեղմ եղանակով: —Ասածուն է յալտնի, էս մի
քամբաղդ տարին ինձ ինչ է նստել: Մարիամ բաջի,
ասելն աւելորդ է, առանց քեզ ոչ կերածս եմ իմացել,
ոչ խմածս: Քունս աղու ու լեզի է իլել, գիշեր ու ցե-
րեկս ախուվախով եմ անցկացրել:

—Իմացանք, կարճ կտրիք:

—Ես եկել եմ, Մարիամ բաջի, աղաչելու քեզ, որ
դու նահլաթ տաս չար սատանին ու ինձ հետ հաշտվես:
—Ինչ, վազ կըտամ հրէս:

—Իմանում եմ, դու շատ նեղացած ես, Մարիամ
բաջի, բայց...

—Զեռ քաշիր, Աստուած սիրես, ձեռ քաշիր: Զեմ
իմանում, էլ Մարիամի ինչն է մնացել, որ դու նրա-
հետ բարեկամութիւն անես: Գնա մտիր աղջկադ ծոցը
ու բաղդաւոր ապրի, ինչ գործ ունես մեզ պէս Աստծու
ու մարդու աչքից ընկածների հետ:

—Դուշմանս չը լինի էնպէս բաղդաւոր, ինչալէս
որ իմ աղջիկն է: Նըմ, ցաւերս չես իմանում: Աղջիկս
օրից օր մոմի պէս հալվում է, վախս նա է, որ շուտով
ձեռիցս դուրս գտյ:

—Մի վախիր, չի մեռնիլ աղջիկդ, հալա շատ ու շատ-

կապրի, տիզ կըլի ու պատին կըկպչի, —պատասխանեց
Մարիամ բաջին դառն հեգնութեամբ: —Կարելի է նշանա-
ծի ֆիքըն է անում, գրել տուր, որ գայ, աղջկադ քէ Փը-
կըբացվի, —աւարտեց նա արհամարհական եղանակով:

—Ներիք է, Մարիամ բաջի, էդ խօսքերովդ հէնց
կասես, որ էրված սրտիս աղ ես շաղ տալիս: Խնայիր
ինձ, ես իմանում եմ, որ դու կսկծալուց ես էդպէս խօ-
սում, բայց մեր օվհալն էլ իմացեր:

Գիւնազն այս խօսքերն արտասանեց մի այնպիսի
դառն և խղճալի ձայնով, մի այնպիսի վշտալի հա-
ռաչանք արձակեց, որ Մարիամ բաջու խիղճը մի վար-
կեան վառվեց:

Մարիամ բաջին ճրագը վառեց և մէջ տեղ դրաւ:
Մոմի տղօտ լոյսը լուսաւորեց Գիւնազի ոսկորացած
երեսը, սպրտնած այտերը, ցրտից կապտած շրթունք-
ները և նիհարութիւնից աւելի ներս թաղված աչքերը:
Մարիամ բաջին մի քանի վայրկեան նալեց նրա երեսին,
լուռ ու մունջ վերցրեց բընձի սկուտեղը և գնաց խո-
հանց: Շատ չըքաշեց, և նա, կըկին վերագտառնալով,
նստեց իւր առաջուայ տեղը:

—Երեք օր է Սուսանս ինձ տանջում էր իւր աղա-
չանք ու պաղատանքով, —սկսեց գարձեալ Գիւնազը, —
խնդրում է որ քեզ մօտ գամ: Ողորդ ասեմ, Մարիամ
բաջի, երեսս չէր պատում, քաշվում էի: Երեխաս ասում
է. «Ծող բախշի ինձ Մարիամ բաջին, որ ես նրան էդ-
քան չարչարանք եմ տուել: Եհ, չեմ իմանում, ինչ
երեսով պիտի Աստծու առաջ դուրս գամ»: Տեսնում ես,
Մարիամ բաջի, հիմակուանից էն կեանքի համար է ֆիքը
անում երեխաս, այս բաղդաւոր լինել է:

—Էրված սրտիս աղ մխիթար: Գնա, էդ խօսքերը
ասա էն մարդուն, որի սիրտը փիհ է կոխած, իմը ը-
տուց է հալվել, ես ինչ կարող եմ անել աղջկադ համար:

—Մարիամ բաջի, դու շատ բան կարող ես անել երեխիս համար: Հենց որ նրա աչքն ընկնի աչքիդ, հենց որ դու առաջուայ պէս նրա երեսին մի ուրախ ծիծաղեցիր, իմացիր, որ վարդի պէս կըքացվի ու ծտի պէս փարիազ կանի: Երեք օր է, որ ինքը հենց քեզ վրայ է խօսում, քեզ է ցանկանում տեսնել:

—Ասիլ:

—Ասիլս, որ նահլաթ տաս չար սատանին, չարշով գցես ու ինձ հետ միասին...

—Նրա զուլուղին վազ տամ, հա: Լաւ, աչքիս վրայ, հրէս էս սհաթիս, ըմ, ամաչես վարսիցդ, ամաչես, —ասաց Մարիամ բաջին կէս հեգնօրէն և կէս բարկացած:

—Դու լինես —Սէլրանիդ արել, երեխիս մի սպանիր:

—Ինչ ես գատարկ-գատարկ դուրս տալիս, ես խօ երեխիդ Ազրահիլը չեմ, վայ, կըտկ-ալօվի մէջ ընկայ էլի, Տէէր Աստուած:

—Դու ու քո Աստուածը, Մարիամ բաջի, հենց մի սհաթով գնանք:

—Ձեռ քաշիր, դու —էս ժամաժամքը:

—Օրհնեալ լինի քո ողորմութիւնը, Աստուած, —քացականչեց Գիւնազը, մի աղերսող հայեացք ձգելով Մարիամ բաջու երեսին:

Այդ ժամանակ դռները կըկին բացվեցին, և ներս մտաւ Հալրապետը ձիւնի մէջ կորած:

—Բարի երեկոյ, ողորմի Աստուած, —ասաց նա, Գիւնազին չը նկատելով և փափաղը գլխից հանելով, որ ձիւնը թափի տալ:

Գիւնազը շալը քաշեց բերանին, վերկացաւ և յարգանքով գլուխ տուաւ Հալրապետին:

—Ողորմի ծնողացդ, —պատասխանեց Մարիամ բաջին և նոյնպէս ոտքի կանգնեց:

Հալրապետն, աչքերը կուչ բերելով, նայեց Գիւնազին:

—Բարով, ա կնիկ, լոյսը քեզ տեսնողին, —ասաց նամի այնպիսի բարեկամական եղանակով, որ, կարծես, ոչինչ չէր անցել նրանց միջով:

Գիւնազը գլուխը շարժեց ինչան շնորհակալութեան:

—Նստիր, նստիր, տեսնենք: Եհ, փառք քեզ Աստուած: Քէչան գիւնա —գիւն չաթմազ, ջալասոն գիւն գիւնա: (Անցած օրին օր չի հասնի, եթէ օրերը իրարու կապես):

—Հըմ, էդ որ Աստծուց է, որ մեզ միադ ես գցել, Գիւնազ խանում, —հարցրեց նա, նստելով քըսինի կողքին և Գիւնազին նոյնպէս հրաւիրելով, որ նստի:

—Հըմ, ասա տեսնենք, ինչպէս է եղել որ մեզ միտդ ես գցել, —կըկնեց Հալրապետը:

—Մենք ձեզ իսկի մտքներիցս չենք հանել, որ մէկ էլ նորից միտ գցենք, —համարձակվեց շշնչալ Գիւնազը:

Յետոյ նա շալը քաշեց երեսին, մի ծնկան վրայ նստեց քըսինի միւս անկիւնում:

—Բաս էդպէս, —ասաց Հալրապետը և արխալուզի գրպանից հանեց թամբաքուի քիսան, գօտիից դուրս քաշելով չիբուխը, որ լեցնի:

—Օրհնեալ լինի Աստուած: Գիւնազ ջան, անցաւ գնաց մեր առաջուայ բարեկամութիւնը, այ հայ, հայ: Հիմալ էլ որ միտս է ընկնում, ծուխը քթիցս է դուրս գալիս:

—Արխային կաց, եկել է, որ բարեկամութիւն հաստատի նորից: Զէ, էլ անցածն անցաւ, կոտրված շուշան սաղացնել չի լինի, —մէջ մտաւ Մարիամ բաջին:

—Ղորդ ես ասում, Մարիամ, բայց էլի մարդու

սրտին հովութիւն է ժամանակ-ժամանակ հին բարեկամներին տեսնելը: Ինչ անեմ, թուրքն անօրէն է, բայց խօսքը օրինաւոր, ասում է. «աթանն ըիր օղի, օդաքիւռ օղի...» (Հօրը միակ տղան, այն էլ փուչ): Սէլրանն իրան էլ փշացրեց, ձեր անունն էլ սաղ քաղաքով չով արտւ գուր տեղը, մեղ էր, իս տեսնում ես, Գիւլնազ, ինչ օրի գցեց:

— Օղուլը իսկի մեղաւոր չէ, Աստուած սաբաբի գլխին քար գցի:

— Քո բանը չէ, Մարիամ, գու լեզուդ կծած պահիր: Հերիք է, հերիք է, ինչքան ինձ փշացրիր, այ կնիկը

— Մարիամ բաջին դրուստ է տսում,—մէջ մտաւ Գիւլնազը,—մեղաւորը Սէլրանը չէ, մենք ենք: Եհ, դէ անցած բան է, մուացէք, բաշխեցէք:

— Ոչ դուք էք մեղաւոր, ոչ էլ մենք: Աստուած էսպէս էր ուղում ու էսպէս էլ արաւ, հիմայ բանը բանից անցել է, բազգաւոր լինէք: Թող Սուսանդ գարնան ծառի պէս ծաղկի, կանաչի:

— Ենորհակալ եմ, բարով Սէլրանիդ էլ պսակենք եգուց թող Մարիամ բաջուն հետս տանեմ աղջկաս մօտ:

— Աչքիս վրայ, ուղում ես—ես էլ կըդամ,—համաձայնվեց Հայրապետը:

— Եհ, տոսըզի տղայ առուզզ, — բացականչեց Մարիամ բաջին, աչքերը չուլօվ և մի սպանտկան հայեացք ձգելով իւր ամուսնու վրայ:

— Սրիւնս մի պղտարիլ, քեզ ասում եմ, այ կնիկ, թէ չէ, նահլաթ չար սատանին հաւ—Գիւլնազ՝ ջան, ինձտնից բարեկիր Բարիսութարին ու ասա, որ ես էլի նրան բարեկամս եմ համարում:

— Սմբատիս արելը վկայ, որ հէնց ինքն էլ ձեր Փիքըն է քաշում: Վերջին ժամանակները խեղճ մարդք ձեր հոգսից տիզ է դառել ու պատին կպել:

— Խմանում եմ, իմանում եմ, ինչպէս չէ, օօօ, Բարխութարին ես լաւ եմ ճանաչում, նրա սիրտը շատ բարի է: Տեսնում ես, Մարիամ կնիկ, ես քեզ ասում էի, որ նա կակուզ մարդ է, հէնց դու հակառակվում էիր, թէ չէ, չէ, չէ:

Հայրապետն ոգևորվեց:

Գիւլնազ ջան, ասա Բարխութարին, որ հէնց էգուց մեր տուն շնորհ բերի: Թող գայ, որ մեր հին մեղքերը քամենք:

— Եարաբ Աստուած, էս մարդի խելքը ինչու քամուն տուիր, — կրկին մէջ մտաւ Մարիամ բաջին, երեսը դէպի առաստաղը գարձնելով:

— Եաղի է գլխիս էլի, ետղի, մին էս լեզուդ ներս քաշես, այ իժ օձի զաւակ. մեղալ Քեզ, սատանան ասում է, ոտերիդ տակը գցիր ու շանսատակ արա էլի:

— Թէ կուզ մորթես, էլի սուս չեմ անելու:

— Լեզուդ տակուկից կը հանեմ:

— Հանիր, բայց քանի որ բերանումս է, խօսելու եմ: Բաս ես սուս անեմ, էլ ով պիտի խօսի, այ մարդ, հըմ: Տունս քանդեցին, բալիս չոլերը գցեցին, աւարա

արին վաթանից, մեղ էլ էս օրին հասցրին: Հիմայ չարշով է գցել ու եկել գլխներիս, կեղծաւորութիւնն է անում, բաս ես սուս անեմ: Զէ, ես էսպէս բարեկամներին չեմ ուղում: Գնան, գնա, ինքդ էլի առաջուայ պէս Բարիսութարի ոտները ջուր արտ ու խմիր: Գնա, էլի մի ստաքան արազով խարուիր: Ինչ ուղում ես արտ, ես երես չեմ պղարտնի նրանց, թէ որ վզից էլ քաշենք:

Մարիամ բաջու պիս դառն ու կծու խօսքերը այս անդամ Հայրապետին ըոլորովին համբերութիւնից հանգին: Նա վափաղը գլխից վերցրեց, մի կողմ գրաւ,

վեր կացաւ կանգնեց, սպրդնեց, կապտեց, ատամները կըճտեց և, բռունցքները սեղմելով, ուղում էր յարձակ-

զել կնոջ վրայ, բայց այս վայրկեանին մի դէպէ պատահեց: Քամին կատաղի զօրութեամբ դրսից զարկելով, բացեց սենեակի դռները: Կըկին ներս թափեցին ձիւնի բուռն ալիքներ: Ճրագը հանգաւ, և խաւար տիրեց սենեակում: Մարիամ բաջին և Գիւլնազը մի թեթև ճիչ արձակեցին: Հայրապետը տեղն ու տեղը մնաց անշարժ: Մի քանի վայրկեան բոլորը լուռ էին: Վերջապէս, Հայրապետը դռները ծածկեց:

—Լդաճաք—լզամատառ լինիս, ալ քամի, —ասաց Մարիամ բաջին և մոմը վառեց:

—Տեսնում ես, Աստուած էլ է բարկանում դըլ-էսիդ քո էդ չար լեզուի համար,—գոչեց Հայրապետը:

—Դու քո Օստուածը, մի նեղանար,—սկսեց լորդորել Գիւլնազը Հայրապետին: Ինչ անենք, որ ասում է, սիրտը կծկծում է, թող սրտի աղուն, թափի, հանգստանալ:

—Դուրս եկ, կորիր, քեզ հետ էլ բան ու գործ չունիմ,—գոչեց Մարիամ բաջին խեղդված ձախով և շատով գնաց խոհանոց:

—Սատանի ծնունդ է էլի, էհ, ես քեզ բերողին ինչ ասեմ հա, —գոռաց նրա լեռեից Հայրապետը և նստեց իւր տեղը:

Գիւլնազը չարշովը վերցրեց, որ գնար:

—Իսկի ըընեղանաս, Գիւլնազ ջան, ես նրա քիթուպունդը ջարդ ու փշուր կանեմ, շատ է կատաղել: Ասա Բարխուդարին, որ ես էլի պատրաստ եմ նրա հետ բարեկամութիւն անելու:

—Ենորհակալ ենք: Բայց Մարիամ բաջու քէֆին չըդիպչես, խեղճ է, սիրտը ցաւում է: Տես, թէ որ կառող ես, խելքի բեր, որ միասին ինձ հետ դալ աղջկասմօտ:

—Ոչքիս վրայ, արխալին կաց:

Գիւլնազը մի քանի անգամ համեստութեամբ և խորին յարգանքով գլուխ տուաւ Հայրապետին ու դուրս գնաց: Իսկ Հայրապետը չիրուխը նորից լցրեց, վառեց ճրագից և սկսեց ծխելով շրջել սենեակում յետ ու առաջ:

XI

Փետրվար ամսի սկիզբն էր, տարուալ այն ժամանակը, երբ Թէյմուր-խան-Շուրա քազաքում ձմեռը սսվորաբար գտնվում է իւր ամենասաստիկ ժամանակամիջոցում: Մի խիստ մութ երեկոյ էր: Երկնքից իջնող ձիւնը, հիւսիսային Դազստանի բարձրագագաթ սարերից փչող մրրկից հալածվելով, խաւար մթնոլորտի մէջ պտում էր կատաղի ալիքների պէս: Շուրալի արևելեան կողմում կար մի կեղտոտ քարվանսարա: Այդ քարվանսարայի օթեաններից մէկում նստած էր մի երիտասարդ: Օթեանն ունէր մի փոքրիկ դուռը ու մի փոքրիկ պատուհան և լուսաւորվում էր մի հասարակ թիթեղեալ կանթեզով, որ գրած էր փսխաթներով ծածկված խոնաւ յատակի վրայ: Դրսից ձիւնի ալիքները սարսափելի քամու զօրութիւնից օթեանի դրան և պատուհանի ճեղքերից ներս մտնելով, զիպչում էին ուղղակի երիտասարդի կերպարանքին: Օթեաննում սաստիկ ցուրտ էր: Բացի կանթեղի արտադրած թոյլ ջերմութիւնից, նրա մէջ ըըկար ուրիշ վառելիք, որ մեղմացնէր այդ ցուրտը: Այս պատճառով երիտասարդը ոտից ցգլուխ փաթաթված էր ու եափունջիկ մէջ: Ներս թափող ձիւնը հաւաքվել էր եափունջիկ վրայ և ծածկել սովորական սատանութիւնից: Խօսոգինի գեղնագոյն լուսը, հազիւ հազ կանթեղի մրոտ ալակու միջով թափանցելով, սփավել էր երիտասարդի գէմքի վրայ: Հոգեկան գառն տանջանաց, ծանր վշտերի խոր կնիք էր գրոշմած այդ գէմքի վրայ:

Դա Սէլրանն էր:

Ինչու համար է եկել նա Շուրալ, ինչ մտադրութիւն ունի:

Սուռմ են թէ առանձնութիւնը առհասարակ մարդուն տրամադրում է իւր մտքերի հետ խօսելու: Սէլրանը մէն — մէնակ նստած սառն օթևանում, թաղուած էր խորը մտածողութեան մէջ: Նա քըքրում էր իւր մօտիկ անցեալը, քննում, քննադատում էր այն բոլոր փորձանքները, որ վերջին ժամանակները անցան նրա գըլսով: Եւ երբեմն երբեմն սկսում էր ինքն իրան խօսել մի այնպիսի բարձր ձայնով, որ եթէ օթևանում մէկը լինէր, պարզ կարող էր լսել նրա խօսքերը:

— Որքան որ մտածում եմ, որքան որ գլուխս տըրաքացնում եմ, մի և նոյնը, մի և նոյնը, մի և նոյնը, — մտածում էր Սէլրանը: Սուռան, Սուռան, քարացած խղճմտանքով արարած, լաւ խարեցիր ինձ, լաւ գլխատակիս բարձ դրիր: Հա, շատ լաւ, շատ լաւ խարեցիր: Բայց չէ, սպասիր, սպասիր, շատ երկար չի քաշիլ, ես, հըմ, ես ինչ...

Սէլրանը ձեռը դրաւ ճակատին և մի քանի ըսպէ լոեց:

— Սպիրիր, ապրիր փառաւոր կերպով, — շարունակեց նա, ձեռը ճակատից հեռացնելով: Պարծենում ես, հա: Պարծեցիր, բայց այն էլ իմացիր, որ ինչպէս էլ լինի, էլի պոչդ իմ ձեռումն է. ես եթէ ուզենամ, կարող եմ հէնց վազը, հէնց այս գիշեր փոխել քո բաղդը: Դու իմ ծնողների կեանքը թունաւորեցիր, մօրս զրկեցիր իւր միակ զաւակի երեսից, ինձ չոլերը բաց թողեցիր, որ դու այսօր հանգիստ տանդ նստես: Չէ, դու քո հօր նամուսն էիր ուզում պահել: Իրաւունք ունես: Բայց ինչ ես մտածում: Միթէ կարծում ես, որ ես նամուս չունեմ: Միթէ կարծում ես, որ ես այնքան փշացե-

չացած եմ, որ չեմ կարող պատիւս պաշտպանել: Երեխալ ես, խեղճ, չես ճանաչում Սէլրանին... «Ապրիր, սպասիր և կրտեսնես, թէ Սուռանը քեզ ինչպէս է սիրում և ինչպէս նա կըզոհիլ քեզ համար»: Այդ քո բերանից դուրս եկած խօսքերն են: Բաս ինչ շուտ մոռացար: Ոուստամի հարստութիւնը, տուն ու տեղը, ոսկի արձաթը, զառ ու զարօնիքը, վլաւ ու դոլման քեզ շլացին, հա: Լաւ, ինձ էիր խաբում, հա: — Սպասիր, համբերիր, շատ էլ խարվող մարդ չիմանաս Սէլրանին: Դու ուզում էիր քո և քո ծնողների իբրև թէ ընկած անունը ուրիշների աշքում բարձրացնել, նըրանց նամուսը մաքրել և ալդ պատճառով ինձ թողիր ու գնացիր Ոուստամին: Լաւ, բաս Սէլրանը, նրան նամուսը: Զըլինի թէ կարծում ես, որ նա էշ է, չի հասկանում: Ինքդ քո անունը ուրիշների բերանից ազատեցիր, իսկ իմ անունը կեզառուելով, գցեցիր սաղ քաղաքի բերանը: Խեղճ ողործելի, կարծում ես, որ այսքանն էլ հասկանալու խելք չունի Սէլրանը, հա: Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ ես այնքան փչացել եմ, ընկել եմ, որ էլ ոտի վրայ կանգնելու կարողութիւն չունիմ»:

Սէլրանը գլուխը քիչ թեքեց գէպի մէջքը և իւր անորոշ հալեացքը մի քանի ըսպէ յառեց օթևանի առաստաղին, որի փատած ու սեւացած կոճերը կտուրի ծանրութիւնից ծռվել էին ու ճաքճքել: Նա մտածում էր, թէ ինչպէս ինքը խալտառկվել է իւր ընկերների առաջ, թէ ինչպէս ալդ ընկերները ամեն անգամ իւր երեսին կրկնում էին Նամտխում: «Վախկոտ ես, անազնիւ ես, նամուս չունես, որ աշքերդ բաց հարսնացուիդ քեզանից լալեցին, ուրիշին տուի» և ալլն ալլն:

— Ղարդուշանց Եմիրը, Եմիրը, տես ինչքան ընկել եմ, որ նա էլ է ինձ ծաղըում: Նա էլ մինչեւ ան-

գամ ինձ վրայ լեզու է բանեցնում, փահ, քո փափաղը տափը մտնի Սէլրան ջահիլ հա, —ասաց նա, երկու ձեռներով մի ուժգին հարուած տալով գլխին, որ ծածկված էր Դաղսստանի մոխրագոյն երկարամազ «շուլլահիով»:

—Հարցնող լինի, թէ էլ այսուհետեւ ինչ երեսով եմ ապրում: Ծնողներիս աչքից ընկած, Շամախու մէջ խայտառակված, ընկերներիս մօտ ծաղրի ու ծիծաղի առարկայ դարձած, էլ ինչ երեսով եմ մտիկ անում սւրիշներին: Շամախում չըկարողացայ ապրել, գուրս եկայ, Դուբայ գնացի: Խեղճ մայր, գու հիմայ հաւատացած ես, որ տղադ առուտուր է անում: Խեղճ պառաւ, խեղճ պառաւ, ծնվեցի թէ չէ հէնց օրդ սևացաւ:

Սէլրանը բարձրացաւ տեղից և սկսեց փոքրիկ ու նեղ օթեանի երկայնութենով շրջել յետ ու առաջ:

Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչեր են խօսում հիմայ ջահիլները Շամախում: Ինչ պիտի խօսեն, ամեն անդամ Սէլրանի անունը աալիս երեսները ծռսւմ են ու թքում. օհ, ճակատը ամօթից քրտնում է, երբ մտաբերում է նրանց: Հիմայ ամենքը, հաւաքված գինետներից մէկում, խմում են: Մինը ուզում է նրա կենացը խմել, միւսը չի ուզում խմել, «չունքի նա նամարդ, բէնամուս է, մեր դաստի անունը բէաբուռ արաւ սաղ քաղաքում»: Ճշմարիտ է, իրաւունք ունէք ասելու, նա խայտառակ արաւ ձեր դաստի անունը: Բայց սպասեցէք, Սէլրանը շատ էլ բէնամուս ջահիլ չէ, ըսպասեցէք և կըտեսնէք:

Գրսում քամին շարունակ փչում էր: Սէլրանը մօտեցաւ պատուհանին և սկսեց նալել գուրս, գէպի քարփանսարայի բագը: Մի քանի ըոսէ շարունակ նա մտիկ արաւ, թէս նրա աշքերը պատուհանի սառցապատ առաջիների միջով ոչինչ չէին կարողանում որոշել գրսում:

Յետոյ Սէլրանը երեսը շուռ տուաւ և կրկին սկսեց շըշշէլ յետ ու առաջ բաւական հաստատ և կանոնաւոր քալլերով:

—Երէկ ես բազարում տեսայ քո մարդուն, Թուստամին, շարունակեց մտածել նա; —տեսալ և արիւնս գլխովս տուաւ: Ես ուզում էի մօտենալ, խանչալս փորը կոխել, թափան—թրիքը գուրս թափել: Ուզում էի փողոցի սպիտակ ձիւնը ներկել նրա կարմիր արիւնով, որ գուցէ սիրտս հովանար: Բայց ես այդ չարի: Զըկարծես, որ վախեցայ նրանից, չէ, չարի, որովհետեւ հիմայ մտածում եմ, որ նա այնքան մեղաւոր չէ, ինչնչան որ գու ես մեղաւոր, Սուսան: Եթէ ես վրէժ եմ ուզում հանել, լաւն է ձեր երկուսից հանեմ, թէ չէ՝ միայն Թուստամի արիւնը ինձ չի հովացնի: Հըմ, իմանում եմ, Սուսան, գու ինձ այնքան մոռացել ես, որ սրան ու նրան էլ հաւատացրել ես, թէ Սէլրանին իսկի երեխայութիւնից չես ճանաչել: Այդ ես գիտեմ որ ասել ես, հէնց ընկերներս էլ այդ պատճառով են ինձ այգքան ծագըում: Նըպանիկին ծնողներդ գցել են քաղաք, որ այտեղ ու այնտեղ ասի, թէ «կուժ ծախողանց Սէլրանը իզուր տեղն է դրան ու նրան ասել, թէ Սուսանը իզուր տեղն է դրան ու նրան ասել, ալնակէս արել և ալլն և ալլն: Սուաջինը՝ ես ոչ ոքի չեմ ասել իմ բերանով այն բաները, ինչո՞ր խօսում են քաղաքում: Երկրօրդը՝ թէ որ խօսում են, սուտ են խօսում, Սուսան: Սուտ չէ, որ գու իմ հարսնցուն ես եղել երեխայութիւնից, սուտ է, որ ես քեզ հետ խօսել եմ: Ամեն ցաւերից ազատվել ես, հանգիստ ապրում ես, հիմայ ուզում ես Սէլրանին սուտ դուրս բերել համա, Լաւ, շատ լաւ, Սէլրանն էլ խելք ունի, իմար չէ: Թող չըհաւատան, թող ծաղրեն, ինչքան ուզում են, բայց ես շուտով, շատ շուտով ամենքին ցոլի

կըտամ, կըհաստատեմ, թէ ես սուտ չեմ ասել, թէ ինչ
որ խօսում են, գոնէ նրա կէսը, կիսի կէսը ճշմարիտ է:
Թող մարդդ, Մուստամը, որ հաւատացած է թէ ես շառ-
լատան եմ, թող տեսնի, ով է շառլատան:

Սէլրանը կրկին նստեց քառորդ ժամի չափ գլուխը
ձեռքերին յենած, մնաց անշարժ: Յետոյ նա դարձեալ
վեր կացաւ տեղից և կրկին սկսեց շրջել յետ ու առաջ,
այս անգամ աւելի արագ և ամուր քայլերով:

—Սլիւս գլխովս է տալիս, տչքերս մթնում են,
երբ մտածում եմ թէ ինչեր են խօսում ինձ վրայ
ընկերներս: Զէ, անպատճառ, անսլատճառ ես պիտի
վրէժս տռնեմ: Էլ որ օրուայ ջահիլն եմ, որ ախօրուայ
օրն էլ իմ նամուսը չըկարողանամ ցոյց տալ նրանց: Հա,
վճռված է: Ես դեռ Շամախումն եմ մտածել այս բանը,
թէ չէ էլ ինչու համար եմ չոլերն ընկել, ինչու հա-
մար եմ Շուրայ եկել: Բայց Տէր Աստուած, Տէր Աս-
տուած, բնչպէս հանեմ վրէժս, բնչպէս հաստատեմ, որ
ես, որ ես....

Սէլրանը կրկին կանգնեց պատուհանի առաջ և
սկսեց նորից դէպի գուրս նայել: Յետոյ նա երեսը շուռ
տուաւ և մի քանի վայրկեան անթարիթ աչքերով նայեց
աղօտալոյս կանթեղին:

—Հա, ինչպէս հաստատեմ, որ ես... որ ես...
նահլաթ քեզ չար սատանալ, —ասաց նա, ճակատին մի
ուժգին հարուած տալով և յետոյ անգիտակցաբար նա-
յեց մէջքին կապած խանչալի կոթինքն, —չպէս հաստա-
տեմ, որ ես Սուսանի հետ սիրահալական լարաբերու-
թիւններ եմ ունեցել, բնչպէս...

Միքանի անգամ նա ինքն իրան կրկնելով «բնչպէս,
բնչպէս», կանգնեց օթեանի մէջ տեղում և, աջ ձեռը
խանչալի կոթի վրայ դնելով, իսկ ձախը —ճակատին,

թաղվեց մտածողութեան մէջ: Մի քանի ըստէ էլ նա
այդ դրութեան մէջ մնաց:

Երբեմն նա ձախ ձեռը ևս հեռացնելով ճակատից,
դնում էր խանչալի կոթի վրայ և աչքերը յառում օ-
թեանի առաստաղին: Այդ ժամանակ նա, շրթունքները
կրծոտելով, ստէպ-ստէպ արտասանում էր հատ ու կը-
տոր խօսքեր, օրինակ —«աչքերը», «ուսը», «աև մազ»,
«կուրծքը» և այլն և այլն:

Յանկարծ գլուխը քարշ ձգեց, ձեռները հեռաց-
րեց խանչալից և սառն օդի մէջ կրծքից արձակեց մի
ծանր հառաջանք: Կարծես, նրա ուսերից այդ հառա-
ջանքի հետ միաժամանակ ընկաւ մի ճնշող ծանրու-
թիւն: Յետոյ նա զարմանալի արագութեամբ մօտեցաւ
օթեանի անկիւնին, վերցրեց այդ տեղից մի ինչ-որ բան
և շտապով կոխեց երկայն արխալուզի գրպանը: Այդ
վայրկեանին նրա թթուած դէմքի վրայ սահեց մի կի-
սով չափ անախորժ և կիսով չափ խորամանկ ժպիտ,
նրա շրթունքները դողացին, ճակատի կնճիռը բացվեց
և աչքերը փայլեցին չարախնդիր կայծերով:

Քամին շարունակում էր փչել անսաելի զօրութեամբ.
օթեանի պատուհանը և դոները փոքր էր մնում, որ
խորտակվէին:

—Հէնց այս ըոպէին, ուշացնել հարկաւոր չէ: Եթէ
մի քիչ ուշանայ, էլի, էլի կըսառչեմ: Ծեծիր երկաթը,
քանի որ տաք է: Հա հա հա, կարծում ես որ ազատ-
վեցիր, պրծար, հապա տեսնենք:

Սէլրանը շուլլահին պինդ սեղմեց գլխին, խանչալը
մէջքում ուղղեց և, ձեռը գրպանում գնելով, շօշափեց
մի քանի անգամ գրպանը ու դիմեց դէպի դոները:

—Թող ինձ ճանաչեն, որ ես չեմ կարսղ այս ան-
պատութիւնը տանել: Ես նրա խանութը ճանաչում եմ,
այստեղից շատ չեռու չէ: Նա իմ երեսը չի տեսել,

ինձ չի ճանաչում, անպատճառ ինձ կընդունի, կըհիւրասիրի: Նա գինի ու արաղ էլ է ծախում, ես կըխմեմ, կըհարթեմ նրա գինով և յետոյ, յետոյ, իհարկէ, գինու փողերը կըվճարեմ, հա հա հա...

Այս ասելով, Սէլքանը օթևանի գոները բաց արաւ և շտապով դուրս գնաց: Նա անցաւ քարվանսարալի բագը, դուրս եկաւ փողոց և անհետացաւ ձիւնի խառն ալիքների մէջ, որ կատաղի զօրութեամբ կովում էին մթնոլորտի մէջ:

XII

Քարվանսարան գտնվում էր մի բաւական ընդարձակ հրապարակի վրայ: Ալդ հրապարակից քառորդ վերստաշափ հետու, մի բաւական ընդարձակ փողոցի ծայրում, կար մի խանութ, որ երեք գոներ ունէր: Ալդ—Ռուստամի տռետրական խանութն էր: Խնչպէս արդէն մեզ յախտնի է, Ռուստամը Շուրայում մի քանի տարի էր պարապում էր վաճառականութեամբ: Երկու տեսակ ապրանքներ էր նա ծախում: Առաջինը հագստեղէն, այն է մահուդ, չիթ, կտաւ և ուրիշ սոյնանման կտորներ, երկրորդը՝ սւտելիք և ըմպելիք, այն է՝ օղի, գինի, իւղ բրինձ ևուրիշ զանազան տեսակ խմիչքներ և մանր մսւնը պարագաներ: Խանութը բաժանված էր նոյնպէս երկու մասերի մի տախտակեալ պատով ներսի կողմից:

Նոյն ժամին, երբ Սէլքանը իւր օթևանից դուրս վաղեց, Ռուստամի խանութի երեք գոներից մէկը կիսով չափ բաց էր: Ալդ ըմպելիքների բաժինն էր: Այստեղ Ռուստամը մի քանի շամախեցի հայերի հետ ընթրում էր: Սեղանի գլխում նստած էր ինքը Ռուստամը: Նրա աջ ու ձախ կողմերում նստած էին երկու առեւրական ընկերներ, որոնցից մէկը մի միրքաւոր երի-

տաստարդ էր լեզգու հագուստով, իսկ միւսը՝ առանց միրուքի միջին տարիքով մի մարդ էր Շամախու հագուստով: Սրանց մօտ նստած էին երկու ուրիշ հիւրեր, որոնք Շամախուց նոր էին Շուրա եկել: Դրանցից մէկը առողջակաղմ և հասա երեսով մի երիտասարդ էր մօտ երեսուն տարեկան, իսկ միւսը մի պատանի—կէս ասիական ու կէս-եւրոպական հագուստով:

Ռուստամի ընթրիքն այդ երեկոյ սովորականից մի փոքր ճախ էր, որովհետեւ նա հիւրասիրում էր իւր նորեկ համաքաղաքացիներին: Թէ Ռուստամի և թէ հիւրերի գլուխները բաւական տաքացած էին գինով: Ռուստամի ընկերները ոգեսորված խօսում էին նորեկների հետ, հարց ու փորձ էին անում գրանց իրանց հայրենիքի, ընտանիքի, ազգականների և ուրիշ բաների մասին: Իւր բնաւորութեան համեմատ, Ռուստամը ամենից սակաւ էր խօսում: Միայն երեքն նա ևս հատ ու կտոր հարցեր էր տալիս նորեկներին և հատ ու կտոր պատասխաններ ստանալով, կրկին լուսում էր:

— Ասում են, որ կուժ ծախողանց Սէլքանն էլ է այստեղ, ճշմարթ է,— հարցնում էր նորեկ պատանին:

— Ես երեկ լեզգի բազարում տեսայ նրան, խանչալ էր առնում, — պատասխանեց Ռուստամի ընկերներից մէկը:

Ռուստամը լսելով «Սէլքան» անունը, աչքունքը թթուեցրեց և մի հարցական հայեացք ձգեց նորեկ պատանու վրայ: Վերջինն այս չընկատեց:

— Ուզում եմ նրան տեսնել, — կրկին խօսեց պատանին:

— Ի՞նչ գործ ունես նրա հետ, — հարցըց միրքաւոր և լեզգու հագուստով երիտասարդը, աչքի տակով նայելով Ռուստամի երեսին:

— Նրա մալրը ինձ խնդրել է, որ մի քանի խօսք ասեմ նրան:

— Եգուց կարող ես լեզզի բազարում տեսնել, կարծեմ միշտ այնտեղ է լինում:

— Ի՞նչ գործի է:

— Չեմ իմանում: Եթէկ ես իրանից հարցրի, ոչինչ չասաց, աչքունքը ծռեց ու հեռացաւ:

— Նատ է հպարտացել, կասես, ոսկու մադան է գտել, բայց ինքը քաղցած զկուտում է, հագին հալաւ չունի, — աւելացրեց անմիջուք առևտրականը:

— Ասում են շալ առնելու է եկել, — մէջ մտաւ հաստերեսանի նորեկը:

— Ցաւերժովդ:

— Հալրը փող տուած կըլինի էլի:

— Հօր մօտ նրա անունը տալ չի լինում, բնչ փող, — մէջ մտաւ պատանին: Ես դուրս գալրւս օրը հացրի, տառւմ եմ. Հալրապետ ապեր, Սէլրանին որ տեսնեմ Գաղաստանում, բնչ տաեմ: Նա երեսիս ծուռ մտիկ տուաւ ու ասաց. «կասես, որ այնտեղից էլ դէնը կորչի, որ անունը չըլսվի»:

Լափ վչացաւ այդ տղան, — կրկին մէջ մտաւ անմիջուքը:

— Փչացաւ, — կըկնեց հաստերեսանին:

Մուստամը գլուխը թեքեց կրծքին և ձեռը ճակատին դրաւ: Անմիջուք առևտրականը նայեց նրա վրայ և դարձաւ խօսողներին:

— Խալիսի ցաւը մեզ չեն տուել, թողէք Սէլրանին, քէֆ արէք, տեսնենք:

— Մուստամ ջան, ալդ էլ քո կենաց, — ասաց նա մի բաժակ գինի ձեռին:

Մուստամը գլուխը շարժեց ինշան շնորհակալութեան:

— Քո կենացը, — կրկնեցին ամենքն միաբերան և բաժակները դատարկեցին:

Դրսից մէկը երկու անգամ դռներին զարկեց:

— Ո՞վ ես, — հարցրեց Մուստամը, մօտենալով դըռներին:

— Աստուծոյ հիւրը:

Դռները բացվեցին, և Սէլրանը երես առ երես հանգիպեց իւր ամենախերիմ թշնամուն, Մուստամին: Սէլրանը, պէտք է ասած, Մուստամին շատ էր տեսել, այն ինչ՝ վերջինը Սէլրանին թէկ Նամախում տեսել էր բայց չէր ճանաչում, չըգիտէր, որ նա է իւր հակառակորդը:

Առաջին վայրկեանին Սէլրանը շփոթվեց, տեսնելով իւր սրտին ամենատեղի կերպարտնքը: Բայց նա կարողացաւ իրան զսպել:

— Ո՞վ ես, — կրկին հարցրեց Մուստամը, միևնույնական չըկտրելով անկոչ հիւրի ճանապարհը:

— Մի զարիբ տղայ, — պատախտանեց Սէլրանը, իւր հայեացքը ձգելով խանութում նստողների վրայ:

— Աչքիս վրայ տեղ ունի ամեն մի զարիբ, — ասաց բարեկամաբար Մուստամը, Սէլրանին ներս թողեց և դռները կրկին ծածկեց:

— Օհօ, Սէլրան ջահիլ, դու որտեղ, ախտեց որ տեղ, — բացականչեց լեզզու հագուստովը:

— Սէլրան, — կրկնեց Մուստամը անգիտակցաբար և իւր հայեացքը բևեռեց այդ անունը կրօղի վրայ:

— Մուստամ, բնչ ես սառել, չես ճանաչում: Դամեր շամախեցի կուժ ծախող Հալրապետի տղան է, համեր շամախեցի կուժ ծախող Հալրապետի տղան է, համեր շամախեցի արա, ինչ ես կանգնել, — շարունակեց լեզզու հագուստովը:

Մուստամը տեղից չըշարժվեց: Նա զարմացած նայում էր հերթով բոլորի երեսներին: Սէլրանը ձիւնի մէջ կորած եափունջին մի կողմը շպրտեց, համարձակ քայլերավ շարժվեց տուաչ և, տուանց Մուստամից հրաւիր:

վելու, մօտեցաւ սեղանին և նստեց Հասարակ փալտից զինած նստարանի վրայ: Պատանին մօտեցաւ նրան և, ձեռը մեկնելով, ասաց.

— Նամախուց նոր եմ եկել, մայրդ շատ բարե արաւ և ասաց որ...

— Նորհակալ եմ, — ընդհատեց Սէլրանը, անփոլթ կերպավ սեղմելով պատանու ձեռը և երեսը մի կողմ շուխ տուաւ այնպէս, որ վերջինը ստիպվեց լռելու:

Վերջապէս, Ոռուստամը ուշքի եկաւ և ընդունելով իւր նախկին գիրքը, սառնասրտութեամբ նստեց սեղանի առաջ:

— Այ տղայ, Համբարձում, նոր գինի, Սէլրանը մրսած կըլինի, թող քիչ տաքացնենք նրտն, — հրամալեց լեզու հագուստով միրքաւորը:

— Հա, գինի տուէք, ես շատ եմ ծարաւ, — ասաց Սէլրանը, գիլից ձիւնաթաթախ շուլահին վերցնելով և մի կողմ դնելով:

Խտնութի փոքրիկ և աշխոլթ գործակատար Համբարձումը մի բոպէում մէջ տեղ դրաւ երկու լիք շիշեր, չընալելով որ սեղանը լիքն էր կիսատ շիշերով:

— Կոնծիր, ներսդ տաքացրու, որ դուրսդ էլ տաքանայ:

Սէլրանը, կարծես, հէնց մի ալդպիսի առաջարկութեան էր սպասում: Նա վերցրեց բաժակը, դատարկեց, վերցրեց երկրորդը, նոյնպէս դատարկեց և դրաւ սեղանի վրայ:

Ոռուստամը իւր հայեացքը նրանից չէր հեռացնում: Միւսները նոյնպէս զարմացած նայում էին նրան: Միրքաւոր երիտասարդը, ալդ նկատելով, բարձրացաւ տեղից և լայտնեց.

— Ով որ չի ճանաչում, թող ճանաչի: Դա մեր շամախեցի կուժ ծախող Հայրապետի տղան է, մի քէֆ

անող ջահիլ: Մի ալդպիսի տղայ չի լինի, Ոռուստամ, ես դրան երկու տարի առաջ Նամախում մի լաւ քէ. Փումն եմ ճանաչել:

Ոռուստամը կըկին նալեց Սէլրանին և լռեց, իսկ Սէլրանը, նստողների վրայ ուշագրութիւն չըդարձնելով, կըկին համարձակօրէն լցրեց երկու բաժակ և դատարկեց:

— Այ ապրես, ապրես, Սէլրան ջահիլ, տղայ դու ես, որ առանց նազի բանդ շինում ես, — բացականչեց միրքաւոր երիտասարդը: Յետոյ նա աչքով արաւ հանդիսականներին, և սրանք, մի-մի բաժակ լցնելով, սովորական խօսքերով շնոհաւորեցին Սէլրանի գալուստը և դատարկեցին:

Խնջուքը տաքացաւ, և ամենքը սկսեցին իւսրուետելից բաժակները լցնել ու դատարկել, բացի Ոռուստամից, որը Սէլրանի ներս մտնելուց յետոյ լուռ էր և ոչնչի ձեռք չէր տալիս:

— Հայրապետ ապօրը ես ճանաչում եմ, ինչպէս չէ. նա հօրս հետ լաւ բարեկամ է, մեր տուն Զատիկ, Զրօրհնէնք շնորհաւորելու էր դալիս, — մէջ մտաւ հաստ երեսով երիտասարդը, որ Շամախուց նոր էր եկել: Տղերք, մի լաւ կոնծենք Սէլրանի կենացը:

— Իրան երկու-երկու խմեցրէք, որ մեր չափին հասնի, — աւելացրեց միրքաւոր երիտասարդը:

Բացի Ոռուստամից, ամենքը Սէլրանի կենացը խմեցին: Սէլրանը երեք բաժակ գինի իւրաքու ետելից դատարկեց իւրեւ ի նշան խորին շնորհակալութեան:

Քառորդ ժամից յետոյ խնջուքը բոլորովին տաքացաւ: Միրքաւոր երիտասարդը սկսեց անկարգ-անկանոն պարսկերէն երգել, կամ, ուղիղն ասած, դուռալ խիստ անախորժ ձայնով: Միւսները սկսեցին խօսել, վիճաբանախորժ ձայնով: Միւսները սկսեցին խօսել, վիճաբանախորժ մունջ երբեմն դիմել, բացի Ոռուստամից, որ լուռ ու մունջ երբեմն դի-

նու բաժակը մօտեցնում էր զբթունքներին ու դարձեալ յետ դնում չըխմած:

Սէլրանը նոյնպէս լուռ էր, սակայն նրա գլուխը տաքացել էր, փոքրիկ աչքերի բերերը արդէն փայլում էին:

Երբ հանդիսակաների դլուխը խառնվեց, Ոուստամը, որի առնական բիրտ դէմքը պատել էր սովորական մըռուալլութիւն, իւր արմուկնելը դրաւ սեղանի ծալրին, դլուխը յենեց ձեռների ավերին և մնաց անշարժ: Նա մըռտածում էր.

— Սէլրան, Սէլրան: Կարծես, սուր ասեղով ծակեցին մարմինս երբ լսեցի ալդ անունը: Դա - նա է: Սիրասվկայում է, որ այստեղ մի բան կալ էլի: Բայց ինչ բան պիտի լինի: Նա խօ սուտ էր, սուտ էր: Հըմ: — Զէ, անցեալ օրը Գեամազանց Մուրագը մի ակնարկ արաւ խօսելու ժամանակ. «Սէլրանը եկել է, սովոծ շունը կատաղած է լինում, մուղալիթ կաց հայ, ասաց նա: Սէլրանը իմ կնիալ առաջուայ փեսացուն է: Ալդ ես անցեալ շաբաթ եմ իմացել: Առասանի ծնողները նրան Սէլրանից յետ են կտրել ու ինձ են տուել: Մեր քաղաքի ադամին է, մէկի վրայ նշանել ու յետոյ ուրիշին տալ: Այստեղ զարմանալի բան չկայ: Բայց, Տէր Աստուած, Տէր Աստուած, սիրտս, չըգիտեմ ինչու, էլի ասում է, թէ անպատճառ մի գտղոնիք պիտի լինի: Ի՞նչու համար է նա գիշերուայ կիսին եկել: Ոչ բարեկամներ ենք, ոչ ազգականներ և ոչ էլ իրարու ճանաչում ենք: Մէկ էլ որ նա իմանում է, թէ ես ով եմ: Տէր Աստուած, ինչքան Փիքը եմ անում, էլի չեմ հասկանում: Եկել է, սուս ու փուս նստել ու խմում: Կասես, տասը տարի է, որ ինձ հետ ընկերութիւն է անում: Ի՞նչ լրբութիւն, ի՞նչ աներեսութիւն, հըմ. թէ վերկենամ, կռնից բռնեմ — զուրս ձգեմ: Տես, ինչպէս է ճակատի

տակից, աչքերը պլզած, մտիկ անում ինձ: Մարդ կարողանայ իմանալ, թէ նա հիմա ինչ է մտածում: Տէր Աստուած, ինչպէս է լտկում, կասես գիտ լինի: Հարբել է, աչքերը պլպլում են: Ի՞նչու է ալդքան խմում: Բայց, Տէր Աստուած, ընկերներիս դէմքը բաս ինչու է փոխվել: Նրանք ինչու են կասկածանքով մտիկ անում ինձ և նրան: Համբերեմ, երեխ, բանը շուտով կըպարզուի, խօ զուր չէ եկել նա այստեղ: Էլի սիրտս օձ կծեց, էլի հարսանիքի գիշերուայ տանջանքը...

Այսպէս մածելով, Ոուստամն իւր մատների արանքով մտիկ էր անում հերթով մերթ Սէլրանի մերթ միւսների երեսներին:

Վերջապէս, միրքաւոր երիտասարդը բարձրացաւ իւր տեղից և ասաց.

— Տղերք, գիշերը անցնում է, ժամանակ է տուն գնալու, բաժակներդ լցրէք, որ մեր թանգառնին Ոուստամի կենացը մէկ էլ լաւ կոնծենք, շնորհակալութիւն անենք ու ցրվենք:

Ամենքն անյապաղ կաս արեցին միրքաւոր երիտասարդի առաջարկութիւնը, մի-մի բաժակ լցնելով և տեղերից վեր կենալով:

Սէլրանն անշարժ էր:

— Ոուստամ, Աստուած մինդ հազար անի, — ասաց բարձր ձայնով և հանդիսաւոր եղանակով: Նոյն միրքաւոր երիտասարդը: — Տղերք, միաբերան Աստծուց խնդրենք, որ նա շուտով Ոուստամին մի լաւ դոչ տղայ պարգևի:

— Ամեն, ամեն, Տէր Աստուած, կրկնեցին միաբերան բոլորը:

Սէլրանը լուռ էր:

— Սէլրան, վերկաց, ի՞նչ ես քնել, — գոչեց միրքաւորը:

Սէլրանն իւր թուլացած, իրանը ուղղեց և բարձրացաւ տեղից:

Միրքաւորը մի բաժակ գինի լցրեց և առաջարկեց նրան:

—Ա՛ռ, կոնծիր և Աստծուց խնդրիր, որ նա մի լաւ որդի բաշխի Որուստամին: Հը՛, շուտ արա, ինչ եռ պառաւ կնկայ պէս թուլացել:

Սէլրանը բաժակը վերցրեց և մի հայեացք ձգեց բոլորի վրայ: Նա կազդուրեց իրան և գլուխը հպարտութեամբ թեքեց զէպի մէջքը: Յետոյ նա աջ ձեռը դրաւ խանչալի կոժի վրայ և ձախ ձեռով բաժակը գըլիցից վեր բարձրացնելով, արտասանեց հետեւալը.

—Աղա թամադա, ինչպէս հրամայեցիր, ես էլ ցանկանում եմ պարոն Որուստամին երկար կեանք, առողջութիւն, հարստութիւն, տուն, աեղ, ձեզպէս ընկերներ, ինձ պէս հիւր... հուռուայ:

—Հուռուայ, —կրկնեցին միայն Շամախուց եկածները:

—Այ զոչաղ, լաւ ճառ ամել դիտես հայա, բարեկամ, —բացականչեց միրքաւորը:

Որուստամն իւր աչքերը չէր հեռացնում Սէլրանի երեսից:

—Սէլրանը շարունակեց.

—Աղա թամադա, ինչպէս հրամայեցիր, ինդրում նմ Աստծուց, որ նա Որուստամին պարզեցի մի լաւ զոշաղ տղայ զաւակ, որ լինի իրա նման շնորհքով, աշխատով և...

—Ամէն, ամէն, Տէր Աստուած, —կրկին բացականչեցին Շամախուց նոր եկածները:

—Վարդապետի լեզու ունի, —մէջ մտաւ առանց միրուքի առետրականը, որ ամենից քիչ էր խօսում:

—Սարգիս վարպետի աշակերտ կասեն դրան հա,

լաւ ճանաչեցէք, —աւելացրեց միրքաւոր երիտասարգը: Հըմ, Սէլրան, էլ ասելիք ունիս, ասաւ:

Սէլրանը շրթունքները կրծոտեց և ձեռը աւելի ամուր սեղմեց խանչալի կոթին:

Որուստամի զննող հայեացքը բևեռված էր նրա վրայ:

—Տայ Աստուած, որ Որուստամի տղան աչքունքով էլ, երեսով էլ իրան պէս լինի, որովհետեւ...

—Հըմ, —բացականչեց անհամբերութեամբ միրքաւորը:

—Հըմ —արտասանեց անդիտակցաբար Որուստամը:

—Որովհետեւ... որովհետեւ... նահլաթ քեզ չար սատանայ:

—Որովհետեւ զինին շատ զօր է անում գլխիդ, —միջամտեց կրկին անմիրուք առևտրականը:

—Թողէք, թողէք, վերջացնի, —հրամայեց միրքաւորը:

—Որովհետեւ ես գիտեմ, որ Որուստամի տղան, հաստատ գիտեմ, որ նա... նահլաթ չար սատանին:

—Հըմ, —շեշտեց միրքաւորը:

—Հըմ, —կրկին արտասանեց Որուստամը:

—Կարճ կապիր, —աւելացրեց միրքաւորը:

—Որ Որուստամի տղան կամ աղջիկը (այդ Աստուած է իմանում), որ պիտի շուտով ծնվի...:

—Չէ, շատ է երկարացնում:

—Որ պիտի շուտով ծնվի, չէ թէ իրան Որուստամին կընմանի, չէ, երես—մերեսով, աչքունքով կընմանի կուժ ծախող Հայրապետի տղայ Սէլրանին, ինձ, ինձ...

Վերջին խօսքերն արտասանելով, Սէլրանը բաժակը առանց գատարկելու շպրտեց խանութի լատակի վրայ: Գինու շթուները ընկան համգիսականների երեսին, իմիջի ալրոց և մի գաթիլ Որուստամի բաց ճակատին:

Հանդիսականները դարմացած նալեցին Սէլրանի
երեսին:

Ոուստամը ինչպէս կար կանգնած, նոյնպէս և
մնաց, միայն նրա դէմքը մի վալրկեանում փոխվեց
կտաւի պէս սպրդնելով:

Կէս ըոպէի չափ տիրեց լոռւթիւն: Ո՛չ ոք չըհաս-
կացաւ Սէլրանի խօսքերի միտքը:

—Բաժակը բնչ էր արել քեզ, —ընդհատեց խորհըր-
դաւոր լոռւթիւնը անմիրուք առեւտրականը:

— Բաժակը : Ես բաժակը փշրելով, փշրում եմ այն
մարդու սլատիւը, որին դուք այդքան պատւում էք և
որն այդ բաժակի աէրն է:

Ոուստամը կտաղեց: Նա մի քալ առաջ շարժվեց
դէպի Սէլրանը, բայց կրկին կանգնեց և աջ ձեռը առաջ
տարածելով, շնչասպառ ձայնով ասաց.

—Պարոն Սէլրան, ես քեզ չեմ ճանաչում, առաջին
անգամն եմ տեսնում երեսդ: Ասա, տեսնեմ, ինչու հա-
մար ես եկել իմ խանութիւնը և բնչ պատճառով ես այս-
պիսի անպատւութիւն անում:

—Անպատիւ մարդու խանութում անպատւութիւն
անելը արդարութիւն է: Ես եկել եմ, որ քեզ ճանա-
չեցնեմ այստեղ լինողներին (նա մատնացոյց արաւ հան-
դիսականներին): Բէնամուս ջահիլ, ես քեզ խօսք ասե-
ցի, դու նրա միտքը չըհասկացար: Եթէ ուզում ես, կտ-
ող եմ պարզ ասել...

—Սէլրան, բնչ ես դուքս տալիս, գինին քեզ գըր-
վեցրել է, —ընդհատեց միրքաւոր երիտասարդը:

—Այդ քը բանը չի, քաշվիր, ես որքան էլ որ
հարբած լինիմ, գիտեմ ինչ եմ խօսում:

—Դուքս եկ, կորիր, թէ չէ, Աստուած գիտէ,
արիւնս գլխովս է տալիս, —գոռաց Ոուստամը մի ալն-

սիսի գօրեղ և կատաղի ձայնով, որ բոլոր հանդիսա-
կանները սարսեցան:

—Թող կորչի այն մարդը, որի նամուսը աղքի մէջ
է թաղված: Ոուստամ, աչքերդ բաց արա, ես Սէլրանն
եմ, այն Սէլրանը, որ քո ընտանիքում երկրորդ հայր կըլի-
նի շուտով: Գնա, գնա, քաշիր չոլերը ընկած կնոջդ
կապը և լետոյ սիրտ արա ինձ հետ խօսելու:

Ոուստամի համբերութիւնը սպառվեց: Կատաղած
առիւծի պէս նա վազեց դէպի խանութիւնը պատը: Մի
վալրկեանում նա խլեց երկայն գեօրդան (գեօրդա-խան-
չալի մի տեսակն է, որ աւելի երկայն է և քիչ կեռ) և
մերկացնելով յարձակվեց Սէլրանի վրայ:

Հանդիսականները շփոթվեցին, բարձրացաւ մի խառ-
նաշփոթ աղմուկ: Միրքաւոր երիտասարդը մտաւ մէջ
տեղ և քաջութեամբ կտրեց Ոուստամի առաջը:

—Թող թիքա-թիքա անեմ շուն՝ շան լակոտին,
թող, ասում եմ, —գոռաց Ոուստամը, աշխատելով դուրս
պըծնել անմիրուքի գրկից:

—Կնիկը պիտի մի մարդ ունենալ, թող մեղանից
մէկը դուրս գալ մէլդան, —ասաց Սէլրանը, նոյնպէս մեր-
կացնելով իւր խանչալը:

—Կծիր լեզուդ, թէ չէ ես էլ համբերութիւնից
դուրս եկալ, —գոռաց նրա վրայ անմիրուք երիտասարդը:

Շամախուց նոր եկածները Սէլրանին բռնեցին:

—Թող, ասում եմ, թէ չէ՝ փորդ կըլսրեմ, —բղաւեց
կրկին Ոուստամը, գեօրդան պսպղացնելով միրքաւով
երիտասարդի գլխին:

Սէլրանը խանչալը դրեց պատեանի մէջ, մօտեցաւ
խանութիւնի անկիւնին, վերցրեց եափունջին, ձգեց թւին
և դուրս վազեց, բացականչելով.

—Եթէ չես հաւատում, գնա, գնա, բաց արա

կնոջդ կուրծքը և մտիկ տուր սև խալին, սև խալին,
սև խալին...

— Ճաքեց սիրտս, բաց թող, քեզ ասում եմ, խալը,
խալը, կրծքի սև խալը, ուժ...

Ոռւստամը թուլացաւ միրքաւորի գրկում, գեօր-
դան ընկաւ նրա ձեռից:

— Բոնեցէք, մի թողնէք, որ փախչի, ես նրան կը-
տոր-կտոր պիտի անեմ,—գոռաց միրքաւորը: Նա հա-
նեց իւր խանչալը և դիմեց դէպի գոները:

— Իզուր է, նա կորաւ, գնաց, — բռնեցին նրան-
նորեկները:

— Զուր, ջուր բերէք, խեղճ տղան մեռնում է, —
բացականչեցին չորս կողմից, Ոռւստամին շըշապատելով:

— Չեմ մեռնում, փոքր ջուր, սիրտս այրվեց, —
փշրված ձայնով արտասանեց Ոռւստամը, գլուխը բարձ-
րացնելով:

— Ուշքի եկ, Ոռւստամ, կորաւ այն լակոտը, —
ասաւ միրքաւորը, բռնելով Ոռւստամի թեկից:

— Ո՛չ ոք չի հաւատում նրա կեղտոտ խօսքերին, —
մէջ մտաւ հաստերեսանին:

— Նա ինքն անսլատիւ է եղել սաղ քաղաքում,
ուզում էր որ ջիգը քեզանից հանի, — աւելացրեց պա-
տանին:

— Սաւադ, — դարձաւ Ոռւստամը միրքաւոր երի-
տասարդին, ոտի կանգնելով և աշխատելով զսպել իւր
վրդովմունքը, Սաւադ, վազ տուր, հէնց ալս ըոպէին մի-
ձի վարձիր, առ փողը, ահա:

Նա հանեց գրպանից փողի քսակը և մեկնեց Սա-
ւադին:

— Ի՞նչ ես անում, — հարցրեց զարմացած վերջինը,
քսակը չ'նդունելով:

— Լաւ խաբեցին, լաւ քանդեցին տունս: Ես ան-

նամուս եմ, ախ մայր, մայր, մեղաւորը դու ես, կեղտո-
տեցիր անունս: Կրծքի խալը, հըմ, Սուսան, բաս ալդ-
ոլէս:

Ոռւստամ, գժվել ես, ինչեր ես դուրս տալիս, —
ասաց Սաւադը, անմեղ կնոջդ մասին ինչ բաներ ես
մտածում, խելքի եկ, նա արդար է:

— Ինչով իմանամ, որ արդար է: Եօթ սարերի ե-
տեռում ինչ գիտեմ, թէ նա ինչեր է անում: Կրծքի
խալը, օօօ, այդ լաւ նշան չէ, սև...

— Լաւ նշան չէ, զորդ է, — կրկնեց անմիրուքը:

Ոռւստամը նայեց նրա երեսին և աւելի սպրդնեց:

— Ինչ եմ անում, — ասաց նա ինքն իրան: Տղա-
մարդ ես, խելքի եկ, Ոռւստամ, Փիքրդ հաւաքիր, նա-
մուսդ չի մտել տափիր: Տղերք, եթէ ինձ սիրում էք,
եթէ իմ ընկերութիւնը ձեզ համար գին ունի, աղաչում
եմ, հէնց ալս ըոպէին ինձ համար մի ձի վարձեցէք:

— Հերիք է, Ոռւստամ, ինչ երախալութիւններ
ես անում, — հակառակվեց Սաւադը:

— Ղորդ ես ասում, հերիք է, ալսուհետեւ ամեն-
բան վերջացած է, բայց ձի վարձիր, գիտես, ձի վարձիր:

— Թող լուսանայ, լետոյ կըվարձենք, քիչ հան-
գստացիր, կապոյտ կասլաել ես բարկութիւնից:

— Անիծվեն ձեզ պէս ջահիլները, — կատաղեց կըր-
կին Ոռւստամը և դէպի դուրս վագեց:

— Բոնեցէք, բռնեցէք, տղերք, — գոչեց Սաւադը,
վազ տալով Ոռւստամի լետուից:

Ամենքը, բացի խտնութի գործակատար Համբար-
ձումից, հետեւեցին նրան, անլապազ միասին դուրս
թափվելով:

Զիւնը շարունակում էր բրդել երկնքից, քամին
սաստկացել էր:

Ոռւստամն անհետացաւ ձիւնի ալիքների մէջ:

Առաւօտ էր. քամին դադարել էր, ձիւն չէր գալիս: Զմերային թոյլ արեգակն իւր մեղմ ճառագալթները սփռել էր ձիւնի սպիտակ սաւանով ծածկված Շուրայի շրջակայ դաշտերի, սարերի և անտառների վրայ:

Սէլրանն եափունջու մէջ փաթաթված և օթևանի մի անկիւնում կուչ եկած, ծխում էր: Նրա անքնութենից և հարբեցողութենից ուռած ու կարմրած աչքերը յառված էին օթևանի յատակի մի կէտին: Խղճալի էր այդ ըոպէին Սէլրանի կերպարանքը: Խիտ և կեղտու մազերը խճճվել էին ու սփռվել նրա նիհար ճակատի վրայ: Նրա գունազուրկ դէմքը, սղմված շրթունքները արտայալում էին ներքին հոգեկան ալեկոծութիւն: «Ինչ արի ես, Տէր Աստուած, ինչ արի,— կրկնում էր անդագար ինքն իրան Սէլրանը, բոլոր շընչով ներս քաշելով և կրկին բաց թողնելով ծխախոտի թանձր ծուխը: «Ինչպէս ծնվեց իմ գլխում այդ չար միտքը»,— ասում էր նա, երեմն իւր ձախ ձեռը ևս հանելով եափունջու տակից և նայելով մատների ծայրերին:

Ստէպ-ստէպ նա գլուխն և ուսերը ցնցողաբար շարժում էր, ինչպէս մի մարդ, որ մտաբերում է մի քստմելի և զգուելի տեսարան:

Բահ, նա դողում է, նրա մազերը ցցվում են, երբ միտն է ընկնում այս գիշերուայ իւր վարմունքը: Նա ինչ մի չար ոլժ էր, որ ստիպեց Սէլրանին գիմել այդ սարսափելի միջոցին: Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչ հետեանք կունենան Սէլրանի խօսքերը ինչպէս կըտանի Ուուստամը ալդ խայտառակութիւնը: Օօօ, Սէլրանը գիտէ, գիտէ, նա լսել է թէ Ուուստամն ինչ բնաւորութեան տէր մարդ է: Ասում են եթէ նա հէնց այս գի-

շեր ճանապարհ է ընկել գէպի Շամախի: Ի՞նչու է ճանապարհ ընկել: Հըմ, ինչու պիտի ճանապարհ ընկնէր. ով լինէր Ուուստամի տեղը, որ մի րոպէ մնար: Նա կատաղի, ինքնասէր, կիսավարենի լեզգիների մէջ ապրած մարդ է, նա համբերել չէր կարող, մանաւանդ ուրիշների մօտ, մանաւանդ իւր ընկերների մօտ, որոնց բարգանքը նա միշտ վայելել է իբրև մի պատուասէր, մի նամուսով մարդ:

Սէլրանը ծխախոտը ձգեց մի կողմ, եափունջին քաշեց ուսերին, բարձրացաւ տեղից և սկսեց օթևանում շրջել լետ ու առաջ:

— Բահ, այ ինչ ասել է նամուս,— շարունակեց ինքն իրան խօսել Սէլրանը: — Ուուստամն անպատճառ գնաց տեղեկանալու, ստուգելու իմ յալտնած գաղտնիքը:

Գաղտնիքը ստուգվելու է, նա տեսնելու է Սուսանի կրծքի խալը: Ոչ, Տէր Աստուած, Տէր Աստուած, եթէ հնար լինէր ալդ խալը հէնց այս ըոպէին ջնջելու: Այն ժամանակ ինչով կըփերջանար բանը: Այն ժամանակ Սէլրանն ինքը կըկորչէր: Բայց, արդեօք, աւելի լաւ չէ, որ Սէլրանն ինքը կորչի, քան թէ, քան թէ, այս, մի անմեղ, մի անարատ արիւն թափիի: Զէ, արդէն ուշ է, բանը բանից անցել է: Ուուստամը տեսնելու է խալը, իսկ տեսնելուց յետոյ ինչ կանի նա այդ Սէլրանի համար շատ պարզ է:

«Ուփ»— իորը հառաչեց Սէլրանը, աշ ձեռով մի ուժգին հարուած տուտւ ճակատին և մնաց օթևանի մէջ տեղում անշարժ: Սուսան, այդ ինչ չարութիւն էր, որ նա արտւ քեզ, չէ որ գու արդար ես, ինչպէս մի անմեղ երեխայ, մաքուր ես, ինչպէս այսօրուարեգակի լոյսը: Ի՞նչ տեղ հասցրեց քեզ քո հաւատարմութիւնը:

ԶԵ որ նա Սուսանին սիրում էր, չԵ որ հենց այս սէրն էր, որ տանջում էր նրան: Բայց ինչպէս պատահեց, որ մի ամսուալ ընթացքում այդ սուր սէրը սուր ատելութեան փոխվեց: Ո՞վ էր մեղաւոր, ո՞վ էր Սէլրանին փոխողը: Միթէ այն ներքին փտած, զգուելի որդը, այն թունաւոր օձը, որ «ինքնասիրութիւն» է կոչում: Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ կարելի է այդպէս ցոյց տալ ինքնասիրութիւն: Ոչ, ոչ, այսպէս չեղագիներն էլ չեն անում: Այլ վրէժխնդրութիւն չէր, այդ վախկոտութիւն էր, կեղասոտ վախկոտութիւն: Սէլրանը լսել էր և ինքը գեռ մի շաբաթ առաջ աչքով տեսել էր թէ լեզգին ինչպէս է վրէժխնդրի լինում իւր հակառակորդից: Լեզգին իւր թշնամուն սպանում է երեսառ երես կանգնելով նրա առաջ, և սպանում է իւր վրէժը հանելու համար, ճշմարիտ վրէժը: Լեզգին տղամարդ է, տղամարդու հետ է կովում և ինչպէս է կովում եափունջու վրայ^{*)}: Լեզգին երբէք կնոջից վրէժ չի հանում, թէ կուզ այդ կինն իրան մինչեւ հոգու խորքը վիրաւորված լինէր: Իսկ Սէլրանը, նա ումից է հանում իւր վրէժը: — Մի թոյլ արարածից, Սուսանից: Ինչու, ինչով է մեղաւոր Սուսանը, ինչ է արել Սէլրանին: — Ոչինչ, ոչինչ, Տէր Աստուած, նա մի խեղճաղջիկ էր, ծնողները տուին իրանց ցանկացած մարդուն, և ինքն էլ գնաց: Ի՞նչ կարող էր անել: «ԶԵ, Սէլրանը վաս բան արաւ, շատ վաս բան, այնքան վատ,

^{*)} Դաղստանում կատաղի թշնամիներն երեմն եափունջին սփուռմ են գետնին և նրա վրայ մենամարտում են սրբով: Հակառակորդը եթէ ոտն եփունջուց դուրս դրաւ, համարվում է լաղթված, երկչոտ, անազնիւ: Այդ ոովորութիւնը այժմ հետզետէ թուլանում է:

որ ոչ ոք, ոչ ոք չէր անի: Ախ Աստուած, միթէ է այնքան ատելի էր, քո աչքում, այնքան Դու նրան մռացել էիր, որ գոնէ մի վալրկեան այդ երեկոյ նրան չըմտարերեցիր: Ի՞նչ անէ հիմայ, ինչպէս արածը լետ դարձնէ, թքածն ինչպէս լիզէ: Կըլիզէ, կը լիզէ, եթէ միայն այդ կարելի լինի: Ծանր մեղք է, շատ ծանր, կայէնի սպանութիւնից էլ ծանր, Յուդաի մատնութիւնից էլ աններելի: Ոչնչացըու նրան, Տէր Աստուած, վեր առ այս աշխարհի երեսից, հոգին տար գժոխիքը, բաժանիր սատանաներին: Հա, բաժանիր և հրամայիր, որ ասեղների ծալրերին ցցած խորովեն գեհենի կրակի մէջ: Սէլրանը գարշելի արարած է, արժանի է այդ պատժին: Բայց ոչ, սպասիր, միթէ արժանի է, միթէ միակ մեղաւորը նա է...

Սէլրանը մօտեցաւ օթևանի սպատուհանին և սկսեց նայել դէպի քարվանսարայի բագը: Նրա անորոշ հայացքն անցնում էր բագում գտնվող մի առարկալից դէպի միւսը: Նա կամ մաիկ էր անում դատարկ, փէլինաթաթախ սալլերին, որոնց մօտ կապած ձիերը, գըլուխները մի մսուրի մէջ մտցրած, գարման էին ուտում, երբեմն խըխնջալով, կամ մտիկ էր անում տախտակեալ ծածկոցի կտուրին, որի տակ մի խումբ սալլապաններ, խարուկի շուրջը տաքանալով, խօսում էին ուծիծաղում: Մօտ քառորդ ժամ նա մնաց այդ դրութեան մէջ: Յանկարծ երեսը շուր տուաւ, ձեռները խաչածեղարսեց կծքին, գլուխը քիչ թեքեց դէպի աջ ուսը և սկսեց ինքն իրան խօսել: — Ծնվեցի թէ չէ, — այս աշխարհում մի բաղդասը, մի հանգիստ օր չըտեսալ և սպասում եմ, այսուհետև տեսնեմ: Ալսուհետև, երբ բանը բանից անցել է, երբ լոլսերս մեռել են: ԶԵ, որքան որ մտածում եմ, ուրիշ ելք չըկայ, բացի մէկից»:

Արտասուքի կաթիլները դուրս գլուխելով նրա աչ-

քերից և սահմելով նիհար երեսով, թրջեցին նորաբոյտմիրուքը՝ նա հանեց արխալուղի գրպանից մի կեղտոտ թաշկինակ և նրանով ցամաքացրեց աչքերը:

Մնացէք բարով, ծնողներ, մնաս բարով, մայր: Նաձեզ այնքան չարչարել է, որ լեզուն անդամ չի պատում ներողութիւն խնդրելու: Քան տարով դուք շուտ ծերացաք նրա պատճառով: Ներեցէք և դուք, Բարխուդար, Գիւլնազ և Սմբատ, Հա, նա ձեզ էլ շատ տանչեց: Հա, Բարխուդար, նա քեզանից ներողութիւն է խնդրում, նա քո անունը իզուր տեղը Շամախում կոտրեց: Ով որ լինէր քո տեղը ուրիշ կերպ չէր կարողանել: Հիմայ Սէլրանը գիտէ, որ այդ բոլորի մեղաւորը ինքն է: Սուսան, Սուսան, քեզ ինչ ասի, քեզանից ինչ երեսով ներողութիւն խնդրէ: Մեղքն այնքան ծանր է, որ ներողութիւն խնդրելն անդամ մի ուրիշ լանցանք կը լինէր: Բայց ինչ անէ: Դու անպատճառ զոհվելու ես նրա չար ստախօսութեանը, հըմ, ինչ անէ:

Սէլրանը կրկին լռեց և դարձեալ ընկաւ մտածողութեան մէջ: Չանցաւ երկու ըոպէ, երբ նա յանկարծ գլուխը բարձրացրեց: — Եհ, վճռված է, էլ երկար մտածել հարկաւոր չէ, փշրված ամանը չի կարելի սազանել, իսկ կոծկել նա չի ուզում: Մնում է միայն մի միջոց, և այդ միջոցը նրա ձեռին է: Ա.Հա:

Նա եափունջին ուսերից ցած գցեց, կանգնեց օթևանի մէջ տեղում և խանչալը մերկացրեց:

Այդ ժամանակ նրա աչքերը փայլեցին կատաղի հըրով, շրթունքները սղմվեցին, քնթի սկնչերը չովեցին: Նա մտիկ արաւ խանչալի այս երեսին, այն երեսին և կոթը աւելի ու աւելի աջ ձեռում սեղմելով, փոքը առ փոքը բարձրացրեց: Նա խանչալի ծալը պահեց կրծքից մի փոքը ներքեւ, ձախ ձեռը յենեց կողքին և իւր հայեցքը դարձնելով աջ ձեռին, որով սեղմած ունէր խանչալի կոթը, պատա:

— Առանց հաղորդվելու, բայց մեղքերս խոստովանելով, Տէր Աստուած, տալիս եմ իմ հոգին Սաղայելիձեռը: Խանչալ, անցեալ օրը քո ծախողը գովում էր քեզ, ես քեզ մինչեւ այժմ չեմ փորձել, տեսնենք ինչպէս ցոյց կըտաս հունարդ:

Սէլրանի ձախ ձեռը թուլացաւ, ընկաւ կողքին, աջ ձեռը դողաց, և յանկարծ խանչալը ընկաւ օթևանի յատակի վրայ սուր ծալը գետնի մէջ:

— Զէ, չեմ կարող, Աստուած չի թողնում: Նա վերցրեց խանչալը և շպրտեց օթևանի մի անկիւնը:

— Դու չես կարող Սուսանին մահից տղատել, — ասաց նա, նայելով խանչալին:

Գեռ ժամանակ կայ, ժամանակ կայ սրալը ուզգելու: Այս ըոպէին, հէնց այս ըոպէին վարձել մի ձի և շտապել Ուուտամի յետելոց: Նա կարող է հասնել նրան: Կըհասնէ, ճշմարտութիւնը կըպատմէ, կասէ, որ սուսաւ է ասել, կասէ, որ հարբած էր: Այդ լաւ պատսուած է — հարբած լինելը: Տէր Աստուած, գոնէ այս անգամ նրան միտք բեր, այս անդամ օգնիր, իսկ յետոյ փամ նրան միտք բեր, այս անդամ օգնիր, իսկ յետոյ փինչ ուզում ես — կանես: Արարիչ Աստուած, քո ձեռին է ինչ ուզում ես — կանես: Արարիչ Աստուած, ձիու մի ոտը ճանամեն բան, կարող ես Ուուտամի ձիու մի ոտը ճանամեն բան, կարող ես Ուուտամի ձիուն թևեր տալ:

Նա եափունջին կրկին ձգեց ուսերի վրայ, վեր առաւ խանչալը, դրեց պատանի մէջ, երեսին երեք անդամ խանչալքեց և գուրս գնաց:

Գրսում քամի չըկար, արեգակ էր, բայց եղանակը սաստիկ սառն: Սէլրանն ուշագրութիւն չըդարձնելով իւր հագուստին, դիմեց գեղպէ հրապարակի ծալը և անհետացաւ նեղ փողոցներից մէկում:

Այդ օրից ուղիղ մի շաբաթ էր անցել:
Իրենագէմ էր. փետրվարի թուլ արեգակն արդէն
հորիզոնից ցած իջնելով, մայր էր մտնում: Նամախու
կիսախարխուլ շինութիւնները, հողի և քարի կոլտերով
ծածկված կեղառտ ու ցեխոտ փողոցները ներկայացնում
էին մելամախձոտ տեսաբան: Յերեկուայ աշխատանքից
լոգնած և թուլտցած բնակիչները դանդաղութեամբ
դիմում էին իրանց տները, ով գիտէ ինչ մտքերի մէջ
խորասուզված:

Օրը շաբաթ էր: Վերջին երկրաշրժի հարուածից
ջախջախված վաղեմի եկեղեցու զանգերը ժամհար
Մովսէսը զարկելով հնչեցնում էր բաւական ներդաշ-
նակ կերպով: Սպիտակուհի ծերունիները, լենվելով
իրանց ձեռնախալտերի վրայ, պառաւ կանալք չարշով-
ների մէջ փաթաթված, կուզկզալով դիմում էին գե-
պի Աստուծոյ տաճտը, իրանց սովորական աղօթքը կա-
տարելու:

Տէրտէրները, առժամանակ փողոցում հաւաքված,
եկեղեցու դռների առաջ մի քանի բարեսկաշտների հետ
խօսում էին ու գանգատվում ժողովրդի վրայ, որ եկեղեցի
չի լաճախում: Նալեցէք ալս կողմ, ահա մէջտեղում
կանգնած է Տէր Արքահամը, երկու ձեռները գաւազա-
նի ծալրին լենած և երկայն ու չալ միրուքը առաջ
ցցած: Նա համ խօսում է, համ էլ մտքում համարում
եկեղեցի մտնողների թիւը: Ահա, տէրողորմեան ձեռում
պատացնելով, մօաեցաւ «մոլթանի Դասպարը»: Օրհնեա
տէր, —ասաց նա և թեքելով գլուխը, ցոյց տուաւ տէր-
տէրին իւր մտշուած փափաղի ծալրը: —Աստուծ օրհ-
նի, —պատասխանեց տէրտէրն և իսկոյն քնթի տակ աւե-
լացրեց աչքունքը ծռելով, «դէնըթկան եկաւ»: Մոլ-

թանի գասպարը միշտ գանձանակ էր գցում քառորդ
կոպէկից ոչ աւելի. այս պատճառով Տէր Արքահամը
շատ էր ատում նրան և «դէնըթկա» անուանում:
Վերջապէս, փոքր առ փոքր բարեպաշտների թիւը
շատացաւ, տէրտէրները քաշվեցին ներս, որ ժամեր-
գութիւնը սկսեն:

Սանամը, որ Նամախու ամենաեկեղեցասէր պա-
ռաւներից մէկն էր, զանգակների ձախնը լսելով, իսկոյն
չարշովը գցեց գլխին:

—Սուսան, մինչև յետ գալս չալը պատրաստիր,
որ դրտից գամ, մի երկու բաժակ տաք-տաք խմեմ,—
հրամայեց նա, դռներից դուրս գնալիս:

—Աչքիս վրայ, —պատասխանեց Սուսանը և շտա-
պէց կատարելու իւր սկեսրոջ հրամանը:
Սացաւ քառորդ ժամ Սանամի դուրս գնալուց,
Սուսանը գնաց խոհանոց, ինքնաեռը կրակ գցեց և կըր-
կին վերադարձաւ սենեակը:

Պատկվելուց յետոյ առաջին վեց շաբաթուայ ըն-
թացքում Սուսանի առողջութիւնը բաւական կազդուր-
վել էր: Նրա նիհարած և պշկած երեսի վրայ կրկին
սկսեցին երեալ նախկին կայտառութեան նշանները:
Բայց, աւազ, այդ բարեփոխութիւնը երկար չըտեսց:
Անցան առաջին շաբաթները, նա կրկին սկսեց թա-
ռամիլ, և այս անգամ աւելի արագ:

Սանամն այդ նկատում էր:

—Ախջի, բնչդ է պակաս, որ օրից օր էդպէս հաւ-
կում մաշվում ես; —Հարցնում էր նա ստէպ-ստէպ:

—Չեմ իմանում, —պատասխանում էր Սուսանը, մի
հոգոց հանելով ամեն անգամ:

—Ախար էլի:

—Ով է իմանում, կարելի է նրանից է:

—Ինչից:

—Պատճառաւոր...

—Ղորդ, հողը գլխիս, ախար երկուհոգիս ես:
Եւ այսպէս, վերջապէս, Սուսամը գտաւ իւր հար-
սի մաշվելու պատճառը և դադարեց անհանգստացնելու
նրան իւր միատեսակ և ձանրացուցիչ հարցերով:

Երբ Սուսանն առանձնացաւ սենեակում, նստեց-
թախտի վրայ և սկսեց նիհարած ձեռներին նայել:

—Ղորդ է ասում սկեսուրս, շատ եմ լղարել, մա-
տերս չոփեր են դառել, ոսկորներս համարել կարելի
է,—ասում էր նա ինքն իրան, ձեռները սղմելով և
բանալով:

Մի ըստէի չափ նա պարապեց իւր ձեռներով,
լետոյ դրաւ կոնատակին և ընկաւ մտածմունքի մէջ:

Դեռ երեկ գիշեր Սուսանը Սէլրանին երազում տե-
սաւ: Ինչպէս փոխվել էր Սէլրանը, որքան ուրախ և
զուարժ էր նա: Սուսանն երբ նրան տեսաւ ուրախ,
ինքն էլ ուրախացաւ: Նա մօտեցաւ իւր սիրեցեալին,
բռնեց նրա ձեռից, ուզեց որ խօսի, բայց սիրեցեալը
մի ծուռ հայեցք ձգեց Սուսանի վրայ, ձեռը իւլեց,
երեսը շուռ առաւ և, առանց մի խօսք ասելու, հեռա-
ցաւ: Արտատուքն աչքերին Սուսանը նայում էր Սէլ-
րանի ետևից, բայց սա ուշադրութիւն չէր դարձնում,
գնում էր ու գնում: Նա, կարծես, փախչում էր
Սուսանից, ինչպէս մի զարհուրելի գազանից, որ պիտի
իրան կլանէր: Սուսանը բարձր ձայնով զոչեց նրա ե-
տելից: «Սէլրան, մի փախչիր, ես եմ, ես եմ, Սուսանդ
եմ»: Սէլրանը մի քանի վայրկենաչափ երեսը դարձեց
Սուսանին: Ով Տէր Աստուած, որքան զարհուրելի էր
նրա դէմքը: Նրա աչքերը ալրփում էին, բերանից կը-
րակ էր դուրս գալիս, ինչպէս թոնրից: Նա աջ ձեռը
բարձրացրեց դէպի երկինք, մի բառ արտասանեց,
բայց ինչ էր ալդ բառը—Սուսանը չըլսեց: Յետոյ Սէլ-

րանը կըկին երեսը շուռ տուաւ Սուսանից և սկսեց
փախչել: Սուսանը վազ տուաւ, որ հասնի, բայց ինչ-
պէս կարող էր հասնել նրան: Սէլրանը վազ էր տալիս
ինչպէս ձի: Սուսանին մինչև անգամ ալնպէս թւաց,
որ Սէլրանը մէջքից ներքև ձի էր, իսկ վերևը մարդու
Տէր Աստուած, Տէր Աստուած, ալդ ինչ է նշանակում,
ինչպէս բայցադրել ալդ երազը: Երեկ առաւօտեան գո-
ուալով ու սարսափած Սուսանը զարթնեց քնից և իսկոյն
բաց արաւ Շնչիմերդէնս ու մաիկ տուաւ:—«Օրը բարի է,
երազը քառասուն օրն կտարի»:

Քառասուն օր, ախ ինչ ուշ, ինչպէս պիտի կտ-
տարի: Տէր Աստուած, դու չարը խափանես, բարին
առաջացնես:

Սուսանը երեք անգամ երեսին խաչակնքեց:

Սէլրանը խօմ նրանից խռովել է—այս նա գիտէ:
Բայց միթէ ալժմ ատում է: Անկարելի բան է: Զէ,
Սուսանը չի հաւատում, չի հաւատում, որ Սէլրանը
նրան ատելիս լինի: Սէլրանն ատել չի կարող, չի կա-
րող. նա սիրում է, սիրում է խելագարի պէս: Ալդ է
վատը, ալդ է Սուսանի անտանելի ցաւը: Մայրն ասում
է, որ Հայրապետը ալժմ ուզում է հաշտվել Սուսանի
հօր հետ, որ նրանք էլի առաջուայ պէս շարունակեն
իրանց բարեկամութիւնը: Իսկ Մարիամ բացին չի նե-
րում Սուսանին, նա չի ուզում հաշտվել: Քանի քանի
անգամ Սուսանն իւր մօրն ուղարկել է, որ նրան իւր
մօտ բերի, բայց չի եկել: Խեղճ կնիկ, եթէ դու ամեն
բան հասկանալիր, եթէ դու Սուսանի ցաւերը իմանա-
լիր, կարելի է, որ քո որդին ալսօր ոլքա-օլքա չընկ-
նէր: Ասում են, որ նա Շուրապումն է, ինչու է գնա-
ցել, ինչ գործ ունի այնտեղ: Մազերը փշաքաղվում են,
մարմինը զարգանդում է, երբ միտն է ընկնում, որ
Սէլրանն այնտեղ կարող է Ոուստամին պատահեր կա,

Երկուսն էլ, երկուսն էլ կըփչանան, տաքարիւն տղերք են: Բայց հազար անգամ երանելի կըլինի Սուսանը, եթէ նրանց տեղը ինքը փչանալաւ աշխարհում: Մէլրանը, երեխ, ուզում է Խուստամից հանել իւր ոխը: Բայց ինչով է մեղաւոր խեղճ Խուստամը: Տէր Աստուած, Տէր Աստուած, հերիք է ինչքան Սուսանին պահեցիր, առ այժմ նրս հօգին, ազատիր նրան, վերջապէս:

Սուսանը կռները լենեց ծնկներին և գլուխը դրաւ ձեռների ափերի մէջ: Եւ այդ ժամանակ նրա առաջ սկսեց սրատկերանալ իւր անցեալը: Նա մտաբերեց իւր մանկութիւնը, երբ Մէլրանի հետ ամառ օրերը գլխարաց արեգակի տակ «տիկին-տիկին» էր խաղում: Նա լիշեց երկրաշարժի օրը, երբ ինքը Մէլրանի հետ մնաց հոգի տակ: Երանի, հազար երանի, եթէ հենց այն օրը մեռնէր, ինչու նրան ազատեցիր, Աստուած: Ինչու: Որ նա ինքն էլ չարչարվի, ուրիշներին էլ չարչարէ, համ:

Յետոյ Սուսանը մտաբերեց ուսումնարանական կեանքը, լիշեց դեղնած ու պշկած Հռիփսիմէին, որ օրական հինգ անգամ ստիսում էր իւր աշակերտուհիներին «Հայր մերը» կրկնել և ամեն անգամ ինքը, երեսը դէպի ազօթարան չոքած, ձեռները կրծքին ծալած, աղօթում էր, իւր կապտած շրթունքները շարժելով: «Մեռաւ իւր կնիկը, գնաց այն աշխարհ, նրա հոգին հիմայ արքայութենումն է: Հա, երանի քեզ, կոյս, որ դու այս ցաւերը չես քաշել, աշխարհից հեռացած և Աստծուն նուիրված»:

Այնուհետեւ Սուսանը մտաբերեց իւր ընկերուհիներին և Սուսամբարին: Սուսամբարն ասում է, որ ինքնասպանի հոգին առանց դատաստանի դժոխքն է ուղարկում: Վայ Սուսանին, վայ Սուսանին, սատանան քանիքանի անգամ է ուղեցել նրտն խալել: Սպանի

իրան և բացի իրանից մի ուրիշ անմեղ անարատ հոգի, օօօ, այդ դժուար է, շատ դժուար է:

Ինքնասպանութեան միտքը ստրսափեցրեց Սուսանին: Նա այդ բանից վախեցած, բարձրացրեց գլուխը և սկսեց անգիտակցաբար նայել սենեակի առաստաղին: «Ի՞նչ մեղ ունի այն փոքրիկ արարածը, որ դեռ նոր պիտի աշխարհ ընկնի»:

Մի քանի վայրկեան այս մտքով զբաղված, Սուսանը նայում էր առաստաղին: Յետոյ նա գլուխը թեքեց կրծքին և կրկին սկսեց մտիկ անել իւր նիշարած ձեռներին:

— Զէ, շատ եմ մաշվել, — ասաց նա ինքնիրան, — շատ եմ մաշվել, սրտիս թռթոսցն էլ սաստկացել է: Օրերով հաց չեմ ուտում: Տէր Աստուած, Տէր Աստուած, չէ՞ որ այդ էլ ինքնասպանութիւն է: Դէհ, հերիք է, հերիք է, ինչքան տանջեցիր, երեսդ ինձ դարձրու, մի խռովիր գլխիս, աղաչում եմ...

Այս տակով, Սուսանը չոքեց, գողդոջուն ձեռները պարզեց դէպի երկինք և սկսեց ազօթել: Նա մտհ էր ինդրում Աստուածուց: Նրա կապտած, արիւնաքամ շըրթունքները ցնցողաբար գողդոջում էին, նրա կիսամաշ աչքերի մէջ փալլում էր խորին մռալլութիւն: Երբ Սուսանը գլուխը վեր քաշեց, երկար գիստկները թափվեցին նրա ոսկորացած ուսերի վրայ:

Այդ դժութենում Սուսանը նմանում էր այն վանական անարատ կուսին, որ նիւթական աշխարհից հրաժարված, ձգտում է հոգիանալ և համբարձվիլ երկինք դէպի հոգիների սփերան...

Դարձետլ եկեղեցու զանգերը. հնչեցին: Քաղաքի հիւսիսային կողմում, դէպի Վուբայ քաղաքը տա-

նող ճանապարհի վրայ երեւցաւ մի ձիտոր լեզու
շուլահին գլխին սեղմած և ու եափունջու մէջ փա-
թաթված:

Ուստամի ձին յոգնած էր և հազիւ կարողանում
էր փոխել իւր ուները: Եօթներորդ օրն էր այդ օրը,
որ Ուստամը Շուրալից դուրս էր եկել: Եօթն օր շա-
րունակ, տուանց որ և է քաղաքում հանգստանալու,
նա ճանապարհ էր դալիս: Թէ ինչ մարմնաւոր և հո-
գեկան տանջանքներ էր կրել Ուստամը այդ եօթն
օրուաւ ընթացքում—այդ նկարագրել անհնարինէ: Կորելի
է միայն այդքանն տսել, որ նա անհամբերութեամբ
դիմում էր գէսի Ուստանը, դիմում էր գէսի այն արա-
րածը, որ «Ուստամի նամուսը ծախել էր ուրիշներին»:

—Լաւ կորաւ, լաւ փչացաւ քսանեն եօթ տարում աշ-
խատած անունս, —կրկնում էր նա անդադար, մտրակե-
լով ձիուն և անցնելով Դաղստանի սարերը ու դաշտերը:

Եւ այդ մտքով յափշտակված, ինքն իւր մէջ խո-
րասուզված, Ուստամը ուշադրութիւն չէր դարձնում
ոչ քամուն, ոչ ձիւնին ու բուքին և ոչ էլ որ և է
վտանգին:

Վերջապէս, ահա նա հասել Շամախի, կէս ժամ ևս,
և ահա նա կանգնած կըլինի Սուսանի գէմ ու դէմ:
Սակայն, զարմանալի քան: Եօթն օր է նա անհամբե-
րութեամբ շտամում է Շամախի հասնելու, եօթն օր
է, որ նրա միտքը կաշկանդված է միայն և միմիայն շուտ
տեղ հասնելու ցանկութեամբ: Խսկ այժմ, երբ նա գրէ-
թէ Շամախումն է, այժմ, կարծես, ալլ ևս չի շտապում:
Մի միտք, որ մի բոսէ, գէմ մի վալրկեան նրա գլխով
չի անցել ոլն ժամից սկսած, երբ նա կատաղած դուրս
թռաւ խանութից—այժմ՝ յանկարծ ծնվեց նրա ուղե-
զում, այժմ, երբ ընդամենը միայն կէս ժամ է մաս մաս,
որ պիտի ամեն ինչ սպարզվի:

—Ի՞նչ պիտի անեմ, եթէ Սէլրանի ասածը հաս-
տատվի, —ասաց նա յանկարծ ինքն իրան և, ձիու սան-
ձը քաշելով, կանգնեց ճանապարհի մէջտեղում:

Նա բարձրացրեց իւր գլուխը, նայեց գէպի քաղաք:
Բահ, հրէն, եկեղեցին էլ երեսում է, նա հասել
է: Ի՞նչու է եկել, հըմ: Բահ, ինչպէս թէ ինչու է եկել,
միթէ այդ յայտնի չէ: Եկել է... հա, եկել է իմանալու
այն, ինչ որ ուզում էր իմանալ: Բայց եթէ իմացաւ,
եթէ սառւգվեց նրա ասածը, յետո՞յ: Հըմ, նահլաթ,
նահլաթ քեզ չար սատանայ...

Նա մի քանի անգամ շարունակ կրկնեց «նահլաթ
քեզ չար սատանայ», նայելով մերթ եկեղեցու գմբէ-
թին, մերթ իւր ձիու բաշին: Վերջին անգամ «նահլաթ
քեզ չար սատանայ» արտասանելուց յետոյ, նա խկոյն
կուռը մեկնեց և, ձեռի ափով շոյելով ձիու բաշը, ասաց.
«Խեղճ հէլվոն, խեղճ հէլվան, շատ ես լոգնելոյ: Մի
ընպէ այդ գրութեան մէջ մնաց, յետոյ յանկարծ մտրա-
կեց ձիուն, և ձին խրխնջալով սկսեց առաջ գնալ: Բայց
մի քանի քալլ չանցած, նա կրկին քաշեց սանձը և կանգ-
նեց: Այս անգամ նա աջ ձեռը յենեց թամքի դնդի
վրայ, մէջքը քիչ թեքեց և ընկաւ մտածողութեան մէջ:
Անցաւ մի քանի բոպէ ևս, և նա, իրանը ուղղելով,
կրկին նայեց գէպի քաղաք: Այդ ժամանակ թոյլ կեր-
պով նրա ականջներին համար եկեղեցու զանգերի
ձայնը: Դողոցի նման մի բան զգաց նա մի վալրկեան,
երբ լսեց այդ ձայնը:

—Մայրս հիմայ չարշովի մէջ փաթաթված, եկե-
ղեցու սկացած սիւնի տակ կանգնած, աղօթք է անում
ինձ համար, որ պարիք ուքաներում նրա միակ բալին
Սատուած խաթաբալից հետու պահի:

Մտաբերեց մօրն աղերսող գէմքով եկեղեցու պատ-
կերներից մէկի տռած մոմ վառելիս, ձեռը գրաւ աչքերի

վրայ, մի քանի անգամ կրկնելով. «Խեղճ մայր, խեղճ մայր»: Յետոյ ձեռը հեռացրեց ճակատից, ոտներով բոթեց ձիու փորին և առաջ գնաց: Անցաւ մի յիսուն քայլ, և գարձեալ նա ձիուն պահեց:

Պէտք է ճշմարիտն իմանալ, — այդպէս չի կարելի: Պէտք իմանալ, թէ ով է այս բանում գլխաւոր մեղաւորը: Ասենք թէ խալը... ու՞Փ:

Ոռւստամը մի ապտակ տուաւ իւր ճակատին:

Սաենք թէ խալը երևեցաւ Սուսանի կրծքի վրայ, ասենք թէ Սէյրանի խօսքն ուղիղ դուրս եկաւ: Յետոյ: Ո՞վ է մեղաւոր: Սուսանը՝, Սէյրանը՝, թէ մի ուրիշը: Սուսանին Ոռւստամի համար իւր մայրն է ուզել, ուրեմն նրա մատն էլ խառն է: ուրեմն նա էլ է մեղաւոր: Զարանգիզի Նըպաւնիկը միջնորդ է եղել, ուրեմն Նըպաւնիկն էլ է մեղաւոր: Քանիսը՝, քանիսը, Տէր Աստուած: Մայր, մայր, ինչու դու կենդանի թաղեցիր քո Ոռւստամին: Դրանով ես պարծենում, որ նըրան սիրում ես, միզ է քո մայրական խնամքը: Նըպաւնիկ, հըմ, դու սատանաների աղբից գոյացած արարած, դու խորամանկ կնիկ, նոր շալ էր հարկաւոր քեզ, հաւ լաւ, շատ լաւ, սպասիր, սպասիր, կըստանաս: Տէր Աստուած, Տէր Աստուած, հասել է, հասել: Ինչիցն է վախենում, ումբից: Լեզզիների մէջ ասլրած մարդու սրտում «վախ» ասած բանը թնչ է անում: Զէ, նա չի վեխենում, նա կնիկ չէ, տղամարդ է: Գնա, գնա, հէլ վան, տար տիրոջդ: Ոռւստամը մտրակեց ձիուն և հասաւ քաղաքի ծալրին: Օրը գեռ չէր մթնել, երբ նամտաւ փողոցները: Նրան սկսեցին հանդիպել ծանօթ դէմքեր, բայց, խորասուզված լինելով իւր մտքի մէջ, ոչ ոքի վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Այս ու այն կողմից ծանօթները, նրան տեսնելով, զանազան նշաններով սկսեցին ողջունել գալուստը: Նկատում էր թէ ոչ

այդ բարեները, բայց անտարբերութեամբ մի հայեացք ձգելով բարեողների վրայ, առանց պատասխանելու անցնում էր: Երբ հասաւ իրանց փողոցի ծալրին, այստեղ կրկին պահեց ձիուն:

Հասել է, Տէր Աստուած, Տէր Աստուած, ջնջիր Սուսանի կրծքից այդ նշանը, ոչնչացրու խալը, եթէ միայն կայ, ապա թէ—չէ նրա աչքերը կըտեսնեն: Մի կոցնիր Ոռւստամի հոգին, Տէր Աստուած, մի թողնիր, որ նա դժոխքի կերակուր դառնալ, նա չի ուզում, չի ուզում արիւն թափել: Ոչ, եթէ կարելի լինէր ծակել նրա սիրտը, միջի արիւնով ջնջել Սուսանի կրծքի այդ խալը, որ նա չըտեսնէ:

«Սիրտս վկայում է, որ կայ այդ խալը Սուսանի կրծքի վրայ, — աւարտեց Ոռւստամը և, ձիուն մտրակելով, հասաւ իրանց դռներին: Նա արագութեամբ ցած թռաւ ձիուց և, մի ուժգին հարուած տալով դռներին, բացարաւ և ձիու սանձը ձեռին ներս մտաւ:

Ոռւստամը գլուխը վեր բարձրացրեց և նրա հայեացքը ընկաւ պատշգամբի վրայ կանգնած մի կանացի կերպարանքի վրայ: Այդ ժամանակ, կարծես, մէկը սաստիկ հարուած տուաւ նրա եռելից: Ձիու սանձը ընկաւ նրա ձեռից, և ինքը մի քանի քայլ առաջ գնաց ու կանգնեց: Կանացի կերպարանքն անշարժ կանգնած նալում էր Ոռւստամի վրայ: Ոռւստամը գնաց առուջ, բայց, ձիուն մտրակելով, յետ դառաւ կրկին, սանձը վերցրեց և ձեռով նշան արաւ կանացի կերպարանքին:

Սուսանը չըհաւատաց իւր աչքերին, նա չըհաւատաց, որ իւր առջև կանգնած է ամուսինը: Սակայն երկար չըտեկց երկմտութիւնը, նա ուշքի եկաւ, մի ինչոր բառ արտասանեց բարձր ձայնով և պատշգամբից գլխակոր ցած իջաւ: Ամուսնական պարտաւորութիւն էր, թէ մի ուրիշ գեցացմունք, այդ ինքը գիտէր,

միայն Սուսանը մի ուրախ ժպիտ երեսին դիմաւորեց Թուստամին։ Բայց որ այդ ժպիտը կեղծ էր և ակամալ՝ — այդ երեսում էր Սուսանի աչքերից, որոնց արտայալ-տութիւնը չէր համապատասխանում երեսի փոփոխութեանը։ Սուսանը վազեց դէպի Թուստամը։ Բայց երբ հայեցքն ընկաւ վերջինի ծոմոված դէմքի վրայ, չը կարողացաւ առաջ շարժվիլ և կանգնեց մի քանի քայլ հեռու։

— Ո՞ւր է սկեսուրդ, — հարցրեց յանկարծակի Թուստամն իւր կոշտ և անյոզդողդ ձայնով։

— Ժամումն է, — պատասխանեց Սուսանը, ձեռները կրծքին խաչելով և գլուխը քարշ ձգելով, ինչպէս կախալանի դատապարտված մի յանցաւոր։

Թուստամը ձիու սանձը բռնեց և տուաւ Սուսանին։

— Ո՞վ կայ տանը։

— Մէնակ եմ, — պատասխանեց Սուսանը, սանձը առնելով։

— Մէնակ ես։

— Մէնակ եմ։

— Հըմ։ Լաւ, տար ձիուն, կապիր ախոռում, դարի ու դարման ածիր առաջը, շատ ածիր, իմացար։

— Աչքիս վրայ, — պատասխանեց Սուսանը և շոտպեց իւր ամուսնու հրամանը կատարելու։

— Յետոյ շուտով առւն եկ, — աւելացրեց Թուստամը եափունջին ուսերից ձգելով թամքի վրայ։

Երբ Սուսանը ձիու սանձը ձեռին քիչ հեռացաւ, Թուստամը նայեց նրա յետելից և ինքն իրան ասաց, «ինչ անմեղ է ձեւացնում իրան»։ Յետոյ նա արտգութեամբ բարձրացաւ պատշգամբի վրայ և առանց հանվելու, ցեխոտ կօշիկներով մտաւ սենեակը։ Նա մօտեցաւ և նստեց պատի տակ շինած թախաի վրայ, երեսը դէպի բագը։ Մի բոպէ չանցած, դըսից լսվեց Սանամի ձայնը։

— Ղորդ ես ասում, աղջի, որտեղ է, որտեղ է, դէ, ասա, աղջի, սիրտս ճաքեց, տրաքեց քիի։

Թուստամը, լսելով այդ ձայնը, քթի տակ ասաց ինքն իրան։ «ուրախացել է»։

Սանամը գլխակոր ներս վազեց։

— Թուստամ, բալաս, դու ես... ըհ ես քո ոտների տակին թարթափիլ անեմ, վույ ես բոլիդ մեռնեմ, բարով, հազար բարով ես եկել, ալ գեղա։ Մօտեցիր, մօտեցիր, ալ գեղա, որ մի պաշեմ էդ սիրուն աչքերդ։

Այս ասելով, կարօտեալ մայրը լարձակվեց իւր սիրեցեալ զաւակի վրայ, որ համբոյրներով ծածկէ նրա երեսը։ Բայց սիրեցեալ զաւակը հրեց մօր կրծքին և երեսը մի կողմը շուռ տուաւ։

— Աղջի, մազս կտրվի, տղաս չի թողնում, որ իրան մօտենամ, այ գեղա, չես ամաչում։ Թող պաշեմ, ախար քանի վախտ է պոչոշներս կարօտել են։ Ախ, քուանամ ես, խելքս Սստուած առել է գլխիցս, ախար դու ցրտից ես գալիս։ Աղջի, Սուսան, շուտ արա սմավարը տուն բեր, չայ չինի, որ բալաս տաք-տաք մի քանի ստաքան խմի։ Թուստամ բալաս, ասա, խօսիր, քէֆդ, հալդ, օվհալդ։ Հըմ, մի տեսնեմ, լզարել ես, թէ չաղացել, հըմ, ինչո՞ւ չես խօսում, հա, դորդ, քար կտրվեմ, ցրտից ես եկել...

Եւ այսպէս, միամիտ Սանամը քնքշութեամբ գուրգուրում էր իւր զաւակին, ուրախութենից զանազան պտոյտներ անելով նրա շուրջը, նա իրարու ետևից զանազան հարցեր էր առաջարկում և, Թուստամից պատասխան շըստանալով, ինքն իրան պտապասխանում էր։

Սուսանն ինքնառար ներս բերաւ և սկսեց շտապով թէլ պատրաստել։ Սանամը չարշովը շպրտեց մի կողմը, ճրագը վառեց և դրաւ սեղանի վրայ։ Ճրագի լսյը տարածվեց Թուստամի տիսուր և սպրդնած դէմքի

վրայ: Նա լուս և շփոթված պտտում էր ցեխուն
կօշիկներով սենեակի ալս անկիւնից դէպի միւսը:

Մինչև այդ ըսպէին միամիտ Սանամը չէր նկատել
իւր որդու տիսրութիւնը, իսկ երբ նրա հայեացքը ըն-
կաւ Ուուստամի երեսին, ինեղն կինը ապշեց:

— Հըմ, չէ, ախար, հըմ, այ գեղա, թող տեսնեմ,
այ գեղա, ինչ է իւել, որ աչքունքդ կախ ես գցել,—
հարցրեց նա, շփոթվելով և վախվախելով ձեռներն առաջ
տարածած:

— Նեղացած եմ, — պատասխանեց, վերջապէս, Ուուս-
տամը:

— Դինջացիր, գինջացիր, բալաս: Սանամը քար ու
քեասագ կտրվի. նա տաք: տեղ նստի, դու չոլերում,
ցրտի ու ձիւնի տակ չափ հա չափ անես: Քար կտրվի
Սանամը, քար: Դինջացիր, տեղերդ շինեմ, հա:

— Եինիր:

— Առաջ շորերդ փախիր, քրտնած ես, կըմրսես:
Զայ խմիր, հաց կեր ու յետոյ: Աղջի, Սուսան, ինչ իւա-
քեղ, չայ բեր, փլաւ եփիր:

Սուսանը երկու բաժակ չայ բերաւ: Ուուստամը
իրարու յետեից դատարկեց և կրկին հրամայեց, որ ան-
կողին պատրաստեն շուտով:

— Դու հեռացիր միւս սենեակը, — ասաց նա Սա-
նամին:

— Ի՞նչ, ինչ ասացիր, հեռանամ, — հարցրեց Սա-
նամը զարմացած, որպէս թէ նրան մի անկարելի բան-
էին հրամայում:

— Գնա, թող քիչ հանգստանամ, էգուց կըխօսենք:

— Բաս էս գիշեր, էս գիշեր ես պիտի կողքիդ քնեմ:

— Ձեռ քաշիր, — կրկնեց Ուուստամը կոշտ ձայնով:

— Ձէ, քաս զլուխդ ցաւում է, ցուրտ է կայել, բեր
տեսնեմ, դու ինձանից կեղում ես:

Սանամը մօտեցաւ Ուուստամին և ձեռը գրաւ նրա
ճակատին:

— Ձեռ չես քաշելու, փիէ, — բացագանչեց Ուու-
ստամը, հրելով իւր մօր կրծքին:

— Տաքացած ես, բեր, խալդար կապենք վզիդ, —
շարունակեց Սանամը, ինքն էլ չըհասկանալով թէ ինչ
է խօսում: Տեսար, տեսար, Սուսան, ես առաւօտ ասա-
ցի, որ երազ եմ տեսել, ասացի, որ կամ երեխաս գա-
լու է, կամ գիր ենք ստանալու: Ուուստամ, քեզ էս գի-
շեր երազումս մի սե ձիու վրայ նստած տեսայ, սև
ձին դովլաթ է: Հա, գուշափացնում էիր, ես էլ ետևիցդ...

— Լաւ է, լաւ, էգուց էգուց կըպատմես, ձեռ
քաշիր, — ընդհատեց Ուուստամը մօր շատտիսութիւնը:

— Ինչ անեմ, ուրախութենից ինքս էլ չեմ իմա-
նում ինչեր եմ դուրս տալիս: Սուրաբա կուզես:

— Ձէ, եթէ ինձ սիրում ես, այս գիշեր մի խօսեց-
նի: Նեղեցած եմ:

— Հա, նեղացած ես, բալաս, հա, թող տեղերդ
պատրաստեմ, — ասաց Սանամը և մօտեցաւ անկողնին,
որ Ուուստամի համար պատրաստի:

Ամբողջ այդ խօսակցութեան ժամանակ Սուսանը
ինքնաեռի կշտին կանգնած, ձեռները ծոցում ծալած,
մտիկ էր անում կամ Ուուստամին կամ Սանամին: Երբ
Ուուստամը իւր հայեացքը ձգում էր նրա վրայ, Սու-
սանը իսկոյն աչքերը ցած էր գցում:

Սանամը պատրաստեց անկողնինը և երկու բաժակ
չայ խմեց, անդագար նայելով իւր որդու երեսին և չը
համարձակվելով որ և է հարց առաջարկել նրան: Սու-
սանը չայ չէր խմում. նա շարունակ նայում էր իւր
ամուսնուն, կարծես, ձգտելով նրա դէմքի վրայ կարդալ
այն, ինչոր մտածում էր Ուուստամը:

Սանամը մի անգամ ես փորձ արաւ իւր որդուն մօ-

տենալու և խօսեցնելու, բայց այս անգամ Ոռուստամը նրան վճռողաբար հրամայեց, որ իրան հանգիստ թողնի ու հեռանալ միւս սենեակ:

Դառն էր Սանամի համար ալդպէս շուտով բաժանվել իւր որդուց, բայց տեսնելով, որ հնար չըկալ հակառակվելու, վախենալով, որ մի գուցէ աւելի բարկացնի Ոռուստամին, հնազանդվեց և վերին աստիճանի տհաճութեամբ հեռացաւ իւր սենեակը: Սանամի և Ոռուստամի սենեակները իրարուց բաժանվում էին մի բաւական ընդարձակ նախադաւթով, որ միշտ լիքն էր լինում այլ և այլ տեսակ գորգերով, որ նուրայից ուղարկում էր Ոռուստամը:

XVI

Առանձնանալով Սուսանի հետ, Ոռուստամը կողպեց դուռը և հրամայեց Սուսանին ինքնաեռը մի կողմը դնել: Սուսանը կատարեց նրա հրամանը և, քաշուելով սենեակի մի անկիւնը, ձեռները խաչածե ծալեց կրծքին և դարձեալ սկսեց նայել իւր ամուսնու երեսին: Մի ժամի չափ Ոռուստամը լուռ ու մունջ շրջեց սենեակում: Մի ամբողջ ժամ նա ոչինչ չըխօսեց, ոչ մի բառ չարտասանեց: Սուսանը կամենում էր խօսել, հարցնել Ոռուստամին նրա տիրութեան պատճառը, բայց ամեն անգամ, երբ հայեացքը ձգում էր նրա երեսին, Սուսանի լեզուն կապվում էր: Վերջապէս, Ռուստամը դադարեց լետ ու առաջ շրջելուց և յանկարծ շորերով և խանչալը մէջքին պառկեց անկողին վրալ:

—Մօտեցիր ինձ,—հրամայեց նա Սուսանին:

Սուսանը դողալով մօտեցաւ անկողնին և կանգնեց նրա առաջը, գլուխը խոնարհուծ:

—Զիւն գարի ու դարման առւի՞:

—Տուի:

—Նատ:

—Հըմ,—ասաց Ոռուստամը և լռեց:

—Ինչ փափուկ անկողին է, Սուսան: Այդ ում համար է:

Սուսանին այնքան զարմացրեց այդ տարօրինակ հարցը, որ չիմացաւ ինչ պատտախանէ:

—Չես լսում:

—Հըմ,—հարցը Սուսանը, աւելի ու աւելի զարմանալով:

—Ում համար է, ասում եմ, այս անկողինը:

—Քեզ համար:

—Ինձ համար: Նատ շնորհակալ եմ... բաս... նահալժ քեզ չար սատանալ:

Սուսանը նայեց նրա երեսին և դողալով մի քալլ լետ քաշվեց:

—Ինձ համար է:

—Քեզ համար:

—Բաս միւսը:

—Ի՞նչ միւսը:

—Միւս անկողինը:

Սուսանը այս ու այն կողմ նայեց, կարծես, աշխատելով խոյս տալ Ոռուստամի զննող հայեացքից:

—Չես իմանում:

—Ի՞նչ:

—Ես քեզ հարցնում եմ, թէ... ըմ... նահալժ քեզ չար սատանալ... հարցում եմ, թէ որտեղ է երկրորդ անկողինդ:

—Սուսանը լուռ էր:

—Չես լսում:

—Ի՞նչ ես ասում,—հարցը Սուսանը դողդոջուն

ձայնով, մի և նոյն ժամանակ, ապշած նայելով Ոռւստամի ուսերին:

—Ես հարցնում եմ, թէ ուր է երկրորդ անկողինդ,
—կրկնեց Ոռւստամը:
—Չեմ հասկանում:
—Չես հասկանում, թէ ինչ եմ ասում...այն միւսը,
որ, որ...

Ոռւստամը չըկարողացաւ, թէ չըկամեցաւ, բայց
չաւարտեց իւր խօսքը: Բարկութենից նրա շունչը փա-
թաթվեց, և նա, բարձրանալով անկողնից, սկսեց զրջել
յետ ու առաջ: Նա մտածում էր. «Սատանալ, ինչո՞ւ կարողանում է անմեղ ձեանալ իմ առաջ, իբրև թէ ոչ-
ինչ չի հասկանում»:

Մի քանի քոպէ Ոռւստամը շրջեց, յետոյ մօ-
տեցաւ անկողնին և պառկեց, առանց հանուելու, այն-
պէս, ինչպէս ներս էր մտել: «Նահալաթ քեզ չար սա-
տանալ; Նահալաթ—ասում էր նա մտքում—եթէ երեե-
ցաւ խալը, Տէր Աստուած, Տէր Աստուած: Կարելի է
նա տեսել է երեխալութեան ժամանակ, կարելի է նա
երկաշարժի օրն է տեսել, երբ նրանք միասին հողի
տակն են մնացել: Կարելի է ինքը չի տեսել, այլ լսել
է իւր մօրից, որ նկատած կըլինի բաղնիքում կամ մի
ուրիշ տեղ, մերկ ժամանակը: Չէ, չէ, բայց հարսանի-
քի գիշերուայ անցքը, բայց այն երկու ջահիլների իո-
ստկցութիւնը: Օրիորդ ժամանակ, հըմ... Այս մէկը
սուտ է, ես իմացալ: Ինչոր պատահել է, պատկվելուց
յետոյ է եղել: Ես ինչ գիտեմ, եօթը սարի քամակում,
թէ նա այստեղ ինչեր է արել: Իսկ մայրս, մայրս յի-
մար պառու է, տանը չի նստել: ՈւՓ...

Եւ Ոռւստամը արձակեց կրծքից մի դառն հառա-
չանք: Քառորդ ժամ Ոռւստամը ալդ դրութեան մէջ

մնաց, նայելով սենեակի տռաստաղին և անդադար հա-
ռաչանքներ արձակելով:

Սուսանը նրա երեսը չէր տեսնում, միայն պատի
տակ կանգնած, ձեռները ծոցում ծալած, լուռ ու մունջ
անորոշ հայեցքով նայում էր սենեակի պատերին, ա-
ռաստաղին, լատակին և ալին:

Յանկարծ Ոռւստամը բարձրացաւ տեղից:

—Նստիր, —հրամայեց նա Սուսանին:

Սուսանը անշարժ էր:

—Նստիր, քեզ առում եմ, ինչ ես կանգնել:

Սուսանը նստեց:

—Հարկաւոր է քիչ էլ համբերել, —ասաց ինքն
իրան Ոռւստամը և սկսեց կըկին յետ ու առաջ մջել:

Մի ժամի չափ ևս նա շրջեց, յետով մօտեցաւ սե-
փակեց դռները և յետ դրձաւ: Նա մօտեցաւ թախ-
տին և նստեց, ստները քարշ ձգելով:

—Չես պատախանում, —դարձաւ նա Սուսանին,
որ դեռ նստած էր թախտի վրա! մի քիչ հեռու իւր
ամուսնուց:

—Ի՞նչ:

—Ասա տեսնեմ, որտեղ է միւս անկողինը:

—Ի՞նչ անկողին:

—Որի վրայ, անառակ կնիկ, դու քնում ես Ոէ-
րանի հետ:

Սուսանը վեր թռաւ տեղից և տպշած նայեց նրա
երեսին:

—Ոէլրանը, —կարողացաւ միայն արտասանել նա
և մնաց տեղն ու տեղը կանգնած:

Հա, Ոէլրանը: Դու նրան չես ճանաչում, չես ճա-
նաչում կուժ ծախող Հայրապետի տղայ Ոէլրանին:

Սուսանը լուռ էր:

—Պատասխանիր, լիրը, շան զաւակ, պատասխանիր,
ճանաչում ես, —կրկնեց Ռուստամը, աշխատելով
ձայնը շատ էլ չըբարձրացնել:

Նա վեր թռաւ տեղից և, բռնելով Սուսանի թեփց,
կրկնեց մի քանի անգամ. «Հե՞ս ճանաչում, չես ճանա-
չում»:

—Սէլրանին ճանաչում եմ, —վերջապէս, շշնչաց
Սուսանը թոյլ կերպով:

—Ո՞վ է նա:

—Մեր հարեւանի տղան:

—Հարեւանիդ տղան և քո, և քո, և քո երկրորդ
մարդը, չէ...

Ռուստամի շնչառութիւնը քանի գնում, այնքան
սաստկանում էր, իսկ ձայնը խեղզվում:

—Ի՞նչ ես խօսում, —մըմնջաց. Սուսանը, ապշած
նէր իւր ձախ ձեռով:

—Ես ով եմ, —հարցրեց Ռուստամը, ուղիղ Սուսանի
աչքերին նայելով:

—Դու Ռուստամն ես:

—Քո ինչն եմ:

—Իմ մարդը:

—Սուտ ես ասում, անիծված կնիկ, քո մարդը
Սէլրանն է, Սէլրոնը, Սէլրանը, Խոստովանվիր, ասում
եմ, թէ չէ...

Այս ասելով Ռուստամը յանկարծ բաց թողաւ Սու-
տանի թեւը, խանչալը մերկացրեց, մի երկու քալլ հե-
ռու թռաւ և, կանգնելով նրա դէմ ու դէմ, ասաց.

Կանթեղի լուսաւորութեան տակ խանչալի բերանը
փալեց ինչպէս կայծակ:

Սուսանի մարմնով մի սասսուռ անցաւ, բայց յան-

կարծ նա, կարծես, մի բան մտաբերելով, ուշքի եկաւ
և ասաց.

—Նիմայ հասկացայ: Ռուստամ, քեզ չար լեզու-
նելը խալել են: Սէլրանին ես ճանաչում եմ, նա իս
տուաջուալ փեսացուն էր, ծնողներս քեզանից առաջ
նրա վրայ էին ուղղում սրակել:

—Դու նրան սիրել ես, անիծված, խոստովանվիր,
ողջ քաղաքն է ասում:

—Սիրել եմ և այժմ էլ սիրում եմ: Բայց, Ռուս-
տամ, ես անմեղ եմ, անմեղ եմ անկողնիդ առաջ, ինչ-
պէս այս ճրագի լուսը:

—Սիրում ես, բայց անմեղ ես, լոիր, լիրը, դու
նրա հետ գործ ես ունեցել, խոստովանվիր, թէ չէ—ես
կը հաստատեմ:

—Թող իմ հոգին դժոխքի կերակուր գառնալ, եթէ
ես սուտ եմ ասում: Ես Սէլրանին սիրում եմ, բայց
նրա հետ գործ չեմ ունեցել, —պատասխանեց Սուսանն
աւելի և աւելի անլողդողդ ձալնով:

—Ինքը Սէլրանն է ասում:

—Անկարելի է:

—Սուտ չեմ ասում, անիծված, ինքը Սէլրանն է
ասում:

—Սէլրանը, ախ, Տէր Աստուած, նա սուտ է ասել:

—Սուտ չի ասում: Բայց արա կուրծքը:

Սուսանը չըհասկացաւ Ռուստամի միտքը:

—Յետ քաշիր հալաւդ, բաց արա կուրծքը, ասում
եմ, թէ չէ՝ արիւնս դլխով է տալիս:

Սուսանը անզդայաբար, գողդոջուն ձեռներով հե-
ռացրեց իրարուց շապկի ծալրերը: Կանթեղի լոյսը բն-
կաւ Սուսանի կըծքին և լուսաւորեց նրա բամբակի պէս
սպիտակ ստինքը:

Ռուստամը խանչալը ձեռում, կողքին քարշ գցած,

մօտեցաւ Սուսանին և, գլուխը թեքելով նրա կրծքին, մտիկ տուաւ:

— Խալը, խալը, նա ճշմարիտ է ասում, ահա խալ...

Բացականչելով այս խօսքերը, Ոռուստամը խելագարի պէս ատամները կրծտելով, յարձակվեց Սուսանի վըրայ: Նա սեղմեց նրա իրանը իւր ամուր բազկով, բերանը կալցրաւ կրծքին և տզրուկի պէս բոլոր շնչով սկսեց ծծել նրա մարմինը:

Սուսանը զգաց սաստիկ կսկիծ: Նա ձեռները բարձրացրեց, որ պաշտպանվի, բայց աջ ձեռը ամուր դիպու խանչալի սուր բերանին և վիրաւորվեց: Լսվեց մի թեթև ճիչ, և Սուսանի անշնչացած դիակը դուրս պրծնելով Ոռուստամի գրկից, գլորվեց յատակի վրայ: Մի ձեռում արիւնոտ դաշոյնը բռնած, իսկ միւս ձեռը օդի մէջ ատրածած, Ոռուստամը նալում էր Սուսանի անշնչացած դիակին: Զարհուրելի էր նրա գէմքը. արիւնակի աչքերը վառվում էին այրվաղ ածուխի կտորների պէս: Նրա հաստ շրթունքներից կաթում էին Սուսանի կրծքից ծծած արիւնի կաթիլները:

Այդ գրութեան մէջ Ոռուստամը նմանվում էր ոռվածութիւնից կատաղած մի գայլի, որ առաջին հարուածով անշնչացնելով գառնուկին, պատրաստվում է նորից յարձակուելու, որ իւր սուր ժանիքներով յօշուէ սղորմելի զոհը: Անցաւ մի քանի վայրկեան, և Ոռուստամը խանչալը մի կողմը շպրտելով, չոքեց Սուսանի դիակի մօտ և գլուխը թեքելով, սկսեց զննել նրա կուրծը: Կարմիր արիւնը գուրս բղխելով նրա կծած տեղից, ողողում էր Սուսանի մարմարիոնի պէս ճերմակ կուրծքը: Ոռուստամը գրպանից հանեց թաշկինակը և արիւնը սրբեց:

— Խալը, խալը, կրծքի խալը, ահաւ Ես սխալվեցի: Խալը այստեղ է, ես միւս կողմն եմ կրծտել:

Այդ ժամանակ Սուսանը թեթև կերպով շարժվեց: Նրա աչքերի ծանրացած կոպերը յետ քաշվեցին և բերերը բացվեցան:

— Անմեղ եմ, անմեղ եմ, Աստուած, քեզ յալոնի է, սերիր իմ մեղքերը և յետոյ մռ հոգիս:

Սուսանի աչքերը փակվեցին, և նա մնաց անշարժ:

Ոռուստամը նալում էր նրա գէմքին: Յանկարծ նա արագութեամբ վեր թռաւ տեղից և, խանչալը սենեակի յատակից ճանկելով, որոտաց:

— Ճանաչիր, անիրաւ, լեզգի Ոռուստամն եմ ես, տես ումն ես խաբում, չար Յուլիանոս: Ես Ոռուստամն եմ, Ոռուստամը, բէնամուս չեմ, նամուս ունիմ:

Դուրս թռաւ ողորմելի զոհի կրծքից մի ահարկու ձախ և այնուհետև տիրեց լոռութիւն:

Սենեակի դոները դղրդացին և գոռալով սերս թըռաւ Սանամը:

XVII

Ոռաւօտ էր: Շամախու ամբողջ հայ բնակչութիւնը տեղից շարժված խուռն բազմութեամբ դիմում էր գէպի արևմտեան կողմը: Քաղաքի այն փողոցը, ուր գտնվում էր Սանամի տունը, արդէն բոլորովին լիքն էր վում էր Սանամի տունը, արդէն բոլորովին լիքն էր խառնիճաղանձ ամբոխով: Մեծ թէ փոքր, կին թէ տղամարդ, ամենքը երարանցման մէջ դիմում էին գէպի Սանամի տունը, որ այդ ժամանակ ներկայացնում էր սիրտ մորմոքող մի տեսարան:

Ոստիկանները աշխատում էին յետ մղել ամբախը, բայց ամենքը ձգտում էին մի կերպ առաջ շարժվիւ:

— Հայիֆ, հայիֆ էն գեօղալը, — լսվում էր այս ու այն կողմերից:

— Ասում են, որ ինչքան գեօզալ էր, էնքան լաւ հոգի ունէր:

— Խեղճ ողորմելին անմեղ տեղը փչացաւ դազանի ձեռին:

— Մուստամը կիսով չափ էլ մեղաւոր չէ, — մէջ մտաւ մօտ քսան ու երկու տարեկան մի երիտասարդ եւրոպական ձեռվ հագնված:

— Բայս:

— Մեղաւորը մեր քաղաքի վատ սովորութիւնն է: Երեսը կապած աղջկան տալիս են մի անժանօթ տղարի: Տղան ուրիշների խօսքին հաւատալով ուրիշների խօսքերով էլ կարծիք է կազմում իւր կնոջ մասին: Եթէ մէկը մի ծուռ բան է ասում թէկ սուտ, նրա աչքերը արիւնով լցվում են, խելքը կորցնում է և ահա այդպէս է անում:

— Ե՞ն, Աստուած ինչոր գրել է մեր ճակտուին, պիտի կատարվի, մնացեալը դատարկ բան է, — ընդհատեց երիտասարդին մի քառասուն տարեկան մարդ:

— Հայիփ, հայիփ:

Ալսպիսի և ուրիշ սրանց նման ցաւակցական դարձուածներ էին լսվում անդադար ամբոխի միջից:

Իսկ ինչ էր կատարվում այդ ժամանակ Սահսրամի տանը: Այդ գժուար է մանրամասն նկարագրել:

Աենեակներից մէկում յատակի վրայ ձգված էր Առասնի արիւնաշաղախ և արիւնաքամ դիսկը: Պատուհանի վերին ապակիներից առաւօտեան լուսոյ ճառագալիքները խուռն ամբոխի վրայով հազիւ հազ ներս սահելով, լուսաւորում էին դիսկի բաց երեսը: Խաղաղութեան հրեշտակը իւր թեւերը տարածելով այդ պայծառ երեսի վրայ, հովանաւորում էր նրան մի տեսակ մռավլ ստուերով: Պարսկական շքեղանկար կապերտը, որ սփռված էր դիտկի տակ, ծոծկվել էր Սուսանի արիւնով: Դիտկի

շուրջ հաւաքվել էին Սուսանի ծնողները, ազդականները, բարեկամները և մօտակայ հարևանները: Գիւնագը, անսպասելի տարաբախտութեան հարուածով փշրված մայրը, չոքել էր իւր սիրելի զաւակի անշունչ դիտկի դլիի կողմում և ողբում էր նրա յանկարծահաս կորուստը: Նա փետառում էր իւր ալէխառն մազերը և կեղեցում կուրծքը եղունգներով: Երբեմն-երբեմն դուրս էր թռչում այդ մաշված կրծքից մի կտաղի վայրենի գոռոց, և ամբոխը սարսում էր այդ ձայնից: Դիտկի աջ կողմում կանգնած էր ծերունի Բարխուդարը ձեռները ծոցում խաչաձեւ ծալած: Նրա գունապառ դէմքի վրայ կենդանութեան եթէ մի նշան կար, այդ նրա խոցոտված սրտի կսկիծը արտայատող աչքերն էր, որոնք բևեռված էին Սուսանի խաղաղ և հանգիստ դէմքի վրայ: Այդ բոսլէին Բարխուդարի մէջ, կարծես, կատարվում էր այն հոգեկան սլրօցեսալը, որ տեղի ունէր Քրիստոսի տջակողմեան աւազակի մէջ, երբ սա երեսը մեծ նահատակին դարձրած, աղերսում էր նրան չըմուանալ յափտենական կեանքում իւր մեղապարտ հոգին:

Դիտկի ձախ կողմում նստած էր Սուսամբարը: Դնչ էր անում Սուսամբարը, — այդ ոչ ոք չէր կարող հասկանալ: Նա մերթ կատաղաբար համբուրում էր իւր գժբաղդ ընկերուհոյ երեսը, մերթ անյագութեամբ լիգում էր նրա ֆակ աչքերը, երեսը, ձեռները, գլուխը և մերթ հեռու քաշվելով, փետում էր իւր մազերը և սուր եղունգներով կեղեցում մերկացած կուրծքը:

Սուսամբարի ետեից երկու երիտասարդներ աշխատում էին յետ մզել Սուսանի գիտից Սմբատին: Սըմբատի դէմքը ահաւելի էր: Նրա կուրծքը բաց էր և մազերը խճճված ու ճակատին թափված: Նրա վառված աչքերը վայլում էւն կատաղի հրով, և նա անդադար գոռում էր.

— Բաց թողէք, անիծվածներ, բաց թողէք ևս
պիտի խեղդեմ, պիտի շանսատակ անեմ, Ոռւստամ...
Ոռւստամ...

Բոլց երիտասարդները Սմբատին իրանց գրկում
սեղմած, աշխատում էին մի կողմ քաշել նրան:

Սուսանի դիակի ոտների կողմում չոքած էր Մա-
րիամ բաջին: Արտասուքի բուռն կաթները դուրս
թափելով աչքերից, ողողում էին նրա նիշար ու
պշկած երեսը: Նա անդադար իւր երկու ոսկորացած
ձեռները բարձրացնելով, մերժ ծնկներին էր խփում,
մերժ մերկացած կրծքին:

Մարիամ բաջու ետևից պտոյտ էր գալիս Հալրա-
պետը: Միամիտ ծերունին, կարծես, չէր կարողա-
նում հասկանալ թէ ինչ է կատարվում և ինչ է պա-
տահել նա զանազան տարօրինակ շարժումներ էր
անում: Նա շարժում էր իւր ալեխառն գլուխը, ձեռ-
ները տարածում օդի մէջ, շրջում էր ալս ու այն
կողմ, սրան ու նրան զանազան անհասկանալի հարցեր
առաջարկելով: Նա գոռում էր, գոյսում, բայց ոչ ոք
նրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում:

Մինչդեռ դիտի շուրջը կատարվում էր ալդ տե-
սարանը, Սանտմի ննջարանում տեղի ունէր մի ուրիշը:
Երկու ոստիկաններ սենետակի դոներում կանգնած, լետ
էին մզում Սանտմին, որ գոռալով, մազերը փետուելով,
կուրծքը ճանկառելով, դլխամոլոր ձգուում էր ներս:
Նրա ետևից խոնդում էր ամբոխը մեծ բազմութեամբ:

— Անիծվէք, գիւլլախորով իլէք, բաց թողէք, բա-
լիս երեսը տեսնեմ, նրան տանում են գատաստան...

Իսկ ինչ էր անում ալդ ողբերգութեան գլխաւոր
դերակատարը, Ոռւստամը: Նրա ճակտագիրը պարզ էր:
Ոռւստամի աջ կողմում կանգնած էր ոստիկանլետը:
Ճախ կողմում մի փոքրիկ սեղանի շուրջը նստած էր

քննիչը: Ստէալ ստէալ ակնոցները ուղղելով, քննիչը
խոժոռ դէմքով նալում էր յանցաւորին և զանսպան
հարցեր առաջարկում:

Ոռւստամը լուռ էր և գլուխը քարշ ձգած: Նա,
կարծես, քննիչի հարցերը չէր լսում: Քննիչը տես-
նելով, որ Ոռւստամը յամառութեամբ լուռ է և բացի
«ես եմ սպանելք—ից, ոչինչ չի ուզում պատասխանել,
գրիչը դրաւ սեղանի վրայ և ասաց ոստիկանապետին.

— Տարէք բանդը, պահեցէք մի առանձին տեղ
մինչև իմ գալլ:

Ոռւստամին դուրս տարան: Բայց նա հէնց նոր
էր ոտը դրել պատշգամբի վրայ, ամբոխի միջից յան-
կարծ լսվեց մի աղաղակ, և նոյն վալրկեանին ճանա-
պարհի հագուստով մի երիտասարդ առաջ վազեց:

— Աէլրանը, ախ, գու Յուլիանոս, թողէք շանսա-
տակ անեմ, — գոռաց Ոռւստամը, կամենալով վազել
դէպի երիտասարդը:

Ոստիկանները նրան պահեցին:
Սէլրանը բացագանչում էր.

— Բռնեցէք Ոռւստամին, մի թողնէք մօտենալ
Սուսանին: Ես սուտ եմ ասել, սուտ, խարել եմ: Սու-
սանը անմեղ է, անմեղ է հըեշտակի պէս. խալը ես
երեխայ ժամանակս եմ տեսել: Սպանեցէք ինձ, գլուխս
կտրեցէք, ես եմ մեղաւորը:

— Նա անմեղ էր, հոգիս էլ կորաւ, — բացագանչոց
Ոռւստամը և թուլտցած ընկաւ ոստիկանների գիրկը:

Ամբոխը Աէլրանին ճանապարհ տուաւ, Աէլրանը
վազեց ներս, ուր ձգած էր նրա անմեղ սիրեկանի
արիւնաքամ դիակը:

Անցաւ մի ըոսէ, և դրսում եղողները լսեցին մի
ձայն:

Ալդ ատրճանակի արձակման թնդիւնն էր:

— Բալաս վալ, բալաս վալ:

Ալդ Մարիամ բաջու ձայնն էր:

Հայոց
Հայոց

Հայոց գրադարան



NL0351696

48322

